

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

2 (14)

ARMENOLOGICAL ISSUES

BULLETIN

ԵՐԵՎԱՆ – YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ – YSU PRESS
2018

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ
Հրատարակվում է 2014 թվականից

The Bulletin is published thrice a year.
It has been published since 2014

Գլխավոր խմբագիր՝ **Միմոնյան Ա. Հ.**

Խմբագրական խորհուրդ՝

Ավագյան Ա. Ա.

*Ավետիսյան Լ. Վ. (գլխավոր
խմբագրի տեղակալ)*

Ավետիսյան Հ. Գ.

Ավետիսյան Յու. Ս.

Բայրամյան Հ. Ս.

Բարդակչյան Գ. (ՄՄՆ)

Դեղեյան Ժ. (Ֆրանսիա)

*Դրոսթ-Աբգարյան Ա. Գ.
(Գերմանիա)*

Չաքարյան Ս. Ա.

Հայրունի Ա. Ն.

Հովհաննիսյան Ս. Ս.

Հովսեփյան Լ. Ս.

Ղարիբյան Ա. Ա.

Մարգարյան Հ. Գ.

Մինասյան Է. Գ.

Մուրադյան Ս. Պ.

*Պողոսյան Վ. Ա. (պատասխա-
նատու քարտուղար)*

Սայադով Ս. Ս. (Ռուսաստան)

Սաֆարյան Ա. Վ.

Տազեայան Ա. (Լիբանան)

Editor-in-chief: **Simonyan A.**

Editorial Board:

Avagyan A.

Avetisyan H.

*Avetisyan L. (Deputy editor-in-
chief)*

Avetisyan Y.

Bardakchian G. (USA)

Bayramyan H.

Dakessian A. (Lebanon)

Dedeyan G. (France)

Drost-Abgaryan A. (Germany)

Gharibyan A.

Hayruni A.

Hovhannisyan M.

Hovsepyan L.

Margaryan H.

Minasyan E.

Muradyan S.

*Poghosyan V. (Executive
Secretary)*

Safaryan A.

Sayadov S. (Russia)

Zakaryan S.

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Հ Ռ Չ Ա Կ Մ Ա Ն 100 – Ա Մ Յ Ա Կ Ի Ա Ռ Թ Ի Վ**

ՄՀԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

**ՀԱՅՈՑ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ԽՆԴԻՐԸ 1917-1918 ԹԹ.**

ՀՅԴ-ՌՄԴԲ(Բ)Կ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր – Հայոց անկախ պետականություն, հարաբերություններ, ՀՅԴ, ՌՄԴԲ(Բ)Կ, Ստոկհոլմի վեհաժողով, Թուրքահայաստանի դեկրետ, անկախ պետականության նախագծեր, հանրապետություն, ինքնավարություն

Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումից հարյուր տարի անց չեն դադարում այդ իրադարձության ծրագրված լինելու հետ կապված քննարկումները: Հարցադրումը, որն ինքնին փակուղի է տանում, շեղելով իրական անցյալից, հանգում է հետևյալին. 1915 թվականից մինչև 1918 թվականի մայիսը հայ հասարակական-քաղաքական մտքի, մասնավորապես գործող քաղաքական գլխավոր ուժի՝ Հայ հեղափոխական դաշնակցության (ՀՅԴ) օրակարգում կա ր արդյոք հայոց անկախ պետականությունը վերականգնելու ծրագիրը: Քանի որ Հայոց ցեղասպանությունից առաջ ՀՅԴ-ն առավել հակված էր Արևմտյան Հայաստանը տեսնելու լայն ինքնավարությամբ Օսմանյան կայսրության կազմում, իսկ Արևելյան Հայաստանը՝ Անդրկովկասի ռամկավար հանրապետության կազմում՝ իբրև Ռուսաստանի դաշնային հանրապետության բաղկացուցիչ մաս¹, ուստի խնդրո առարկա հարցը կարող է քննարկվել միայն 1915 թվականից ի վեր: Թեև այս նվազագույն խնդիրներն ունեին իրենց օբյեկտիվ փաստարկումը, այդուհանդերձ քառսի մեջ գոյության պայքար մղող հայության հասարակական-քաղաքական հատվածները ո՛չ դրանց քննարկման համար ժամանակ ունեին, ո՛չ էլ իրականացման հնարավորություն: Այնուամենայնիվ, երիտթուրքական կառավարության կազմակերպած և իրականացրած Հայոց ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանի հարցում վերոհիշյալ մոտեցումը անհնար դարձրեց:

¹ Տե՛ս Նիլթեր Հ. Յ. Դաշնակցության պատմության համար, հ. Գ., Պեյրութ, 2007, էջ 324-325: Տե՛ս նաև Ծրագիր Հայ Յեղափոխական Դաշնակցության (Վաւերացւած 1907 թ. ընդհ. ժողովի կողմից), Թիֆլիս, 1917, էջ 22-23:

Հայկական անկախ պետականության վերականգնման ուղղությամբ նոր հորիզոններ բացեց 1917 թվականը: Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում իշխանության եկած Ռուսական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության բոլշևիկյան թևը (այսուհետև՝ ՌՄԴԲ(բ)Կ) լիարժեքորեն չէր վերահսկում իրավիճակը երկրում, ինչը հանգեցրեց քաղաքացիական պատերազմի: Բոլշևիկները փորձեցին պահպանել իրենց իշխանությունը և հասնել միակուսակցական կառավարման¹, որի համար նրանք պատրաստ էին և կատարում էին տարածքային լուրջ զոհաբերություններ՝ հանուն Բրեստ-Լիտովսկի բանակցություններում Քառյակ միության հետ անհրաժեշտ խաղաղության կնքման: Խորհրդային Ռուսաստանի առաջին դեկրետները կոչված էին ապահովելու այդ քաղաքականության ներքին հենասյուները: «Խաղաղության մասին դեկրետ»-ը ակնհայտորեն հետապնդում էր պատերազմից դուրս գալու համար իրավական հիմք ստեղծելու նպատակ²:

Այն նաև պատերազմից հոգնած, հայրենի բնակավայրերից հեռու, պետության կենտրոնում ծավալված ներքաղաքական զարգացումներում դեռևս ամբողջությամբ չկողմնորոշված ռուս զինվորի համար ռազմաճակատը լքելու «օրինական» պատրվակ էր, որն այդ պահին անհրաժեշտ էր նորաթուխ կենտրոնական իշխանությանը: Զինվորների համար նոր կառավարությանն աջակից լինելու հարցում վերջնական կողմնորոշող քայլ դարձավ նաև «Հողի մասին դեկրետ»-ը³: Շարքային զինվորականության մեծ մասը, որը 1861 թ. «Ճորտատիրության իրավունք»-ի կասեցումից հետո ձգտում էր սեփական հողատարածքներ ստանալ, գյուղացիական ծագում ուներ: Այդ ցանկության իրականացումը գոնե փաստաթղթով ապահովում էր «Հողի մասին դեկրետ»-ը: Վ. Լենինի կառավարությունը այսպիսով փորձում էր համարել բոլշևիկյան իշխանությանը հավատարիմների շարքերը:

Միակողմանի տարածքային զիջումները, ինչպես նաև բնակչության մեծամասնություն կազմող գյուղացիության քաղաքացիական և զինվորական հատվածում հնարավորինս մեծ թվով համակիրներ ունենալուն ուղղված օրենքները Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականության օրակարգում միտված էին հիմնավորելու նախկին գաղութների՝ ազգային ինքնորոշման հարցում 1917-1918 թթ. ցուցաբերած ժամանակավոր հանդուրժողականության պատճառները: Անհրաժեշտ էր ամեն գնով պահպանել հեղաշրջման հաղթանակը՝ հնարավորինս խույս տալով «ներքին սահմանների», մասնավորապես Անդրկովկասի շոշափելի վերափոխումներից:

¹ 1918 թ. հուլիսին բացարձակ կուսակցական մենիշխանության ձգտող բոլշևիկները ազատվեցին նաև հոկտեմբերյան հեղաշրջման հաղթանակում իրենց ավանդը ներդրած և իշխանության մաս կազմող ձախ էսեռներից:

² Ст' у Декреты Советской власти, т. I, 25 октября 1917 г. - 16 марта 1918 г., М., 1957, с. 12-16 (այսուհետև՝ Декреты):

³ Ст' у նույն տեղում, էջ 17-20:

Ինչպես կտեսնենք ստորև, այս պարզ տրամաբանությունը գործելու էր 1917 թ. հոկտեմբերից մինչև Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքումը: Այդ ժամանակագրական ծիրի ներքո կփորձենք նաև բարձրացրած գլխավոր հարցին զուգահեռ հասկանալ Ստ. Շահումյանին Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար նշանակելու, «Թուրքահայաստանի մասին դեկրետ»-ի հռչակման հաջորդականության կապերը, ինչպես նաև դրանց ի հայտ գալու հիմնական նպատակները:

Մինչ ընթանում էր Առաջին համաշխարհային պատերազմը, աշխարհի սոցիալիստական ուղղվածության քաղաքական ուժերի առավել խաղաղասիրական ներկայացուցիչները Ստոկհոլմում նախաձեռնեցին խաղաղության կոնֆերանս հրավիրելու գործընթաց: Այն պետք է գումարվեր հուլիսի 8-ին, սակայն հետաձգվեց մինչև սեպտեմբեր¹ և, ըստ էության, լիարժեք չկայացավ: Կոնֆերանսի կազմկոմիտեն ընդհանուր առմամբ նպատակ ուներ պատերազմը դադարեցնելու միջոցներ գտնել՝ աշխարհի սոցիալիստական քաղաքական ուժերի առաջարկների հիման վրա փոխհամաձայնության եզրեր գծելով:

Հայկական կողմի առաջարկները ներկայացնելու համար մասնակցության հրավեր ստացած ՀՅԴ-ն Ստեփան Զորյանին (Ռոստոմ) լիազորեց հանդես գալ իր անունից: 1917 թ. հուլիսի 26-ին նրա և կազմկոմիտեի ներկայացուցիչների երկու հանդիպման արձանագրություններից մեկը² հետաքրքիր մանրամասներ է պարունակում մեր բարձրացրած հարցերի շուրջ: Ստոկհոլմում Ռոստոմը, հանդիպելով կազմկոմիտեի մի խումբ ներկայացուցիչների հետ, մեկնաբանել է իր կուսակցության դիրքորոշումը հայոց անկախ պետականության վերականգնման հարցի շուրջ: Հյուրընկալող կողմի ներկայացուցիչներից Հայսմանսի այն հարցին, թե ինչ են մտածում հայերը Հայկական հարցի վերաբերյալ, Ռոստոմը պատասխանել է. «Հայ-թուրքական հարցը միջազգային հարց է: Մեր կուսակցությունը հայտարարել է, որ մենք գերադասում ենք ռուսական մասերում սոցիալական բարեփոխումներ: Ռոսսաստանի կառավարությունը պատրաստ է տրամադրել մշակութային ինքնավարություն: ...Մինչ կոտորածը մենք ցանկանում էինք միայն ինքնավարություն թուրքերի ենթակայության տակ, բայց կոտորածից հետո դա անհնար է: Այստեղ, որտեղ մուսուլմանները փոխարինել են մեր ոչնչացված բնակչությանը, ազգերի ինքնորոշումը դժվար է: Ուստի Թուրքական Հայաստանի համար մենք պահանջում ենք մուսուլման ներգաղթյալների դուրսբերում: Մենք ցանկանում ենք ամբողջական անկախություն. ռուսական կողմում՝ ինքնավարություն և թուրքական կողմում՝ վարչական անկախություն.

¹ Տե՛ս Նիլթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, ԺԲ հատոր, Պէյրուի, Մայիս 2016, էջ 263 (այսուհետև՝ Նիլթեր):

² Տե՛ս Sitzung des Holländisch-skandinavischen Komitees mit der armenischen Delegation, 26 Juli, 1917 // URL: <https://socialhist.oryportal.org/stockholm1917/documents/111644> (24.05.2018):

իրավունքների վերականգնումից հետո Հայաստանին պետք է տրվի ինքնորոշման իրավունք: Մենք ցանկանում ենք երաշխավորված չեզոքություն»¹:

Մի քանի ամիս անց այս մտտեցումները՝ որպես ՀՅԴ պաշտոնական հայտարարություն, Ռոստոմն առավել հանգամանալից ներկայացրել է կոնֆերանսի կազմակերպիչին: Այստեղ Արևելյան Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ, ըստ էության, տեսնում ենք 1907 թ. ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովի որոշման ոգուն համահունչ դիրքորոշում. «... 1) Ռուսահայաստանը, Վրաստանի եւ Կովկասի թաթարներուն հետ, պետք է ըլլայ ինքնավար՝ Դաշնային եւ Հանրապետական Ռուսիոյ ծիրին մէջ, որուն հիմնական օրէնքը պիտի ճշդուի Սահմանադիր ժողովին կողմէ»²: Արևմտյան Հայաստանի կարգավիճակի հարցում ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովի ընդունած որոշման փոփոխություն է նկատվում. «... 2) Ազատ Հայաստանը պետք է բովանդակէ հայկական 6 նահանգները եւ Կիլիկիան, բացի մահմետական շրջաններէ, որոնք հայկական նահանգներուն կցուած են 1877-1878ի ռուս եւ թուրք պատերազմէն ետք: 3) Հայաստանը պիտի յայտարարուի չեզոք եւ իր չեզոքութիւնը երաշխաւորուի միջազգայնօրէն»³:

Հիմա, երբ ներկայացրինք հայոց անկախ պետականություն վերստեղծելու մասին ՀՅԴ պաշտոնական դիրքորոշումը հայտարարող փաստաթուղթը, փորձենք տեսնել դրա տրամաբանական շարունակության շղթան:

1917 թվականի նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 8-ը Թիֆլիսում ընթանում էր ՀՅԴ հատուկ ժողովը⁴, որտեղ քննարկվում էր ստեղծված հեղափոխական պայմաններում Անդրկովկասում կուսակցության հետագա քաղաքականության հարցը⁵: Որոշվել էր հնարավոր գործակցության շուրջ բանակցություններ սկսել նաև բոլշևիկների հետ: Այդ հարցով լիազորված Սարգիս Արարատյանը և նրան համագործակցած Եղիշե Իշխանյանը դեկտեմբերի 4-ին հանդիպում են Թիֆլիսում գտնվող Ստեփան Շահումյանի հետ: Բանակցություններն ընթանալու էին մինչև 1918 թ. հունվար, որի արդյունքում ձեռք էր բերվելու նախնական համաձայնություն. Անդրկովկասը խորհրդայնացնելու հարցում Արևմտյան Հայաստանը, ՀՅԴ-ի աջակցության փոխարեն, Խորհրդային Ռուսաստանի ռազմաքաղաքական միջամտության շնորհիվ ձեռք էր բերելու անկախություն⁶: Հատկանշական է, որ երկու կողմերի համար կարևոր նշանակություն ունեցած այս բանակցություններում

¹ Տե՛ս Sitzung des Holländisch-skandinavischen Komitees mit der armenischen Delegation, 26 Juli, 1917 // URL: <https://socialhist.oryportal.org/stockholm1917/documents/111644> (24.05.2018):

² Նիւթեր, էջ 271:

³ Նույն տեղում, էջ 272:

⁴ Տե՛ս Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999, էջ 52:

⁵ Մանրամասն տե՛ս **Հովհաննիսյան Մ. Ս.**, Բոլշևիկներ-Դաշնակցություն բանակցությունները Թիֆլիսում (1917 թ. դեկտեմբեր-1918 թ. հունվար) // «Բանբեր Երևանի համալսարանի». հասարակական գիտություններ, 2008, թիվ 3, էջ 131-138 (այսուհետև՝ «Բանբեր»):

⁶ Տե՛ս **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Է., Պէրյուք, 1979, էջ 142-143:

տեսանելի է ՀՅԴ-ի ստոկհոլմյան ուղեգիծը: Ավելին՝ ՀՅԴ-ի պարագայում Խորհրդային Ռուսաստանի հետ «լեզու գտնելու» ձգտումը զարգացել է երկու սկզբնական շրջանում, մեծ հավանականությամբ, միմյանցից անկախ ուղղությամբ:

Այսպես, դեկտեմբերի 4-ին Թիֆլիսում Շահումյանի հետ սկսված բանակցություններից երկու օր առաջ՝ դեկտեմբերի 2-ին, ՀՅԴ-ի Ամերիկայի կենտրոնական կոմիտեին հասցեագրած նամակով Ռոստոմը Ստոկհոլմում ընթացող բանակցությունների առնչությամբ մտահոգաբար նշել է. «Զինադադարի խնդիրը ո՞ր պետք է տանի մեզ վերջ ի վերջոյ: Շուրթած եմ մնացել: Հոսանքը մեզ քշում է, եւ դեռ քշելու է. աշխատենք՝ ժայտերի չգարնուել: Մի քանի օրից յետոյ. փորձելու եմ անցնել Ռուսաստան, բայց չգիտեմ՝ պիտի կարողանամ մ Կովկաս ինձ ձգել»¹: Նամակի ընդհանուր բովանդակությունը և այս վերջին տողերը ցույց են տալիս, որ նա Թիֆլիսի բանակցություններից տեղյակ չէր: Ավելին՝ ակնհայտ է, որ նա բավարարված չէր Ստոկհոլմում իր բարձրացրած հարցերի լուծման ընթացքով: Դեպի Ռուսաստան ուղևորվելը խնդիրների լուծման նոր հարթակի փնտրտուքի նպատակ ուներ: Ռոստոմի՝ Ստոկհոլմից Պետերբուրգ ուղևորվելու մասին է վկայում նաև այդ օրերին այնտեղ գտնվող դաշնակցական գործիչ Լիպարիտ Նազարյանցը, ով բոլշևիկյան կառավարության հետ բանակցային գործընթացները սկսեց Ռոստոմի հետ միասին. «Ի դեպ Բրեստի մասին: Երբ խորհրդային իշխանութիւնը առաջին անգամ պատվիրակութիւն կուղարկէր հոն, նկատի ունենալով, որ հայկական հարցն ալ քննութեան առարկայ պիտի լինէր, Վահան Տէրեանը, իբրև հայ, նոյնպէս առնւեցաւ այդ պատվիրակութեան մէջ: Տէրեանը դիմեց մեզ՝ խնդրելով տալ իրեն պետք եղած նիւթերը և ցուցումները: Առաջին խորհրդակցութիւնը տեղի ունեցաւ Տէրեանի, Ռոստոմի (որը նոր էր վերադարձած Ստոկհոլմի ընկերվարական խորհրդաժողովէն) և իմ մասնակցութեամբ: Որոշուեցաւ կազմել ընդարձակ տեղեկագիր մը հայկական հարցի մասին: Գործը ստանձնեցինք Ռոստոմը և ես»²: Նկատի ունենալով, որ Նազարյանցը Ռոստոմի և Տերյանի հետ քննարկումների սկիզբ է համարում խորհրդային առաջին պատվիրակության մինչև Բրեստ-Լիտովսկ մեկնումը, կարելի է ենթադրել, որ Ռոստոմը Պետրոգրադ է ժամանել դեկտեմբերի 2-ից (երբ նամակ էր գրել Ստոկհոլմից ՀՅԴ-ի Ամերիկայի կենտրոնական կոմիտեին) մինչև դեկտեմբերի 9-ը (երբ Բրեստ-Լիտովսկում Խորհրդային Ռուսաստանի առաջին պատվիրակությունը սկսեց բանակցություններ վարել) ընկած ժամանակահատվածում:

Ակնհայտ է, որ ՀՅԴ-ն թե՛ դեկտեմբերի սկզբին Թիֆլիսում և թե՛ դեկտեմբերի 2-ից 9-ը ընկած օրերի միջակայքում Պետրոգրադում, գրեթե զուգահե-

¹ Ռոստոմ. մահուան վաթսուամեակին առթիւ, Պէրուրթ, 1979, էջ 189-190:

² **Նազարեանց Լ.**, Հայ յեղափոխական դաշնակցութեան եւ Խորհրդային իշխանութեան միջեւ համաձայնութեան փորձեր // «Դրօշակ», 1928, թիւ 8-9, օգոստոս-սեպտեմբեր, էջ 231:

ռաբար, խորհրդային իշխանության ներկայացուցիչների հետ սկսել էր քննարկումներ Հայաստանի երկու հատվածի կարգավիճակի շուրջ: Ինչպես արդեն նշեցինք, ձգտելով հնարավորինս խույս տալ ներքին սահմանների, մասնավորապես Անդրկովկասի շոշափելի վերափոխումներից՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն իր հերթին այս քննարկումները փորձում էր զարգացնել իր օգտին: Ավելին՝ Վ. Լենինի կառավարությունը, ինչպես ցույց կտան հետագա որոշումները, կցկտուր որոշումներով ՀՅԴ-ի հետ բանակցություններում փորձեց Ստ. Շահումյանի համար ապահովել «ամուր հենք»: Այսպես՝ 1917 թ. դեկտեմբերի 16-ին Ժողկոմխորհը Վ. Լենինի նախագահությամբ որոշել է Ստ. Շահումյանին նշանակել Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար¹: Դեկտեմբերի 18-ին Վ. Լենինի ստորագրած մանդատն ու 500.000 ռուբլին Թիֆլիս է բերում Կամոն (Միմոն Տեր-Պետրոսյանը): Սա, փաստորեն, Թիֆլիսում ՀՅԴ ներկայացուցիչների հետ բանակցող Ստ. Շահումյանին թիկունքից ապահովագրող քայլ էր, որով վերջինս որոշակի լեգիտիմ կարգավիճակ էր ստանում դաշնակցականների առջև: Պաշտոնական Պետրոգրադը կարծեք իր աջակցությունն էր ցուցաբերում: Մյուս կողմից՝ Պետրոգրադում զուգահեռաբար շարունակվում էին աշխատանքներն այս ուղղությամբ: Գործին միացել էր 1917 թ. Հոկտեմբերից ՌԽՖՍՀ ազգությունների ժողկոմատը (Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության ազգությունների գործերի նախարարությունը) ղեկավարող Ի. Ստալինը: Վերջինս բարձրագույն իշխանության հանդեպ իր հավակնոտ մտադրությունները փուլ առ փուլ իրականացնում էր մրցակիցներին շարքից հանելով: Ստ. Շահումյանի դեպքում ևս դա բացառություն չէր:

Այսպիսով՝ դեկտեմբերի սկզբին ՀՅԴ և ՌՍԴԲ(բ)Կ ներկայացուցիչների միջև սկսված բանակցությունները մոտենում էին իրենց կիզակետին, ինչը դարձավ «Թուրքահայաստանի մասին դեկրետ»-ի² ընդունումը: Վ. Լենինի կառավարության համար երկիմաստ և տարբեր կողմերից օգտակար այս փաստաթուղթը պետք է, որ դրական հանգուցալուծում լիներ ՀՅԴ-ի ներկայացուցիչների համար: Հայաստանի երկու հատվածների կարգավիճակների շուրջ Խորհրդային Ռուսաստանի իշխանության ու վերջինիս կուսակցական հենքը համարվող ՌՍԴԲ(բ)Կ ներկայացուցիչների հետ վարած բանակցություններում դաշնակցական գործիչների որդեգրած մոտեցումները կարծես ավարտուն տեսք էին ստանում: 1917 թ. դեկտեմբերի 20-ից 29-ը ընկած ժամանակահատվածում Ստալինը կառավարության նիստերում չորս անգամ զեկուցել է դեկրետի նախագծի շուրջ³: Արդեն վերջին՝ դեկտեմբերի 29-ի

¹ Ст' у Декреты, с. 587:

² Նույն տեղում, էջ 298-299:

³ Ст' у Протоколы заседаний Совета Народных Комиссаров РСФСР. Ноябрь 1917 - март 1918 гг., М., 2006, с. 139, 151-152, 161, 162-164:

զեկուցման ժամանակ կառավարության նիստի արձանագրությունում դեկրետը կազմողների թվում կարդում ենք Ռոստոմի ազգանունը: Այստեղ ընդգծվում է. «Հանձնարարվում է ընկ. Ստալինին տեղադրել մամուլում հանգամանալի հաղորդում ընկ. Ստալինի և Պոռոշյանի ու Դաշնակցություն կուսակցության ներկայացուցչի միջև դեկրետի առաջարկվող նախագծի շուրջ նախնական համաձայնության մասին: Դեկրետը ընդունել և հաստատել»¹: Փաստորեն բոլշևիկների կողմից փորձ էր կատարվում ցույց տալ ՀՅԴ-ի մասնակցությունը հայկական կողմին բացասաբար անդրադարձող փաստաթղթի մշակմանը: Դա բոլշևիկների համար ընդունված խաղի կանոն էր. շահագրգիռ կողմի ներգրավմամբ գործընթացը առաջ էր տարվում և անհրաժեշտ պահին կասեցվում՝ կիսելով պատասխանատվությունը շահագրգիռ կողմի հետ, ինչը վարկաբեկում էր նաև վերջինիս՝ շատ դեպքերում դուրս մղելով հիմնական գործընթացներից: ՀՅԴ-ի հետ նշված մեթոդը լիարժեքորեն չաշխատեց: Պատմական զարգացումները այն նյութականացրին Արևմտյան Հայաստանի փոխարեն Արևելյան Հայաստանում, որը մեր պետականության վերստեղծման հենասյունը դարձավ: Թերևս, արդեն կարևոր չէ՝ հարցը Հայաստանի որ հատվածում կհռչակվեր անկախ պետություն, կարևորը որդեգրվեց նման սուբյեկտ հռչակելու որոշում:

Мгер Оганнисян – Проблема восстановления армянской независимой государственности в 1917-1918 гг. в контексте отношений АРФ и РСДРП(б)

Споры о том, было ли провозглашение первой независимой Республики Армении запланированным или нет, до сих пор не утихают. Подобная постановка вопроса сама по себе является тупиковой. Мы проанализировали другой, более актуальный вопрос: было ли на повестке дня главной политической силы армянской действительности 1915-1918 гг. – Армянской революционной федерации Дашнакцутюн – решение о восстановлении армянской независимой государственности или нет? В данной статье мы рассмотрели проблему в контексте переговоров между этой партией и пришедшей к власти в результате Октябрьской революции 1917 г. Российской социал-демократической рабочей партии (большевиков) и использовали в качестве базового документа официальное заявление АРФ во время проходящей в Стокгольме социалистической конференции по восстановлению мира. Факты подтверждают, что Советской России было необходимо любой ценой добиться победы революции и по возможности избежать изменения «внутренних границ», в частности, ощутимых преобразований в Закавказье. Эта простая логика действовала бы с октября 1917 г. до подписания Брест-Литовского мирного договора. Мы попытались также изучить временную последовательность между назначением Степана Шаумяна временным чрезвычайным комиссаром по делам Кавказа и провозглашением декрета «О Турецкой Армении».

¹ Протоколы заседаний Совета Народных Комиссаров РСФСР, с. 164:

Mher Hovhannisyan – *The Problem of Restoring the Armenian Independent Statehood in 1917-1918 in the Context of Relations between the ARF and the RSDLP (B)*

The issue of whether the declaration of the First Independent Republic of Armenia was planned or not is still being discussed today. It is an issue that leads to a deadlock. The real issue we have tried to observe was whether in 1915-1918 there was a decision to re-establish Armenia's independent statehood in the program agenda of the main political force in the Armenian reality – Armenian Revolutionary Federation. We discussed the issue under consideration in the context of the negotiations between the ARF and Bolshevik wing of the Russian Social Democratic Labour Party, which came to power as a result of the October Revolution in 1917. As a base document, we used the official statement of the ARF presented at Stockholm Peace Conference in July-December, 1917. Facts come to prove that Soviet Russia needed to maintain its victory in the revolution at all costs and avoid the transformations of "internal borders" as much as possible, in particular the tangible transformations in Transcaucasia. This simple logic was to operate from October, 1917 until the conclusion of the Treaty of Brest-Litovsk. In parallel, we tried to understand the time sequence of the appointment of Stepan Shahumyan as a temporary Commissar Extraordinary for the affairs of the Caucasus and the proclamation of the "Decree on Turkish Armenia".

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ
ՀԱԿԱԲՈՂՇԵՎԻԿՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄՍԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
(1918 Թ. ՀՈՒՆԻՍ-1920 Թ. ԱՊՐԻԼ)**

Բանալի բառեր – Հայաստանի առաջին Հանրապետություն, Անդրկովկաս, Թուրքիա, Անգլիա, Խորհրդային Ռուսաստան, Ռուսաստանի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումներ, պատերազմ, դիվանագիտական հարաբերություններ

1918 թ. մայիսի վերջին՝ երկարատև ընդմիջումից հետո, վերականգնվեց հայոց անկախ պետականությունը: Հայաստանի առաջին Հանրապետությունը ծնունդ առավ ներքին և արտաքին չափազանց ծանր ու հակասություններով լի պայմաններում: Նորանկախ պետությունը ձգտում էր մտնել միջազգային ասպարեզ և դիվանագիտական հարաբերություններ հաստատել ինչպես հարևան, այնպես էլ այլ պետությունների հետ: Սակայն այդ խնդիրը իրագործելու համար անհարժեշտ էր լուրջ դժվարություններ հաղթահարել:

Հայաստանի առաջին Հանրապետության պատմությունը, իր արտաքին և ներքին քաղաքականության մեջ տեղի ունեցած կտրուկ շրջադարձերով պայմանավորված, բաժանվում է երեք հիմնական փուլերի.

1. **1918 թ. հունիս-նոյեմբեր.** դեռևս շարունակվում էր համաշխարհային պատերազմը, Անդրկովկասը զավթել էին թուրք-գերմանական զորքերը, հայ ժողովուրդը կծկված էր մի բուռ հողի վրա (շուրջ 12 հազ. քառ. կմ)՝ գաղթականներով ու սովյալներով լի:
2. **1918 թ. դեկտեմբեր-1920 թ. ապրիլ.** ավարտվեց Առաջին աշխարհամարտը: Իր ուժը կորցրեց Օսմանյան Թուրքիայի հետ 1918 թ. հունիսի 3-ի պարտավորագիրը և հունիսի 4-ի դաշնագիրը: Քաղաքական նոր պայմաններում Հայաստանի Հանրապետությունը դրսևորեց **արևմտյան կողմնորոշում**՝ ակնկալելով, որ Համաձայնության պետությունները կգնահատեն հայ ժողովրդի ներդրումը պատերազմի հաղթության գործում և հաշվի կառնեն նրա կրած մեծ զոհողությունները և կաշխատեն լուծել հայության արդար պահանջը՝ ստեղծել միացյալ ու անկախ Հայաստան: Այս փուլում Հայաստանի Հանրապետությունը, դուրս գալով շրջափակումից, շարունակեց հարաբերություններ հաստատել ոչ միայն իր հարևանների, այլ նաև Ռուսաստանի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների և այլ երկրների հետ: Հանրապետությունը աստիճանաբար ընդարձակեց

իր սահմանները՝ ներառելով գրեթե ամբողջ Արևելյան Հայաստանը (70 հազար քառակուսի կիլոմետր):

3. **1920 թ. մայիս-դեկտեմբեր.** գեներալ Ա. Դենիկինի Կամավորական բանակի պարտությունից հետո ավարտվեց Ռուսաստանի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների հետ նրա հարաբերությունների երկամյա գործընթացը: Քաղաքական նոր պայմաններում Հայաստանի Հանրապետությունը փոխեց արտաքին քաղաքական ուղղվածությունը, այսինքն՝ սկսել բանակցել Խորհրդային Ռուսաստանի հետ:

1918 թ. օգոստոսի 3-ին Հայաստանի խորհրդի (պառլամենտ) երկրորդ նիստում վարչապետ Հ. Քաջազնունին ներկայացրեց կառավարության ծրագրի նախագիծը երկրի ներքին և արտաքին քաղաքականության ռազմավարության վերաբերյալ: Նա նշում էր. «Ես կհետևեմ մի գերակա սկզբունքի՝ հաստատել բարիդրացիական հարաբերություններ հարևան պետությունների հետ, բոլոր հնարավոր միջոցներով խուսափելով նրանց հետ ընդհարումից: Դա թելադրված է այն հանգամանքով, որ մեր ժողովրդին, մեր երկրին անհրաժեշտ է հանգիստ, անհրաժեշտ է խաղաղություն, թեկուզ անկայուն: Մենք հյուսված ենք, ուժասպառ և ի վերջո կազմալույծ: Մենք ընդունակ չենք ուժերի հետագա լարման, մենք չենք դիմանա նոր փորձությունների: Արտաքին իրավիճակի ցանկացած նոր բարդացում սպառնում է մեզ անխուսափելի և վերջնական կործանմամբ: Մենք ջախջախված, պարտված կողմ ենք: Մենք դա պետք է հստակ գիտակցենք, միշտ հիշենք և քաջություն ունենանք համապատասխան եզրակացություն անելու:

Այս պահին մենք կարող ենք ունենալ մեկ նպատակ՝ փրկել հայ ժողովրդի բեկորները և հերոսական փորձ անել դեռևս մեր ձեռքին մնացած փոքր տարածքի վրա պետություն հիմնել:

Այս գիտակցությունը պետք է դառնա մեր ներկայիս արտաքին քաղաքականության անկյունաքարը»¹ (այս և հետագա ընդգծումները մերն են – Գ. Պ.):

Իսկապես, հայ ժողովրդի այս փրկված հատվածը գերմարդկային ճիգերով փորձում էր ոտքի կանգնել, իրեն բաժին ընկած այդ փոքր տարածքի վրա պետություն հիմնել: Իսկ դրա համար նրան անհրաժեշտ էր խաղաղություն, այլապես չէր դիմանա նոր փորձությունների, որ սպասվում էին հարևան պետություններից, որոնք խիստ անբարյացակամ ու թշնամական վերաբերմունք էին դրսևորում հայ ժողովրդի՝ օրհասական վիճակում գտնվող այս հատվածի նկատմամբ: Ուրեմն նորաստեղծ հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը հարևան պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումն էր, որն այնքան էլ դյուրին չէր: Ընդ որում, առավել մեծ վտանգ էր ներկայացնում թուրքական

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 6-7:

պետության ագրեսիան, որը դեռևս չէր հրաժարվել պանթուրանական ռազմավարական ծրագրի իրականացման ճանապարհին լուրջ խոչընդոտ Հայաստանը պատմական ասպարեզից վերացնելու գաղափարից:

Ծրագրի նախագծից ակնհայտ է դառնում, որ արտաքին հարաբերություններում Հայաստանի Հանրապետության համար առաջնահերթ խնդիրը Թուրքիայի նկատմամբ որդեգրելիք քաղաքականությունն էր: Հ. Քաջազնունին իրավացիորեն համոզված էր, որ բոլոր հնարավոր միջոցները պետք է գործադրվեն նրա հետ հաշտության եզրեր գտնելու համար. **«Մենք հիմքեր չունենք բարեկամական զգացմունքներ տածելու Թուրքիայի նկատմամբ նրա ոչ անցյալի և ոչ էլ ներկա գործունեության համար»:** Նա՝ իբրև պետական-քաղաքական գործիչ, թերևս ամենաաթափ ու ճշմարիտ գնահատական է տալիս թուրքական քաղաքականությանը. «Թուրքիան Անդրկովկասում ևս, ինչպես Արևելյան Անատոլիայում, ձգտում է քաղաքականապես ոչնչացնել հայկական տարրը և խոչընդոտել հայկական պետության կայացմանը»¹:

Ցեղասպանությունից ու հայրենագրկումից հետո արյունաքամ հայ ժողովուրդը արդյոք ի վիճակի՞ էր այլ ուղի ընտրելու, այսինքն՝ պայքարի մեջ մտնելու Թուրքիայի դեմ: Այս էր խնդիրը, և իրատես վարչապետը գտնում էր, որ՝ ոչ: Նրա կարծիքով, եթե դեռևս ինչ-որ մի հնարավորություն կար փրկելու հայ ժողովրդի բեկորները, ապա առաջին հերթին պետք էր Թուրքիայի հետ ամեն գնով համաձայնության գալ²: Այլընտրանք չկար. դա էր թելադրում երկրի օրհասական վիճակը:

Հայության ինքնապաշտպանական բնագոյը նրան մղում էր Ռուսաստանի կողմը: Հայաստանի անկախության առաջին ամիսներին ներքին և արտաքին ծայրաստիճան աննպաստ պայմաններում հայ քաղաքական ու հասարակական լայն շրջաններում գերակայում էր Ռուսաստանի հետ բարեկամական, դիվանագիտական բնականոն հարաբերություններ հաստատելու մտայնությունը՝ անկախ նրա պետական-քաղաքական կառուցվածքից. նշանակություն չունէր՝ որ Ռուսաստանը՝ խորհրդային՝, թե՞ ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան):

Հ. Քաջազնունու կազմած ծրագրի նախագծում ներառված էր Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական դիրքորոշումը հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ, սակայն օգոստոսի 3-ին Հայաստանի խորհրդի երկրորդ նիստում նա այն չհրապարակեց, ինչն էլ հարուցեց պառլամենտականների դժգոհությունը: Բոլորովին պատահական չէր, որ Քաջազնունին շրջանցեց ծրագրում տեղ գտած՝ Ռուսաստանին վերաբերող հատվածը:

¹ Նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում, թ. 11:

Այն պարունակում էր բավականին իրատեսական դատողություններ. «Ռուսաստանի հեռանալը Անդրկովկասից ուղղակի դժբախտություն է Հայաստանի համար: Դա մեզ համար ցանկալի չէր և եթե Ռուսաստանը երբևէ վերադառնա Անդրկովկաս, կստանա մեր աջակցությունը: **Սակայն մեր ընթացիկ քաղաքականությունը չի կարող կառուցվել ռուսական կողմնորոշման վրա:** Ներկա պահին Ռուսաստանը մեզ ոչնչով օգնել չի կարող: Այդ պատճառով ես կարծում եմ, որ **Ռուսաստանի հետ դիվանագիտական խաղերը կարող են կործանարար լինել:**

Դա կուժեղացնի թուրքերի կասկածամտությունը, և նրանք չեն վարանի դիմելու համապատասխան միջոցների Ռուսաստանի հետ մեր համագործակցությունը խափանելու համար:... Ռուսական կողմնորոշումը քաղաքական ուղղություն է, որը կարող է անհրաժեշտ լինել ապագայում, սակայն այժմ այն կարող է հանգեցնել նոր բարդացումների...»¹:

Ինչպես նկատում ենք, Հ. Քաջազունին բավականին սթափ է գնահատում ստեղծված իրավիճակը: Թուրքն ակնդետ հետևում էր Հայաստանի Հանրապետության քաղաքական քայլերին և ամեն ինչ կաներ՝ խափանելու Ռուսաստանի հետ նրա մերձեցումը՝ կանգ չառնելով և ոչ մի միջոցի առջև: Սակայն դա չէր նշանակում, թե ընդհանրապես մերժվում էր ռուսական գործոնի դերը հայ ժողովրդի կյանքում: Պարզապես այդ պահին պահանջվում էր զգուշավոր քաղաքականություն: «Այսպիսին է քաղաքականությունը, որը ես մտադիր եմ վարելու, – եզրափակում է Հ. Քաջազունին: – Այն թելադրված է այսօրվա իրավիճակից: Եթե իրավիճակը փոխվի, իսկ դա մեր օրերում կարող է պատահել ամեն րոպե, և քաղաքական ուղու կտրուկ շրջադարձի կարիք զգացվի, այդժամ ես իմ տեղը կզիջեմ այլոց, որոնք ավելի լավ կգնահատեն ստեղծված իրադրությունը և երկիրը կտանեն նոր ճանապարհով...»²:

Ի վերջո հարց է ծագում, թե Հ. Քաջազունին ինչու դա չհրապարակեց խորհրդարանում: Բանն այն է, որ կառավարության ծրագրում հայ-ռուսական հարաբերությունների մասին հատվածի հրապարակումը հղի էր անկանխատեսելի հետևանքներով: Այն կարող էր առիթ տալ Թուրքիային ռազմական նոր գործողություններ սկսել Հայաստանի Հանրապետության դեմ: Դեռևս 1918 թ. հունիսի 3-ին Բաթումում հայկական պատվիրակության ղեկավար Ա. Խատիսյանը Թուրքիայի ճնշման ներքո ստորագրել էր մի փաստաթուղթ և ստանձնել որոշակի պարտավորություն. «Հայաստանի հաշտության պատվիրակությունը, Ձերդ գերազանցության հետ անձնական բանակցությունների հիման վրա և Օսմանյան կայսրության ու Հայաստանի միջև հաշտության և բարեկամության պայմանագրի կնքման կապակցու-

¹ Նույն տեղում, թ. 12:

² Նույն տեղում, թ. 15:

թյամբ պատիվ ունի հավաստիացնելու հետևյալը. **Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է պատերազմի ամբողջ ընթացքում չպահպանել և ոչ մի դիվանագիտական կապեր այն պետությունների հետ, որոնք գտնվում են պատերազմական վիճակում Օսմանյան կայսրության հետ»**¹: Ինչպես երևում է այդ փաստաթղթից, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում էր մի կողմից՝ պատերազմի ամբողջ ընթացքում կապեր չունենալ Համաձայնության պետությունների, այդ թվում նաև Ռուսաստանի հետ, մյուս կողմից՝ հանրային կարծիքին ներկայացնել այդ փաստաթուղթը, ինչը նշանակում էր փորձության ենթարկել Հայաստանի Հանրապետության կառավարության վարկը, որովհետև «ռուսահայերը, գրում է Ա. Ջամալյանը,՝ երագում էին ռուսական տիրապետության վերադարձի մասին»²:

Իսկ ի՞նչ նկատի ունեւ Հ. Քաջագունին, երբ ծրագրում նշում էր, թե «ներկա պահին Ռուսաստանը մեզ ոչնչով օգնել չի կարող»: Բանն այն է, որ վերջինս այդ ժամանակ ներքաշված էր քաղաքացիական պատերազմում, և խորհրդային, կամավորական ու Կուլչակի հակամարտ ուժերից որևէ մեկի վերջնական հաղթանակը դժվար էր կանխատեսել:

Արտաքին աշխարհից լրիվ կտրված Հայաստանի Հանրապետությունը, հարկադրաբար խախտելով 1918 թ. հունիսի 3-ին Բաթումում ստորագրած պարտավորագիրը և հունիսի 4-ի պայմանագրի կետերը, խիստ գաղտնի և զգուշորեն փորձում էր ուղիներ որոնել՝ **հարաբերություններ հաստատելու Ռուսաստանի թե՛ խորհրդային և թե՛ ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ՝ անտեսելով այդ երկրում ընթացող քաղաքացիական արյունալի պատերազմը**:

Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու մի շարք լուրջ դրդապատճառները և անհապաղ լուծում պահանջող բազմաթիվ խնդիրները երկրի անկախացման առաջին ամիսներին այնքան բարդ ու բազմազան էին, որ չէին կարող անուշադրության կամ անտարբերության մատնվել Հայաստանի խորհրդի և կառավարության կողմից: Այն իրականացնելու նպատակով վերջիններս կարևորում էին Ռուսաստանի աջակցությունը.

1. Ապավինելով Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքին՝ Հայաստանի Հանրապետության նորակազմ կառավարությունը փորձում էր ճանաչել տալ իր անկախությունը և ապահովել ինչպես խորհրդային, այնպես էլ ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ բարեկամական հարաբերությունները:

¹ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 32, թ. 6, **Պետրոսյան Գ.**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Երևան, 2006, էջ 59:

² «Հայրենիք», 1924, հունիս, էջ 78:

2. Հույսեր էին տածում, թե Ռուսաստանը որևէ կերպ կգապի Ադրբեյջանի ու Վրաստանի թշնամական գործողությունները, Թուրքիայից մշտապես սպառնացող վտանգը:
3. Շրջափակման մեջ հայտնված Հայաստանի Հանրապետությունը ակնկալում էր Ռուսաստանից ներկրել հացահատիկ, զենք, զինամթերք և կենսականորեն անհրաժեշտ այլ ապրանքներ:
4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը մտահոգված էր Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտյան ռազմաճակատից, գերմանական ու ավստրո-հունգարական զորությունից տուն վերադարձող ցարական նախկին բանակի հազարավոր հայ սպաների ու զինվորների ճակատագրով, որոնք կուտակվել էին Ռուսաստանի հարավում՝ հայրենիք տեղափոխելու ուղիներ որոնելով:
5. Կարևորվում էին նաև Խորհրդային Ռուսաստանի և հարավի՝ Դոնի, Կուբանի, Թերեքի և Հյուսիսային Կովկասի հայկական համայնքներին օժանդակելու, ինչպես նաև նրանց մտավոր ուժերը և նյութական միջոցները հայրենիքի համար օգտագործելու խնդիրները: Հայաստանի Հանրապետության և Կուբանի երկրամասի ու Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության»^{*} միջև ապրանքափոխանակության իրականացումը անհետաձգելի լուծում պահանջող հարցերից էր: Հայաստանի կառավարությունը նախատեսում էր Եկատերինոդար ուղարկել հայկական կոնյակ, սպիրտ, բամբակ, կաշի և այլ արտադրանք, իսկ այնտեղից ստանալ հաց, սննդամթերք, զենք և այլ ապրանքներ:
6. Ռուսաստանի հետ կապերի հաստատման կարևոր պատճառներից մեկը, անշուշտ, գաղթականության խնդիրների հրատապ և հիմնավոր լուծումն էր:

Խորհրդային պատմագրության մեջ իշխող էր այն սխալ տեսակետը, թե Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու փորձեր չի ձեռնարկել և մասնակցել է նրա դեմ մղվող պայքարին: Սակայն իրողությունն այն է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքական ուժերի համար, ճիշտ է, բոլշևիկյան գաղափարախոսությունն անընդունելի էր, սակայն, ելնելով երկրի շահերից, նրանք ձգտում էին բարեկամական, բնականոն դիվանագիտական հարաբերություններ հաստատել ոչ միայն ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների, այլև Խորհրդային Ռուսաստանի հետ՝ անկախ նրանց քաղաքական կառուցվածքից:

Սակայն Հայաստանի Հանրապետության գոյության առաջին շրջանում (1918 թ. հունիս-նոյեմբեր) Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերու-

^{*} Օրենսդիր և գործադիր գործառույթներ իրականացնող մարմին:

թյուններ հաստատելու հանրապետության դիվանագիտական ջանքերը հաջողություն չունեցան¹:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը լուրջ ջանքեր գործադրեց՝ Կուրանում հակախորհրդային կառավարության և Ռուսաստանի հարավում նոր ձևավորված զինված ուժերի հրամանատարության հետ կապեր հաստատելու համար՝ ակնկալելով նրանց աջակցությունը հայ ռազմագերիներին և գաղթականներին հայրենիք տեղափոխելու, հաց, սննդամթերք, ռազմամթերք ձեռք բերելու և այլ խնդիրներ լուծելու գործում:

Սակայն Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ կապեր հաստատելու համար անհրաժեշտ էր հաղթահարել բազմաթիվ դժվարություններ: **Նրանք չէին ընդունում ռուսական նախկին կայսրության կազմից անջատված անկախ պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի գոյության փաստը:** Բայց և այնպես Կուրանի երկրամասի կառավարությունը և Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը Հայաստանի Հանրապետությանը հաց տալու խնդրանքին վերաբերվել են բարյացակամորեն՝ պատրաստակամություն հայտնելով թույլատրել դրա արտահանումը: Սակայն ինչպես հայտնի է, հացը Հայաստան հասցնելու ճանապարհին կային լուրջ խոչընդոտներ հատկապես Վրաստանով անցնելիս: Չնայած ձեռնարկված միջոցներին՝ Հայաստան էր հասնում հացի, սննդամթերքի և այլ ապրանքների փոքր խմբաքանակ: Վրաստանը Կուրանից առաքած ապրանքի մի մասը կամ ամբողջը բռնագրավում էր: 1918 թ. նոյեմբերի վերջին հաջողվեց Կուրանի երկրամասից Վրաստանով Հայաստան փոխադրել 100000 փութ հացահատիկ, որ աննշան քանակություն էր երկրի ծով կարիքները բավարարելու համար²:

Այսպիսով, հանրապետության գոյության առաջին փուլում (1918 թ. հունիս-նոյեմբեր) Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների հետ կրում էր կիսապաշտոնական, գաղտնի բնույթ: Հայաստանի կառավարությունը խուսափում էր նրանց հետ որևէ քաղաքական դաշինք կնքելուց և փորձում էր հարաբերությունները սահմանափակել առևտրատնտեսական շրջանակներում՝ հացահատիկ, սննդամթերք, զինամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ ներկրելով, ինչպես նաև հայ ռազմագերիներին և գաղթականներին հայրենիք տեղափոխելով:

1918 թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետությունը թևակոխեց իր գոյության երկրորդ փուլը (1918 թ. դեկտեմբեր-1920 թ. ապրիլ): Այն պայմանավորված էր շրջադարձային կտրուկ իրադարձություններով: Ավարտվեց Առաջին աշխարհամարտը: Թուրքիայի պարտությունը պատերազմում նշա-

¹ Մանրամասն տե՛ս **Պետրոսյան Գ.**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Երևան, 2011, էջ 61-71:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 553, թ. 14:

նակում էր Օսմանյան կայսրության փաստական կապիտուլյացիա Համա-
ձայնության պետությունների առջև: Նոյեմբերի 11-ին իր պարտությունը
ընդունեց նաև Կայզերական Գերմանիան: Համաձայն հոկտեմբերի 30-ին
Մուդրոս նավահանգստում կնքված զինադադարի 11-րդ հոդվածի՝ թուրքա-
կան զորքերը պետք է հեռանային Անդրկովկասի ամբողջ տարածքից¹: Բրի-
տանական զորամասերը 1918 թ. նոյեմբերի վերջերից սկսեցին մաս-մաս
մուտք գործել տարածաշրջան՝ փոխարինելով թուրքական հեռացող
զորքերին:

Նոյեմբերին ուժը կորցրել էին նաև Օսմանյան Թուրքիայի հետ 1918 թ.
հունիսի 3-ի պարտավորագիրը և հունիսի 4-ի դաշնագիրը: Փաստորեն քա-
ղաքական նոր պայմաններում այդ հարաբերությունները նոր ընթացք ստա-
ցան: Եթե հանրապետության գոյության առաջին փուլում, ինչպես վերը
նշվեց, դրանք կրում էին գաղտնի, կիսապաշտոնական բնույթ, ապա Առա-
ջին աշխարհամարտի ավարտից հետո Հայաստանի Հանրապետությունը
ազատ էր տնօրինելու իր արտաքին քաղաքականությունը՝ հարաբերու-
թյուններ հաստատելու ոչ միայն իր հարևանների, այլ նաև այլ երկրների
հետ:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո ստեղծված քաղաքական
նոր իրադրության պայմաններում Հայաստանի Հանրապետության իշխա-
նությունները դրսևորեցին **արևմտյան կողմնորոշում**՝ ակնկալելով, որ Հա-
մաձայնության պետությունները պատերազմը հաղթական ավարտի հասց-
նելու գործում կգնահատեն հայ ժողովրդի ներդրումը և հաշվի կառնեն նրա
կրած մեծ զոհողությունները, տարածքային կորուստները, կցուցաբերեն բա-
րի կամք և կաշխատեն լուծել հայության արդար պահանջը՝ ստեղծել միաց-
յալ ու անկախ Հայաստան: Այս առումով Հայաստանի Հանրապետության
կառավարությունը մեծ ակնկալիքներ ուներ Փարիզի խաղաղության վե-
հաժողովից:

Այս փուլում Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքի հարցը խիստ
տարակարծությունների տեղիք տվեց: Հանրապետության քաղաքական
ուժերի համար բոլշևիկյան գաղափարախոսությունն անընդունելի էր, սա-
կայն այն ձգտում էր բարիդրացիական, բնականոն հարաբերություններ
հաստատել ոչ միայն Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավո-
րումների, այլև խորհրդային իշխանությունների հետ: Ինչպես արդեն նշել
ենք, Հայաստանի անկախացման առաջին ամիսներին Խորհրդային Ռու-
սաստանի հետ հարաբերություններ հաստատելու հանրապետության դի-
վանագիտական ջանքերը հաջողություն չունեցան: Քաղաքական նոր՝
Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի շահերի

¹ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքա-
կանության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան,
1972, էջ 538:

բախման պայմաններում պաշտոնական Երևանը ձեռնպահ մնաց Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելուց, քանի որ այն կարող էր խիստ բացասական հետևանքներ ունենալ հանրապետության համար: Եթե Անգլիան չէր հանդուրժում անգամ իր «բարեկամ» Ռուսաստանի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների հետ Հայաստանի Հանրապետության բարեկամությունը, ապա իր պոտենցիալ թշնամու՝ Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություն հաստատելու փորձերը կարող էին ծանր հետևանքներ ունենալ երկրի համար: Գոյություն ունեւր նաև մեկ այլ կարևոր հանգամանք. խորհրդա-թուրքական մերձեցման պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության վերաբերմունքը Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ, մեղմ ասած, բարյացկամ չէր կարող լինել:

Ռուսաստանի հետ կապերը պահպանելու մի շարք լուրջ դրդապատճառներ և հրատապ լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ կային նաև հանրապետության գոյության այս երկրորդ շրջանում:

Ռուսաստանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքական շրջաններում կային իրարամերժ մտտեցումներ: Իրականում ո՞րն էր Հայաստանի Հանրապետության ու նրա ղեկավարության վերաբերմունքը: Ունենալով մեծ ակնկալիքներ Փարիզի խաղաղության վեհաժողովից՝ Հայաստանի Հանրապետությունը կողմնորոշվեց դեպի Արևմուտք, սակայն չէր ցանկանում հարաբերությունները խզել Ռուսաստանի հետ, այլ ձգտում էր ստանալ նրա բարյացակամ վերաբերմունքն ու աջակցությունը իր առջև ծառայած ծայրահեղ բարդ խնդիրները լուծելու գործում: Այդ առնչությամբ Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է. «Մեր նպատակն է ապահովել մեր անկախությունը եւ որոշ յենարան գտնել Ռուսիոյ մէջ»¹: Այնուհետև նա նշում է. «Ո՞ր Ռուսաստանի հետ խօսել եւ որի՞ բարեկամութիւնը ապահովել: Այդ ժամանակ կային երեք Ռուսաստան՝ Դենիկինի, Կոլչակի, Լենինի: Երեքն ալ համահասար ուժեղ, երեքն ալ նոյնքան հաւանականութիւններ ունէին որ տէրը պիտի դառնան ամբողջական Ռուսաստանի, բայց երեքն ալ միմեանց թշնամի: Երեք Ռուսաստանների հանդէպ, մեր վերաբերմունքը և սպասելիքները եղած են նոյնատեսակ, առանց գերադասելու մէկին կամ միւսին, առանց նրանց ներքին պայքարին մասնակցելու կամ պայմանաւորելու օժանդակելու մէկին միւսին դէմ»²: Պատմական այդ պահին հայ դիվանագիտությունը իր ջանքերն ուղղել էր դեպի Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումները, ավելի որոշակի՝ հարավի հակախորհրդային ուժերը՝ Ա. Դենիկինի իշխանությունը, և փորձում էր ստանալ նրա աջակցությունը: Սակայն Ռուսաստանի հարավի զինված ուժերի Գերագույն

¹ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ե, Թեհրան, 1982, էջ 262:

² Նույն տեղում:

գլխավոր հրամանատարությունը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը», հավատարիմ իրենց «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագրին, Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի Հանրապետության՝ որպես անկախ պետության գոյությունը դիտում էին իբրև ժամանակավոր երևույթ, մինչև վերջնական հաղթանակը բոլշևիզմի՝ խորհրդային իշխանության դեմ: Այդ հանգամանքը ստիպում էր Հայաստանի կառավարությանը ծայրահեղ զգուշավորություն ցուցաբերել Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» նկատմամբ: Վերջիններս շարունակում էին Հայաստանի Հանրապետությունը դիտել իբրև ռուսական նահանգ՝ 1914 թ. սահմաններով: Ռուսաստանը թեև ցնցվում էր քաղաքական վայրիվերումներից, բայց չէր հրաժարվում Անդրկովկասից: Դա բխում էր ռուսական պետության կայսերապաշտական քաղաքականության տրամաբանությունից՝ անկախ «կարմիրներ-սպիտակներ» հակամարտությունից: Սակայն Անդրկովկասը, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունն անդրդվելի էին և համառոտեն ամեն ջանք գործադրում էին՝ պահպանելու ձեռք բերած անկախությունը և անվտանգությունը:

Անշուշտ, դա ձեռք բերվեց վիթխարի ջանքերի գնով, բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարելու, շրջահայաց ու ճկուն արտաքին քաղաքականություն իրականացնելու շնորհիվ: Հակառակ ռուսական ոչ խորհրդային պետական կազմավորումների համառ պահանջի՝ Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն հայտարարեց իր անկախությունը, այլև այն ամրապնդեց՝ ընդունելով «Միացյալ և անկախ Հայաստանի» մասին հռչակագիրը:

Իրականացնելով զգույշ ու հավասարակշռված արտաքին քաղաքականություն՝ Հայաստանի Հանրապետությունը դաշինքի մեջ չմտավ Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի հետ և չնայած նրա հետ ունեցած երկամյա բարեկամական հարաբերություններին՝ սահմանափակվեց ռազմատեխնիկական ու առևտրատնտեսական կապերի շրջանակներով՝ նպատակ ունենալով առաջին հերթին ապահովել ծանր վիճակում գտնվող երկրի անվտանգությունը, առաջին անհրաժեշտության ապրանքների ներկրումը, ինչպես նաև հայ ռազմագերիներին ու գաղթականներին հայրենիք տեղափոխելը:

Բացահայտելով Հայաստանի Հանրապետության հարևանների՝ իր դեմ լարած որոգայթներն ու դավերը՝ Հայաստանի Հանրապետությունը, հանուն երկրի անվտանգության, հրաժարվեց միանալ Վրաստանի և Ադրբեջանի հակառուսական ռազմական դաշինքներին (1919 թ. հունիս-սեպտեմբեր)¹ ու քաղաքական այլ խաղերին, որոնք ուղղված էին ոչ միայն Կամավորական բանակի և ընդհանրապես Ռուսաստանի, այլև, փաստորեն, Հայաստանի

¹ Տե՛ս Պետրոսյան Գ., նշվ. աշխ., էջ 287-349:

Հանրապետության դեմ: Ստեղծված պայմաններում միանգամայն արդարացված էր արդեն քննություն բռնած չեզոքության քաղաքականությունը:

Ինչպես վերը նշվեց, հանրապետության գոյության առաջին փուլում (1918 թ. հունիս-նոյեմբեր) հայ-ռուսական հարաբերությունների հաստատման հիմնական խոչընդոտը 1918 թ. հունիսի 3-ի փաստաթուղթն էր, որով Հայաստանը Թուրքիայի առջև պարտավորություն էր ստանձնել պատերազմի ամբողջ ընթացքում դիվանագիտական հարաբերություններ չունենալ Համաձայնության երկրների և Ռուսաստանի հետ: Սակայն քաղաքական նոր իրադրության պայմաններում՝ հանրապետության գոյության երկրորդ փուլում (1918 թ. դեկտեմբեր-1920 թ. ապրիլ), հայ-ռուսական հարաբերություններում կարճ ժամանակ անց ծագեց նոր խոչընդոտ՝ պայմանավորված տարածաշրջանում անգլիական զորամասերի մուտքով:

Կարևոր է նկատել, որ քողարկվելով խաղաղարարի առաքելությամբ՝ Անգլիան թաքցնում էր իր իրական նպատակը՝ հաստատվել Անդրկովկասում: Տարածաշրջանում նրա բոլոր քայլերը ուղղված էին դրան:

Դեռ 1917 թ. դեկտեմբերի 23-ին Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի միջև կնքված գաղտնի պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանը բաժանվել էր ազդեցության ոլորտների: Մեծ Բրիտանիան տնօրինելու էր Հյուսիսային Կովկասը, Անդրկովկասը, Թուրքեստանը, Ֆրանսիայի վերահսկողության ոլորտ էին անցնելու Բեասարաբիան, Ուկրաինան, Ղրիմը և Դոնբասը¹:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Մեծ Բրիտանիան անմիջապես ձեռնամուխ եղավ Կովկասը Ռուսաստանից վերջնականապես մեկուսացնելու և իր ազդեցությունը այնտեղ հաստատելու ծրագրին, քանի որ այն մեծ նշանակություն ուներ նրա համար՝ որպես ռազմավարական կարևոր դիրք ունեցող տարածաշրջան, որը պետք է դառնար բոլշևիկների՝ դեպի Մերձավոր Արևելք առաջխաղացումը կանխող արգելապատնեշ: Իսկ Մեծ Բրիտանիայի տնտեսական հետաքրքրությունը, անշուշտ, նաև նավթն էր²:

Անդրկովկասում հաստատվելու և իր ռազմավարությունը իրականացնելու համար Մեծ Բրիտանիան, բնականաբար, պետք է հաղթահարեր տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը և հասներ այն բանին, որ Անդրկովկասն այլևս չընդգրկվեր նրա կազմում: Ուստի պատահական չէր գեներալ Ջ. Ուոքերի հայտարարությունը. «**Անգլիացիները չեն կարող թույլ տալ Ռուսաստանի հետ Անդրկովկասի վերամիավորվելուն ուղղված որևէ քարոզչություն**»: Դա անգլիական գեներալը պատճառաբանում էր այս կերպ. «Խաղաղության վեհաժողովը Անդրկովկասի պետական կառուցվածքի

¹ Ст' у Российский государственный архив социально-политической истории, ф. 71, оп. 35, д. 195, л. 151:

² Ст' у Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, т. 1, М., 1957, с. 274-276, 279-280, Черчилль У., Мировой кризис, М., 1932, с. 157:

հարցի լուծումը դեռևս չի տվել»¹: Այս ամենը լույս է սփռում այն հարցի վրա, թե ինչու բրիտանական զինվորական հրամանատարությունն ամեն կերպ խոչընդոտում էր, որ Հայաստանի Հանրապետությունը հարաբերություններ չհաստատի գեներալ Ա. Դենիկինի Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ: Առաջին հայացքից թվում է անհասկանալի, թե այդ դեպքում ինչու Համաձայնության պետությունները և առաջին հերթին Մեծ Բրիտանիան ստանձնել էին պարտավորություն՝ ամեն կերպ օգնելու գեներալ Ա. Դենիկինին: **Իհարկե, նպատակն այն չէր, որ վերջինիս միջոցով վերականգվեր Ռուսական կայսրությունն իր նախկին սահմաններով, այլ այն, որ գեներալ Ա. Դենիկինը տապալեր խորհրդային իշխանությունը:** Մեծ Բրիտանիան Անդրկովկասում այնպիսի խորամանկ քաղաքականություն էր վարում, որ շփոթության մեջ էր գցում անգամ գեներալ Ա. Դենիկինին: Ուշագրավն այն էր, որ Համաձայնության պետությունները վերջինիս անվերապահորեն օգնելու պարտավորություն էին ստանձնել: Հայերին թվում էր, թե «դաշնակից» Մեծ Բրիտանիայի զինվորների ներկայությունն Անդրկովկասում կապահովի կայուն խաղաղություն, ազգամիջյան հակամարտությունները և տարածքային վեճերը արդարացի լուծում կստանան: Հայերը համոզված էին, որ Առաջին աշխարհամարտում թափած արյունը գուր չի կորչելու. մոտեցել է հատուցման երկար սպասված ժամը, և Համաձայնության պետությունների կառավարությունները կկենսագործեն իրենց խոստումները: Բրիտանական զորամասերի մուտքը տարածաշրջան (մինչև 1919 թ. առաջին ամիսները) ոգևորություն և մեծ հույսերի պատրանք ստեղծեցին անգամ Հայաստանի Հանրապետության առանձին ղեկավարների և քաղաքական գործիչների շրջանում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Առաջին աշխարհամարտի հոգեբանական ազդեցության տակ դեռ շարունակում էր Ռուսաստանի հարավը համարել Համաձայնության պետությունների դաշնակից՝ իր բարեկամ: Նա չկարողացավ ժամանակին և ճիշտ գնահատել պատերազմի ավարտից հետո Մեծ Բրիտանիայի քողարկված, երբեմն բացահայտ հակառուսական զավթողական ձգտումները Անդրկովկասում: «Չէր գիտակցում կամ չէր կամենում գիտակցել,– գրում է Ռուբեն Դարբինյանը,– քաղաքական այն պարզ ճշմարտությունը, թե ռուսը, որին նա բարեկամ է համարում, անհամեմատ աւելի մեծ թշնամի է դաշնակից պետութեանց համար, քան թուրքը: Հետևաբար բարեկամութիւնը ռուսի հետ կասկածելի եւ վտանգաւոր էր դարձնում նաեւ հայի դիրքը եւ քաղաքականութիւնը դաշնակից մեծ տէրութեանց աչքում»²:

¹ Деникин А., Очерки русской смуты. В 3-х книгах. Кн. 3/ т. 4, т. 5. Вооруженные силы Юга России, М., 2003, с. 204:

² Դարբինյան Ռ., Ռուսական վտանգը, Երևան, 1991, էջ 76:

Մեծ Բրիտանիան չէր հանդուրժում Հայաստանի Հանրապետության բարեկամական կապերը Ռուսաստանի հարավի հետ և նրան համարում էր անուղղելի ռուսասեր, անվստահելի մի տարր Անդրկովկասում: Իր ռազմավարական նպատակն իրագործելու համար Մեծ Բրիտանիան բնականաբար պետք է ապավիներ տարածաշրջանի ժողովուրդների աջակցությանն ու համակրանքին: **Հայերը նրան վստահություն չէին ներշնչում ավանդական ռուսական կողմնորոշման պատճառով:** Բրիտանական զինվորական հրամանատարությունը Անդրկովկասի մուսուլման բնակչությունը դիտում էր իբրև ավելի հավատարիմ, հակառուսական ավելի վստահելի տարր: «Անդրկովկասի թիրաքութիւնը բրիտանական զորահրամանատարութեան օրով ավելի նպաստավոր պայմանների մեջ է գտնվում, – գրում է Ս. Տիգրանյանը, – քան գերման-օսմանյան հաղթական օկուպացիայի ժամանակ: ... **Անգլիացին չէ հավատում հային, ավանտաբար համարելով սրան անուղղելի ռուսասեր, ռուսական օրիենտիցիայի անհողտոտ հետամտող...** Բնորոշ է, որ գեներալ Ֆոքստիե Ուոկկերի պահանջով կամավորական զորաբանակի ներկայացուցիչը (գնդապետ Լեալի – *Չ. Պ.*) հեռացավ Երեվանից դեպի Եկատերինոտար, այդ մի նոր փաստ է ապացուցանելու Անգլիայի ունեցած վերաբերմունքը դեպի Ռուսիայի ներկայությունը Անդրկովկասում: Այն համարումն ու այս վերաբերմունքն է, որ տրամադրում է բրիտանական զորահրամանատարությանը չնպաստել մեր ուժերի կազմակերպմանը ու զորեղացմանը թյուրքության դեմ Անդրկովկասում, որովհետև թյուրքն է նրա աչքում անվստահելի պատվարը Ռուսիայի դեմ այստեղ»¹:

1918 թ. դեկտեմբերին սկսված հայ-վրացական պատերազմում բախվեցին Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի ու նրան կից «Հատուկ խորհրդակցության» շահերը: Կամավորական բանակը ձգտում էր պատերազմի հարմար առիթը օգտագործել իր ազդեցությունը Անդրկովկասում ընդլայնելու և սևծովյան ափերը գրավելու համար: Իսկ բրիտանական զինվորական հրամանատարությունը գեներալ Ա. Դենիկինի ռազմավարությունը խափանելու և հայերի ռուսամետությունը չեզոքացնելու նպատակով օգնեց Վրաստանին: Սրանով էին պայմանավորված նաև վրացական և անգլիական հետախուզության համատեղ աշխատանքը և նրանց հարաբերությունների էլ ավելի սերտացումը²:

Գեներալ Ջ. Ուոքերը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին հայտնում է, որ «հայ-վրացական պատերազմը հայերը սկսել են Կամավորական բանակի հետ դաշնակցած և նպատակ են ունեցել վերացնել Վրաստանի անկախությունը»: Նա նաև նշել է. «Չեմ

¹ ՀԱՍ, ֆ. 200, ց. 2, գ. 43, թ. 2-3:

² Ст. в Российский государственный военно-исторический архив, ф. 39540, оп. 1, д. 44, л. 19:

թույլ տա Վրաստանի դեմ դուրս գալ»¹: Իսկ գեներալ Վ. Թումսոնը հունվարի սկզբին Բաքվում Մ. Պապաջանյանի հետ հանդիպման ժամանակ վրոզոված ասել է, որ «հայերն առաջինը սկսեցին պատերազմը, որին նախօրոք պատրաստվել էին և վրացիներին անակնկալի բերեցին ... հայոց բանակի սպաները միաժամանակ համարվում են Կամավորական բանակի ծառայողներ, օրինակ գնդապետ Մ. Զինկևիչը: Հայերը ամեն ինչ անում են, որ իրենց դոները փակեն»²: Իսկ գեներալ Մ. Արեշովի հետ դեկտեմբերի 28-ի հանդիպման ժամանակ Ջ. Ուոքերը ժպտալով ասել է. «Շարունակենք պատերազմը ... դա, իհարկե, Հայաստանի ցանկությունը չի լինելու»³:

այլք: Այդ գործում իր որոշակի մասնակցությունն է ունեցել նաև գեներալ Հ. Գ. Բագրատունին¹, որը 1919 թ. օգոստոս-նոյեմբերին գլխավորել է ԱՄՆ մեկնած ՀՀ ռազմական պատվիրակությունը, իսկ այնուհետև նշանակվել Հայաստանի Հանրապետության դեսպան Լոնդոնում:

Գլխավոր շտաբի հակահետախուզության բաժանմունքը ղեկավարել է Ա. Ն. Հովհաննեսովը՝ Հովհան Խան-Կոտուրսկին (կամ Խան-Ղոթուրի), որին փոխարինում է հանձնարարությունների գծով սպա Գ. Խաչատրյանը: Հակահետախուզության բնագավառում էր աշխատում նաև պորուչիկ Բեկզադյանը, որն ավելի շատ հայտնի է իր թիֆլիսյան գործունեությամբ՝ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության կազմում: ՀՀ հետախուզական և հակահետախուզության մարմիններ են գործել նույնիսկ Լեռնային Հայաստանում (Սյունիք-Չանգեզուրում), որի ղեկավարը հայտնի Յապոնն էր (Ա. Հ. Պարոնյանը), իսկ աշխատակիցը՝ Ավ. Դադայանցը²: Ինչպես վկայում են փաստերը, ենթասպա, հետախույզ Ավ. Դադայանցը, որը այնուհետև ծառայել էր Գ. Նժդեհի զորամասերում, եղել է Յապոնի ղեկավարած հակահետախուզական ջոկատում, 1921 թ. ձերբակալվել է խորհրդային իշխանության կողմից և հանիրավի գնդակահարվել³:

Առհասարակ, ՀՀ Նախարարների խորհրդին մշտապես մտահոգել են ռազմական շինարարության և պետական անվտանգության համակարգի տարբեր օղակների ու ստորաբաժանումների կայացման, այդ թվում և հետախուզական ու հակահետախուզական ծառայության կազմակերպման հարցերը, որոնց աշխատանքների համար գործադրվել են իրական ջանքեր, և հատկացվել որոշակի գումարներ՝ թեկուզև ոչ շատ մեծ:

Սակայն կազմակերպական-ֆինանսական խնդիրները դյուրին ձևով չէին լուծվում, իսկ երբեմն արհեստական խոչընդոտներ էին հարուցվում, որոնք դժվարացնում էին հայկական հետախուզական ծառայությունների աշխատանքները: Դա բավականաչափ հստակ է երևում 1919 թ. մայիսի 2-ի Գլխավոր շտաբի պետին հասցեագրված զեկուցագրից, որում հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Հ. Խան-Կոտուրսկին նշում էր, որ հետախուզական բաժնի գործունեության ընդարձակման և հարևան երկրներում նոր կետերի բացման հետ կապված անհրաժեշտ է հոգ տանել, որ Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հետախուզության գործակալները որոշակի աջակցություն ունենային իրենց երկրի դիվանագիտական

¹ Տե՛ս **Հայագն (Պետրոսյան) Տ., Ղազարյան Գ.**, 1000 հայագրի գեներալներ, ծովակալներ. Կենսագրական հանրագիտարան, Երևան, 2009, էջ 114-115: Տե՛ս նաև Ով ով է. Կենսագրական հանրագիտարան, հ. 1, Երևան, 2005, էջ 187:

² Տե՛ս ЕФ МНЮИ - XXI век, № 07-08, сентябрь-октябрь, 1998, с. 8-13, ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 131, թ. 24:

³ Տե՛ս **Մանուկյան Ա.**, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Երևան, 2002, էջ 90:

ներկայացուցիչների կողմից: Խան-Կոտուրսկին գտնում էր, որ անհրաժեշտ է խնդրել Արտաքին գործերի նախարարությանը կարգադրություններ անել բոլոր դիվանագիտական ներկայացուցիչներին ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Թուրքիայում, իսկ աջակցությունը հետախուզության գործակալներին ներկայացուցչությունների պարտականությունն է¹: Արդեն 1919 թ. մայիսի 21-ին Գլխավոր շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար, փոխգնդապետ Ա. Շնեուրը Ջինվորական նախարարին ուղղված դիմումագրում խնդրում էր Արտաքին գործերի նախարարության միջոցով աջակցել հետախուզության աշխատակիցներին²: Այդ նույն օրը Հայաստանի Ջինվորական նախարար, գեներալ-մայոր Քր. Արարատյանը գաղտնի գրությամբ դիմում է Արտաքին գործերի նախարարին և խնդրում կարգադրել ամենայն օգնություն ցուցաբերել հետախուզության աշխատակիցներին³:

1919 թ. ապրիլի 9-ի որոշմամբ ԱԳ նախարարությանը կից ստեղծվում է տեղեկատվական բյուրո, որի գործունեությունը Ջինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հատուկ բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ռ. Չալխուշյանի կարծիքով պետք է նպատակամղվեր հակահետախուզական բաժանմունքի առջև դրված խնդիրների իրագործմանը և գտնվեր Ջինվորական նախարարության վերահսկողության ներքո: Տեղեկատվական բյուրոյի գործունեության շրջանակներին էին վերաբերում՝ 1) ռազմական բնույթի տվյալները գործամասերի տեղաբաշխման, զինվածության և զինմատակարարման մասին և այլն, 2) հարևան երկրների կառավարությունների կողմից ընդունվող քաղաքական բնույթի միջոցառումները, գործակալական շարժումը, մամուլի նկատմամբ գրաքննչական վերահսկողության ուժեղացումը: Ըստ այդ մտահղացման՝ բյուրոն պետք է սերտորեն համագործակցեր ռազմական հակահետախուզության հետ⁴: Ջինվորական և Արտաքին գործերի նախարարությունների միջև կայացած համաձայնությամբ Վրաստանում և Ադրբեջանում պետք է նշանակվեին զինվորական կցորդներ, որոնց գործառնություն էր անհրաժեշտ տեղեկությունների հավաքումը: Չալխուշյանը հատուկ ընդգծում էր, որ բյուրոն և ռազմական հակահետախուզությունը պետք է աշխատեին սերտ փոխհամագործակցության պայմաններում՝ օգնելով միմյանց հայրենանվեր աշխատանքում⁵:

Հետագայում Հայոց Ազգային խորհուրդը 1918 թ. հուլիսի 16-ի նիստում նպատակահարմար գտավ ՀՀ զինվորական գերատեսչությունից վերցնել Տեղեկատվական բյուրոն և հանձնել ՀՀ արտաքին գործերի նախարարության-

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 155, թ. 24:

² Տե՛ս նույն տեղում:

³ Նույն տեղում, թ. 23:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 9:

⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 9, 9 հակ.:

նը՝ ի դեմս Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցչության¹, որը հետախուզական գործունեություն էր իրականացնում Վրաստանում և նրան սահմանակից Ադրբեջանի, Հարավային Ռուսաստանի և հարակից այլ տարածքներում:

Կայացման գործընթացները դժվարությունների էին հանդիպում: Կյանքի հրամայականն էր անհապաղ իրական կապեր ապահովել հետախուզական ծառայությունների և արտգործնախարարության համակարգի միջև և դրանք ծառայեցնել ՀՀ ազգային անվտանգության համակարգի հրատապ խնդիրներին: 1920 թ. մայիսի 8-ին Հայաստանի առաջին Հանրապետության Նախարարների խորհուրդը, լսելով Ջինվորական նախարարի զեկուցումը արտասահմանում հետախուզական և հակահետախուզական գործի մասին, որոշում է կայացնում այդ կառույցների գործունեությունը ենթարկել Հայաստանի Հանրապետության դեսպանների հսկողությանը²:

Այս ճանապարհին կարևոր քայլ էր արտասահմանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններին կից զինվորական ներկայացուցիչների (գործակալ, կցորդ, աթաշե, որոնք ըստ Ռ. Ռուանի՝ դեռևս 1920-1930-ական թվականներին համարվում էին «*հավատարմագրված լրտեսներ*»³) ինստիտուտի ստեղծումը: Այս առումով, անկասկած, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ Ջինվորական նախարարության Գլխավոր շտաբի գեներալ-մայոր Գ. Գ. Ղորղանյանի (Ղորղանով-Կորգանով) բազմաբեղուն գործունեությունը: Դեռևս 1918 թ. դեկտեմբերի 3-ին նա Ջինվորական նախարարին է ներկայացնում մի ուշագրավ զեկույց, որում հարց էր բարձրացնում այսպես կոչված «զինվորական ագենտների» համակարգ ստեղծելու անհրաժեշտության մասին և այն հիմնավորում: Նա գտնում էր, որ զինվորական կցորդը պետք է հետևեր այլ պետության զինված ուժերի գործողություններին և բացահայտեր այն հնարավոր ուժերը, որոնց հետ հնարավոր էին բախումներ: Մանրագին ներկայացնելով զինվորական կցորդ-գործակալների առջև դրված խնդիրները՝ Գ. Ղորղանյանը հանգել էր այն հետևության, որ առանց զինվորական գործակալների՝ հետախուզության գործի ճիշտ կազմակերպումը իրագործելի չէ: Ուստի անհրաժեշտ էր ամեն տեղ ստեղծել զինվորական գործակալություն, հատկապես Վրաստանում և Ադրբեջանում: Ղորղանյանը գտնում էր, որ զինվորական գործակալները, պետք է նշանակվեն Ջինվորական նախարարի կողմից և ենթակա ու հաշվետու լինեն միայն նրան⁴:

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 81, թ. 2-3, 5-8, 11:

² Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 489, թ. 62, ֆ. 278, ց. 1, գ. 11, թ. 16:

³ Տե՛ս **Ռուան Ռ.**, Հետախուզություն յեվ հակահետախուզություն, Ռոստով-Դոն, 1937, էջ 10:

⁴ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 27, թ. 27 (72), թ. 62, ֆ. 278, ց. 1, գ. 11, թ. 16:

1919 թ. մարտի 31-ին գեներալ-մայոր Արարատյանը կրկին անդրադառնում է Ղորղանյանի՝ Թիֆլիսում և Բաքվում զինվորական գործակալներ ունենալու անհրաժեշտության առաջարկին: Ըստ նրա՝ այդ պաշտոնյաներին պահելու հոգսը կարող է իրականացվել Ջինվորական նախարարության ընդհանուր վարկի հաշվին: Վերջում նա խնդրում էր հաստատել իր առաջարկները և թույլատրել ռազմական կցորդների վարկավորումը սկսած ապրիլի 1-ից՝ ընդամենը 180 հազար ռուբլի բաց թողնել մինչև 1919 թ. հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի համար¹:

1919 թ. մարտով թվագրվող Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցչության փաստաթղթերից մեկում արդեն շարադրված են ռազմական գործակալների գործունեության ընդհանուր սկզբունքները²: Այդ գործի համար միակ հնարավոր թեկնածուն համարվում էր Գ. Ղորղանյանը, որը փայլուն տիրապետում էր ֆրանսերենին, անգլիացիներին գիտեր Պարսկաստանից, որտեղ ծառայել էր գեներալ Ն. Ն. Բարաթովի էքսպեդիցիոն կորպուսի շտաբում, Կովկասյան հեծելազորային դիվիզիայի պետ և ՀՀ Ջինվորական խորհրդի անդամ էր, որոշակի հեղինակություն էր վայելում Անդրկովկասում գտնվող ֆրանսիական, անգլիական ռազմական ներկայացուցչությունների շրջանում: Հենց այս թեկնածության նկատմամբ շատ բարեհաճ էր տրամադրված նաև Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար Լ. Գ. Եվանգուլյանը (Եվանգուլով), որը համառոտ են պաշտպանում էր Գ. Ղորղանյանի թեկնածությունը զինվորական կցորդի պաշտոնում³: Սակայն կային նաև այլ թեկնածություններ, որոնցից էին դիվանագիտական ներկայացուցչության կազմում գտնվող գնդապետ Շահբաթովը, գեներալ-մայոր Հ. Հախվերդյանը, ՀՀ զինվորական դատարանի նախագահ, գեներալ Հ. Ա. Քիշմիշյանը և այլք: Ջինվորական նախարարի 1919 թ. հուլիսի 13-ի հրամանով Հ. Ա. Քիշմիշյանը Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի և Անտանտի տերությունների ներկայացուցիչների համաձայնությամբ նշանակվում է Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական կցորդ:

ՀՀ պետական անվտանգության համակարգի կարևոր օղակներից էին միլիցիան և ՆԳ նախարարությունը, որոնց ստեղծման ու աշխատանքների կազմակերպման ուղղությամբ 1918-1920 թթ. որոշակի ջանքեր գործադրվեցին ՀՀ կառավարության կողմից: Այդ գործընթացներին ակտիվորեն մասնակցեցին թե՛ Հայաստանի խորհրդարանը և թե՛ Նախարարների խորհուրդը: Սկզբնական և հատկապես Արամ Մանուկյանի «դիկտատորության» ժամանակահատվածում Ներքին գործերի նախարարությունը մի ճյուղավորված համակարգ էր, որի մեջ մտնում էին և՛ ՆԳՆ-ին հատուկ ուժային ու մի-

¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 27, թ. 27 (72), թ. 142:

² Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 114, թ. 10 -12:

³ Նույն տեղում, թ. 13, ֆ. 121, ց. 1, գ. 111, թ. 1, գ. 9, թ. 15:

լիցիոն կառույցները, և՛ տարաբնույթ այլ գործառույթներ իրականացնող զեմստվային-քաղաքային, նահանգային ու գավառային կառավարման վարչական հաստատությունները: Ռ. Տեր-Մինասյանը գրում է հետևյալը. «Ներքին Գործոց Նախարարությունը, այնպես ինչպես Արամի ժամանակը կը ներկայանար՝ նրանից յետոյ մինչեւ Հանրապետութեան անկումը այլեւս գոյութիւն չունեցաւ: Արամի մահուանից յետոյ Ներքին գործոց Նախարարութիւնը մեռաւ եւ դարձաւ մի պարզ վարչութիւն»:

Հայաստանի Հանրապետութեան ստեղծումից առաջ, Արամը Երեւանի նահանգի դիկտատորն էր ընտրուած եւ յանձինս նրան՝ փաստական հայկական իշխանութիւն էր ստեղծուած դեռ 1917-ից: 1918-ին, երբ Հայաստանի օրինական կառավարութեան՝ Քաջագնունու դահլիճն էր կազմված, փաստօրէն կառավարութիւնը մնում էր Արամը, թէեւ նա ներքին գործոց նախարար էր միայն: Նրա ձեռքն էին, այն ժամանակները, ե՛ւ լուսաւորութեան, ե՛ւ Խնամատարութեան, Պարենավորման ե՛ւ Հաղորդակցութեան բաժինները, որոնք հետագային բաժանուեցին առանձին նախարարութիւնների: Բայց էականը գործերի բարդութիւնը չէր, այլ նրանց ուղղութիւնը: Արամի ժամանակ, Ներքին գործոց նախարարութիւն ասելով պետք էր հասկանալ պետութեան ֆիզիքական ոյժը եւ կառավարական վարչամեքենան, մարմնացումը պետական եւ կուսակցական բարոյական հասկացողութեանց, օրենքների գործադրման եւ պարտադրման միակ խողովակն ու միջոցը, կեդրոնը, որտեղ ամփոփում էին Հայաստանը կազմակերպելու բոլոր ձգտումներն ու ճիգերը: Արամի ատեն, Ներքին գործոց նախարարութիւնը կը ներկայացնէր ամէն ինչ»¹: Այդուհանդերձ, այդ ճյուղավորված համակարգի շրջանակներում ևս կատարվում են առաջին քայլերը միլիցիա և ՆԳՆ համակարգին հատուկ ուժային այլ մարմիններ կազմակերպելու ուղղությամբ: Ամեն դեպքում ՆԳՆ-ն մնում էր ՀՀ կաբինետի «անկյունաքարը»՝ մինչ դրա վերածումը մի շարք դեպարտամենտների, առանձին նախարարությունների 1919 թ. կեսերին: Իսկ որպեսզի այն դառնար լիարժեք և գործուն օրգանիզմ, որի արգասաբեր գործունեությունից էր կախված երկրի ներքին անվտանգության ապահովումը, ՀՀ ՆԳ նախարարներից մեկը՝ Ա. Գյուլխանդանյանը, եզրահանգում է. «Իմ ցանկութիւն էր այդ կենտրոնական օրգանը (Վարչութիւն և Միլիցիայի բաժին) դնել այնպիսի պայմանների մեջ, որ համարեա ամբողջ Դիւանը բաղկացած լինէր համալսարանական կրթութեամբ մարդկանցից, որպէս զի ապագայում նրանցից մշակուէին երկրիս վարիչներ: Այդ որոշ չափով կձառայէր նրանց իբր եւ վարչական մի վարժութիւն, որը փորձառութիւն կտար նրանց»²:

¹ Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հ. է, Արտասահման, Սասուն եւ Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 312:

² ՀԱԱ, ֆ. 202, ց. 1, գ. 523, մաս I, թ. 95, 95 հալ.:

Այդ գործընթացների կազմակերպական տեսանկյունից շատ կարևոր էր ՀՀ խորհրդարանի կողմից 1920 թ. ապրիլի 21-ին միլիցիայի մասին ժամանակավոր օրենքի ընդունումը՝ հաստատված Ժամանակավոր կառավարության կողմից 1917 թ. ապրիլի 17-ին և փոփոխված Հայաստանի խորհրդարանի կողմից 1920 թ. ապրիլի 21-ին: Իսկ 1920 թ. հունիսի 16-ին օրենքը հավելում է ստանում¹:

1920 թ. միլիցիոներների թիվը Հայաստանի Հանրապետությունում հասնում էր 4562-ի, այդ թվում Երևանի գավառում՝ 434-ի, Էջմիածնի՝ 268-ի, Սուրմալուի՝ 236-ի, Ղարաքիլիսայի՝ 235-ի, Ալեքսանդրապոլի՝ 273-ի, Դիլիջանի՝ 253-ի, Ն. Բայազետի՝ 247-ի, Դարալագյազի՝ 162-ի, Կաղզվանի՝ 419-ի, Օլթիի՝ 419-ի, Արդահանի՝ 519-ի, Կարսի՝ 419-ի, Գողթնի՝ 228-ի, Նախիջևանի՝ 228-ի, Շարուրի՝ 162-ի, Ղարաբաղում և Զանգեզուրում՝ համապատասխանաբար 268-ի և 268-ի²: Ուշագրավ են Ղարաբաղի և Զանգեզուրի միլիցիայի հաստիքացուցակի տվյալները, քանզի ՀՀ կառավարությունը և խորհրդարանը նշված գավառները, անկախ Ադրբեջանի ագրեսիվ մտադրություններից և հավակնություններից, միշտ համարել են ՀՀ տարածքի անբաժանելի մաս: Ուստի օրինաչափ էին ոչ միայն այդ գավառամասերում քաղաքացիական վարչակազմ ունենալը, այլև միլիցիայի և ՆԳ նախարարության անհրաժեշտ օղակներ և ստորաբաժանումներ ստեղծելու քաղաքականությունը: Դրանք պետք է ՀՀ անվտանգության անհրաժեշտ հենակետերը լինեին՝ ապահովելով հայ բնակչության օրինական շահերն ու իրավունքները Ղարաբաղում և Զանգեզուրում³:

Սակայն հայկական պետության գլխավոր հենքը և անվտանգության համակարգի գլխավոր երաշխավորողը անկախության հռչակման պահից Հայոց բանակն էր: Զինվորական նախարարության կազմավորումը սկսվեց 1918 թ. հունիսի 15-ին՝ ռազմական նախարարի նշանակմամբ, որին կից դեռևս Թիֆլիսում ձևավորվել էր Գլխավոր շտաբը: ՀՀ անդրանիկ Զինվորական նախարարը դարձավ գեներալ-լեյտենանտ Հ. Բ. Հախվերդյանը, որից հետո պետական անվտանգության համակարգի այդ կարևորագույն կառույցը գլխավորեցին Ք. Գ. Արարատյանը, Ռ. Կ. Տեր-Մինասյանը, իսկ բոլշևիկյան շրջադարձի պահին՝ Դրոն՝ Դ. Մ. Կանայանը⁴: Անվտանգության համակարգի ձևավորման և բանակաստեղծ գործընթացների ճանապարհին, անշուշտ, կարևոր քայլ էր 1919 թ. սկզբին ՀՀ Զինվորական նախարարությանն առընթեր Ռազմական խորհրդի ստեղծումը, որը կոլեգիալ ձևով պետք է քննարկեր ռազմական-բանակային շինարարության և մարտական գործողություն-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները, Երևան, 1998, էջ 262-268, 343:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 115, մաս II, թ. 78:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 140:

⁴ Տե՛ս «Ուրբաթ» (շաբաթաթերթ), Երևան, 25 մայիսի 1990:

ների սկզբունքային հարցերը: 1919 թ. մարտի 25-ին այդ խորհրդի նախագահ նշանակվեց Հայկական կորպուսի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Թ. Հ. Նազարբեկյանը, ստանձնեց նաև ՀՀ զորքերի գլխավոր հրամանատարի՝ հայկական բանակի սպարապետի պարտականությունը¹: Ջորջերի ղեկավարումը բոլոր առումներով թողնվեց Հայկական կորպուսի հրամանատարին, որն ուներ գլխավոր հրամանատարի իրավունքներ:

Ձինվորական ծառայության մեջ գտնվողների թիվը 1919 թ. գարնանը հասնում էր 16000-ի², իսկ ըստ եվրոպական տերություններին ներկայացրած՝ Հովհ. Քաջագունու հուշագրի՝ 1920 թ. հուլիսի վերջերին՝ 18000-ի³: Այդուհանդերձ, ըստ տարբեր սկզբնաղբյուրների՝ բանակի թվակազմը նշվում էր 35000 և նույնիսկ ավելի⁴: Սակայն փաստերի համադրությունը ցույց է տալիս, որ այդ տվյալները, իրականությանը չեն համապատասխանում, մանավանդ եթե հաշվի առնենք, որ այդ «*ահռելի հայկական բանակը*» գրեթե առանց լուրջ դիմադրության պարտություն կրեց 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված ճակատագրական պատերազմում քանակով իրեն էապես չգերազանցող թուրքական բանակից:

1918-1920 թթ. հայկական բանակի ընդհանուր թվաքանակում մարտունակ կարելի է համարել ընդամենը 16000-18000-ը, ինչը հաստատում է նաև Ս. Վրացյանը ՅՅԴ Ամերիկայի կենտրոնական կոմիտեին 1919 թ. մայիսի 18-ին գրած նամակում: Նա մասնավորապես ընդգծել է, որ «մոտ 16-17 հազարանոց բանակը կարգապահ է և քաջ», որ «աշխատել են ստեղծել նոր զորամասեր»⁵:

Սակայն իրողություն է, որ նորին մեծություն «բրիտանական կառավարությունը» հայկական բանակին ապահովել է 40000-անոց բանակի համար նախատեսված զենքով ու զինամթերքով, որն այն ժամանակ արժեք 1.200.000 ֆունտ ստեռլինգ⁶: Այդ մասին է վկայում Ռ. Հովհաննիսյանը, ընդգծելով, որ Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության կողմից 25000 հրացանի և

¹ Տե՛ս **Վարապետյան Մ.**, Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920), Երևան, 1996, էջ 31:

² ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 47:

³ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 33:

⁴ Տե՛ս **Սասունի Կ.**, Հայ-թուրքական պատերազմը, «Հայրենիք» // 1926, թիվ 11-12, էջ 112, **Չալխուշեան Գ.**, Ի՞նչ էր եւ ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923, էջ 20, **Փաստրմաճեան Հ.**, Լեռնային պատերազմ, Փարիզ, 1938, էջ 16, **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 514, *նույնի*, Հայաստանի հանրապետություն, Պէրյութ, 1958, էջ 477:

⁵ **Վրացեան Ս.**, Հին թղթեր նոր պատմութեան համար, Պէրյութ, 1962, էջ 88:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 768, ֆ. 199, ց. 1, գ. 146, թ. 96, **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէրյութ, 1968, էջ 183: Հեղինակը նաև այդ կապակցությամբ բազմանշանակ հավելում է. «Հայերը կը մեղադրէին անգլիացիները այն բանի մէջ, թէ այդ զէնքը հասաւ շատ ուշ, թէ զէնքը այն տեսակէն չէր, որուն սովոր էին հայ զինուորները, եւ այդ մեղադրանքներն ու դժգոհութիւնը զուգադիպեցան 1920 թ. աշնան հայ-տաճկական աղետալի անյաջող ելքի հետ»:

40000 համազգեստի մատակարարումը պետք է կատարվեր, եթե Ա. Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան ստորագրություն տային տեղափոխման ծախսերի և Անգլիական բանկի կողմից պահանջվող գանձապետական պարտամուրհակները որպես ավանդ դնելու մասին¹: Անգամ դա բրիտանացիների կողմից «մաքուր» չկատարվեց, քանզի, ինչպես հետագայում պարզվեց, հրացանների մի զգալի մասը ոչ պիտանի դուրս եկավ, ուստի ՀՀ կառավարությունը հատկացրեց շուրջ 829634 ֆունտ ստեռլինգ²:

Ակնհայտ է, որ ազգային բանակի ստեղծումը դժվարին գործ էր, և արդյունքները գոհացուցիչ չէին: Ալ. Խատիսյանը 1919 թ. մարտի 14-ի Լեռնին ուղղված իր նամակներից մեկում, պատմելով նախօրյակին կայացած կառավարության նիստի մասին, որին մասնակցել էին գեներալներ Ս. Սիլիկյանը, Չումարովը, երևանյան ջոկատի հրամանատար Դրոն և ուրիշներ, այնուամենայնիվ ընդգծում է բանակի անմխիթար վիճակը՝ նշելով նաև, որ զինվորները սոված և ցնցոտիավոր են, ավելի քան չորս ամիս չեն լողացել, 50 տոկոսը հյուծված է տիֆից և այլն: Ձորքի թիվը հասնում է 31-32000-ի, որից շուրջ 900-ը սպա: Ս. Սիլիկյանը այդ նիստում հայտնել է, որ եթե ինքը մինչև ապրիլի 1-ը չունենա առնվազն 16000 զինվոր, ապա Հայաստանը ոչնչացված է: Ուստի որոշում են խնդրել անգլիացիներին՝ 1) իրենց՝ թեկուզև փոքրաթիվ ջոկատները տեղակայել Քարվանսարայում, Ալեքսանդրապոլում, Իգդիրում և Քուլպում, 2) հատկացնել հաց, հագուստ և սապոգներ Թիֆլիսից, 3) Վրաստանին վերադարձնել Հայկական կորպուսի ունեցվածքը, 4) գեներալ Վ. Ն. Բիչի միջոցով միջնորդել Վրաստանի իշխանությունների առջև՝ անարգել Հայաստան առաքել անհրաժեշտ բոլոր բեռները (ցորեն, հաց, տարբեր ապրանքներ և այլն): Վերջապես, ըստ ֆրանսերեն մի փաստաթղթի, որի հեղինակը Փարիզում ՀՀ ազգային պատվիրակության քարտուղարի օգնական Ղազարյանն է, հայկական բանակի պիտանի զինվորների թիվը 1920 թ. հասնում էր 24.715-ի, սպաներինը՝ 1515-ի, վարչական սպաներինը՝ 309-ի, կամավորներինը՝ 4023-ի և այլն³:

Հանրագումարի բերելով հայկական բանակի վերաբերյալ փաստական տարաբնույթ տվյալները՝ կարելի է հանգել հետևության, որ չնայած կան նույնիսկ այնպիսի վկայություններ, որ իբր թե 1920 թ. հայկական բանակի թիվը հասել է 60000-ի⁴, իրատեսական կարելի էր համարել 16-18000 թվերը: Վերջապես, շուրջ 40000 կարող է ստացվել, եթե այդ 20-25000-ին հավելենք 10-12000-ից ավելի աշխարհագորայիններին և կամավորներին, որոնց մի

¹ Տե՛ս **Ованнисян Р. Г.**, *Международные отношения Республики Армения 1918-1920 гг.*, Ереван, 2007, с. 563:

² Տե՛ս նույն տեղում, էջ 566:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 160, թ. 2:

⁴ **Կարապետյան Հ.**, Սևրի պայմանագիրը Հայոց ճակատագրում, Երևան, 2004, էջ 27, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 36-38:

մասի, ինչպես դիպուկ նկատել է Կ. Սասունին, «թեև արտաքին կերպարանքը զինուորի կը նմաներ, բայց անիկա զինուոր չէր»¹: Մի կարևոր հակափաստարկ ևս. 1919 թ. հաշվարկներով 961700 բնակչություն ունեցող երկրի համար նման քանակը խիստ կասկածելի է², մանավանդ 1919 թ. դեկտեմբերի վերջի տվյալներով Հայաստանի Հանրապետությունում զինակոչից խուսափող նորակոչիկների թիվը կազմում էր 17.665 մարդ³: Նման իրավիճակում հիրավի մարտունակ բանակի և անվտանգության համակարգի անհրաժեշտ ստորաբաժանումների՝ հետախուզական ծառայության, ՆԳՆ ուժային կառույցների ձևավորումը պարզապես դժվարին խնդիր էր:

Հավելենք նաև, որ 1918-1920 թթ. հայկական բանակը դեռևս շարունակում էր մնալ կիսաֆիդայական տիպի բանակ թե՛ իր ղեկավար կազմի և թե՛ զինվորների կազմով, որոնք ետ չկանգնեցին հայկական զորքի կազմակերպման խմբապետական սկզբունքներից և գաղափարներից, ունենալով հեղափոխական-ապստամբական լիցք և ազգային ոգի, գործնականում անընդունակ գտնվեցին կիրառելու զինվորական կազմակերպության եղանակներ: Արտաքուստ Հայկական բանակը թվում էր կանոնավոր: Սակայն հայկական իրականության պայմաններում դժվար էր այդ անցումը կատարել, քանզի կանոնավոր բանակի առաջնահերթությունները անընդունելի եղան հայդուկապետերի և կամավորական շրջանի «գորապետերի» համար: Առաջին Հանրապետության ռազմաքաղաքական առաջնորդներին չհաջողվեց վճռականություն ցուցաբերել՝ հաղթահարելու ձևավորվող հայկական կանոնավոր բանակի սպայական կազմի և ֆիդայա-խմբապետական առաջնորդների միջև առկա խուլ արհամարհանքը և տարակարծությունները, ինչը խիստ բացասական ազդեցություն ունեցավ զորքի բոլոր գործողությունների վրա: Կամավորական գորամասերից անցումը կանոնավոր գորագնդերի չուղեկցվեց կարգապահության ամրապնդմամբ, քանզի խմբապետական տրամադրությունների ազդեցության տակ գտնվող այսպես կոչված «խմբերի» զինվորները հաճախ սանձարձակ, վնասակար արարքներ էին կատարում՝ պաշտպանություն գտնելով իրենց խմբապետների կողմից, ինչն էապես ազդեց կանոնավոր բանակի կազմակերպման գործընթացների վրա, չնայած հայդուկապետերից շատերը խիզախ էին:

1918-1920 թթ. թե՛ ՀՀ կառավարությունը, թե՛ խորհրդարանը և՛ թե՛ զինվորական իշխանությունները ուժերի ներածին չափով փորձել են բանակաշինական արդյունավետ քայլեր ձեռնարկել: Այսպես, օրինակ, ՀՀ կառավարության 1920 թ. օգոստոսի 16-ի որոշման մեջ ընդգծվում է, որ «Հայաստանի ապագա սպայութիւնը եւ ընդհանուր ռազմական պատրաստակամութեամբ չը պետք է ցածր լինի իւր հարեւանների, վրացիների եւ ադրբեյջանցիների

¹ Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 111:

² Հայկական հարց. Հանրագիտարան, Երևան, 1996, էջ 212:

³ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 29ա, թ. 348:

սպայությունից»¹: Սակայն խուսափել էական սխալներից և սայթաքումներից չհաջողվեց:

Ս. Վրացյանը, անդրադառնալով Դրոյի՝ որպես զորահրամանատարի կերպարին, հիշատակում է նրա կարծիքը բանակաստեղծ գործընթացների և դրանցում տեղ գտած սայթաքումների մասին. «Բանակի հոգեբանության վրա մեծապես ազդել է նրա մասնակցությունը ներքին քաղաքացիական կռիւներին, եւ երկրի մաքրագործման՝ հակապետական տարրերից, ինչպէս եւ բոլշեւիկեյան քարոզչութիւնը: Իր կոչման բարձրութեան վրա չէր եւ բանակի հրամանատարութեան կազմը, ինչպէս նաեւ ղեկավարութիւնը: Գործօն զօրամասերի հրամանատարական կազմի մեջ մնացել էին հայրենասիրութիւնից զուրկ, շահամօլ զօրավարներ եւ Զինվորական նախարարութիւնը հանդուրժում էր նրանց»²:

Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Ս. Զինկևիչի 1919 թ. հունիսի 10-ի հրամանագրով հաստատվում է Հայկական 1-ին Սահմանապահ բրիգադի հաստիքակազմը³: ՀՀ սահմանապահ զորքը (15 շտաբային սպաներ, 96 օբեր-սպաներ, 22 բժիշկներ և չինովնիկներ, 2889 կամավոր զինվորներ) կոչված էր ապահովել պետական սահմանի անվտանգությունը արտաքին թշնամական ներթափանցումներու, արգելելու երկրից ապրանքների և տարբեր արժեքների մաքսանենգային արտահանումը:

Հայկական բանակը, ստեղծվելով ռուսական ձևաչափով, կոչված էր լուծելու ՀՀ առաջ ծառայած հիմնախնդիրները անվտանգության համակարգի կայացման տեսանկյունից: Սակայն տարբեր պատճառներով այն ի գործու չէր լինում լիարժեքորեն վճռելու ահռելի և հաճախ անլուծելի դժվարությունները, անկարող եղավ դիմագրավել ավելի մեծ փորձություններին՝ Ադրբեջանի հետ տևական հակամարտությանը և վերջապես թուրք-հայկական 1920 թ. պատերազմին:

Ваник Вирабян – Система безопасности Республики Армения в 1918-1920 гг.

13 августа 1918 г. Совет министров РА постановил за счет кредита правительства решить организационно-политические вопросы службы разведки. По приказу военного министра от 14 апреля 1919 г. при Генеральном штабе создается и начинает действовать разведывательное и контрразведывательное отделение в малочисленном составе. Одной из первоочередных задач парламента и правительства РА стало создание системы государственной безопасности РА, становление армянской государственности, организация безопасности, создание важнейших с точки зрения обеспечения обороны государственных границ военных структур, пограничных воинских частей, органов МВД и

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 190, թ. 9:

² Տե՛ս **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով. Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ, հ. Ե., Պէյրոս, 1966, էջ 171:

³ ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 296-297:

милиции и в первую очередь – разведывательного и контрразведывательного отделения. Датой основания разведывательных и контрразведывательных служб РА можно считать 13 августа и отмечать как День основания спецслужб Армении, а также внести в список праздничных дней. Несмотря на некоторые упущения и неизбежные проблемы, Система госбезопасности РА является состоявшейся.

Vanik Virabyan – *The Security System in the Republic of Armenia in 1918-1920*

On August 13, 1918 the RA Council of Ministers decided to address the organizational and political issues of intelligence service at the expense of the government's loan. By the Minister of Defense Decree dated 14 April, 1919 attached to the General Staff the Intelligence and Counterintelligence Department was established with a small staff. One of the priority tasks of the RA Government and Parliament was the establishment of the RA state security system, the establishment of the Armenian statehood, the organization of the most important army structures, frontier units, the Ministry of Internal affairs and the militia, and first of all intelligence and counterintelligence departments in terms of ensuring the protection of the state borders and the security of the state. The establishment of the intelligence and counterintelligence service of Armenia should be considered as August 13, which should be considered as the day of establishment of the Armenian special services, as well as should be included in the list of state holidays. In spite of the shortcomings and inevitable faults, the RA state security system was well-established.

**ՀԱՅՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ**

Բանալի բառեր – Հայաստանի առաջին Հանրապետություն, համալսարան, քաղաքակրթական միջավայր, մամուլ, պետականաստեղծում, մշակույթ, գիտություն

Ազգի քաղաքակրթական մակարդակը սովորաբար պայմանավորվում է նրա մշակութային անցյալով ու ներկայով: Համալսարանը՝ իբրև մշակույթի, գիտության և կրթության կենտրոն, այս համատեքստում բնութագրվում է սեփական ինքնավարությամբ, ակադեմիական ազատությամբ, գիտական հետազոտություններով ու կրթության միասնականությամբ¹: Սրանք արժեքներ են, որոնք ավանդաբար հատկանշական են եղել համալսարանական կյանքին:

Դարերով քրիստոնեական և աշխարհիկ մշակույթ կերտած հայ մտավորական ընտրախավը XX դարասկզբին՝ Հայաստանի առաջին Հանրապետության օրոք, ձեռնամուխ է լինում հայոց համալսարան հիմնադրելու գաղափարի իրագործմանը: Ազգային կրթության և գիտության նոր ճանապարհի առաջին քայլերն արվում էին երկրի սոցիալ-տնտեսական ծանր ժամանակաշրջանում, երբ ազգի գոյատևումն ինքնին առաջնային խնդիր էր:

Հողվածի նպատակն է Առաջին հանրապետության մամուլի հրապարակումների հենքի վրա քննել հայոց համալսարանի քաղաքակրթական արժեքներն առնչվող մի շարք հարցեր, որոնց շուրջ ծավալված քննարկումների արդյունքում իրականություն է դառնում պետականություն ձեռք բերած հայության դարավոր երազանքներից մեկը:

* * *

Առաջին հանրապետության դժվարին տարիներին մամուլը հաճախ չի անդրադառնում համալսարանի ստեղծման խնդիրներին: Բայց այն ամենը, ինչ տպագրվել է, ուշագրավ դիտարկումների առիթ է տալիս²: Եվ հատ-

¹ Տե՛ս **Фролова Е. В.**, Академические ценности современного университета: социально-философский анализ, Автореферат, М., 2011, **Арнольд А. И.**, Путь к храму культуры: образование как социокультурный феномен, М., 2000, **Бим-Бад Б. М.**, Что такое университет // <http://www.bim-bad.reability.ru> և ուրիշներ:

² Խնդիրը քննարկման առարկա է դառնում 1919 թ. մայիսի 16-ին համալսարանի հիմնադրման մասին կառավարության որոշումից հետո, ՀՅԴ և Հայ ժողովրդական կուսակցությունների պարբերականներում («Աշխատանք», «Յառաջ», «Ժողովուրդ»): Համալսարանի բացման առիթով 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում տպագրվում է «Հայաստանի

կապես՝ երբ խնդիրը քննում ենք համալսարանի արժևորմամբ երկրում քաղաքակրթական միջավայր ստեղծելու դիտանկյունից: Հրապարակումների զգալի մասում համալսարանի հիմնադրումը պայմանավորվում է երկու կարևոր գործոններով՝

ա) համալսարանը՝ իբրև ճանապարհ դեպի առաջադեմ ազգերի քաղաքակրթական ընտանիք,

բ) համալսարանը՝ ներհայաստանյան քաղաքակրթական միջավայրի ստեղծման երաշխավոր:

Հեղինակների կողմից խնդիրը հիմնավորվում է տարբեր հայեցակետերով:

1. Համալսարանը՝ Հայաստան-արտաքին աշխարհ փոխհարաբերությունների համատեքստում

Մամուլում համալսարանի հիմնադրման մասին տարբեր քննարկումներում տարաձայնություններ ունեցող իշխանամետ և ընդդիմադիր կողմերը համամիտ էին մեկ հարցում. «Ամեն ժողովուրդ գնահատում են նրա մտաւոր կեանքով, իսկ մտաւոր կեանքը արտայայտում է նրա կրթական հիմնարկութիւններով, նրա ժրաջանութեամբ, նրա գիտական աշխատանքներով»¹:

Խնդրի կարևորությունն այս մակարդակում հիմնավորում էին առաջին հերթին համալսարանի կազմակերպիչները: Եվ ոչ միայն նրանք: Այդ ժամանակ Թիֆլիսում դեռևս գործող Անդրկովկասյան համալսարանի հայ ուսանողները, հանդիպելով Հայաստանի համալսարանի ռեկտոր Յու. Ղամբարյանի և նրա գործընկերների հետ, նշել էին, որ կգան Երևան, եթե նորաբաց համալսարանը «վայելի միջազգային վստահություն և որոշ հարաբերության մեջ լինի ռուսական և եվրոպական համալսարանների հետ»²:

Սեփական քաղաքակրթական միջավայրը արտաքին աշխարհի հետ հարաբերակցելու փաստարկումները ավելի հաճախ սկսում են հնչել հատկապես Հայաստանի համալսարանի բացման օրերին: Հատկանշական են այս առումով ինչպես հայ պետական-մշակութային և կրոնական գործիչների (Ն. Աղբալյան, Ե. Տեր-Մինասյան, Մեսրոպ և Գարեգին Եպիսկոպոսներ և այլք), այնպես էլ օտարերկրյա դեսպանների շնորհավորանքի խոսքերում հնչած ուղերձները:

Համալսարանի պատմալեզվագիտական ֆակուլտետի դեկան Մեսրոպ Եպիսկոպոսը, իր խոսքում վերհիշելով մարդկության սեփականությունը

համալսարան» մեկօրյա թերթը՝ «իբր հավերժացման նշան նույն համալսարանի», որտեղ գետեղված են այդ օրերին համալսարանին ուղղված ողջույնի խոսքերն ու շնորհավորանքները:

¹ Քաղաքացի, Արդեօ ք համալսարանի ժամանակ է Հայաստանում // «Ժողովուրդ», 24 օգոստոսի 1919, թիվ 94:

² «Երևանի համալսարան, 1918-1920 թթ., վավերագրերի ժողովածու», Երևան, 1995, էջ 94:

դարձած երկու «աննման առասպել»¹, վերստին հաստատում է աստվածաշնչյան ասքը, այն է՝ անհիշելի ժամանակներից Հայաստանը համաշխարհային քաղաքակրթության բնօրրանն է եղել: Նա հայոց համալսարանը համարում է «**լուստ լապտեր**», որ կրկին մերձեցնում է մեզ եվրոպական քաղաքակրթությանը և մեր երկրում վերականգնում «**նախնական պարտեզի**» այն երջանկությունը, որից զրկվել էինք, և որտեղ կամենում ենք դարձեալ վերադառնալ»² (ընդգծումը մերն է – *Դ. Պ.*): Մեսրոպ եպիսկոպոսի ուղերձում կիրառված հատկապես երկու եզրույթների՝ «լուստ լապտերի» և «պարտեզի» միջակայն, արքեպիսկոպոսի իմաստները տարբեր առիթներով ուսումնասիրել են մշակութաբանները³: «**Պարտեզը**», «**այգին**» իբրև մշակված հասարակական տարածք («**ածու**»), հիշատակում է նաև Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ («Թեպետ և եմք **ածու** փոքր և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ...»⁴ (ընդգծումը մերն է – *Դ. Պ.*): Ի դեմս համալսարանի՝ Մեսրոպ եպիսկոպոսը կանխատեսում է ապագայում մշակվելիք հոգևոր տարածքի տեսականը, որի շնորհիվ արժանի տեղ կհատկացվի հային քաղաքակրթագրերի ընտանիքում:

«**Լուստ լապտերին**» հոմանիշ եզրույթներ իրենց հողվածներում և շնորհավորանքներում օգտագործում են նաև համալսարանի հիմնադրմանն անդրադարձող մյուս հեղինակները՝ լուստ ջահ, լուսավոր ջահ (Իս. Տեր-Ներսիսյան), «այն ջահը, որ մենք վառում ենք» (Ն. Աղբալյան), լուսատու ջահ (Գևորգ Ե Կաթողիկոս), գիտության ջահ (Մայիլյան եղբայրներ), լուսավոր փարոս (Ա. Սահակյան) և այլն: «**Չահը**» միջոցառական բառարաններում բնութագրվում է հետևյալ կերպ. «Մարմնավորում է կյանքը, կյանքի հուրը, որտեղ կրակն ինքնին առնական սիմվոլիկա ունի... Այն աստվածային արական սկիզբն է, որ ծնունդ է առնում կանացի սկիզբը խորհրդանշող ծառից: Հոգի-կրակը միահյուսված է ծառ-մատերիային, այստեղից էլ պտղավորող հոգևոր կրակի, ներշնչանքի, բանականության, անմահության

¹ «Հայաստանի լեռների բարձունքներից բխող չորս գետերի ակունքներին է Աստուած տնկել բարիքներով լի այն սքանչելի պարտեզը, որի մեջ երջանիկ կեանքով ապրում էր առաջին գոյգ մարդը: Երկրորդ առասպելն է ջրհեղեղի համատարած կործանման ժամանակ Արարատ լեռան գագաթին փրկվեց այն երկրորդ գոյգը, որ նոր մարդկության նախահայր դարձաւ» // «Հայաստանի համալսարան», 31 հունվարի 1920, Ալեքսանդրապոլ:

² Նույն տեղում:

³ Պարտեզի արքեպիսկոպոսի մասին տե՛ս մասնավորապես՝ *Лихачев Д. С., Поэзия садов, СПб., 1991, Корона В. Б., Поэтическое творчество как активация архетипических структур сознания // «Архетипические структуры художественного сознания», Екатеринбург, 2001, с. 30-33, Зубкова Н. Н., Архетип сада в русской литературе XIX – начала XX вв. как символическое воплощение исторических судьб России // <http://rae.ru/forum2012/18/2961>, Պետրոսյան Հ., «Հայաստան-դրախտ կորուսյալ» / Հայ ինքնության մի հարացույցի ձևավորման ակունքները // «Ինքնության հարցեր», Տարեգիրք, Երևան, 2002 և այլն:*

⁴ Տե՛ս **Ստեփանյան Ա.**, Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում, գիրք Ա, Արտաշիսյան դարաշրջան, Երևան, 2012, էջ 62-63:

սիմվոլիկան»¹: Թերևս այս համատեքստում կարելի է մեկնաբանել նորաստեղծ Հայաստանի Հանրապետության ծոցում ծնվող «լուսի ջահի»՝ համալսարանի քաղաքակրթական խորհրդանիշը:

Հայաստանի համալսարան-արտաքին աշխարհ փոխհարաբերությունների ծիրում ուշագրավ ուղերձներ կան նաև համալսարանի հիմնադրման առթիվ Հանրային կրթության նախարար Ն. Աղբալյանի ելույթում: Նա ոչ միայն հավատում է համալսարանի ապագային («Այն ջահը, որ մենք վառում ենք Հայաստանի բարձրաանդակի վրա, չի հանգչի և կլուսավորե Առաջադուր Ասիան»), այլև լավագույն պարզև է համարում Արևմուտքի քաղաքակրթական նվաճումների հետ անմիջական հաղորդակցությունը. «Եթե մենք կարողանանք այդ մեծ քաղաքակրթութեան մեր փոքրիկ մուրճը խփել, այդ իսկ պատիւ է մեզ: ...Կը գայ ժամանակ, երբ մենք էլ ընդունակ կլինենք մի քանի գաղափարներ արտաբերելու մարդկութեան համար, հայ ժողովուրդը ընդունակ է դրան»²: Աղբալյանն ըստ էության շեշտում է սերունդներով փոխանցված ազգային ինքնության ներուժը և համալսարանական միջավայրում նրա ինքնաբացահայտման նոր հնարավորությունները:

2. Համալսարանը՝ ներհայաստանյան քաղաքակրթական միջավայրի երաշխավոր

Համալսարանի միջոցով մարդկության քաղաքակրթական ընտանիքում արժանի տեղ գրավելու ցանկությունները մամուլում հաճախ զուգակցվում էին երկրի ներքին կյանքում քաղաքակրթական միջավայր ստեղծելու հիմնավորումներին, որոնք, իրենց հերթին, չորս հիմնական ուղղություններ ունեին.

Առաջին՝ համալսարանը և **ժողովրդավարության սկզբունքները**: Այդ սկզբունքները քաղաքակիրթ երկրներում համարվում էին (այժմ՝ նույնպես) «ճշմարիտ լուսավորութեան» տարածման հիմնական գործոն: Առաջին ռեկտոր Յու. Ղամբարյանի կարծիքով՝ համալսարաններն անկատար են, եթե նրանց հիմքում ընկած չեն «ազատութեան և դեմոկրատիայի» գաղափարները, իսկ ժողովուրդը մասնակցություն չունի իր կյանքի «կարգաւորման և դեկլարման գործին»: Այս համոզմունքն է նրան մղում եզրակացնելու, որ հայոց համալսարանը պետք է լինի «ազատ, աշխարհիկ և դեմոկրատիկ», որ «կոչված է մշակելու հավասարապէս **գիտութիւնը և առաքինութիւնը**, առանց որոնց դեմոկրատիան կամ խաբէութիւն կլինէր, կամ դատարկ հնչիւն»³ (ընդգծումները մերն են – Դ. Պ.):

¹ **Дж. Купер**, Энциклопедия символов // http://ml.volny.edu/dic.html?act=view_rec&id=940&t2=%D0%A4%D0%B0%D0%BA%D0%B5%D0%BB&p2=mith_t

² Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացման արարողության նկարագրությունը // «Յառաջ», 5 փետրվարի 1920, թիվ 26:

³ **Խանոյան Ս.**, Գիտության կաճառը // «Հայաստանի համալսարան», 31 հունվարի 1920:

Երկրորդ՝ համալսարանի ստեղծումը՝ **մշակույթի, գիտության զարգացման գլխավոր նախապայման**: Թերթերում լույս տեսած առանձին հրապարակումներում, ինչպես նաև համալսարանին ուղղված շնորհավորանքի խոսքերում այս միտքը տարբեր ձևակերպումներով հաճախ է կրկնվում: Մասնավորապես Ս. Խանոյանը համոզված է. «Նա (համալսարանը – Գ. Պ.) դառնալու է գիտությունների և արվեստների այն ծաղկեփունջը, որից, իբր նեկտար հալաքող ժրջան մեղուներ, Հայաստանի քաղաքացի երիտասարդն ու պատանին քաղելու են իրենց այնքան անհրաժեշտ գիտելիքները-մտքի նեկտարը»¹:

Երրորդ՝ համալսարանը՝ նորաստեղծ հանրապետության **պետական-ստեղծման կարևոր գործոն**: Համալսարանի հիմնադրման ջատագովներն առանձնակի նախանձախնդրությամբ շեշտում են նաև այս իրողությունը: Գ. Խ. Զավրյանը, որն իր ակտիվ գործունեությամբ (1919 թ. նա Հայաստանի ժողովրդական լուսավորության նախարարի ներկայացուցիչն էր Թիֆլիսում) մեծապես նպաստել է հայոց համալսարանի կայացմանը, մամուլում նրա կարևորությունը կասկածի տակ դնողներին պատասխանում է. «Գիտությունը այնքան է յառաջադիմել, նա այն աստիճան պահանջ է դառել պետական և տնտեսական կեանքի բազմապիսի կարիքների համար, որ վաղաժամ համարել մեր երկրում գիտական գործունեության օջախի ստեղծումը՝ կը նշանակե մեր ապագայ կեանքի կարգաւորման գործում գիտության ծառայությունից հրաժարելը»²:

Չորրորդ՝ համալսարանը՝ **հայության համախմբման, նրա միասնության խորհրդանիշ**: Այս միտքը՝ իբրև մաղթանք, ուղղակիորեն թե անուղղակիորեն հաճախ է հնչում շնորհավորանքի խոսքերում և էլույթներում. «Թող այս Գիտության Տաճարը համախմբի բոլոր հայերին հայրենիքի հանդեպ սիրով, գիտականորեն դաստիարակի, հաշտեցնի և միավորի ներկա սերունդների աշխարհայեցողությունը»³,– Յու. Ղամբարյանին ուղղված հեռագրում շեշտում է հայ խոշոր գործարանատեր Իլյա Մայիլյանը:

* * *

1919 թ. մայիսի 16-ին՝ համալսարանի ստեղծելու մասին դաշնակցական կառավարության որոշումից հետո, ընդդիմադիր մամուլում հայտնվում են կարծիքներ, ըստ որոնց՝ իր գոյությունը մի կերպ պահող երկրի համար համալսարանի բացելը մեծ շոյալություն է: «Զարմանալին այն է,– գրում է Հայ ժողովրդական կուսակցության պաշտոնաթերթ «Ժողովուրդը»,– որ անխոհեմ ղեկավարները դեռ շարունակում են ժողովրդի գլխին և նրա հաշուով նոր-նոր

¹ Նույն տեղում:

² **Զավրյան Գ.**, Երևանի համալսարանի բացման հարցի առիթով // «Աշխատանք», 10 սեպտեմբերի 1919:

³ «Իլյա Մայիլյանի հեռագիրը համալսարանի տեսուչ Յուրի Ղամբարյանին համալսարանին մեկ միլիոն ռուբլի նվիրաբերելու մասին» // «Երևանի համալսարան, 1918-1920 թթ., վավերագրերի ժողովածու», էջ 139:

փորձեր անել և այն էլ՝ թանգարժեք փորձեր: [...] Հայաստանի կառավարութիւնը որոշել է առաջիկայ ուսումնական տարւանից բաց անել մեր մայրաքաղաքում՝ Երեւանում, համալսարան»¹: Իր թերահավատությունը հողվածագիրը փորձում է պատճառաբանել երկրում կրթական կյանքի կաթվածահար վիճակով. միջնակարգ դպրոցները հիմնականում փակված են, չկան համալսարանում դասավանդող հեղինակավոր գիտնականներ, դասագրքեր, գիտական գրադարան և այլն: Բարեբախտաբար, տարաձայնությունները հետագա ամիսներին չխորացան, իսկ արդեն 1920 թ. սկզբին՝ համալսարանի բացման օրերին, նույն «Ժողովուրդը» իր խմբագրականներից մեկում համալսարանի արժևորման հետ կապված բոլորովին այլ կարծիք է հայտնում. «Եւ զարմանալի չէ, որ Հայաստանի առաջին կօալիցիոն կառավարութեան մէջ մեր կուսակցութեան ներկայացուցիչները առաջինը բարձրացրին այդ հարցը եւ առաջինն էին, որ ռեալ և իրական հիմքերի վրայ դրին այդ խնդրի գործնական մասը»²: Նույն կուսակցության կողմից դրսևորված «բազմակարծության» այս օրինակը Առաջին հանրապետության քաղաքական կյանքի բնորոշ կողմերից մեկն է՝ երևույթ, որից անմասն չմնացին նաև հայոց համալսարանը և նրանով քաղաքակրթական նոր միջավայր կերտող մշակութային գործիչները:

Давид Петросян – Проблемы цивилизационной оценки армянского университета в прессе Первой Республики Армения

В прессе Первой Республики Армения создание армянского университета в цивилизационном контексте рассматривается как важный шаг утверждения национального облика. С одной стороны, авторы ссылаются на архетипические символы, исходящие из Библии и касающиеся армян, а с другой – на потенциал национальной идентичности и новые перспективы ее проявления в университетской среде. Придается большое значение роли университета во внутриармянской жизни с указанием четырех основных направлений: установление принципов демократии, развитие культуры и науки, государственное строительство, консолидация армян.

David Petrosyan – Problems of Civilizational Evaluation of the Armenian University in the Press of the First Republic of Armenia

In the press of the First Republic of Armenia the foundation of the Armenian University is seen as an important step towards the establishment of our national identity. In some cases, authors refer to the archetypal symbols coming from the Bible concerning Armenians, and in the other case, they refer to the potential of our national identity and the prospects of revealing the latter in the university environment. Great importance is attached to the role of the university in the life of the Armenian people, pointing out four main directions: the establishment of the principles of democracy, the development of culture and science, state building, and the consolidation of Armenians.

¹ Քաղաքացի, նշվ. աշխ.:

² «Հայկական համալսարանի բացումը» // «Ժողովուրդ», 1 փետրվարի 1920:

«ՏԱՆՈՒՏԵՐ» ԵՎ «ՏԱՆՈՒՏԵՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂ
ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բանալի բառեր – «տանուտեր», «տանուտերություն», նախարար, Տանուտիրական Հայաստան, Տանուտիրական գունդ, տանուտեր Հայոց, Մարգպանական Հայաստան, Սերեոս, Վահան Մամիկոնյան, Սմբատ Բագրատունի

Հայոց պատմության վաղ և զարգացած ավատատիրության շրջանում երկրի հասարակական-քաղաքական կյանքում մեծ էր խոշոր ու միջին հողատեր իշխանների՝ նախարարների դերը: V դարի որոշ հայ պատմիչների երկերում նախարար և իշխան տերմիններին զուգահեռ կիրառվում է նաև «տանուտեր» եզրույթը: Տանուտերին շնորհվող պատիվը կոչվում էր «տերություն» կամ «տանուտերություն»¹: Սակայն սկզբնաղբյուրներում հիշատակված «տանուտեր» եզրույթը միշտ չէ, որ հասկանալի է, թե ինչ իմաստով է կիրառված: Այն երբեմն օգտագործվում է իբրև նախարարին ու նահապետին հոմանիշ, իսկ երբեմն՝ հակադրվում դրանց:

Այս առումով կարևոր են Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու և Սերեոսի տեղեկությունները: Այսպես, Փավստոս Բուզանդի հաղորդումներից հետևում է, որ տանուտերը տոհմի գլխավորն էր՝ նահապետը. «Եւ ազգին Մամիկոնեան տոհմին տանուտէր նահապետ կացոյց թագաւորն (Վարազդատ արքան (374-378) – Հ. Խ.), Վաչէ անուն ի նմին տոհմէ: Եւ եղև իբրև եկն եհաս յերկիրն Հայոց Մանուէլ եղբարքն իւրով Կոմսիւ հանդերձ, իբրև ետես զնա Վաչէն՝ որ յառաջն էր լեալ նահապետ, մինչև եկեալ էր ի նա՝ ետ ցնա զպատիւ իշխանութեանն զոր առեալ էր ի թագաւորէն Վարազդատայ: Քանզի նա էր երէց յազգին, և Մանուէլն ունէր զնահապետութեան ազգին տանուտերութեան պատուին. և Վաչէն լինէր երկրորդ»²: Բատ Սահառունին Վարազդատ արքայի հովանավորությամբ

¹ Չակերտների մեջ կիրառել ենք «տանուտերություն» եզրույթը, մյուս դեպքերում՝ «տանուտիրություն» տարբերակը: Ի դեպ, երկու ձևերը կիրառելի են:

² Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987 (այսուհետև՝ **Փավստոս Բուզանդ**), էջ 364-366:

խնջույքի ժամանակ կազմակերպում է Մուշեղ Մամիկոնյանի սպանությունը, որից հետո արքան սպարապետության գործակալությունը հանձնում է նրան, իսկ Մամիկոնյան տոհմի տանուտեր է կարգվում Վաչե Մամիկոնյանը: Երբ պարսկական գերության մեջ գտնվող Մանվել Մամիկոնյանը եղբոր՝ Կոմսի հետ վերադառնում է Հայաստան, Վաչեն նրան է հանձնում իր տանուտիրական պատիվը, որը շնորհել էր Վարազդատ արքան, քանի որ տոհմի ավագը նա էր: Այդպիսով, Մանվել Մամիկոնյանը ստացավ իր տոհմի տանուտիրության-նահապետության պատիվը, իսկ Վաչեն նրանից հետո երկրորդն էր:

Մովսես Խորենացին նշում է, որ Վաղարշակ թագավորը¹ մեր երկրում սահմանեց նախարարություններ և դրանց համար նահապետներ պիտանի մարդկանցից²: Այնուհետև, ըստ Պատմահոր, իր ծառայությունների համար Վաղարշակը Շամբատ Բագարատին շնորհում է «ազգաւ» Արշակունիների թագադիրության պաշտոնը և տանուտիրական պատիվ, այն է՝ որ նրանից սերած տոհմը Բագրատունի կոչվի իր անունով³: Այստեղ Խորենացին նշում է նախարարությունների կազմավորման մասին Արտաշեսյանների օրոք: Ինչպես տեսնում ենք, նախարարության մեջ գլխավոր անձը կոչվում էր նահապետ (նախարար), որը իր տոհմի, ցեղի առաջնորդն էր՝ «տերը»⁴, որի ենթակայության ներքո գտնվող տիրույթը համարվում էր ոչ միայն նախարարություն, այլև «տերություն» կամ «տանուտերություն»⁵: Մովսես Խորենացին նախարարական տոհմը կոչում է նաև «տուն»⁶, և հավանաբար այստեղից է տանուտեր բնորոշումը. տան՝ տոհմի տեր, պետ, գլխավոր⁷:

Նաև Մեբեոսն է փաստում, որ «տերությունն» ու «տանուտերությունը» համարժեք են. «Եւ ապա յայնժամ թագաւորեաց Կաւատ ի վերայ աշխարհին պարսից... և կոչէ զՎահան ի դուն, և մեծարէ զնա մեծապէս պատուով: Եւ տայ նմա զմարգպանութիւն աշխարհին և զՄամիկոնեաց տէրութիւնն»⁸, «Յայնժամ կոչէ արքայ Կաւատ զՎարազատիրոց գորդի Սմբատայ Բագրատունոյ Խոսրով Շում կոչեցելոյ, և տայ նմա զիշխանութիւն տանուտէրու-

¹ Վաղարշակ արքան հավաքական կերպար է, որը մարմնավորում է Արտաշես Ա-ին, Տրդատ Ա-ին և այլ արքաների (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 674):

² Տե՛ս **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Արեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991 (այսուհետև՝ **Մովսէս Խորենացի**), էջ 104:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 104-105: Տե՛ս նաև էջ 110:

⁴ Տե՛ս **Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003 (այսուհետև՝ **Ղազար Փարպեցի**), էջ 2371, 2377:

⁵ Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 390, **Ղազար Փարպեցի**, էջ 2316-2317, 2367-2369:

⁶ Տե՛ս **Մովսէս Խորենացի**, էջ 323:

⁷ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, Երևան, 1981, էջ 843:

⁸ Պատմութիւն Մեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979 (այսուհետև՝ **Մեբեոս**), էջ 67:

թեանն. առնէ զնա մարգպան և արձակէ ի Հայս»¹: Առաջին հաղորդման դեպքում, ըստ պատմիչի, պարսից Կավադ Ա արքան (488-496 և 498/499-531) Վահան Մամիկոնյանին տալիս է Հայոց մարգպանությունը և Մամիկոնյանների «տերությունը», այն է՝ Մամիկոնյան տոհմի տանուտիրությունը, իսկ մյուս վկայության մեջ նշվում է, որ Կավադ Բ Շերոյե արքան (628) Խոսրով Շում Սմբատ Բագրատունու որդուն՝ Վարազտիրոցին, տալիս է տանուտիրական իշխանությունը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ Բագրատունյաց նախարարության նահապետությունը, և նրան կարգելով մարգպան՝ ուղարկում է Հայաստան:

Նրա մեկ այլ վկայության մեջ տանուտիրական իշխանությունը, թերևս, արտահայտում է պաշտոնի՝ իշխանության որոշակի տեսակի իմաստ. «Յայնժամ տայ նմա արքայ (Խոսրով Բ Փարվեզը (590-628)՝ Սմբատ Բագրատունուն – Հ. Խ.) զտանուտերութիւն՝ որ անուանեալ կոչէր Խոսրով Շում, զարդարէ ի չքնաղս, ի գտակ և ի պատմուճան բեհեզեայս յոսկւոյ ամեալ... և ի գահս արծաթիս. արձակու ի նա զվաճառն փոքր, զղիւսն աշխարհին... և հրամայէ նմա առնել մարգպան՝ զոր ինքն կամեսցի»²: Նշենք, որ Սմբատ Բագրատունուն շնորհված «Խոսրով Շում» կոչումը համարվել է պատվավոր տիտղոս-մականուն, որը նշանակել է «Խոսրովի ուրախություն»³: Այստեղ պատմիչը փաստում է, որ պարսից Խոսրով Փարվեզ արքան Սմբատին շնորհում է տանուտիրություն, սակայն ոչ թե Բագրատունյաց նախարարական իշխանությունը, որը, ըստ էության, նա արդեն ուներ, այլ դրանից իր բնույթով տարբերվող տանուտիրություն: Ի դեպ, Սեբեոսի այս հաղորդումը մեկնաբանվել է այլ կերպ, իբրև թե Սմբատ Բագրատունուն շնորհված տանուտիրությունն էր կոչվում «Խոսրով Շում»⁴:

Վ. Ղազարյանի կարծիքով, Սեբեոսի հիշատակած «տանուտերությունը» Սմբատ Բագրատունուն տրված իշխանությունն էր⁵ (սա տարբերվում էր նախորդ՝ Վրկանի մարգպանի կարգավիճակից, որը ստանձնել էր 599-607 թթ.), որի պաշտոնավարման ընթացքում (608-614/615) Խոսրով Փարվեզ արքան անվանակոչվեց «Խոսրով Շում», որը նրան այդպիսով տալիս էր Սասանյան տերության մեջ փոխարքայի կարգավիճակ⁶: Այսինքն՝ տանուտիրություն

¹ Նույն տեղում, էջ 128-129:

² Նույն տեղում, էջ 101:

³ Տե՛ս **Хуршудян Э.**, Армения и сасанидский Иран (историко-культурологическое исследование), Алматы, 2003, с. 94, տե՛ս նաև **Սեբեոս**, Պատմություն, քննական բնագիրը՝ Գ. Վ. Արզարյանի, արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գուրգեն Խաչատրյանի և Վանո Եղիազարյանի, Երևան, 2005, էջ 341, ծնթ. 145:

⁴ Տե՛ս **Սեբեոս**, Պատմություն, 2005, էջ 123:

⁵ Սմբատ Բագրատունու այս իշխանությունը տարածվում էր Իրանի հյուսիսային և հյուսիսարևելյան մարզերի վրա (տե՛ս **Ղազարյան Վ.**, Հայ Առաքելական եկեղեցին Միջին Ասիայում Ե-ԺԵ դարերում, Երևան, 2008, էջ 54):

⁶ Տե՛ս **Ղազարյան Վ.**, Հայ Առաքելական եկեղեցու թեմի սկզբնավորումը Միջին Ասիայում (Է դարի սկիզբ) // «Էջմիածին», 2011, Ա, էջ 36-38, 53:

ասելով՝ տվյալ դեպքում Մեբեոսը նկատի է ունեցել այն իշխանությունը, որը ստանձնել էր Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունին:

Պատմիչի հաջորդ վկայությունից երևում է, որ տանուտիրական իշխանությունը նա կիրառում է նաև ժառանգապես տնօրինվող պաշտոն-տիրոջ սի համար. «Եւ գորդի նորա (Վարազտիրոց Բագրատունու – Հ. Խ.) զանդրանիկ, որում անուն էր Սմբատ, կարգեաց արքայ ի պատիւ հաւր իւրոյ. տուեալ նմա զիշխանութիւնն բնիկ տանուտէրութեանն ասպետութեան, և արար զնա դրունգար զաւրաց իւրոց»¹: «Տուեալ նմա զիշխանութիւնն բնիկ տանուտէրութեանն ասպետութեան» արտահայտությունը հավանաբար վերաբերում է ոչ թե Վարազտիրոց Բագրատունու որդի Սմբատին Բագրատունյաց նախարարության տանուտեր կարգելուն², այլ բուն Բագրատունիներին տրվող տիրոջ սի նախապես պատվին³: Այստեղ չի բացառվում, որ այս Սմբատ Բագրատունին բյուզանդական Կոստանդին II (641-668) կայսեր կողմից կարգված լիներ նաև տոհմի ղեկավար՝ տանուտեր: Սակայն «տուեալ նմա զիշխանութիւնն բնիկ տանուտէրութեանն ասպետութեան» իմաստը հետևյալն է. Կոստանդին II կայսրը Սմբատին շնորհել է Բագրատունիների բնիկ ասպետության տանուտիրական իշխանությունը, այսինքն՝ ասպետի պաշտոն-տիրոջը⁴ ժառանգաբար զբաղեցնելու իրավունքը: Փաստորեն, միշտ չէ, որ «տանուտէրություն» եզրույթը կիրառվել է նախարարություն իմաստով:

Մասնագիտական գրականության մեջ, հենվելով Ն. Ադոնցի տեսակետի վրա, որը, ինչպես կտեսնենք, սխալ է ընկալվել, «Տանուտերական Հայաստանը» համարվել է Մարզպանական Հայաստանի նոր կարգավիճակ:

Այս կապակցությամբ հղենք Ն. Ադոնցին. «Պարսկական Հայաստանը մինչև 591 թ., իր այն սահմաններում, որտեղ տարածված էր այսպես կոչված տանուտիրական իրավունքը, հայերի մոտ երբեմն կոչվում էր Տանուտիրական երկիր, Տանուտիրական տուն»⁵: Այնուհետև նա նշում է, որ «փաստացի տանուտիրական էր և հավանաբար այդպես էր կոչվում ամբողջ Պարսկական Հայաստանը մինչև 591 թ.: Տանուտիրական հողերի մի մասը հռոմեացիներին անցնելուց հետո, ի տարբերություն հռոմեականի, Վասպուրական էր կոչվում պարսիկների ձեռքում մնացած Հայաստանը»⁶: Ա. Մուշեղյանը չի ընդունել Ն. Ադոնցի այս մոտեցումը՝ գտնելով, որ ըստ այդմ «կարելի է կար-

¹ Մեբեոս, էջ 144:

² Մանանդյան Հ., Երկեր հ. Բ, Երևան, 1978, էջ 541:

³ Տե՛ս Մեբեոս, Պատմություն, 2005, էջ 221, 358, ծնթ. 372:

⁴ Գ. Աբգարյանի բնորոշմամբ՝ սա եղել է ռազմական պաշտոն՝ «տանուտերության ասպետություն» (տե՛ս Մեբեոս, էջ 312-313, ծնթ. 507):

⁵ Адонц Н., Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя, СПб., 1908, с. 231.

⁶ Նույն տեղում, էջ 232:

ծել, թե 591 թ. առաջ ամբողջ մարզպանական Հայաստանը կոչվել է Տանուտիրական կամ Վասպուրական գունդ, որ, իհարկե, հիմնավոր չէ»¹:

Ըստ Ս. Երեմյանի՝ «Մահակ Բագրատունու մահվանից հետո երկրի կառավարչի՝ մարզպանի և «տանուտեր Հայոցի» պարտականությունները ստանձնում է Վահան Մամիկոնյանը, ով արքայից արքա Պերոզի (459-484) սպանվելուց հետո դառնում է երկրի՝ նախարարների ու ժողովրդի կողմից ճանաչված կառավարիչը: Այդ ժամանակից սկսած, ի տարբերություն բյուզանդական Հայաստանի, մարզպանական Հայաստանը դարձավ «Տանուտիրական երկիր», իսկ Դվինը՝ նրա մայրաքաղաքը»²:

Ս. Երեմյանը այս միտքը փոխառել է Ն. Ադոնցից: Սակայն Ադոնցը գրել է. «Փաստացի տանուտիրական էր, և հավանաբար այդպես էր կոչվում, ամբողջ Պարսկական Հայաստանը մինչև 591 թ.»³, այն է՝ 428 թ. մինչև 591 թ., որը ոչ մի կերպ կապված չէ ո՛չ Պերոզ արքայի սպանության և ո՛չ էլ Նվարսակի դաշնագրի դրույթների հետ: Բացի այդ, Ս. Երեմյանը հայ ժողովրդի պատմության ակադեմիական հատորի մի ենթագլուխ վերնագրել է «Հայաստանը՝ Տանուտիրական երկիր», որի շարադրանքը տրամաբանորեն պետք է սկսվեր 484 թվականից: Սակայն ինքն իրեն հակասելով՝ նա, 450 թ. իրադարձություններին անդրադառնալով, նշում է, որ «հաղթողի փառքով պսակված Վարդան Մամիկոնյանն Արտաշատում նոր կառավարություն է կազմում՝ դառնալով երկրի կառավարիչ, այսինքն՝ «Տանուտեր հայոց», միաժամանակ մնալով նաև սպարապետ: Հայաստանը փաստորեն դառնում էր անկախ պետություն՝ «Տանուտիրական երկիր» կամ «երկիր տանուտիրական գնդին»⁴: Այսինքն, Ս. Երեմյանը նույն գրքի տարբեր շարադրանքներում Տանուտիրական Հայաստանի հռչակումը համարում է և՛ 450 թ. և՛ 484 թ., իսկ անկումը՝ 509 թ., որը Վարդ Մամիկոնյան մարզպանի կառավարման վերջին տարին էր⁵:

Է. Դանիելյանը, ընդունելով Ն. Ադոնցի և Ս. Երեմյանի տեսակետը, որ Տանուտիրական երկիրը մինչև Հայաստանի 591 թ. բաժանումը համապատասխանել է Հայկական մարզպանության տարածքին, հավելում է, որ դրանից հետո Տանուտիրական երկրի մի մասը՝ Այրարատ նահանգի հարավ-

¹ Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007, էջ 214:

² Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 203, 205: Տե՛ս նաև Еремян С., Марзпанская Армения. Восстания 450-451 и 483-484 гг. // Очерки истории СССР. III-IX вв., М., 1958, с. 207:

³ Адонц Н., նշվ. աշխ., էջ 232: Թեպետ Ն. Ադոնցն ընդունել է, որ Տանուտիրական էր կոչվում ամբողջ Մարզպանական Հայաստանը, սակայն ինքն իրեն հակասելով՝ կարծում է, որ Տանուտիրական երկիրը բաղկացած էր երկու մասից՝ Այրարատ և Տուրուբերան նահանգներից (տե՛ս Адонц Н., նշվ. աշխ., էջ 234):

⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 183:

⁵ Նույն տեղում, էջ 212:

արևելյան հատվածը՝ Վասպուրականը, Մոկքը, Պարսկահայքը, Սյունիքը և հարակից հողերը մնացել էին պարսիկների ձեռքում¹:

Ա. Սուքիասյանը գտնում է, որ «Եթե 429 թ. հետո պարսիկներն Արևելյան Հայաստանը կոչում էին ուղղակի «մարգ», իսկ նրա կառավարչին՝ մարգպան, ապա ըստ Նվարասկի պայմանագրի կետերից մեկի՝ նրանք պարտավորվում էին Հայաստանը կոչել «Տանուտիրական երկիր», իսկ մարգպանին՝ «Տանուտեր Հայոց»²: Թ. Հակոբյանի և Վ. Իսկանյանի կարծիքով՝ 484 թ. Նվարասկում կնքված պայմանագրով փաստացի մարգպանական Հայաստանը վերածվեց կիսանկախ երկրի, որից հետո Հայաստանի մարգպանությունը կոչվում է «Տանուտիրական երկիր», իսկ մարգպանը՝ «Հայոց տանուտեր»³:

Վահանանց ապստամբության միակ սկզբնաղբյուրը Ղազար Փարպեցին է, որը «տանուտեր» եզրույթն օգտագործում է մեծապես որպես նախարար/նահապետին համարժեք. «Եւ տանուտերացն Հայոց, որոց խոստացեալ էր զկաթողիկոսութիւնն Սուրմակայ արծկեցի երիցուն՝ նստուցին զնա յաթոռ կաթողիկոսութեան Հայոց»⁴, «Արդ՝ եկեալ հասանէին տանուտեարքն Հայոց հանդերձ սեպհաւքն որ ընդ ինքեանս՝ յաշխարհս Հայոց...»⁵, «Խորհուրդ ի մէջ առեալ իշխանին Սիւնեաց Վասակայ հանդերձ ամենայն տանուտերամբք Հայոց եւ սեպհաւք»⁶, «Ուր պատրողական բանիւք խաբէութեան թարթափեցուցանէր թագաւորն Վրաց Վախթանգ զմիտս զաւրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի եւ զայլ աւագ տանուտերացն Հայոց»⁷, «Եւ թագաւորին եւ ամենայն Արեաց աւագանւոյն լռեցուցեալ զբանս Մամիկոնենին Վահանայ՝ բազմեցուցանէին զնա ի գահու տէրութեանն Մամիկոնէից, տուեալ ցնա, ըստ աւրինի նախնեաց իւրոց, եւ զսպարապետութիւն Հայոց աշխարհին»⁸: Ակնհայտ է, որ այս հաղորդումներից և ոչ մեկը չի արտահայտում «տանուտեր Հայոցի»՝ երկրի կառավարչի բնույթը, որը, ըստ էության, արդեն իրականացնում էր արաբական շրջանի «Հայոց իշխանը»:

¹ **Ղանիելյան Է.**, Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանումը (591-629) // «ՀՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «Լրաբեր»), 1986, թիվ 8, էջ 57, տե՛ս նաև *նույնի*՝ Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000, էջ 27-28:

² Տե՛ս **Сукнасян А.**, Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма (III-IX вв.), Ереван, 1963, с. 299, 305:

³ **Հակոբյան Թ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 113, **Իսկանյան Վ.**, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Երևան, 1991, էջ 352, 395:

⁴ **Ղազար Փարպեցի**, էջ 2223:

⁵ Նույն տեղում, էջ 2252:

⁶ Նույն տեղում, էջ 2255:

⁷ Նույն տեղում, էջ 2327:

⁸ Նույն տեղում, էջ 2368:

Ըստ Ղազար Փարպեցու՝ պարսից Վաղարշ արքայից արքան (484-488), ընդառաջելով Վահան Մամիկոնյանի խնդրանքին՝ Կամսարականներին շնորհեց տանուտիրական իշխանություն, իսկ Արծրունիներին՝ ոչ¹, ինչը ենթադրել է տալիս, որ «մարդպետ» տիտղոսը ևս նրանց չտրվեց: Դա կարող էր կապված լինել թե՛ Արծրունիների հանդեպ անվստահությունով² որպես մարդպետների և թե՛ այլ շարժառիթներով, օրինակ՝ պարսից արքունիքին Արծրունյաց նախարարի հավատարմության երաշխիքներ չտալը³: **Տանուտիրության հիմքում ընկած էր հողային սեփականության իրավունքը⁴, որը բովանդակում էր նախարարի ինքնավար իրավունքներն իրեն պատկանող տիրույթի նկատմամբ⁵: Հետևաբար՝ տանուտիրական իրավունքի շնորհմամբ այդ իրավունքներն օրինականացվում էին⁶: Նշենք, որ տանուտիրական իշխանությունը Հայաստանի ոչ բոլոր նախարարություններին էր տրվել:**

Հակառակ այն կարծիքի, թե 485 թ. Վահան Մամիկոնյանը Տիգրան մեկնեց՝ կարգվելու «Հայաստանի տանուտեր և սպարապետ»⁷, նշենք, որ Ղազար Փարպեցին իր շարադրանքում նրան կոչում է «տեառն Մամիկոնենից եւ սպարապետն Հայոց» կամ «գաւրավարն Հայոց տէրն Մամիկոնէից», այսինքն՝ Մամիկոնյան տոհմի տանուտեր և Հայոց սպարապետ: Առավել ևս մարզպան եղած ժամանակ Վահան Մամիկոնյանը «տանուտեր Հայոց» կոչումով հանդես չի գալիս, ավելին՝ այդպիսի կոչում չկար:

Ինչպես ճիշտ դիտարկել է Կ. Յուզբաշյանը, ապստամբները Վահանին ճանաչեցին Մամիկոնյան տոհմի տանուտեր, ընտրեցին նաև սպարապետ, իսկ Սահակ Բագրատունուն՝ մարզպան: Այնուհետև նա շարունակում է, որ այս փաստերը նշանակալից են, քանզի ապստամբները պահպանում են արդեն իսկ գոյություն ունեցող վարչակարգը՝ մարզպանությունը՝ ընդհանուր առմամբ պատրաստ լինելով ճանաչել Սասանյաններին, միայն թե ընդունվեն նաև իրենց՝ հայերի պահանջները⁸: Ուստի հարկ չկա կարծել, թե

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 2368-2369:

² Վարդանյան Վ., Արծրունիները հայոց պատմության մեջ, Երևան, 2002, էջ 49-50:

³ Հարությունյան Բ., Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Երևան, 2016, էջ 105:

⁴ Տե՛ս Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987, էջ 331:

⁵ Տե՛ս Մաթևոսյան Ռ., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 28, Վարդանյան Վ., Արծրունիները հայոց պատմության մեջ, էջ 50:

⁶ Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 105:

⁷ Տե՛ս Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից-VIII դարը ներառյալ), Երևան, 2006, էջ 210:

⁸ Իզբաշեան Կ., Աւարայրի ճակատամարտից դեպի Նուարսակի պայմանադրութիւնը, Երևան, 2005, էջ 135:

Մահակ Բագրատունու մահվանից հետո «տանուտեր Հայոցի» պարտակա-նությունը ստանձնել է Վահան Մամիկոնյանը:

«Տանուտերական երկիր» եզրույթը հիշատակել է Մեբեոսը պարսից Խոսրով Փարվեզ արքայի՝ բյուզանդական Մավրիկիոս (582-602) կայսերը հղած նամակի կապակցությամբ: Մեբեոսի հաղորդումը մասնավորապես կապված է Հայաստանի՝ 591 թ. Բյուզանդիային զիջվելիք տարածքների հետ. «Եւ տաց քեզ (Խոսրով Փարվեզը՝ Մավրիկիոսին – *Հ. Խ.*) զկողմանս Ասորոց – զԱրուաստանն ամենայն մինչև ի Մծբին քաղաք, և յերկրէն Հայոց՝ զաշխարհն Տանուտերական իշխանութեանն մինչև ցԱյրարատ և ցԴուին քաղաք.....»¹: Հաջորդ հիշատակումը վերաբերում է արդեն Խոսրով Փարվեզի խոստման կատարմանը. «Ետ նոցա զԱրուաստան զամենայն մինչև ցՄծբին, և զերկիրն Հայոց, որ ընդ իւրով իշխանութեամբն էր, զտունն Տանուտերական մինչև ցգետն Հուրագդան...: Եւ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային»²: Մեբեոսի այս վկայությունը գրեթե նույնությամբ կրկնում է Թովմա Արծրունիին³: Հովհաննես Դրասխանակերտցին և նրան հետևող Վարդան վարդապետը հաղորդում են, որ, ի թիվս այլ տարածքների, Խոսրով արքան տվեց նաև Հայոց աշխարհի այն մասը, որ Տանուտիրական գունդ էր⁴ կոչվում⁵:

Եթե փորձենք Բյուզանդական կայսրությանն անցած հայկական տիրույթները սահմանագծել, կստացվի, որ Տանուտիրական իշխանության երկիր կոչվածը կազմված էր Այրարատ նահանգից՝ «Տաշրաց սեպհականությամբ»⁶, Տայք, Տուրուբերան նահանգներից և Աղձնիքի որոշ հատվածներից⁷,

¹ Մեբեոս, էջ 76:

² Նույն տեղում, էջ 84:

³ Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց // «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 123:

⁴ Գունդը, Ն. Աղոնցի բնորոշմամբ, նշանակել է զինվորական ուժերի որոշակի քանակ, որը ենթարկվել է սպահիբեդին (տե՛ս **Адоиц Н.**, նշվ. աշխ., էջ 233), և քանի որ Տանուտիրական ու Վասպուրական երկրները ծառայել են որպես պարսկական կամ հայկական որոշ զորամասերի համար զորակայաններ, կրել են նաև գունդ անվանումը (**Адоиц Н.**, նշվ. աշխ., էջ 234):

⁵ Տե՛ս **Յովհաննես Դրասխանակերտցի**, Պատմութիւն Հայոց // «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ, Ժ դար, էջ 398, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 59:

⁶ Սեպհական-սեպուհական, այն է՝ տիրույթի՝ սեպուհներին ժառանգապես պատկանելու մասին: Այս սեպուհականությունից հետագայում առաջացել է սեփականություն ձևը (տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, էջ 706-707):

⁷ Տե՛ս Հայաստանի պատմության ատլաս, հ. Ա, Երևան, 2004, էջ 54-55, տե՛ս նաև **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 2001, էջ 392: Ա. Մուշեղյանը գտնում է, որ «Տանուտերական տունը» կազմված էր Տուրուբերան նահանգից և Այրարատ նահանգի մեծ մասից՝ մինչև Դվին (տե՛ս **Մուշեղյան Ա.**, նշվ. աշխ., էջ 213, 243):

բացառությամբ Մոկք աշխարհի¹: Դրա ապացույցը Մոկք նահանգի՝ ոչ միայն աշխարհագրորեն Վասպուրականին անմիջական սահմանակցելն էր, այլև այն, որ Հայաստանի 591 թ. բաժանումից հետո Մոկքը Վասպուրականի, Կորճայք ու Պարսկահայք նահանգների մեծ մասի, Այրարատի՝ արևելյան փոքր հատվածի հետ կազմում էր Հայկական մարզպանությունը²:

Պատմիչների հաղորդումներից հետևում է, որ Տանուտիրական իշխանության երկիրը (տուն, գունդ) չի վերաբերում ամբողջ Մարզպանական Հայաստանին, այլ միայն նրա մեկ հատվածին, որը ինքնաբերաբար բացառում է «Տանուտերական Հայաստան»՝ որպես երկրի կարգավիճակ և «տանուտեր Հայոց»՝ որպես երկրի կառավարիչ բնորոշումները:

Բ. Հարությունյանը, վերոհիշյալ պատմիչների հաղորդումներից ելնելով, ենթադրել է, որ Մարզպանական Հայաստանը վարչականորեն կազմված էր երեք հիմնական շրջաններից՝ 1. Տանուտիրական գնդի երկիր, 2. Վասպուրական կամ Սեպհական գնդի երկիր, 3. Սյունիք³: Ըստ հետազոտողի՝ Եղիշեի հաղորդումները հաստատում են, որ վարչական պատկերը V դարում ևս այդպիսին էր՝ որպես օրինակ մատնանշելով հայ ազատանու՝ Թեոդոս II (408-450) կայսերը գրած հրովարտակը, որում ըստ հերթականության թվարկված էին Վասակ Սյունի մարզպանը, Ներշապուհ Ռմբոսյանն ու սպարապետ Վարդան Մամիկոնյանը⁴, որի անունը պատմիչի կողմից զարմանալիորեն չի հիշատակվել: Ըստ այդմ Վասակ Սյունին ներկայացնում էր վարչական երկու միավոր՝ Սյունիքն ու Տանուտիրական գնդի երկիրը, իսկ Ներշապուհ Ռմբոսյանը՝ Վասպուրական գնդի երկիրը⁵: Այսինքն՝ Տանուտիրական գնդի երկիրը ներկայացնում էր մարզպանը և ոչ թե սպարապետը: Ռ. Հարությունյանը, ընդհակառակը, կարծում է, որ Վասակ Սյունին ներկայացնում էր Սյունիքը, Վարդան Մամիկոնյանը՝ Տանուտիրական գնդի, իսկ Ներշապուհ Ռմբոսյանը՝ Վասպուրական գնդի երկրները⁶: Դժվար է ասել, թե արդյոք Վարդան Մամիկոնյանը եղել է Տանուտիրական գնդի երկրի ներկայացուցիչը, թե ոչ: Սակայն, մեր կարծիքով, V դարում հազիվ թե Հայկական

¹ Տե՛ս **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի Մոկք աշխարհն ըստ «Աշխարհացոյցի» // «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1990, թիվ 1, էջ 51:

² Տե՛ս Հայաստանի պատմության ատլաս, հ. Ա, էջ 55:

³ **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 391: Ռ. Հարությունյանը փաստում է ևս մեկ վարչական միավորի՝ «Այրարատի» գոյության մասին (տե՛ս **Հարությունյան Ռ.**, Մարզպանական Հայաստանի վարչական կառուցվածքի հարցի շուրջ // «Բանբեր», 2006, թիվ 2, էջ 84-86):

⁴ Տե՛ս Եղիշեի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեանի, Երևան, 1957, էջ 71:

⁵ Տե՛ս **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 395:

⁶ Տե՛ս **Հարությունյան Ռ.**, Մարզպանական Հայաստանի վարչական կառուցվածքի հարցի շուրջ, էջ 82-83:

մարզպանությունը վարչականորեն բաժանվեր երեք շրջանի՝ նախ և առաջ սկզբնաղբյուրներում այդ մասին հստակ տեղեկություններ չլինելու պատճառով: Բացի այդ, պատմիչների կողմից Տանուտիրական ու Վասպուրական միավորներին «գունդ» կոչելն արդեն իսկ վկայում է դրանց ռազմավարչական միավորներ լինելու մասին: Այդպիսի միավորներ կարող էին ստեղծվել VI դարի երկրորդ կեսին՝ պարսից Խոսրով Ա Անուշիրվան արքայի (531-579) ռազմավարչական վերափոխությունների ժամանակ կամ հետո: «Աշխարհացոյց»-ում Հայաստանը ներկայացված է արդեն «Հյուսիսային Քուստակի» կազմում որպես մեկ վարչական միավոր՝ «Արմն որ է Հայք», բացառությամբ Սիսական-Սյունիքի¹: Հետևաբար, այդ ռազմավարչական միավորները ստեղծվել էին Քուստակների ձևավորման և 591 թ. պարսկաբյուզանդական պայմանագրի կնքման միջակայքում:

Ուշադրության է արժանի Դվինի պեղումներից հայտնաբերված Մասանյան շրջանի պահլավերեն գրությամբ կնքադրոշմը, որի վերծանող Վ. Լուկոնինը առաջարկել է կնիքի հետևյալ ընթերցումը. «Կենտրոնում՝ Հայաստան, եզրում՝ տուն հայոց գնդին»²: Ա. Քալանթարյանը, ընդունելով այս մոտեցումը, գտնում է, որ Տանուտիրական իշխանության երկիր, Տանուտիրական տուն և Տանուտիրական գունդ կոչվածը առանձին վարչական միավոր էր Այրարատ նահանգում, որը մարզպանական շրջանում կազմավորվել էր արքունապատկան հողերից և ներառում էր Ոստան, Մասեացոտն, Արագածոտն, Նիգ և հավանաբար շրջակա որոշ գավառներ³: Տանուտիրական տունը, ըստ Ա. Քալանթարյանի, VI դարի կեսերին վերանվանվել է «Հայոց գունդ», որը լուծարվել է Մասանյան տերության անկումից հետո՝ Թեոդորոս Ռշտունու իշխանության շրջանում⁴:

Իրանագետ Է. Խուրշուդյանն այդ կնքադրոշմի գրությանը տալիս է այսպիսի ընթերցում. «Կենտրոնում՝ Հայաստան (ոստան), իսկ շուրջը՝ Հայաստան. Տանուտիրական գունդ» (միջ. պրսկ. Arman/Armin/Armn. Gund ī kadagx-wadāyih)⁵: Հիմնվելով Սեբեոսի հաղորդումների վրա՝ նա եզրակացրել է, որ VI դարում Այրարատ նահանգը կոչվել է Տանուտիրական գնդի երկիր, իսկ Վասպուրականը՝ Վասպուրական, հետագայում՝ Սեպհական գնդի երկիր, և

¹ Տե՛ս Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելուածովք նախնեաց // «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2157:

² Քալանթարյան Ա., Հայոց Գունդը // ՀՀ-ում 1993-1995 թթ. Հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, Երևան, 1996, էջ 77:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 77-78:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 78:

⁵ Хуршудян Э., նշվ. աշխ., էջ 236: Մեկ այլ կնքադրոշմ լրացուցիչ փաստում է Տանուտիրական գնդի ռազմավարչական միավոր լինելը, որի վրա պահլավերեն գրված է. «Հայոց Տանուտիրական գնդի հրամանատար (Gund-ī kadag xwadāyagān framādār Armini)», տե՛ս Gyselen R., Sasanian seals and sealings in the A. Saecedi collection // “Acta Iranica” 44, Peeters, Leuven, 2007, p. 44, Хуршудян Э., նշվ. աշխ., էջ 237:

ընդունել է Ա. Քալանթարյանի տեսակետը, ըստ որի՝ Տանուտիրական գունդը Մարզպանական Հայաստանի մի հատվածի պաշտոնական անվանումն էր, առանձին վարչական միավոր՝ Այրարատ նահանգում: Նրա կարծիքով՝ Տանուտիրական գունդը Մարզպանական Հայաստանում սասանյան տիպի ռազմավարական տիրույթ էր, որը մարզպանը ստանում էր իր պաշտոնի հետ¹: Նմանատիպ տեսակետ է հայտնել նաև Բ. Հարությունյանը՝ գտնելով, որ Տանուտիրական գնդի երկիր կոչված երկրամասը մարզպանի անմիջական ենթակայության ներքո էր, թեև այդ անունը դեռևս չէր կրում: 482-484 թթ. հաղթական ապստամբությունից հետո, երբ մարզպանությունը որպես կանոն տրվում էր տանուտեր տիտղոսը կրող հայ իշխաններին, Տանուտիրական գնդի երկիրը վերջնականապես ձևավորվեց որպես վարչական միավոր²:

Ըստ էության, Տանուտիրական իշխանության երկիրը (Տանուտիրական տուն, Տանուտիրական գունդ) եղել է ռազմավարչական միավոր, որը ստեղծվել էր թերևս VI դարի երկրորդ կեսերին պարսից Խոսրով Անուշիրվան արքայի իրականացրած վերափոխումների արդյունքում: Այն ընդգրկել է ոչ թե Հայկական մարզպանության ամբողջ տարածքը կամ նրա նահանգի մի փոքր հատվածը, այլ ինչպես Սյունիքն ու Վասպուրական գնդի երկիրը, եղել է առանձին վարչական միավոր՝ ներառելով Այրարատը՝ Տաշրաց սեպհականությամբ, Տայք, Տուրուբերան նահանգները, Աղձնիքից որոշ հատվածներ: Սրանք 591 թ. պարսկաբյուզանդական պայմանագրով Բյուզանդական կայսրությանն անցած տարածքներն էին:

VIII դարի վերջին և IX դարի վաղ ավատատիրական շրջանին հատուկ նախարարական համակարգը սկսում է քայքայվել³: Մինչ այդ նախարարը (նահապետ, տանուտեր) իր տոհմի տիրույթների նկատմամբ ուներ անսահմանափակ իրավունք, նրա ձեռքում էր կենտրոնացած նախարարության ամբողջ իշխանությունը, իսկ տոհմի մյուս անդամները՝ սեպուհները, նման իրավունքից զուրկ էին: Սակայն ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով փոխվում են նաև հողատիրության ձևերը: Սեպուհներն աստիճանաբար ձեռք են բերում տոհմական տիրույթներից հողաբաժիններ, որի հետևանքով նախարարը զրկվում է այդ հողատիրությունները միանձնյա տնօրինելու իրավունքից⁴: Այժմ տանուտերը կոչվում էր «գահերեց իշխան», իսկ սեպուհը՝ «գահակալ իշխան»⁵: Դրանով, փաստորեն, տանու-

¹ Տե՛ս Խըրշույան Յ., նշվ. աշխ., էջ 239, 247, 379:

² Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 395:

³ Տե՛ս Մաթևոսյան Ռ., նշվ. աշխ., էջ 28:

⁴ Տե՛ս Աղոնց Ն., նշվ. աշխ., էջ 527, 530:

⁵ Տե՛ս Ութմազյան Հ., Սյունիքը IX-X դարերում, Երևան, 1958, էջ 27-28:

տեր, նախարար, նահապետ անվանումները փոխարինվում են «իշխան» եզրույթով¹:

Այսպիսով, սկզբնաղբյուրների հաղորդումներից հետևում է, որ «տանուտերը» նույն նախարարն էր՝ տոհմի նահապետը, իսկ «տանուտերությունը»՝

1. նախարարին տրվող պատիվն էր, որի հիման վրա նա իրականացնում էր իր տիրույթի կառավարումը,
2. նախարարության այլ անվանաձևն էր,
3. հաճախ արտահայտում էր նաև պաշտոնի՝ իշխանության իմաստ:

«Տանուտերական Հայաստան»՝ որպես երկրի կարգավիճակ և «տանուտեր Հայոց»՝ որպես երկրի կառավարիչ՝ մարզպան կարծիքները չեն հաստատվում սկզբնաղբյուրների տվյալներով: «Տանուտերական Հայաստան» եզրույթը կարող է կիրառվել միայն «Նախարարական Հայաստան» իմաստով և ընդգրկել 428-591 թվականները:

**Генрик Хачатрян – Понятия «танутер» и «танутерство»
в раннефеодальной Армении**

В армянских источниках V в. по отношению к крупным и средним армянским феодалам применяются не только термины «нахарар» и «князь», но и «танутер», а по отношению к управляемой территории – «танутерство». Как видно из первоисточников, «танутер» – это тот же наследственный землевладелец нахарар-князь, глава рода. А «танутерство» – это 1) «честь», которая вручалась нахарару (князю), на основе которой тот управлял своими земельными владениями, 2) существовали другие названия нахарарства (княжества), 3) часто обозначало также должность, власть. Принятые в историографии точки зрения о том, что «танутерская Армения» – это статус марзпанской Армении, а «танутер Армении» – управляющий страной, марзпан, не подтверждаются первоисточниками. Термин «танутерская Армения» может употребляться как «нахарарская (княжеская) Армения», и то лишь в применении к периоду 428-591 гг.

**Henrik Khachatryan – The Concepts of “Tanuter” and “Tanuterutyun” in the Early
Feudal Armenia**

In the Armenian sources of the fifth century not only the terms “nakharar” and “prince” but also “tanuter” were applied to the large and medium-sized Armenian feudal lords, and the term “tanuterutyun” was used for the territory under control. The reports of primary sources show that “tanuter” was the same hereditary landowner nakharar-prince, the head of the clan, while “tanuterutyun” was 1) the “honor” that was awarded to the nakharar (prince), on the basis of which he ruled his territory; 2) this was another name for “nakhararutyun” (principality); and 3) often also meant the post, in the sense of power. The points of view adopted in historiography that “Tanuterakan Armenia” is the status of the Armenian marzpanate and the “tanuter of Armenia” is the governor of the country – marzpan, are not supported by primary sources. The term “Tanuterakan Armenia” can be applied to “nakhararakan (princely) Armenia” only for the years 428-591.

¹ Տե՛ս **Բարխուդարյան Վ.**, Ֆեոդալական հողատիրությունը Հայաստանում 9-11-րդ դարերում, Երևան, 2017, էջ 89-90:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ 1921-1945 ԹԹ.**

Բանալի բառեր – իրանահայ համայնք, հայկական կուսակցություններ, խորհրդային իշխանություններ, քրդական շարժում, իրանական իշխանություններ

XIX դարի վերջից իրանահայ համայնքում հասարակական-քաղաքական կյանքն սկսեց աշխուժանալ, հրապարակ եկան հայկական կուսակցությունները: 1890-ական թվականներից Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցության տեղական կոմիտեները հիմնվեցին նախ Ատրպատականում (Թավրիզ, Մակու, Սալմաստ, Խոյ, Ուրմիա, Ղարադաղ), այնուհետև՝ Գիլանում (Էնզելի, Ռաշտ, Աստարա), Մազանդարանում, ապա՝ Թեհրանում, Նոր Ջուղայում, Մարաղայում, Համադանում, Ղազվինում և այլուր: Թավրիզում, Ռաշտում, Թեհրանում և այլ վայրերում ի հայտ եկան նաև Սոցիալ-դեմոկրատական հնչակյան (ՄԴՀԿ) կուսակցության կոմիտեներ: Պայքարն այդ կուսակցությունների միջև հատկապես ցայտուն էր Թավրիզում, որի Լիլավա թաղամասում գերիշխում էին դաշնակցականները, իսկ Ղալան մեծ մասամբ հնչակյան էր: Ռամկավար ազատականները, լինելով արևմտահայ ունևոր խավի ներկայացուցիչներ, չկարողացան կայուն դիրքեր գրավել իրանահայերի շրջանում¹:

1921-1945 թթ. Իրանում գործող հայկական նշված երեք հիմնական կուսակցությունների պատմությունն անաչառ և համակողմանի ներկայացնելու համար ստորև վերլուծենք նրանց գործունեությունն առանձին-առանձին:

Իրանում դաշնակցականների կուսակցական աշխատանքն ուժեղացավ հատկապես 1921 թ., երբ փետրվարյան ապստամբության և Ջանգեզուրի ինքնապաշտպանության պարտությունից հետո հազարավոր տարագիրների հետ Թավրիզում ապաստան գտան Հայաստանի առաջին Հանրապետության բազմաթիվ պետական, կուսակցական, ռազմական, հասարակական գործիչներ՝ ՀՀ Բյուրո կառավարության անդամները, «Հայրենիքի փրկության կոմիտեն»՝ իր ղեկավարներով ու բոլոր անդամներով, Լեռնահայաստանի կառավարության և Հայաստանի խորհրդարանի անդամները՝ Հովհաննես Քաջազնունին, Սիմոն Վրացյանը, Համո Օհանջանյանը, Ռուբեն Տեր-Մի-

¹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 713, **Մարտիրոսյան Հ.**, Իրանահայ գաղութի պատմություն, Երևան, 2007, էջ 154:

նայանք, Կարո Սասունին, Համբարձում Տերտերյանը, Հակոբ Տեր-Հակոբյանը, Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ), Վահան Մինախորյանը (Էսէռ), Արշամ Խոնդկարյանը (Էսէռ), Արշալույս Աստվածատրյանը և այլք: Մեծ թիվ էին կազմում նաև հայ մտավորականները՝ ուսուցիչները, բժիշկները, խմբագիրները, փաստաբանները և այլք:

1921 թ. կեսերին Թավրիզի դաշնակցական կազմակերպության մեջ տեղի ունեցան գաղափարական լուրջ խմորումներ, որոնցում ներգրավվեց նաև «Մինարեթ» թերթի խմբագրությունը: Թերթն ի վերջո հրաժարվեց հակախորհրդային ուղղվածությունից, աստիճանաբար դուրս եկավ ՀՅԴ-ի ազդեցությունից և դարձավ անկախ:

ՀՅԴ գերագույն մարմինը, որը 1921 թ. փետրվարյան ապստամբությունից հետո փոխարինել էր ՀՅԴ բյուրոյին, ժամանակավոր նստավայր Բուխարեստից խորհուրդ տվեց Թավրիզում գտնվող Հայաստանի Հանրապետության կառավարությանն ինքնալուծարվել: Հոկտեմբերի 11-ին այն լուծարքի ենթարկվեց՝ վարչապետ Ս. Վրացյանին նախապես լիազորելով կազմել երեք-հինգ հոգուց բաղկացած նախարարների խորհուրդ՝ գլխավորապես տարագրության գործերը հսկելու համար: Նույն օրը հիմնված նախարարների խորհրդի կազմում էին Ս. Վրացյանը, Հ. Տեր-Հակոբյանը և Վ. Մինախորյանը: Հոկտեմբերի 14-ին Ս. Վրացյանը մեկնեց արտասահման և նախարարների խորհրդում մնացին երկու հոգի, որոնք իրենց գործունեությունը շարունակեցին մինչև 1923 թ. սեպտեմբերի 24-ը, այն է՝ կառավարության վերջնական լուծարումը¹:

Թավրիզում վտարանդի դաշնակցականները հիմնեցին կուսակցության երկրորդ «Նաիրի» կոչվող կենտրոնական կոմիտեն², որի գործունեությունը հայտնի է «նաիրյան շարժում» անունով: Իրանի կուսակցական կազմակերպությունը հանձն առավ կուսակցության կապի միջոց ծառայել Խորհրդային Հայաստանի (Երևանի) դաշնակցական ընդհատակյա կենտրոնական կոմիտեի³ և Փարիզում գտնվող ՀՅԴ բյուրոյի միջև: Թավրիզի և Երևանի կազմակերպությունների միջև գոյություն ուներ նաև անմիջական կապ, որն անցնում էր Քարազլուխ-Նախիջևանով: Թավրիզը ձգտում էր նոր ուղիներ բացել

¹ Տե՛ս **Քաղաքապետի Էդ.**, Իրանահայ համայնքի ամբողջական պատմություն 10 հատորով, հ. 1. Հայ-իրանական ռազմաքաղաքական հարաբերությունները և իրանահայ գաղութների առաջացումն ու զարգացումը, Թեհրան-Տորոնտո-Երևան, 2012, էջ 433-434:

² Մինչև 1911 թ. ՀՅԴ-ն Իրանում ուներ մեկ կենտրոնական կոմիտե՝ «Վրեժ» անվանմամբ, որի պաշտոնաթերթն էր «Այգ» շաբաթաթերթը:

³ Խորհրդային Հայաստանում դաշնակցությունն իր ընդհատակյա գործունեությունը շարունակեց մինչև 1933 թ., երբ ՀՅԴ 12-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը պաշտոնապես լուծարեց այն:

խուսափելու համար կապավորների հնարավոր ձախողումից¹:

Խորհրդային Հայաստանի կառավարությունն ակնդետ հետևում էր Թավրիզի դաշնակցականների գործունեությանը և փորձում հնարավորինս շուտ նրանց հեռացնել Խորհրդային Հայաստանի սահմանակից երկրից: Թեև իրանական իշխանություններն ընդհանուր առմամբ հանդուրժողաբար և ըմբռնումով էին վերաբերվում փախստական հայ ղեկավար գործիչներին և մտավորականներին, սակայն Մոսկվայից և Երևանից հղած նոտաների ազդեցության ներքո սկսել էին անհանգստանալ և եկվորներին հասկացնել տալ, որ իրենց երկրում այլևս անցանկալի է նրանց ներկայությունը: Նույնիսկ Ատրպատականի նահանգապետից մի քանի անգամ նախազգուշացում ստացան: Իբրև այդ ամենի հետևանք՝ հայ գործիչների և մտավորականների հոսքն արագացավ Թավրիզից դեպի այլ վայրեր: Մեկնում էին առավել վտանգված քաղաքական գործիչները, այնուհետև՝ մյուս մտավորականները:

Թավրիզում մնացին մտավորականների և գործիչների մի փոքր խումբ և մի քանի հարյուր շարքային տարագիրներ: Տարիների համառ աշխատանքով նրանք հաղթահարեցին տնտեսական և այլ դժվարություններ: Քաղաքում սկսեց գործել հայկական գիմնազիա, հրատարակվեցին թերթեր, կազմակերպվեցին դասընթացներ, հիմնվեցին արհեստանոցներ, բացվեցին խանութներ: Այդ ամենի շնորհիվ կենդանություն ստացավ հայոց կյանքը:

Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցչությանը կից ինֆորմացիոն բաժնի 1922 թ. բյուլետենից տեղեկանում ենք, որ այդ թվականին Թավրիզում ուժեղ պայքար է մղվել դաշնակցական բյուրոյականների և աշխատավորականների խմբի միջև²: Վերջիններս դաշնակցություն կուսակցության «ձախ» հոսանքի ներկայացուցիչներն էին: Այդ «ընդդիմությունը» կուսակցության ղեկավարության դեմ հանդես էր գալիս որոշ քննադատությամբ՝ բուն նպատակ ունենալով խորհրդային իշխանության ճնշումների պայմաններում լեզալության հասնել³:

1923 թվականին Թավրիզում հիմնադրվեց ՀՅԴ քարոզչության դպրոցը⁴:

Անդրե Ամուրյանի անտիպ հուշագրությունում ներկայացված են 1920-ական թվականների առաջին կեսին դաշնակցության խորհրդային իշխանությունների նկատմամբ չեզոք ընդդիմադրի կեցվածք որդեգրելու մանրամասները: Դա միայն գաղափարական պայքար էր. կարմիր բանակը որոշ

¹ Տե՛ս ՀՅ Դաշնակցությունը ԽՍՀՄ Արտակարգ հանձնաժողովի և Պետական քաղաքական վարչության գաղտընթերցումներում (1920-ական թվականներ) (փաստաթղթերի ժողովածու), պրոֆ. Վ. Ն. Ղազախեցյանի խմբ., Երևան, 2016, էջ 8:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 162, թ. 97:

³ Տե՛ս ՀՅ Դաշնակցությունը ԽՍՀՄ Արտակարգ հանձնաժողովի և Պետական քաղաքական վարչության գաղտընթերցումներում (1920-ական թվականներ), էջ 31:

⁴ Տե՛ս **Գեորգեան Կ.**, Ամենուն տարեգիրքը 1958, Ե տարի, Պեյրութ, 1957, էջ 524:

չափով ապահովում էր Հայաստանի հայության ֆիզիկական գոյությունը: Դաշնակցությունը դեմ էր ապստամբությանը¹:

ՀՀԴ Իրանական Ատրպատականի կենտրոնական կոմիտեի անդամ Սամսոն Խան Թադևոսյանի համոզմամբ՝ Իրանի դաշնակցական կազմակերպությունների շարքում Սալմաստը զբաղեցնում էր պատվավոր տեղ, որի համեմատ Ուրմիայի դաշնակցականները թույլ էին և սակավաթիվ²: Իրանի հարավային և կենտրոնական տարածաշրջանների կուսակցական մարմինները ենթարկվում էին Թեհրանի «Շահաստան» կենտրոնական կոմիտեին³: Նոր Ջուղայում դաշնակցությունն իր կազմակերպության հիմքը դրեց 1898 թ.: Ժամանակի ընթացքում այդտեղի դաշնակցական կազմն ստվարացավ՝ տարածվելով նաև Փերիայի և Չհարմհալի գյուղերում⁴:

1934 թ. Նոր Ջուղայում արդեն հիմնվել էր «Կամուրջ» անունը կրող դաշնակցական կոմիտեն, որը սահմանափակ թվով շարքայիներ ուներ: Իսկ Չհարմհալի և Փերիայի գյուղական շրջանների հայությունն անկազմակերպ էր: ՀՅԴ բյուրոն, նկատի ունենալով այդ վիճակը, որոշեց Սպահանը դարձնել մեկուսի կոմիտե:

Փերիայում կուսակցական աշխատանքներն ընթանում էին դանդաղ, իսկ Չհարմհալում հաջողվեց ունենալ բավարար թվով անդամներ, 1936 թ. հունիսին հրավիրել ներկայացուցչական ժողով՝ մասնակցությամբ մեկուսի կոմիտեի ներկայացուցիչ Թ. Թադևոսյանի, և ընտրել «Շամբ» անդրանիկ կոմիտեն: Ներկայացուցչական ժողովը, հաշվի առնելով այդ կոմիտեի բազմանդամությունը և գյուղերի հեռավորության հանգամանքը, այն բաժանեց երկու՝ «Շամբ» և «Հովիտ» կոմիտեների: 1939 թ. գումարվեցին դրանց ներկայացուցչական ժողովները՝ մասնակցությամբ մեկուսի կոմիտեի ներկայացուցիչ:

«Չհարմհալի ուսումնասիրաց միությունը» ՀՅԴ հիմնական օրրաններից էր Իրանում: Բացի ՀՅԴ-ից՝ այլ կուսակցությունների չի հաջողվել կազմակերպական աշխատանք կատարել Չհարմհալում, թեև ռամկավար և կոմունիստական կուսակցություններին հարող անհատներ եղել են:

Կուսակցությունը գավառահայ կյանքում մեծ դեր խաղաց. տեղ գրավելով գյուղական ազգային և հասարակական գործերի առաջին շարքերում՝ գավառցի կուսակցականը տեղի երիտասարդությանը ձերբագատեց ճորտի հոգեբանությունից, նրա մտածմունքների գլխավոր առանցքը դարձրեց դպրոցի և նոր սերնդի դաստիարակության հիմնախնդիրները: Կուսակցու-

¹ Տե՛ս **Տեր-Օհանեան Ա. (Ամուրեան Ա.)**, «Կեանքի էջեր», Յուշերս (անտիպ) մանկութիւնից մինչև 1936, Թեհրան, 1978, էջ 152:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 131, թ. 82:

³ Տե՛ս **Գեորգեան Կ.**, նշվ. աշխ., էջ 526:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 526-527:

թյան ներկայությունը գավառում հասարակական և մշակութային կյանքի վերելքի միջոց ու խթան էր¹:

Փերիայում կուսակցական լուրջ աշխատանք է տարվում 1936 թ. հետո²: ՀՅԴ կուսակցությունը 1939 թ. ուներ նաև իր առանձին գրադարանը՝ «Ըաֆֆի» անունով: Դաշնակցությունը բեղուն գործունեություն ծավալեց նաև Ռաշտի և Փեհլևիի հայ հասարակական-քաղաքական կյանքում³:

Խորհրդային հատուկ ծառայություններն Իրանում անընդհատ պայքարում էին դաշնակցականների ազդեցության և նրանց քաղաքական գործունեության դեմ: Անդրե Ամուրյանը, վկայակոչելով բոլշևիկների հետախուզական և լրտեսական գործունեության ծավալումը, ինքնապաշտպանության ու ապահովության տեսանկյունից դաշնակցության համար կարևորում է նման միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը⁴: Հետագայում ՀՅԴ հետախուզությունը Թավրիզում հենց Ա. Ամուրյանն էր վարում:

ՀՀԴ պառակտման ուղղությամբ խորհրդային իշխանության գործադրած ջանքերն արտացոլող արխիվային փաստաթղթերը լայնածավալ տեղեկություններ են հաղորդում այդ պայքարում օգտագործված միջոցների վերաբերյալ: 1923 թ. սեպտեմբերի 24-ին Ատրպատականում ՀՍԽՀ նախկին ներկայացուցիչ Գարագաշը նույնաբովանդակ գրություն էր հղել Խորհրդային Հայաստանի Արտակարգ հանձնաժողովին, իսկ պատճենը՝ Անդրկովկասյան Արտակարգ հանձնաժողովին: Փաստաթուղթն ամբողջովին համեմված է այդ կուսակցության հասցեին ուղղված գավեշտի հասնող հերյուրանքներով⁵:

Թեհրանում Հայկական գործերի գծով քարտուղար Ս. Առաքելյանը 1925 թ. օգոստոսի 18-ին Ս. Կ. Պաստուխովին (Մոսկվա), Ս. Համբարձումյանին (Երևան) և Ա. Հովհաննիսյանին (Երևան) հղած գրությամբ հայտնում է դաշնակցության կազմալուծման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին⁶:

«Մենակ» ծածկանվամբ հանդես եկած Ե. Իշխանյանի՝ ՀՅԴ բյուրոյին ուղղված 1927 թ. օգոստոսի 7-ի գրությունը լույս է սփռում Մակուում, Խոյում, Սալմաստում և հատկապես Ուրմիայում բոլշևիկների ծավալած աշխատանքների վրա: Նրանք ունեին իրենց գործակալները, որոնք առևտրական գործերով լինում էին Իրանական Քրդստանում: Բոլշևիկների նպատակն էր

¹ Տե՛ս **Սարեան Ա.**, Պատմութիւն Չարմահալ գաւառի, Թեհրան, 1980, էջ 620-621:

² Տե՛ս **Բաղդասարյան Էդ.**, նշվ. աշխ., հ. 5, Իրանահայ գավառները, գիրք Ա, Թեհրան-Տորոնտո-Երևան, 2012, էջ 422:

³ Տե՛ս «Պարսկահայ տարեցոյց», առաջին տարի, Թեհրան, 1927, էջ 75-76, 84-85:

⁴ Տե՛ս **Տէր-Օհանէան Ա. (Ամուրեան Ա.)**, նշվ. աշխ., էջ 325:

⁵ Առավել մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 211, թ. 1-3:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 362, թ. 48-49:

Իրանի տարածքում ստեղծել «Կարմիր Քրդստան»՝ ընդդեմ Անգլիայի, Թուրքիայի և Իրանի¹:

Խորհրդային չեկիստ Գ. Ս. Աղաբեկովի «Չեկիստի գրառումները» վերտառությամբ աշխատությունը՝ հրատարակված 1930 թ. Փարիզում, ասպարեզ է հանում ԽՍՀՄ Պետական քաղաքական վարչության գործողությունների ամբողջ գունապնակը: Այն առաջադրանք էր ստացել քայքայել ՀՅԴ-ն, շարքայիններին կտրել վերիններից և շրջել խորհրդային իշխանության կողմը:

Թավրիզի դաշնակցականների և ՀՅԴ կենտրոնական կոմիտեի (Երևան) միջև նամակագրությունը կատարվում էր փոստով: Երկու կողմերի նամակները քիմիական թանաքով էին գաղտնագրված: Աղաբեկովի գրառումներից տեղեկանում ենք, որ դաշնակցականների գաղտնագրերը և քիմիական թանաքի բաղադրությունը հայտնի էին Պետքաղվարչությանը: Ամեն գնով ձեռք բերված նամակներից նրանք իրագեկվում էին, թե դաշնակցությունն ում և ինչ նպատակով էր գաղտնի գրություն ուղարկում Խորհրդային Հայաստան: Դրանք մանրամասն տեղեկություններ էին հաղորդում Արարատի շրջանում թուրքերի դեմ ծավալված քրդական շարժման մեջ ՀՅԴ անդամների դերի և մասնակցության մասին²:

Քրդական շարժման հետ կապվելն ու տարբեր միջոցներով նրան օգնելը դաշնակցության համար ազգային նշանակություն ունեին: Կուսակցությունը քրդական ապստամբության հաղթանակի միջոցով Արևմտյան Հայաստանի ազատագրության հույսեր էր փայփայում:

Արարատի քրդերի ապստամբության առնչությամբ Ա. Ամուրյանը փաստում է, որ ՀՅԴ-ն որպես հրահանգիչ այնտեղ էր ուղարկել Արտաշես Մուրադյանին³, որի հետ կապն իրականացվում էր Սալմաստից՝ Մամվել Մեսրոպյանի միջոցով: Վերջինս, Թավրիզ գալով, Արարատի անցուդարձերի վերաբերյալ նոր և արժանահավատ տեղեկություններ էր հաղորդում, որոնք Ա. Տեր-Օհանյանը վկայել է իր հուշագրության մեջ: Տեղեկանում ենք, որ Թուրքիան մեծ գումարներ էր ծախսում գորքի համար, սակայն չէր կարողանում պաշարել Արարատը. քրդերը լավ էին կռվում, իսկ ՀՅԴ-ն օժանդակում էր նրանց դրամով, գրականությամբ և խորհրդատվությամբ⁴:

¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 7, գ. 131, թ. 193:

² Տե՛ս Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատասխանատու խմբագիր և կազմող՝ պրոֆ. Վ. Ն. Ղազախեցյան, Երևան, 1999, էջ 319-321:

³ Ա. Տեր-Օհանյանի հուշագրության մեջ Մուրադյան ազգանվան փոխարեն, ամենայն հավանականությամբ վրիպակի պատճառով, Մելքոնյան է նշվում (տե՛ս **Տեր-Օհանեան Ա. (Ամուրեան Ա.)**, նշվ. աշխ., էջ 326): Սակայն ակնհայտ է, որ հեղինակը նկատի ունի դաշնակցական Արտաշես Մուրադյանին:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 326-327:

Թուրքական և բոլշևիկյան իշխանությունները ճնշում էին գործադրում իրանական իշխանությունների վրա՝ մեղադրելով նրանց, որ թույլ են տվել ու աջակցել քուրդ և հայ հեղափոխականներին ամրանալ Արարատում և հենարան դառնալ թուրքերի ու բոլշևիկների դեմ գործելու համար: Նրանք պահանջում էին ձերբակալել և հեռացնել դաշնակցական առաջնորդներին, ճնշել ու ոչնչացնել Արարատին սահմանամերձ քրդերին, արգելել հայերին վերահաստատվելու Ուրմիայում, Մակուում ու Մալմաստում և այլն¹:

Իրանական կառավարությունը կարգադրեց Թավրիզի դաշնակցականներին խուզարկել ու բանտարկել և վերահսկողություն սահմանել նրանց նկատմամբ: Իրանի պալատական նախարար Թեյմուրթաշը Թավրիզի դաշնակցականներից պահանջեց դադարեցնել քրդերի հետ գործակցությունը և հայտարարեց, որ Իրանը պետք է Թուրքիային զիջի Փոքր Մասիսը²:

Ստեղծված իրավիճակը ծանր կացություն էր ստեղծել Ատրպատականի հայության, հատկապես դաշնակցության գոյության համար. Մալմաստի և Ուրմիայի գաղթականների դրությունը բարդացավ: Այդ գավառներից, ինչպես նաև Ղարադաղից աչքի ընկնող դաշնակցականներ արքունիքին³: Ռուբեն Տեր-Մինասյանի վկայությամբ՝ Ատրպատականում ծավալված այդ իրողություններն առաջ բերեցին քրդերի հետ դաշնակցականների գործակցության վերաքննության հարցը (գոնե Իրանի տարածքում): ՀՅԴ Բյուրոն, քննարկելով ստեղծված իրադրությունն ու դիմումները, որոշեց շարունակել Արարատին օգնություն տրամադրել հետևյալ կերպ՝ Իրանի հայությունը, այդ թվում դաշնակցականները, չպետք է աջակցեին քրդական խնդրին, իսկ Բյուրոն պետք է շարունակեր Թուրքիայի սահմաններում օժանդակել քրդերին՝ ամբողջ պատասխանատվությունը վերցնելով իր վրա⁴:

Իրանահայության ազգային-քաղաքական կյանքում, սկսած 1920-ական թվականներից, ՀՅԴ-ն գրեթե մենաշնորհ իրավիճակ ուներ, իսկ երբ խորհրդային զորքերը մտան Իրան, Ատրպատականում և Թեհրանի շրջանում այն հայտնվեց քաղաքականապես ոչ նպաստավոր պայմաններում: Հետագայում ՀՅԴ-ն որոշ չափով վերականգնեց իր ազդեցությունը⁵:

ՀՅԴ բյուրոյի կողմից նշանակված Իրանի քաղաքական մարմինը Մրգաստանի շրջանը (Իրանի կենտրոնական տարածաշրջան, այդ թվում՝ Թեհրան) ճանաչեց որպես կենտրոնական կոմիտե: Վերջինս իր 1942 թ. օգոստոսի 1-ի շրջաբերականով այդ մասին իրազեկեց շրջանի բոլոր կոմիտեներին, ենթակոմիտեներին և խմբերին⁶: 1940-ական թվականների սկզբին

¹ Տե՛ս ՀՍՍ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ. 10:

² Տե՛ս Տեր-Օհանեան Ա. (Ամուրեան Ա.), նշվ. աշխ., էջ 327:

³ Տե՛ս ՀՍՍ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ. 11 և շրջ.:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս Դալլաքյան Կ., Հայ Միությունի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 197:

⁶ Տե՛ս ՀՍՍ, ֆ. 1048, ց. 1, գ. 301, թ. 2-3:

Բենյանի (Նոր Ջուղայի գյուղական շրջաններ) և ՀՅԴ Իրանի քաղաքական մարմնի միջև կապը թույլ էր: Քաղմարմնի և մյուս շրջանների միջև հաստատված բնականոն հարաբերություններից պարզ է դառնում, որ բոլորը լծված էին աշխատանքի¹:

Իրանի՝ 1943 թ. փետրվար-մարտ ամիսների քաղաքական անցուդարձերը ներկայացնող արխիվային փաստաթղթերը վկայում են, որ բնականոն իրավիճակ էր տիրում ոչ միայն երկրի կենտրոնական և հարավային տարածաշրջաններում, որտեղ առավելապես զգալի էր բրիտանական և ամերիկյան ներկայությունը, այլև հյուսիսային տարածաշրջանում, որը բացառապես խորհրդային իշխանության ազդեցության գոտի էր: Խորհրդային իշխանությունները պաշտոնապես չէին ճանաչում դաշնակցականների գոյությունը, բայց և չէին հալածում: Իսկ Իրանի իշխանությունների և մտավորականության վերաբերմունքը հայության նկատմամբ վատ չէր. նրանք շարունակում էին վայելել հյուրընկալ երկրի բարյացակամությունը: Իրանում գործող ոչ մի ուժ դաշնակցականների դեմ հալածանք չէր գործադրում՝ ոչ իբրև ազգության և ոչ իբրև կուսակցության²: Սակայն մի քանի ամիս անց՝ 1943 թ. նոյեմբերի 16-ին, Թեհրանում ձերբակալվեց Անդրե Ամուրյանը: Մեկ ամիս անց՝ դեկտեմբերի 16-ին, Թավրիզում ձերբակալեցին Խաչատուր Գրիգորյանին և ուղարկեցին Ռաշտ³: 1944 թ. խորհրդային իշխանությունների պահանջով Իրանում տեղի ունեցան դաշնակցականների լայնածավալ ձերբակալություններ և առևանգումներ: Կուսակցական գաղափարների համար նրանք ենթարկվում էին հալածանքների⁴:

1944 թ. մարտի 21-ին Սրգաստանի շրջանում կայացան ՀՅԴ Իրանի Քաղմարմնի նախագահի, կուսակցության Սրգաստանի կենտրոնական կոմիտեի, Ոսկանապատի (Աբադան) և Կամուրջի (Սպահան) մեկուսի կոմիտեների ներկայացուցիչների առաջին հանդիպումը և խորհրդակցական ժողովը⁵: 1944 թ. մարտի 24-ին ՀՅԴ բյուրոյին հղած կուսակցության Իրանի Քաղմարմնի և Սրգաստանի կենտրոնական կոմիտեի գրությունից տեղեկանում ենք, որ խորհրդակցական ժողովը նպատակահարմար էր գտել պահպանել ՀՅԴ այդ երկու օրգանների՝ մեկ մարմին կազմելու կարգավիճակը՝ ներքին և արտաքին աշխատանքներ վարելու համար⁶:

Հայ հեղափոխական դաշնակցության Իրանի կենտրոնական կոմիտեները, կոմիտեներն ու ենթակոմիտեները, կազմակերպական առումով գորեղանալով, կրթական-հասարակական լայն գործունեություն ծավալեցին, հիմ-

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 146, թ. 12:

² Տե՛ս նույն տեղում, գ. 305, թ. 1-2 և 5:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 297, թ. 14-15:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 310, թ. 1-1 շրջ., 5: Տե՛ս նաև՝ նույն տեղում, գ. 146, թ. 16-16 շրջ.:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 311, թ. 3:

⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 311, թ. 1:

նադրեցին մշակութային միություններ, կրթօջախներ, ծավալեցին հրատարակչական գործունեություն՝ հրատարակելով «Այգ» (Թավրիզ, 1912-1922), «Նոր կյանք» (Թեհրան, 1922-1927), «Այգ» (Թեհրան, 1930), «Ալիք» (Թեհրան, 1931 թվականից ցայսօր) թերթերը, «Լույս» ամսագիրը (Թեհրան, 1943-1944), «Նավասարդ» հանդեսը (Թեհրան, 1937-1939) և այլն¹:

Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը Իրանում առաջին մասնաճյուղ հիմնեց Թավրիզում 1891 թ. հունվարի 5-ին², այնուհետև նաև Թեհրանում, Ղազվինում, Էնզելիում, Ռաշտում, Արդաբիլում, Մարաղայում, Խոյում և Սալմաստում³:

ՄԴՀԿ-ի Թավրիզի մասնաճյուղի պաշտոնաթերթը «Զանգն» էր, որը լույս է ընծայվել 1909-1922 թթ.⁴: Սկսած 1921 թվականից՝ այն քարոզում էր բոլշևիկյան գաղափարները՝ իրենց համարելով վերջիններիս համակիրներ:

1922 թ. մարտի 22-ին ՄԴՀԿ-ի Թեհրանի մասնաճյուղը պաշտոնապես հայտարարվեց կազմալուծված, որը վերականգնվեց 1922 թ. մարտի 30-ին կայացած ընդհանուր ժողովում⁵:

1923 թ. փետրվարի 5-ի կոմինտերնի որոշմամբ ԽՍՀՄ տարածքում գործող հնչակյան կուսակցության մասնաճյուղերը լուծարվեցին: Սակայն սփյուռքում, այդ թվում Իրանում, այն շարունակեց իր գործունեությունը⁶:

1924 թ. իրանական իշխանությունները, ուժեղացնելով բռնաճնշումները հնչակյան կուսակցության դեմ, ձեռքարկեցին Թավրիզի մասնաճյուղի շուրջ 35 ակտիվ հնչակյանների, իսկ մնացյալներից շատերը, վախենալով հալածանքներից, հեռացան այնտեղից, և մասնաճյուղը փաստացի կազմալուծվեց: Հնչակյան կուսակցության Թավրիզի մասնաճյուղի ղեկավար Վահան Ղուկասյանի՝ 1944 թ. դեկտեմբերին Գլխավոր հյուպատոսարան ուղղած դիմումից պարզ է դառնում, որ անկումից հետո Թավրիզում մնացած հնչակյանները շարունակել են աշխատել ընդհատակյա⁷: Կուսակցության Թեհրանի մասնաճյուղի ջանքերով 1925 թ. հունվարի 1-ին այդտեղ պաշտոնապես բացվեց «Արևելք» գրադարան-ընթերցասրահը⁸:

¹ Տե՛ս **Բաղդասարյան Էդ.**, նշվ. աշխ., հ. 4. Իրանահայ համայնքի հասարակական-քաղաքական պատմություն, գիրք Բ, Թեհրան-Տորոնտո-Երևան, 2012, էջ 179-180:

² Ըստ մեկ այլ տեղեկության՝ ՄԴՀԿ-ի Թավրիզի մասնաճյուղը հիմնադրվել է 1889 թ. (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 22, թ. 11):

³ Տե՛ս **Բաղդասարյան Էդ.**, նշվ. աշխ., հ. 4. Իրանահայ համայնքի հասարակական-քաղաքական պատմություն, գիրք Բ, էջ 88-90:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 22, թ. 19:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 154, թ. 11, 29:

⁶ Տե՛ս **Բաղդասարյան Էդ.**, նշվ. աշխ., հ. 4. Իրանահայ համայնքի հասարակական-քաղաքական պատմություն, գիրք Բ, էջ 86:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 16, թ. 10:

⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 49, թ. 9:

1925 թ. Իրանում կար ՄԴՀԿ-ի մեկ գործադիր կոմիտե¹, որը գտնվում էր Թավրիզում՝ միավորելով կուսակցության իրանյան բոլոր 15 մասնաճյուղերը: Տեղական մասնաճյուղերի մեջ միավորվում էին խմբերը, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր 10-20 կուսակցական անդամից՝ համապատասխան տեղական պահանջներին, տարածքի մեծությանը, հեռավորությանը և այլն: Խմբերը սեփական կնիք ունենալու իրավունք չունեին: Մասնաճյուղը միավորում էր 30-1000 կուսակցական անդամ²:

Իրանում հնչակյան կուսակցության ականավոր գործիչներից էր Գրիգոր Եղիկյանը, ով ՄԴՀԿ-ի իրանյան մասնաճյուղերի պատասխանատուն էր: Սակայն 1938 թ. նա հեռացվեց այդ կուսակցությունից³:

1939 թ. բռնկված պատերազմի պատճառով հնչակյան կուսակցության կենտրոնական կոմիտեի ղեկավարները Փարիզից տեղափոխվեցին ԱՄՆ և մինչև 1945 թ. այնտեղ էին գտնվում: 1941 թվականից ՄԴՀԿ-ի Իրանի կոմիտեն Կենտրոնական կոմիտեի հետ որևէ կապ չունեի⁴: Երբ Կարմիր բանակը մուտք գործեց Իրան, հնչակյանները վերսկսեցին իրենց գործունեությունը: Այդ ընթացքում նրանք խորհրդային ազդեցության ամրապնդմանն ուղղված աշխատանքներ էին իրականացնում տեղի հայ հասարակության մեջ, մասնակցում Իրանի Մեջլիսի 14-րդ գումարման ընտրություններին, ԽՍՀՄ պաշտպանության ֆոնդի օգտին գումարներ էին հանգանակում և այլն⁵:

ՄԴՀԿ-ն իր առջև նպատակ էր դրել ամեն կերպ աջակցել Խորհրդային Միության ազդեցության ուժեղացմանն Իրանում, պայքարել հակախորհրդային տարրերի դեմ, ակտիվ մասնակցել երկրի քաղաքական կյանքին, ամեն կերպ օժանդակել Իրանում ժողովրդավարական կարգերի հաստատմանը, նպաստել Իրանի բանվորների և աշխատավոր գյուղացիների դասակարգային գիտակցության զարգացմանը, աջակցել արհմիությունների հզորացմանը և այլն: Առաջադրած խնդիրների իրագործման համար կուսակցությունը վերականգնեց իր կազմակերպությունները տարբեր քաղաքներում⁶:

1945 թ. Թավրիզի հյուպատոսական տարածաշրջանում ՄԴՀԿ-ին անդամագրված հայերի թիվը հասնում էր 100-ի (Թավրիզում՝ 40-ի, Մարաղայում՝

¹ Գործադիր կոմիտեները բաղկացած էին 5-7 անդամից: Ղեկավարում էին շրջանի կուսակցական բոլոր գործերը, պահպանում էին կապը կենտրոնական մարմնի հետ, կազմակերպում քարոզչական աշխատանք, պարբերականների հրատարակում և վարում քաղաքական ու կուսակցական կազմակերպական բոլոր աշխատանքները (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 22, թ. 22):

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 22, թ. 22:

³ Տե՛ս **Բաղդասարյան Էդ.**, նշվ. աշխ., հ. 4. Իրանահայ համայնքի հասարակական-քաղաքական պատմություն, գիրք Բ, էջ 104-105, 107:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 16, թ. 13:

⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 11:

⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 16, թ. 12:

60-ի): Այդ ժամանակ այն քաղաքական ուժ չէր ներկայացնում, համակիրներ չունէր և ի վիճակի չէր կատարել հասարակական-քաղաքական աշխատանքներ¹:

1921 թ. հոկտեմբերի 1-ին Սահմանադրական ռամկավար կուսակցությունը², Ազատական կուսակցությունը (նախկին վերակազմյալ հնչակյանները), Հայ ժողովրդական կուսակցության³՝ արտասահմանում գտնվող անդամները և այլ խմբավորումներ միավորվեցին՝ կազմելով Ռամկավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ): Դրանից հետո նրանց՝ սահմանադրական ազատության, անհատական նախաձեռնության և սեփականատիրության գաղափարներն անփոփոխ մնացին⁴:

Մինչև 1945 թ. Իրանում պաշտոնապես ձևավորված ՌԱԿ գոյություն չունէր, նրա կողմնակիցներն այստեղ հարել են Հայ բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղին⁵: ՌԱԿ-ի Թավրիզի վարչությունը կուսակցության կենտրոնական վարչությանն ուղղած՝ 1931 թ. հունվարի 30-ի գրությամբ հաղորդում է կուսակցականների ճշգրիտ թիվը՝ 16 և տեղեկացնում վարչության հինգ անդամ ունենալու մասին⁶:

1931 թ. փետրվարի 19-ին Թավրիզում հրապարակված ՌԱԿ-ի ծրագրում հիմնական գաղափարներ էին սահմանվում.

- ա) ազգի անհատականությունը և նրա շահերի ու իրավունքների պաշտպանության ձգտումը,
- բ) ազատականությունը, որի ներքո հարկ է հասկանալ ֆիզիկական, մտավոր և բարոյական կարողություններն ազատորեն կիրառելու իրավունքները, հայրենիքի քաղաքական, տնտեսական պայմանների բարելավմանն ուղղված նոր և առաջադիմական գաղափարներ որդեգրելու պատրաստականությունը,
- գ) քաղաքական, տնտեսական և հասարակական բարեփոխումները:

Ելնելով վերոհիշյալ գաղափարներից՝ ՌԱԿ-ն Իրանում խթանելու էր պետական և ազգային կյանքի բոլոր բնագավառների առաջընթացը: Այն իրանահայ իրականության մեջ հետապնդելու էր հետևյալ նպատակները.

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 31, թ. 10:

² 1906 թ. արմենականները, միավորվելով «Վերակազմյալ հնչակյանների» հետ, կազմեցին «Սահմանադրական ռամկավար կուսակցությունը»:

³ Այդ լիբերալ կուսակցությունը հիմնել էին հայ կադետները 1917 թ. ապրիլի 11-ին Թիֆլիսում: 1921 թ. Խորհրդային Հայաստանում տեղի ունեցած փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Հայ ժողովրդական կուսակցության ղեկավարները հեռացան երկրից:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 424, ց. 3, գ. 422, թ. 1:

⁵ Տե՛ս **Բաղդասարյան Էդ.**, նշվ. աշխ., հ. 4. Իրանահայ համայնքի հասարակական-քաղաքական պատմություն, գիրք Բ, էջ 81:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 424, ց. 3, գ. 362, թ. 3-4:

- ա) պահպանել հայկական ազգային և հասարակական բոլոր հիմնարկների առանձնաշնորհումները, նպաստել իրանահայության տնտեսական կյանքի բարելավմանն ու մշակութային առաջընթացին,
- բ) ամեն կերպ նպաստել իրանահայ համայնքի ֆիզիկական և տնտեսական զարգացմանը, հայկական մշակույթի պահպանմանն ու վերելքին,
- գ) այդ նպատակներն իրագործելու համար ՌԱԿ-ը ձգտելու էր բոլոր ազգային հաստատություններում և հիմնարկներում ունենալ դիրք և ազդեցություն,
- դ) կրթական և այլ հիմնարկները դարձնել բոլոր խավերի օժանդակության և համակրության առարկա, հոգալ նրանց տնտեսական կարիքները, բարենորոգել և արդիականացնել դպրոցական ծրագրերը. պարսկերենը, Իրանի պատմությունը և գրականությունը դարձնել հիմնական առարկաներից՝ նպատակ ունենալով նոր սերնդի մեջ արմատավորել ազնվության և հայրենասիրության զգացողությունները և դարձնել նրան հանրօգուտ իրանցի,
- ե) զարկ տալ սպորտի, թատերական, երաժշտական, հրատարակչական և այլ բնագավառների զարգացմանը և ամեն կերպ նպաստել իրանահայերի բարոյական և մտավոր մակարդակի բարձրացմանը,
- զ) ձգտել իրանահայ համայնքից լավագույն ներկայացուցիչներ ունենալ Իրանական խորհրդարանում՝ մեջլիսում, և այլ պետական հիմնարկներում՝ աջակցելով այդ ներկայացուցիչների գործունեությանը՝ հանուն Իրանի առաջադիմության և իրանցիների բարօրության,
- է) կազմակերպական հարցերում ղեկավարվել ՌԱԿ-ի հիմնական կանոնագրքով՝ հրատարակված 1930 թ. Փարիզում¹:

Փարիզում հաստատված կուսակցական գործիչ Արտակ Դարբինյանին ուղղված ՌԱԿ-ի Թավրիզի վարչության 1933 թ. փետրվարի 9-ի գրությունը հայտնի է դարձնում կուսակցության անդամների թվի աստիճանաբար նվազման, անձնական խնդիրներին շաղախված կուսակցական գործերի և վեճերի ամբողջ ընթացքը²:

ՌԱԿ-ը Իրանում կազմակերպորեն պաշտոնապես հիմնվել է 1945 թ. ամռանը, երբ Եգիպտոսից կուսակցության ականավոր գործիչներ Էոժեն Փափազյանը (1887-1963)³, որն անգլիասեր էր, Հակոբ Արամյանը (1908-1955)⁴, Հունաստանից Հայկ Վարվառյանը⁵ Էջմիածնից վերադառնալիս (այնտեղ էին

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 130, թ. 10-11 շրջ.:

² Տե՛ս նույն տեղում, գ. 133, թ. 10 շրջ.:

³ Այդ ժանակաշրջանում նա ՌԱԿ-ի կենտրոնական վարչության նախագահն էր:

⁴ Գրող, խմբագիր Հակոբ Արամյանը 1945-1947 թթ. խմբագրել է Կահիրեում լույս տեսնող «Արև» օրաթերթը՝ ՌԱԿ-ի Եգիպտոսի շրջանակի պաշտոնաթերթը:

⁵ Նա աշխատակցել է Աթենքի «Նոր կյանք» օրաթերթին:

մեկնել պատվիրակի կարգավիճակով՝ մասնակցելու 1945 թ. հունիսի վերջին կայանալիք կաթողիկոսի ընտրության համահայկական ժողովին) աշխույժ ձեռնամուխ եղան այդ կուսակցության կազմակերպմանը՝ անշուշտ ոչ առանց անգլիացիների գիտության: Այդ կուսակցությունը ստեղծվել էր ժողովրդական զանգվածների վրա մեծ ազդեցություն ունեցող ժողովրդական կուսակցության հայկական բաժանմունքին հակադրվելու նպատակով: ՌԱԿ-ն իր շարքերում ուներ մի քանի տասնյակ մարդ: Կուսակցության անդամները հիմնականում ունևոր մարդիկ էին, որոնց մի մասն անգլիացիների հետ կապի մեջ էր կասկածվում: Մի քանի երևելի ռամկավարներ սերտորեն կապված էին իրանցիների հետ¹:

1945 թ. ՌԱԿ-ի Թեհրանի մասնաճյուղը փոքրաթիվ էր, ուներ 45-50 հայ հարուստ անդամներ: Նրանք կուսակցությունը համարում էին ժողովրդավարական և պաշտոնապէս հայտարարում, որ պատրաստ են աջակցել Խորհրդային Միության օգտին անցկացվող բոլոր միջոցառումներին²:

Астхик Акопян – Деятельность армянских партий в Иране в 1921-1945 гг.

С конца XIX века в армянской общине Ирана общественно-политическая жизнь активизировалась, на политической арене появились армянские партии. Местные комитеты Армянской революционной федерации были основаны сначала в Атрпатакане (Тавриз, Маку, Салмаст, Хой, Урмия, Карадаг), затем в Гилане (Энзели, Рашт, Астара), Мазандаране, затем – в Тегеране, Нор-Джуге, Мараге, Амадане, Газвине и др. В Тавризе, Раште, Тегеране и других местах появились комитеты Социал-демократической партии Гнчакян. Рамкаварским либералам, которые были представителями состоятельных западноармянских слоев, не удалось занять устойчивые позиции среди иранских армян. В данной статье мы проанализировали деятельность трех армянских партий в Иране в 1921-1945 гг. и их роль в общественно-политической жизни армянской общины.

Astghik Hakobyan – Activities of Armenian Parties in Iran from 1921 to 1945

From the end of the nineteenth century the social-political life of the Iranian-Armenian community began to flourish, and several Armenian parties emerged. The local committees of the Armenian Revolutionary Federation - Dashnaktsutyun were first established in Atrpatakan (Tabriz, Maku, Salmast, Khoy, Urmia, Gharadagh), later in Gilan (Enzeli, Rasht, Astara), Mazandaran, Tehran, New Jugha, Maragha, Hamadan, Qazvin and elsewhere. Committees of Social-Democratic Hunchakyan Party emerged in Tabriz, Rasht, Tehran and other places. Ramkavar Liberals, being the representatives of the Western Armenian rich class, were unable to occupy strong positions among Iranian-Armenians. In this article we have analyzed the activities of three Armenian parties in Iran and their role in the social and political life of the Armenian community during the period between 1921-1945.

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 91, թ. 1:

² Տե՛ս նույն տեղում, գ. 118, թ. 27-28:

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Բանալի քառեր – Լ. Տեր-Պետրոսյան, Հայոց ցեղասպանություն, Մփյուռք, հայ-թուրքական հարաբերություններ, ազգային գաղափարախոսություն, պանթուրքիզմ

1990-ական թվականների սկիզբը նշանավորվում է մի շարք շրջադարձային իրադարձություններով, որոնցից ամենակարևորը, թերևս, ԽՍՀՄ-ի փլուզումն էր և ՀՀ անկախության հռչակումը: Անկախության ձեռքբերմամբ ՀՀ-ն դառնում է միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ, ինչը նրան հնարավորություն էր տալիս մշակել ինքնուրույն արտաքին քաղաքականության հայեցակարգ: Դա, բնականաբար, չէր կարող չներառել նաև իր անմիջական հարևաններին, այդ թվում և Թուրքիային:

ՀՀ ղեկավարությունը սկզբնական շրջանում նախընտրում է Թուրքիայի հետ երկկողմ հարաբերությունների հաստատման և զարգացման հարցում որպես քաղաքական առաջնահերթություն չընդգրկել Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը՝ վերապահելով այն սփյուռքին: Այլ կերպ ասած՝ սկզբնական շրջանում փորձում է շրջանցել Անկախության հռչակագրի հայտնի դրույթը՝ շեշտելով, որ «մեր ազգի գոյության նոր, ավելի հուսալի երաշխիքներ»-ի օղակներից մեկը Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորումն է¹:

Դեռևս ՀՀ անկախության հռչակման նախաշեմին Թուրքիայում արդեն սկսում են մտահոգվել, որ հնարավոր է՝ անխուսափելի են դառնալու հայերի տարածքային պահանջները, և այդ համատեքստում Թուրքիան սկսում է վերանայել իր արտաքին քաղաքական առաջնահերթությունները տարածաշրջանում: Ուստի ամենին պատահական չէր, որ Թուրքիայի արտգործնախարար Մեսութ Յըլմազը մտահոգություն էր հայտնում Խորհրդային Միության հնարավոր փլուզման առիթով՝ նշելով, թե «Աստված մի արասցե, որ Խորհրդային Միությունը քայքայվի», քանզի Թուրքիայի համար նախընտրելի է իր «հարևանությամբ ունենալ գերիզուր պետություն քաղաքական կայուն կարգավիճակով, քան անկախ, բայց անկայուն մի քանի հանրապետություններ»²:

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 նոյեմբերի 1990:

² **Չաքրյան Հ.**, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998, էջ 11:

Արդեն 1991 թ. վերջերին թուրքական մամուլում մի շարք հոդվածներ են հրապարակվում, որոնցում նշվում էին այն օգուտները, որ կարող է ստանալ Թուրքիան՝ բարելավելով հարաբերությունները Հայաստանի հետ: Ընդ որում հոդվածագիրները իրենց տեսակետը հիմնավորում էին այն փաստարկներով, որ Հայաստանի հետ նորմալ, բարիդրացիական հարաբերությունների հաստատումը հնարավորինս զերծ կպահեր վերջինիս՝ տարածաշրջանում հակաթուրքական տրամադրություններ ունեցող երկրներին հարելուց: Բացի այդ, նրանց կարծիքով, Հայաստանի հետ լավ հարաբերությունները զգալիորեն կարող էին թուլացնել միջազգային կազմակերպություններում Հայոց ցեղասպանության խնդիրների քննարկումները, ինչպես նաև եվրոպական երկրների և ԱՄՆ-ի կողմից հնարավոր ճնշումները¹:

Նման պայմաններում 1991 թ. դեկտեմբերի 16-ին Թուրքիան պաշտոնապես ճանաչում է ՀՀ-ն անկախությունը: Այդ առիթով Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին հղած ուղերձում կոչ էր անում երկու հարևան երկրների հարաբերություններում «հավատարիմ մնալ միջազգային իրավունքի հիմնարար՝ ... տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության սկզբունքներին»²:

Թուրքիան, առաջիններից մեկը ճանաչելով ՀՀ անկախությունը, այնուամենայնիվ վերջինիս հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ձգձգում էր՝ վկայակոչելով ՀՀ անկախության հռչակագրի այն հայտնի դրույթը, որ ՀՀ-ն հետամուտ է լինելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը:

Հետաքրքիր է նկատել, որ որոշ ուսումնասիրողներ, անդրադառնալով հռչակագրի նշված կետին, այն կարծիքն են հայտնում, թե իբր հենց այդ կետը «փաստորեն չեղյալ հայտարարեց Թուրքիայի հետ խորհրդային իշխանությունների հաստատած սահմանը, ինչը կարող էր դիտվել որպես տարածքային պահանջ Կարսի և Արդահանի շրջանների նկատմամբ»³: Սակայն ցանկանում ենք նշել, որ նման գնահատականները ծայրահեղ են, ոչ իրատեսական և ամենին չեն բխում հռչակագրի 11-րդ կետից, քանզի այնտեղ խոսք անգամ չկա տարածքային պահանջների վերաբերյալ:

Քննարկվող ժամանակաշրջանում Թուրքիան սկսում է գործնական քայլեր ձեռնարկել նախկին ԽՍՀՄ թուրքալեզու հանրապետությունների հետ համաձայնագրեր կնքելու ուղղությամբ, որոնք, ի դեպ, վերաբերում էին ամենատարբեր ոլորտների՝ սկսած տնտեսականից, վերջացրած գիտական-մշակութայինով:

¹ Տե՛ս **Մանուկյան Շ.**, Հայ-թուրքական հարաբերությունները և Հայոց ցեղասպանության խնդիրները (1991-2002 թթ.) // «Տարեգիրք», Երևան, 2005, էջ 64:

² ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 192, թ. 1-3:

³ **Куртов А. А., Халмухамедов А. М.**, Армения-Турция: противостояние или сотрудничество? // Армения: проблемы независимого развития / Под общ. ред. Е. М. Кожокина, М., 1998, с. 450.

Թյուրքալեզու աշխարհում իր ազդեցությունը հնարավորինս մեծացնելու Թուրքիայի գործադրած ջանքերի արդյունքում կրկին վերածնվում է պանթուրքիստական գաղափարախոսությունը, որից Թուրքիան, ամենայն հավանականությամբ, երբեք չէր հրաժարվել: Ի դեպ, թուրքերը ևս չէին թաքցնում այդ հանգամանքը: Այդ մասին է վկայում Ս. Դեմիրելիի հետևյալ հայտարարությունը. «Ոչ ոք չի կարող ժխտել, որ գոյություն ունի մի թուրքական աշխարհ, որը տարածվում է Ադրիատիկ ծովից մինչև Չինական պատր»¹: Այդուհանդերձ, նկատենք նաև, որ թուրքերը, ընդունելով պանթուրքիստական գաղափարախոսությունը, այնուամենայնիվ փորձում էին բավականին զգուշորեն կյանքի կոչել այդ գաղափարախոսության դրույթները:

Այսպես, օրինակ՝ Թուրքիայի արտործնախարարության բարձրաստիճան պաշտոնյա Բիլալ Մամջրը պանթուրքիզմի գաղափարների վերածննդի վերաբերյալ նշում էր, որ այն կարող է հանգեցնել ընդամենը այս կամ այն երկրում առկա կազմակերպությունների միության, ընդ որում դրանց ստեղծման գործում առաջատար դերը պատկանելու էր Թուրքիային: Այս միտքը հեղինակը հիմանվորում էր նրանով, որ եթե սկանդինավները, արաբները և մյուսները ունեն նման միություններ, ապա թյուրք ժողովուրդներին ևս դա կարելի է²: Պանթուրքիստական գաղափարներով հայտնի Յուսուֆ Աքչուրան Հայաստանը դիտում էր որպես մի «թումբ», որը «դաշնակիցները կանգնեցրել էին երկու եղբայր ժողովուրդների՝ Անատոլիայի և Կովկասի թրքության միջև», ուստի հեղինակի կարծիքով դա պետք էր ոչնչացնել³:

Բերված փաստերը բավարար հիմքեր են տալիս եզրակացնելու, որ Թուրքիան ամենևին չէր հրաժարվել իր պանթուրքիստական ծրագրերից, սակայն փորձում էր նաև դրանք մատուցել հնարավորինս քողարկված ձևերով՝ նպատակ ունենալով «մոլորության մեջ գցել հանուր մարդկությանը»⁴:

Ցավոք, ՀՀ ղեկավարությունը չգիտես ինչու հաշվի չէր նստում Թուրքիայում տիրող նման տրամադրությունների հետ՝ հայտարարելով, թե «պանթուրքիզմը, որպես գաղափարախոսություն ապրելով իր ծաղկումը առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, ներկայումս կորցրել է քաղաքական գործոնի իր բովանդակությունը, որպես վտանգ հայ ժողովրդի համար դադարել է գոյություն ունենալուց, փոխվել են թուրքալեզու ժողովուրդները, դեմոկրատացել, բռնել ազգային զարգացման ուղին»: Ավելին, Լ. Տեր-Պետրոսյանի պնդմամբ՝ «պանթուրքիզմը պատկանում է անցյալին», և պետք է «հրաժարվել հայկական հարցից», «մոռանալ անցյալի թշնամությունը»,

¹ «Ազատամարտ», 1992, թիվ 20, «Երկիր», 30 հուլիսի 1994:

² Տե՛ս **Коджаман О.**, Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период, М., 2004, с. 87.

³ Տե՛ս **Զարեվանդ**, Միացյալ անկախ Թուրանիա, Երևան, 1993, էջ 119:

⁴ «Երկիր», 30 հուլիսի 1994:

«մոռանալ եղեռնը և կարգավորել հարաբերությունը Թուրքիայի հետ»¹: Ի դեպ, դա այն դեպքում, երբ պանթուրքական ուղղվածություն ունեցող Ազգային շարժում կուսակցությունը «1995 թվականի ընտրություններին հավաքելով ձայների 9 %-ը՝ ներկայացված էր Թուրքիայի ազգային մեծ ժողովում»²:

Թուրքիայում հայտնի պանթուրքական մեկ այլ՝ «Գորշ գայլեր» կազմակերպության ներկայացուցիչները շատ հաճախ քրդերին և Քրդական բանվորական կուսակցությանը «հայ ստրուկներ» են անվանում, իսկ նշված կուսակցության առաջնորդ Աբդուլլահ Օջալանին՝ հայ³: Կարծում ենք՝ բերված փաստերը բավարար են պնդելու, որ ՀՀ առաջին նախագահը սխալվում էր իր պնդումներում:

1991 թ. սեպտեմբերի 8-ին Մոսկվա ուղևորվելու ճանապարհին մի քանի ժամով Երևանում է գտնվում շուրջ 40 մարդուց բաղկացած ԱՄՆ-ի Կոնգրեսի պատվիրակությունը: Այդ ընթացքում հյուրերը հանդիպումներ են ունենում ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և այլ պաշտոնատար անձանց հետ: Այստեղ Լ. Տեր-Պետրոսյանը կրկին շեշտում է ՀՀ-ի պատրաստակամությունը՝ նորմալացնելու միջպետական հարաբերությունները Թուրքիայի հետ՝ չնայած «Հայաստանի և Թուրքիայի միջև կան լուրջ պատմական հակասություններ», և բացի այդ՝ «հայ ժողովուրդը չի կարող մոռանալ 1915 թվականի իր նկատմամբ կատարած ցեղասպանությունը և նրա պահանջը ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ միանգամայն արդարացի և օրինական է»⁴:

Քննարկվող ժամանակաշրջանում հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար հարկ ենք համարում համառոտակի անդրադառնալ նաև Լ. Տեր-Պետրոսյանի՝ 1991 թ. մայիսի 11-ին «Аргументы и факты» օրաթերթին տված հարցազրույցին և դրան հաջորդած Թուրքիայի պաշտոնական արձագանքին: Այսպես, 1920-ական թվականների սկզբին Անդրկովկասում ծավալված պատմական իրադարձությունների մասին նա նշում էր, որ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի հայտնի պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը, ձգտելով ստանալ Թուրքիայի համակրանքը, անդամատել է Հայաստանը՝ Կարսի մարզը զիջելով Թուրքիային, իսկ Լեռնային Ղարաբաղը՝ Ադրբեջանին⁵:

Լ. Տեր-Պետրոսյանի այս միտքը, որն ընդամենը միանգամայն օբյեկտիվ պատմական ակնարկ էր 1920-ական թվականների սկզբին Անդրկովկասում ծավալված իրադարձությունների վերաբերյալ, լուրջ դժգոհության առիթ է

¹ «Հայաստանի Հանրապետություն», 27 նոյեմբերի 1990: Տե՛ս նաև՝ **Խուրշուդյան Լ.**, Հայկական հարցը, Երևան, 1995, էջ 79-80:

² **Сваранц А.**, Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, М., 2002, с. 225.

³ «Ազգ», 30 հոկտեմբերի 1993:

⁴ «Ազգ», 11 սեպտեմբերի 1991:

⁵ «Аргументы и факты», 11 мая 1991. Տե՛ս նաև՝ **Киреев И.**, Турция между Европой и Азией. Итоги европеизации на исходе XXI века, М., 2001, с. 366.

տալիս Թուրքիային, ի դեպ, այն աստիճան, որ շատ չանցած Մոսկվայում Թուրքիայի դեսպան Վուրալը հանդես է գալիս պաշտոնական բողոքի նոտայով: Դրանում մասնավորապես կոչ էր արվում Հայաստանի հարևան բոլոր երկրներին ոչ մի կտոր հող չտալ ՀՀ-ին, որովհետև իբր Լ. Տեր-Պետրոսյանը ոչ միայն «բողոքարկում է պատմական փաստերը», այլև «խեղաթյուրում» դրանք¹: Սակայն Թուրքիան մոռանում էր այն պարզ ճշմարտությունը, որ այդ հարցազրույցում ակնարկ անգամ չկար ինչպես հարևան երկրներին, այնպես էլ Թուրքիային ներկայացվելիք որևէ տարածքային պահանջի վերաբերյալ:

Արդեն 1992 թ. մարտին իբրև ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, «Ջուհուրիյեթ» թերթին տված հարցազրույցում պատասխանելով այն հարցին, թե արդյոք ՀՀ անկախության հռչակագրում տեղ գտած «Արևմտյան Հայաստան» արտահայտությունը Թուրքիայի նկատմամբ պահանջատիրության խնդիր չի առաջացնում, ՀՀ նախագահը պատասխանում է, որ «Հռչակագիրն ընդունվել է նախքան ԽՍՀՄ-ի կազմալուծումը, և Հայաստանն այն ժամանակ դեռ չէր անդամակցել ո՛չ ԵԱՀԽ-ին, ո՛չ էլ ՄԱԿ-ին: ԵԱՀԽ-ի սկզբունքներով, որոնք մենք հարգում ենք, այդ արտահայտությունն ինքնին օրակարգից դուրս է հանվում»: Ավելին, ՀՀ նախագահը սույն հարցազրույցում շեշտում է նաև, որ «Հայաստանը հարևաններից հողային պահանջ չունի, և դա վերաբերվում է թե՛ Թուրքիային և թե՛ Վրաստանին ու Ադրբեջանին»²: Այստեղ ցանկանում ենք շեշտել այն հանգամանքը, որ նման հայտարարությունները, իրենց հիմքում քաղաքական կարճատեսություն լինելով հանդերձ, միաժամանակ նշանակում էին նաև նահանջ հայ ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից: Հիշենք, որ հետագայում Լ. Տեր-Պետրոսյանի կողմից «կեղծ քաղաքական կատեգորիա» անվանված ազգային գաղափարախոսության հենքի վրա նույն ինքը՝ Լ. Տեր-Պետրոսյանը, և իր համախոհները եկան իշխանության: Չմոռանանք նաև, որ նրա նման հայտարարություններն ի վերջո մերկապարանոց դատողություններ չէին և ընկած էին ՀՀ ղեկավարության արտաքին քաղաքականության հայեցակարգի հիմքում:

Հետաքրքիր է նկատել, որ ժամանակի առանձին ուսումնասիրողներ, փորձելով արդարացնել ՀՀ արտաքին քաղաքականության այն դրույթը, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը պետք էր դուրս թողնել հայ-թուրքական հարաբերություններից, պնդում էին, թե իբր այդ դեպքում ոչ ավել, ոչ պակաս հնարավոր կլիներ ապահովել նաև ՀՀ անվտանգությունը: Նրանք դա պատճառաբանում էին նրանով, թե «չկար Խորհրդային Միությունը՝ որպես անվտանգության համակարգ, ձևավորված չէին նոր անվտանգության համակարգեր», կազմավորված չէր հայկական

¹ Տե՛ս **Արշակյան Գ.**, Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., Երևան, 2009, էջ 52: Տե՛ս նաև՝ «Независимая газета», 14 мая 1991:

² **Խուրշուդյան Լ.**, նշվ. աշխ., էջ 79-80:

բանակ, «առկա էր դարաբաղյան խնդիրը, և տեղի էին ունենում աշխարհաքաղաքական, տարածաշրջանային վերադասավորումներ¹: Մենք համակարծիք ենք Արամ Անանյանի հետ, որ «Հայոց ցեղասպանության խնդիրը չարծարծելը չէր ամրապնդում Հայաստանի անվտանգությունը»: Հիշենք, որ «արցախյան հակամարտության ընթացքում Թուրքիան Հայաստանի նկատմամբ դրսևորեց բացահայտ թշնամանքի բոլոր հնարավոր տարբերակները, բացառությամբ ՀՀ-ի վրա զինված հարձակում գործելուց»²: Բացի այդ՝ այս տեսակետի օգտին է վկայում նաև այն փաստը, որ 1993 թ. մայիսին Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը լկտիաբար հայտարարում էր, թե «հայերը չեն սովորել Անատոլիայի փորձության իրենց դասը և այն պատիժը, որ ստացել են»³:

Ուրեմն անգամ այն դեպքում, երբ ՀՀ ղեկավարությունը պատրաստակամություն էր հայտնել երկկողմ հարաբերություններում Հայոց ցեղասպանության խնդիրը չարծարծել, Թուրքիան, խախտելով միջազգային իրավունքի բոլոր հիմնարար սկզբունքները, այնքան էլ դեմ չէր Հայաստանի հետ բոլոր խնդիրները ռազմական ճանապարհով հարթել: Ուստի մեկ անգամ ևս ցանկանում ենք շեշտել, որ քննադատության չեն դիմանում ՀՀ ղեկավարության այն պնդումները, թե իբր «պանթուրքիզմը անցյալում է», «Թուրքիան բռնել է զարգացման ժողովրդավարական ուղին», իսկ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգից հանելը բավարար է Հայաստանի անվտանգությունն ապահովելու համար:

Փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող ժամանակաշրջանում Թուրքիայի հետ հարաբերությունների հարցում ՀՀ ղեկավարությունը երբեմն հանդես էր բերում հակասական մոտեցումներ: Այսպես, եթե նախկինում Լ. Տեր-Պետրոսյանը պնդում էր, որ «պանթուրքիզմը պատկանում է անցյալին», ապա արդեն 1992 թ. հունիսի 2-ին թուրքական «Ջումհուրիյեթ» թերթին տված և Թուրքիայում մեծ աղմուկ բարձրացրած հարցազրույցում նա նշում էր, որ «եթե Թուրքիան չհետապնդեր գաղափարախոսական նպատակներ Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում, այլ փոխարենը առաջ մղեր իր քաղաքականությունը մշակութային, գիտական և տնտեսական զարգացման վրա հենվելով, մենք ջերմորեն կողջունենք դա»: Այնուհետև, ավելի կոնկրետացնելով իր միտքը, Լ. Տեր-Պետրոսյանը նշել է, որ գաղափարախոսական նպատակներ ասելով նկատի ունի «պանթուրքիզմը և տարածաշրջանում առաջացած քաղաքական վա-

¹ Մանուկյան Ա., Հայ դատի ու Հայոց ցեղասպանության խնդիրը ժամանակի հոլովությամբ // «Առավոտ», 21 հոկտեմբերի 2000:

² Անանյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում (1991-2004 թթ.), Երևան, 2006, էջ 30:

³ Reuter 4/5/1993, 4/7/93, Agence France Press, 4/3/93, 4/6/93, 4/9/93, 4/15/93:

կումը լցնելու նպատակը»։ Դրանից հետո անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների հետագա ընթացքին՝ նա նշել է, թե «Հայաստանում և սփյուռքում սերունդները մեծացել են հակաթուրքական զգացումներով», և որ դրան «նպաստում էր նախկին ԽՍՀՄ կառավարությունը», որն ըստ նրա՝ «ցանկանում էր մեկուսացնել Հայաստանը Թուրքիայից՝ նպատակ ունենալով ավելի ուժեղացնել խորհրդային իշխանությունը Հայաստանում»¹։ Մեկնաբանությունները, ինչպես ասում են, ավելորդ են։

Հայաստանի և Թուրքիայի միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատելու հայկական կողմի գործադրած բոլոր ջանքերին հակառակ՝ կարելի է փաստել, որ թուրքական կողմը երբեք չէր հրաժարվել հայ-թուրքական հարաբերություններում իր առաջադրած նախապայմաններից, որոնց կրկին ուշադրություն է հրավիրել Մոսկվայում Թուրքիայի դեսպան Քամիլը, ով 1993 թ. հոկտեմբերի 18-ին՝ Հայաստանի նախագահի հետ հանդիպումից հետո, նշել է, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման համար «Հայաստանը պիտի հրաժարվի 1915 թվականի իրադարձությունների խնդրին անդրադառնալուց»²։

Անկեղծ ասած՝ Թուրքիայի դեսպանի նման հայտարարությունն առնվազն տարօրինակ է, քանզի ինչպես բազմիցս նշվել է, Լ. Տեր-Պետրոսյանը Հայաստան-Թուրքիա հարաբերություններում հանդես էր գալիս Հայոց ցեղասպանության թեման չարժարծելու և պահանջատիրությունից հրաժարվելու գաղափարներով։ Ուստի առավել քան համոզված ենք, որ թուրքական կողմն ամեն անգամ նման հայտարարություններ անելիս նպատակ էր հետապնդում հասկացնել հայկական կողմին քայլեր ձեռնարկել՝ համոզելու սփյուռքին «այս հարցում հետևել իրեն»³։

Տարօրինակ է, որ Թուրքիան հսկայական միջոցներ էր ծախսում ամբողջ աշխարհում Հայկական հարցի վերաբերյալ սեփական հայեցակարգը քարոզելու նպատակով։ ՀՀ ղեկավարությունը, ըստ թուրքական կողմի, պետք է կոչ աներ համայն հայությանը դադարեցնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և Հայկական հարցի արդարացի լուծման համար մղվող պայքարը։

Мери Наджарян – *Вопрос Геноцида армян в армяно-турецких отношениях в первые годы независимости РА*

Сразу после провозглашения независимости РА получает возможность как полноправный субъект международного права разработать собственную политическую концепцию, в которой, естественно, значительное место уделяется вопросу

¹ «Ազգ», 4 հունիսի 1992, թարգմանություն «Ձումհուրիյեթ» 2 հունիսի 1992 թ. հոդվածից։

² Куртов А. А., Халмухамедов А. М., նշվ. աշխ., էջ 455։

³ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բաժին 32, թղթապանակ 26, փաստաթուղթ 5, էջ 4։

взаимоотношений с Турцией. В самом начале руководство РА предпочло не включать вопрос о Геноциде армян в двусторонние отношения, полагая, что это обстоятельство в значительной мере облегчит установление дипломатических отношений между двумя странами. Более того, руководство РА того времени не уделяло особого внимания наличию в Турции пантюркистской идеологической опасности. В итоге, несмотря на неоднократные объявления со стороны руководителей РА о том, что в вопросе установления двусторонних отношений Армения не преследует цели предъявления к Турции территориальных требований, более того, готова не касаться темы Геноцида армян во время переговоров, тем не менее, турецкая сторона продолжала оставаться верной своим принципам: для установления дипломатических отношений с Арменией важным было и остается условие отказа от идеи факта Геноцида армян.

Meri Najaryan – *The Issue of Armenian Genocide in Armenian-Turkish Relations in the First Years of the RA Independence*

Immediately after the proclamation of independence, the RA, as a full-fledged subject of international law, was given the opportunity to develop an independent foreign policy concept, in which, of course, a significant place would be given to the relations with Turkey. From the very beginning, the RA leadership chose not to include the issue of the Armenian Genocide in bilateral relations, considering that this fact would greatly facilitate the establishment of diplomatic relations between the two countries. Moreover, the Armenian leadership of the time did not pay due attention to the dangers of Pan-Turk ideology in Turkey. As a result, despite the statements repeatedly made by the Armenian leadership that in case of establishing bilateral relations Armenia would not seek to present territorial claims to Turkey and even was prepared not to discuss the topic of the Genocide during the negotiations, the Turkish side continued to adhere to its principle that the denial of the Armenian Genocide had been and remained an important condition for establishing diplomatic relations with the RA.

**ԷԹՆԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՏԼԻԿՏԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ**

Բանալի բառեր – ազգ, էթնիկություն, էթնիկ քաղաքական կոնֆլիկտ, գլոբալացում, համաշխարհային հասարակություն, հայագիտություն

Հասարակագետների ներգրավումը էթնիկ կոնֆլիկտներում

Էթնիկ կոնֆլիկտները սովորաբար դիտարկվում են որպես երկկողմանի հարաբերություններ: Սակայն նման մոտեցումը թույլ չի տալիս մեզ գտնել արդյունավետ լուծումներ, քանի որ էթնիկ քաղաքական կոնֆլիկտները, ըստ էության, պայմանավորված են գլոբալ գործընթացներով: Մենք այլևս չենք կարող առանձին պետությունների միջև հակամարտությունն ընդունել մի գործընթաց, որտեղ նրանցից յուրաքանչյուրն ինքն է լուծում իր խնդիրները: Պետությունները ստիպված են միասին հաղթահարել էթնիկ քաղաքական կոնֆլիկտների համաշխարհային ազդեցությունը, քանզի գլոբալացումը պարտադրում է սոցիալական աշխարհը ըմբռնել որպես համաշխարհային հասարակություն: Եվ քանի որ գլոբալ կառույցները համաշխարհային հասարակության ապակենտրոնացված կառուցվածքի և անհամասեռության պատճառով էլ ավելի են փոխկապվում միմյանց, ուստի չի կարելի շարունակական ռեգիոնալացումը անջատել գլոբալ համակարգից: Գլոբալացման գործընթացները պայմանավորված են տեղական գործընթացներով և կրում են դրանց ազդեցությունը: Հասարակության համաշխարհային համակարգի զարգացումը փաստում է այդ բնեռների աճող կախվածությունը միմյանցից: Այդ պատճառով համաշխարհային հասարակության գործառական տարրամասնատումը (differentiation) ենթադրում է նաև քաղաքական որոշումներ կայացնող ատյանների ռեգիոնալացում: Ուստի և ընդունված է համաշխարհային քաղաքական համակարգը բնութագրել, մասնավորապես, որպես տարածքային պետություններից բաղկացած ամբողջություն: Եվ երբ ազգի մասին է խոսքը, ենթադրվում է հարաբերություն որևէ կոնկրետ պետության հետ¹:

¹ Տե՛ս օրինակ՝ **Hobsbawm E. J.**, Nations and Nationalism since 1780. Programme, Myth, Reality, Cambridge, 1990:

Մակայն համաշխարհային հասարակության մեջ մարդկության գոյության հիմնարար խնդիրները պետության շրջանակներում բոլորովին լուծված չեն, իսկ գլոբալացումն այս խնդիրները շատ ավելի է սրել: Արդիականությունը գլոբալացրել է նաև անկայունությունը, այնպես որ այժմ յուրաքանչյուր տեղային հակամարտություն մեծ ռիսկ է ամբողջ համաշխարհային համակարգի համար: Ընդ որում, համաշխարհային հասարակության արդի տնտեսակարգի մեջ նախկինում մեկուսացած տարածաշրջանների ընդգրկումը սոցիալական աշխարհի անկայունության գործընթացներն ավելի է ուժեղացրել: Անընդհատ ի հայտ են գալիս նոր դերակատարներ, որոնց կայացրած որոշումները այսուհետ ունենում են համաշխարհային կողմնորոշվածություն: Դրա հետ կապված՝ համաշխարհային հասարակությունում նկատվում է բարդության աճ, որն առաջացնում է նոր հիմնախնդիրներ, որոնք հարցականի տակ են դնում համաշխարհային կառույցների կարողությունը՝ պահպանելու ներկա գլոբալ կարգի չափանիշները և միևնույն ժամանակ լուծելու այդ հիմնախնդիրները: Քառսն ու անկայունությունը համաշխարհային համակարգի հետզհետև աճող կառուցվածքային բարդության հետևանքով առաջացնում են մշտական ռիսկեր, և դրանցից ամենալուրջը դառնում է ինքը՝ արդիականությունը:

Արդիականությունն առաջ բերեց ոչ միայն անհատապաշտություն և անհատի ինքնավարություն, այլև էթնիկ խմբերի ինքնորոշման ձգտում: Ինքնորոշումը, իհարկե, մեծացնում է որոշումներ կայացնող ասոյանների կարողությունները, սակայն դրանց ավելացող ինքնավարությունը միևնույն ժամանակ նշանակում է փոխադարձ կախվածության աճ: Մարդիկ կախված են հեռավոր վայրերում տեղի ունեցող գործընթացներից և գուրկ են այդ գործընթացների վրա անմիջական ազդեցություն ունենալու հնարավորությունից: Պարադոքսալ է թվում, բայց մարդու գոյությունը ոչ թե իրեն է պատկանում, այլ ուրիշներին՝ «օտարներին»: Իրենց ինքնիշխանությունը հաստատելու համար էթնիկ խմբերին ու ազգերին միջազգային ճանաչում է պետք, իսկ դա նշանակում է գլոբալ համաշխարհային տերությունների ուղղակի միջամտություն յուրաքանչյուր տեղական ազգային շարժմանը և գլոբալացնում է ցանկացած այդպիսի հակամարտություն:

Հայագիտությունը չի կարող անտեսել համաշխարհային այս նոր իրավիճակը, քանի որ, էթնիկ բախումներից ազդված, ներկայումս նորովի են մոտենում էթնիկությանը և կոնֆլիկտի տեսություններին: Հայագետները պետք է այս նոր իրավիճակը որպես մարտահրավեր ընդունեն և էթնիկ քաղաքական կոնֆլիկտներն ու թաքնված լարվածությունները դիտարկեն որպես հայագիտական նորագույն հետազոտությունների կարևոր առարկա*, քանզի

* Եթե հայագիտությունը օտար հետազոտողների պես առավելապես պատմագիտությամբ ու լեզվաբանությամբ սահմանափակենք, ապա հարց է առաջանում. ինչո՞վ պետք է զբաղվեն հայ հասարակագետները (քաղաքագետները, կոնֆլիկտաբանները, սոցիոլոգները,

ազգովի ներքաշված ենք Ղարաբաղյան կոնֆլիկտի մեջ: Ինչպես էմպիրիկ, այնպես էլ տեսաբան հայագետները պետք է կոնֆլիկտների կանխարգելման նոր մեթոդներ որոնեն: Բայց հայագիտական հետազոտությունները կարող են լուծել նման խնդիրներ, եթե որոշակի դեպքերի վերլուծությունների հիման վրա ցույց տրվեն, թե ինչպես կարելի է գործիքավորել հասարակագիտական կոնցեպտները, որպեսզի դրանք նպաստեն կոնֆլիկտի արդյունավետ լուծմանը: Դրա համար անհրաժեշտ է տարածաշրջանի առանձին էթնիկ խմբերի ներկայիս դիրքի և նրանց քաղաքական շահերի հետազոտություն: Հաճախ է պատահում, որ հասարակագետները միակողմանի ներգրավվում են կոնֆլիկտի կողմի որոշակի քաղաքական դիրքերի «լեգիտիմացման» գործում՝ դրանով իսկ հաճախ նպաստելով կոնֆլիկտների ընդլայնմանը: Շատ դժվար է կոնֆլիկտների հետազոտության ժամանակ ճիշտ պահպանել դիստանցիան, քանի որ գիտնականները նույնպես ներգրավված են էթնիկ մոբիլիզացման գործընթացներում: Սակայն «սոցիալական տարբեր կառուցվածքները և հետևաբար ներկայի հիմնախնդիրները հետազոտողների համար հստակ են դառնում միայն այն դեպքում, երբ նրանք կարողանում են դիտարկել դրանք որոշակի հեռավորությունից»¹: Մեթոդաբանական այս հեռավորությունը հաշվի չառնելու դեպքում գիտական հետազոտությունները կարող են օգտագործվել որպես քաղաքական մոբիլիզացման գաղափարական ուժ: Երբ գիտնականները, խեղաթյուրելով իրականությունը, սկսում են պաշտպանել պատմական բարդ հիմնախնդիրների միակողմանի մեկնաբանումները, նրանք դառնում են կոնֆլիկտի բաղկացուցիչ մաս:

Էթնիկ մշակութային շփումների հաղորդակցական գործընթացների, ինչպես նաև հասկացման և առաջին հերթին չըմբռնելու կամ թյուրըմբռնելու մասին ճշգրիտ գիտելիքները կարևոր նախադրյալ են, որ ձևավորվեն վարքագծեր, որոնք թույլ կտան ճիշտ կողմնորոշվել էթնիկ կոնֆլիկտներում: Քանի որ գլոբալացման գործընթացները, տրանսպորտային և հաղորդակցության արդի միջոցները հարցականի տակ են դրել ընդունված վերլուծական գործիքների պիտանելիությունը, տեսության շրջանակներում պետք է ակնհայտ լինի, թե հայագիտությունը ինչ մոտեցումներով և տերմիններով է կարող դիտարկել արդի էթնիկ կոնֆլիկտը և կոնֆլիկտների հաղթահարման համար համապատասխան տեսական ինչպիսի հիմքեր մշակել և ինչ չափով ու ինչպես միջամտել կոնֆլիկտներին: Եվ որպեսզի էմպիրիկ հետազոտական դաշտի համար կարողանանք համակողմանի վերլուծական շրջանակ ձևակերպել, կարիք ունենք հայագիտության շրջանակներում շատ հաճախ գործածվող «ազգ» և «էթնիկություն» եզրույթների քննական վերլուծության:

տնտեսագետները, իրավագետները), եթե ոչ **մերօրյա** հայի սոցիալական կեցության ուսումնասիրությամբ, այսինքն՝ հայագիտությամբ:

¹ Elias N., Engagement und Distanzierung, Arbeiten zur Wissenssoziologie 1. Fr./M., 1983, S. 135.

Կոնֆլիկտային ներուժը «ազգ» և «էթնիկություն» եզրույթներում

Պետք է առանձնացնել ազգի կառուցակցման երկու սկզբունք: Կա՛մ ազգը բնութագրվում է որպես ազգ-պետություն (ազգի սուբյեկտիվ հայեցակարգ), կա՛մ որպես մշակութային ազգ (օբյեկտիվ հայեցակարգ)¹: Ազգի ձևավորման առաջին տարբերակը իրականացվել է, օրինակ, Ֆրանսիայում: Քաղաքացիների ինքնորոշման միջոցով նոր քաղաքական միավոր էր ձևավորվել՝ ֆրանսիացի ազգ, որի ինքնիշխանությունը տարածքային պետական սահմանների շրջանակներում ներառում է լեզիտիմ իշխանության բացարձակ մենաշնորհը: Մշակութային ազգի հերդերյան տարբերակը ազգային միասնությունը փնտրում է լեզվի, մշակույթի և պատմության ընդհանրության մեջ: Սակայն հաճախ անտեսվում է, որ նաև Ֆրանսիայում համընդհանուր միասնությանը հասել են հարկադրանքով և հարկադրաբար պահպանում են այն իշխող էթնիկ մշակութային խմբի ինքնության քաղաքականության միջոցով: Գրական լեզուների ձևավորման միջոցով էթնիկ իմաստային սահմանները ձևափոխվում են, իսկ մշակութային առումով՝ «ազգայնացվում»: Այդ պատճառով շատ խնդրահարույց է ազգի կառուցակցման երկու սկզբունքների միջև վերոնշյալ տեսական տարբերակման հետևողական կիրառումը: Երկու տարբերակները միախառնվում են և դառնում նույն գործընթացի իդեալ-տիպային (ideal typical) բնորոշումներ միայն: Ինչպես կամային «ազգակերտումը» Ֆրանսիայում, Անգլիայում և ԱՄՆ-ում, այնպես էլ մշակութապես թեմատիկավորված ազգային միավորումը մի պետության ձևով Գերմանիայում և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի շատ այլ երկրներում ունեցել են լեզիտիմ իշխանության մենաշնորհ հաստատելու վերոնկարագրյալ նույն գործառույթը: Ուրեմն «ազգ» եզրույթը պետք է հասկանալ որպես գործառական հասկացություն:

Ընդհանրապես հասարակագիտական եզրույթները վտանգ են պարունակում՝ փոխանցել միասնական և անժամկետ երևույթի կեղծ նկարագրություններ, քանի որ ճանաչողական տարածությունում տարբեր փոփոխվում են անընդհատ: Ազգի սահմանման ժամանակ որոշ հատկանիշներ պակաս կարևոր են, մյուսները՝ ավելի: Ազգի ու պետության նույնականացման ժամանակ հաստատվում է այդ պետությունների ինքնարմբոման շնորհիվ առաջացած այն գնահատումը, որ ազգերը սահմանված են որպես տարածքային միավորներ: Ավելի ստույգ՝ «ազգ» եզրույթը նշանակում է տարածքով սահմանված պետական միավորում: ««Ազգի» պարագայում խոսքը սովորաբար իշխանության հարցերի մասին է»²,– կարծում է Ռիխտերը: Այստեղ է, որ

¹ Հմմտ. **Han P.**, Soziologie der Migration: Erklärungsmodelle, Fakten, Politische Konsequenzen, Perspektiven, Stuttgart, 2000, S. 110-111:

² **Richter D.**, Die zwei Seiten der Nation. Theoretische Betrachtungen und empirische Beispiele, S. 59-83 // **Nassehi A.** (Hg.), Nation, Ethnie, Minderheit, 1997, S. 64.

տարածքը ձեռք է բերում վճռորոշ նշանակություն «ազգ» հասկացության սահմանման համար, որովհետև ժամանակակից ազգերի ձևավորման ժամանակ այն եղել է համակարգային ինտեգրման գլխավոր գործոն: Բոլոր մյուս հասկանիչները, որոնք սովորաբար վերաբերում են ազգի հասկացությանը, կապված էին տարածքային սահմանների հետ: Ազգը «պատկանում է որոշակի պատմական ոչ վաղ անցյալ ունեցող ժամանակաշրջանին: Այն հասարակական միավոր է միայն այնքանով, որքանով վերաբերում է արդիական տարածքային պետության որոշակի ձևին՝ «ազգ-պետությանը»: Ավելին. «Պետություններն են «առաջացնում» ազգերն ու էթնիկական խմբերը, դա տեղի է ունենում հենց այն բանի շնորհիվ, որ պետությունների կազմավորման գործընթացը բնութագրվում է որպես ազգային (մտացածին) համայնքների գործ»¹: Ազգ ձևավորում է այն խումբը, որը պետական-տարածքային ինքնիշխանություն ունի²:

Էթնիկ խմբերը, ընդհակառակը, հիմնականում ընկալվում են որպես իշխանագուրկ փոքրամասնություններ: «Էթնիկ փոքրամասնությունները այն էթնիկ խմբերն են, – գրում է Կնիոր, – որոնք այլ էթնիկ խմբերի կամ մեծամասնության համեմատ ենթարկվում են՝ ա) խտրականության, խոցելի են և մարգինալիզացված, կամ բ) որոնց վերաբերվում են որպես պահպանության և պաշտպանության արժանի միավորների»³: Այս սահմանումը քաղաքականացնում է էթնիկությունը: Եվ հենց այդպիսի սահմանումներն են պարունակում կոնֆլիկտային հսկայական ներուժ, քանզի խտրականությունն ու էթնիկությունը պարփակվում են նույն շրջանակում: Եվ անկախ նրանից, թե ինչպես է ձևավորվել ազգային պետությունը, ազգության և էթնիկության միջև տեղի է ունենում նոր դիմակայություն: Առաջին եզրույթով սահմանվում է պատկանելիություն որևէ քաղաքական միավորի, մյուսի միջոցով՝ մշակութայինի: Իրականում, սակայն, ընդունված է այս երկու կատեգորիաների քաղաքական ըմբռնումը: Թեև էթնիկությունն ի սկզբանե քաղաքականապես բնորոշված կառույց չէ, սակայն այն կարող է քաղաքականացվել, եթե գործի դրվի ինքնության համապատասխան քաղաքականություն⁴:

¹ Kneer G., Nationalstaat, Migration und Minderheiten: Ein Beitrag zur Soziogenese von ethnischen Minoritäten, S. 85-102 // Nassehi A. (Hg.), նշվ. աշխ., էջ 95:

² Մեր օրերում, սակայն, մարդկության աննախադեպ սոցիոմշակութային առաջընթացը բարձրացրեց էթնիկ խմբերի ազգային ինքնագիտակցության մակարդակը, իսկ գիտատեխնիկական նվաճումները, հաղորդակցման միջոցների զարգացումը և համաշխարհային միգրացիոն գործընթացների կտրուկ աճը հարցականի տակ դրեցին տարածքի նշանակությունը որպես ազգի համար ամենաառաջնային հատկանիշ: Տարածքն ազգի հասարակական համակարգի պարտադիր բնորոշիչ է, բայց դրա պարամետրալ գերիշխող մակարդակ հանդիսացող սոցիալական համակարգը կոմունիկատիվ է, ինչից բխում է ժամանակի գործոնի առաջնահերթությունը:

³ Kneer G., նշվ. աշխ., էջ 93:

⁴ «Ինքնության քաղաքականություն» եզրույթի մասին տե՛ս օրինակ՝ Calhoun C., Social Theory and the Politics of Identity, Wiley Blackwell, 1994:

Կոնֆլիկտի արդի հետազոտությունների համար ազգայնության ու էթնիկության կամ ազգի և էթնիկ խմբի միջև այս նույնականացումը (կամ տարբերակումը) շատ կարևոր է: Այս իմաստով կարելի է նույնիսկ խոսել էթնիկ ազգության մասին¹:

Եթե ելնում ենք այն դրույթից, որ հաղորդակցությունները սոցիալականի տարրական միավորներն են², ապա էթնիկ խմբի ձևավորումը հաջողվում է, իհարկե, շնորհիվ այն է բանի, որ մի խումբ անձանց այդ կարգավիճակն ամրագրվում է կոմունիկատիվ եղանակով: Սակայն սա չի նշանակում, որ անհատների որևէ կողմնակի հատկանիշներ կարող են կամայականորեն փոխակերպվել նշանակալի հատկությունների, որպեսզի իրականացվեն առանձին էլիտաների շահերը: Թեև էթնիկության սուբստանցիոնալ և ձևական եզրույթների վերաբերյալ բանավեճը չպիտի այստեղ նորից մանրամասնենք, սակայն պետք է նշել, որ առանց էության չի լինի նաև գոյություն: Էթնիկ խմբերի էությունը մի հնարավորություն է, որը ակտուալացվում է ընկալման միջոցով: Այն իրական է, քանզի իրական հնարավորություն է³: Էթնիկ խմբերը պատմականորեն կառուցակցված միավորներ են: Եվ հենց խմբերի ինքնաընկալման միջոցով է էթնիկությունն իրականացվում և դառնում իրական: Մարդկանց յուրայինների հետ փոխկապելու և հասարակության սոցիալական համախմբման իր գործառույթի միջոցով էթնիկությունը ստեղծում է իրական խմբեր, որոնք հաղորդակցական կապերի միջոցով մշտապես ինքնադիտարկում են իրականացնում և դրանով իսկ իրենք իրենց տարբերում են սեփական միջավայրից: Էթնիկական սահմանները մշտապես հաստատվում են այս դիտարկումով և հետևաբար պետք է հասկացվեն որպես գործընթաց: Այս պատմական գործընթացը հիմնված է սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնների փոխազդեցության վրա: Խմբերի ձևավորման գործընթացներում կառուցողական դեր են խաղում այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ մշակույթը, լեզուն, նաև ընդհանուր ծագումը և այլն: Կարևոր է, որ սահմանազատման միջոցով ձևավորված էթնիկ միավորները կազմում են կենսաշխարհում տեղի ունեցող հաղորդակցական բոլոր գործընթացների հարաբերման կետը, անկախ այն բանից՝ այդ հարաբերումը կհասկացվի սուբստանցիոնալ, թե ֆորմալ առումով: Հեշտ է հասկանալ, որ էթնիկ խմբերը կարելի է դիտարկել որպես այդպիսի հարաբերման կետ, որովհետև նրանք ունեն փոխհամաձայնության համար անհրաժեշտ ընդհանուր մշակույթ: Մշակույթի ընդհանրությունը կայունացնում է հաղորդակցական ցանցերը ընդհանուր պատկանելիության գիտակցության շրջանակներում:

¹ Տե՛ս **Mkrtichyan A.**, Ethnonationalität und ethnokulturelle Konflikte bei der Bildung von Diasporagemeinden // „Berliner Blätter“, 2004, Heft 33, S. 69-85:

² Հմմտ. **Luhmann N.**, Soziale Systeme, Frankfurt am Main, 1984:

³ Հնարավորությունների տարբեր մոդուսների վերաբերյալ տե՛ս **Hartmann N.**, Möglichkeit und Wirklichkeit, Berlin, 1966:

Յուրաքանչյուր մշակույթ արտահայտում է իր «իմաստային աշխարհը», որը պետք է սովորել: Այն միջնորդավորում է աշխարհի մեր մեկնաբանությունները, և դրանց հիմքերն այլևս չհիմնավորվող են մեր կողմնորոշումների և առօրյա փոխազդեցությունների շրջանակներում տարբեր գործընկերների հետ հաղորդակցության հնարավորության հարաբերական ապահովման համար: Սովորելու միջոցով յուրացված իմաստային աշխարհների ինքնըստինքյան լինելուց կառուցակցվում է նաև սեփական էթնիկությունը որպես յուրաքանչյուր փոխըմբռնման հնարավորություն: Եվ հենց այս մշակութային ինքնաբավության վրա է հիմնված էթնիկությունը: Այդ պատճառով էլ էթնիկ կառույցն առաջանում է առանց ազգի կառուցման համար անհրաժեշտ լրացուցիչ գաղափարախոսական սեմանտիկաների: Էթնիկ մշակույթները սահմանափակում են հաղորդակցման խնդիրները լուծելու սեփական ռազմավարություններով օժտված, տարբերակվող «իմաստային աշխարհները»: Ամենից առաջ խոսքը տարբեր «իմաստային աշխարհների» սոցիալ-մշակութային տարբամասնատման մասին է, քանի որ այսուհետ բոլորը կարող են ուղղակիորեն հաղորդակցվել միմյանց հետ: Եվ այս հանգամանքներում էթնիկ մշակույթը ծառայում է խմբի միասնությանը նաև տարածական հեռավորության վրա՝ դրանով իսկ հավակնելով էթնիկ խմբերի ինքնորոշման գործում ստանձնել տարածքի դերը, քանզի էթնիկ մշակութային հաղորդակցությունը կարող է նաև վերտարածական լինել: Ընդ որում, էթնիկ սեմանտիկական ավանդույթը պահպանվում է սեփական լեզվի միջոցով¹:

Իսկ եթե հետևենք Հորովիցին և էթնիկ կոնֆլիկտների կանխարգելման համար հրաժարվենք էթնիկ խմբերի էության վերաբերյալ պնդումներից², ապա, ինչպես գրում է Հոֆմանը, «վերջում հաճախ հրաժարվելով՝ խոստովանում ենք, որ չեն ստացվել սահմանել և բացատրել էթնիկությունն ու դրա հետ որևէ կերպ հարաբերվող այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են ժողովուրդն ու ազգը»³: Էթնիկությունը նման կերպ ժխտելիս առաջանում են նաև քաղաքական շատ բարդ հիմնախնդիրներ, այն է՝ էթնիկ քաղաքական

¹ Իհարկե, յուրաքանչյուր լեզու ինքնին բնորոշվում է էթնիկ «իմաստային աշխարհների» պատմական փոփոխելիությամբ ու խմբի պատմությունով և ունի ոչ միայն սեմանտիկական, այլ նաև սոցիալ-պատմական չափումներ: Ուստի հնարավոր է, որ միևնույն լեզուն պարունակի հակադիր սեմանտիկաներ: Այդպես, Հյուսիսային Իռլանդիայում, չնայած միասնական լեզվին, միևնույն պատմական իրադարձություններն անտագոնիստորեն են մեկնաբանվում: Այն, ինչը կոնֆլիկտի մի կողմի համար խորհրդանշում է հաղթանակ, մյուսի համար տրամադրական հիշողություն է պարտության մասին: Նման անտագոնիստական մեկնաբանությունները մշտապես վերակենդանացվում են ավանդական ծեսերի (օրինակ՝ բողոքականների շքերթների) միջոցով:

² Հմտ. **Horowitz D. L.**, *Ethnic Groups in Conflict*, University of California Press, 1985, p. 55:

³ **Hoffmann L.**, *Der Volksbegriff und seine verschiedenen Bedeutungen: Überlegungen zu einer grundlegenden Kategorie der Moderne* // **Bade K. J.** (Hg.), *Migration-Ethnizität-Konflikt: Systemfragen und Fallstudien*, Osnabrück, 1996, S. 150.

կոնֆլիկտներ: Հիմք ընդունելով մարդու ձգտումը դեպի հարաբերական անվտանգություն և կայունություն՝ ազգերը հաճախ իրենց նույնականացնում են որպես զարգացած էթնիկության նոր ձև: Եվ քանի որ տարասեռությունը միննույն ժամանակ նշանակում է նաև փոխադարձ կախվածություն և առաջ է բերում լրացուցիչ բարդություն ու վերահսկման խնդիրներ, ազգային պետությունները հակվում են դեպի մշակութային ինքնահամաստեղություն, որի պարագայում էթնիկ փոքրամասնությունները կարող են վերացվել իշխող էթնիկ խմբի կողմից: Այսպես, օրինակ, Գելները պնդում է, որ տարածքային պետությունը երկարաժամկետ կայուն է միայն մշակութային առումով համասեռ ազգ-պետության դեպքում¹: Սակայն այսօր վերջինիս ձգտումը էթնիկ համասեռության թվում է բավականին խնդրահարույց: Եթե ազգը բնորոշվում է միայն մեկ էթնիկ չափումով, եթե պաշտոնապես իրականացվում են էթնիկ փոքրամասնությունների արագացված ուժացում և նույնիսկ «էթնիկ գտումները» քաղաքականություն, ապա էթնիկ կոնֆլիկտները անխուսափելի են, քանի որ դա ուղղակիորեն հանգեցնում է դիմադրության: Ուժացման ռազմավարության միջոցով էթնիկ համասեռության հասնելու ազգային պետության քաղաքականությանը գրեթե ամենուր առկա էթնիկ փոքրամասնությունները պատասխանում են տարբեր աստիճանի ընդվզումներով: Իսկ դրանց ուժգնության դեպքում կարող է ի հայտ գալ էթնիկ քաղաքական կոնֆլիկտ: Վառ օրինակ է մեր տարածաշրջանը, որտեղ էթնիկ կոնֆլիկտն առանձնապես սուր է ու վտանգավոր:

Դեպքի ուսումնասիրություն. դարաբաղյան կոնֆլիկտ

Որպես դիսիպատիվ տեսակի հատուկ համակարգ՝ յուրաքանչյուր ազգ զգայուն է իր էթնիկ պատմության նկատմամբ, ավելի ճշգրիտ՝ այդ պատմության ընկալման հարցում, քանի որ «անցյալը կարելի է այնպես պատմել, ինչպես որ կա, ոչ թե եղել է»²: Ուստի դժվար է վիճարկել, որ էթնիկ կոնֆլիկտները մեծամասամբ զարգանում են պատմական երկար ժամանակաշրջանի ընթացքում: Էթնիկ ազգային ինքնությունը ներառում է նաև սեփական անցյալը, և պատմական չափումը շատ ուժեղ է ազդում էթնիկ քաղաքական բազմաթիվ կոնֆլիկտների ընթացքի վրա: Ահա թե ինչու Ռոպերսը նշում է. «Կոնֆլիկտի կառավարման համար պետք է հաշվի առնել նաև հոգեբանապատմական ենթահիմքը»³:

¹ St' u Gellner E., Nations and Nationalism, Ithaca, 1983, p. 55, 129:

² Wallerstein I., Das moderne Weltsystem: Die Anfänge kapitalistischer Landwirtschaft und die europäische Weltökonomie im 16. Jahrhundert, Frankfurt am Main, 1986, S. 21.

Ropers N., Ethnopolitische Konflikte und ihre Bearbeitung in der Staaten- und Gesellschaftswelt, S. 187-211 // Bade K. J. (Hg.), նշվ. աշխ., էջ 200:

Ղարաբաղյան կոնֆլիկտը նույնպես ունի իր նախապատմությունը: Հիմնախնդիրն առաջացել է, երբ ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոն 1921 թ. Ստալինի անմիջական ցուցումով որոշեց Ղարաբաղը փոխանցել Ադրբեջանին՝ պայմանով, որ Ղարաբաղի հայերին կտրամադրվի «լայն ինքնավարություն»: Դրանով Մոսկվան ձգտում էր բավարարել թուրքական պահանջները, քանի որ Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունը հավատացել էր Աթաթուրքին, որ հնարավոր է կնքել ռուս-թուրքական դաշինք Անտանտի դեմ և այսպես կոչված համաշխարհային հեղափոխությունը տարածել Արևելքում: Այդ կամայական վերաբերմունքի դեմ դարաբաղցիների բողոքները ճնշվել են բռնությամբ: Հաջորդ տասնամյակների ընթացքում ադրբեջանցի պատմաբաններն ու քաղաքական գործիչները հրաժարվում էին ճանաչել Ղարաբաղի հայության ինքնությունը: Նման մերժման պատճառները պետք է փնտրել ադրբեջանական ինքնության կայացման գործընթացում: Ինչպես նշում է Բեռլինի Հումբոլդտի համալսարանի Ադրբեջանի պատմության ամբիոնի վարիչ Աուխը, միայն XIX դարի վերջում են սկսում «կովկասյան մուսուլմանների» փոխարեն կիրառել «կովկասյան թաթարներ», այնուհետև «ադրբեջանական թուրքեր» անվանումները: Խորհրդային Միության ժամանակ ադրբեջանական ինքնության ձևավորման գործընթացը շարունակվեց: Ադրբեջանական թուրքերը դարձան թուրքախոս ադրբեջանցիներ, և այդ գործընթացը դեռևս չի ավարտվել¹:

Բայց գերմանացի մասնագետի տեսակետը ոչ մի նշանակություն չունի նրա ադրբեջանցի գործընկերների համար: Այսպես, ադրբեջանցի պատմաբան Մամեդովան փորձում է համոզել, որ մինչև XIX դարը Ղարաբաղը երբեք չի համարվել հայկական տարածք, այլ եղել է քրիստոնյա Ալբանիայի մաս, որի իրավահաջորդը իսլամական Ադրբեջանն է: Զարգացնելով աղվանական վարկածի հակազիտական փաստարկներ՝ նա, հայ և օտար հին ու միջնադարյան բազմաթիվ հեղինակների վկայություններին հակառակ, ժխտում է մինչև XIX դար հայկական մշակույթի ներկայությունը Ղարաբաղում: Եկեղեցիները, խաչքարերը և այլ մշակույթային հուշարձանները իբր թե աղվանական են եղել, ունեցել են աղվանական արձանագրություններ, սակայն 1910 թ. Հայ Առաքելական եկեղեցին պատմական բոլոր շինություններից «քերել» է աղվանական գրերը, «ոչնչացրել» աղվանական գրականության բոլոր հետքերը, որի հետևանքով «դարաբաղցիները կորցրել են իրենց աղվանական ինքնագիտակցությունը»²: Եվ այդ ամենը իբր թե պատահել է XX դարում, երբ մշակույթի նման համընդհանուր ոչնչացումն անհնար է

¹ Տե՛ս **Auch E.-M.**, Aserbaidshische Identitätssuche und Nationswerdung zum Beginn des 20. Jahrhunderts, S. 94-109 // **Halbach U. / Kappeler A.** (Hg.), Krisenherd Kaukasus, Baden-Baden, 1995, S. 109:

² Տե՛ս **Mamedova F.**, Ursachen und Folgen des Karabach-Problems. Eine historische Untersuchung, S. 110-128 // **Halbach U. / Kappeler A.** (Hg.), նշվ. աշխ.:

անգամ պատկերացնել: Հարց է առաջանում. ինչո՞ւ իրենք իրենց աղվանների ժառանգորդ համարող ազերիները, որոնք իրենց մշակութային ներկայությունը Ղարաբաղում փորձում են փաստել անհամեմատ ավելի վաղ ժամանակներից, մինչ այդ որևէ տեղ չեն արձանագրել աղվանական այդ ենթադրյալ գրությունները: Անիրագել ընթերցողի համար նախատեսված այս գերմանալեզու գրությունը լի է լուրջ հակասություններով: Մամեդովան ինքն իրեն մատնում է գրելով, որ Սաֆավիդների պետությունը (XVI-XVII դարեր) բաղկացած էր «չորս տերություններից՝ Շիրվանից, Ղարաբաղից (կամ Գյանջայից), Չաուրգադից (կամ Երևանից) և Ադրբեջանից (կամ Թավրիզից)»¹: Այստեղից բխում է, որ պատմական Ադրբեջանը գտնվում էր Հյուսիսային Իրանում (Թավրիզի նահանգ): Սակայն նա մինչև XIX դար չի ուզում Ղարաբաղում տեսնել ոչ մի հայկական մշակույթ՝ չնայած հնագույն ճարտարապետական բազմաթիվ հուշարձաններին՝ եկեղեցիներ, բերդեր, հայերին բնորոշ տապանաքարեր՝ խաչքարեր և հայատառ «ստորագրությամբ» բազմաթիվ այլ մշակութային արժեքներ: Այդ մասին են վկայում նաև պատմական գրավոր բազում աղբյուրները: Նույնիսկ ավելին. Մամեդովան գրում է, որ Հայաստանի Հանրապետությունը հիմնադրման ժամանակ չուներ ո՛չ պետական տարածք, ո՛չ էլ մայրաքաղաք, և Ադրբեջանի Հանրապետությունը 1918 թ. մայիսի 29-ին զիջել է Երևանը, որը հետագայում դարձավ մայրաքաղաք²: Նրա կարծիքով, Հայաստանի Հանրապետության գրեթե ամբողջ տարածքն ադրբեջանական էր: Մի վտանգավոր անհեթեթություն, որը վերջերս պնդել է նաև Ադրբեջանի նախագահը՝ քննադատության արժանանալով քաղաքակիրթ աշխարհում: Ադրբեջանական վերնախավի կողմից երկար տարիներ քարոզվող այս տեսակետի հետևանքով սկզբնավորվել է հայերի նկատմամբ որոշակի դիրքորոշում: Նրանք համարվում են անցանկալի եկվորներ: Սպասվում էր, որ հայերն իրենց կպահեն որպես հնագանդ եկվորներ, ինչի մերժումը միշտ հանգեցրել է Ղարաբաղի հայերի նկատմամբ խտրականության և բռնի տեղահանության փորձերի³: Ղարաբաղի հայերի դրությունը Ադրբեջանում միշտ էլ վտանգված է եղել, քանզի «փոքրամասնությունների պաշտպանության ապահովումը ենթադրում է, որ էթնիկ խմբերը մեծամասնություն կազմող խմբի կողմից պաշտոնապես ճանաչվում են փոքրամասնություն»⁴:

¹ Նույն տեղում, էջ 111:

² Նույն տեղում, էջ 123:

³ Այստեղից կարելի է բացատրել այն իրողությունը, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը 1923 թ. մինչև 1988 թ. ոչ միայն չի աճել, այլև շուրջ 26500 մարդով քչացել է, այն դեպքում երբ ադրբեջանցիների մասնաբաժինը Լեռնային Ղարաբաղում բնակչության չորս տոկոսից բարձրացել է մինչև 25 տոկոս:

⁴ Han P., նշվ. աշխ., էջ 85:

Խորհրդային բռնակալության թուլացման պայմաններում ԼՂԻՄ մարզային խորհուրդը 1988 թ. փետրվարի 20-ին ընդունել է որոշում՝ դիմել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին, Ադրբեջանի և Հայաստանի ԽՍՀ-ների խորհուրդներին ինքնավար մարզը Ադրբեջանից Հայաստանին փոխանցելու խնդրանքով: Այդ խնդրանքի մերժումը չի ընդունվել Լեռնային Ղարաբաղի կողմից, և քանի որ հիմնախնդրի լուծման հնարավորությունների բնորոշումները անհամատեղելի էին, և այդ տարբերությունը դարձել էր հետագա հաղորդակցությունների առարկա, ապա շատ արագ կոնֆլիկտը հանգել է բռնի դրսևորումների¹: Այդ ժամանակվանից բռնությունը դարձել է փոխադարձ հաղորդակցության թեմա: Կոնֆլիկտի լուծումը իրավունքի և ժողովրդավարության ոլորտից տեղափոխվել է բռնության դաշտ, ադրբեջանցիները սկսել են պատերազմ: Ադրբեջանական քաղաքական վերնախավը փորձել է էթնիկ առճակատման և զինված հակամարտության միջոցով ուժեղացնել ազգային ինքնագիտակցությունը և դրանով աջակցել նոր նավթային պետության կառուցմանը՝ այդ գործում անուղակիորեն ներգրավելով նաև այլ դերակատարներ²: Իր համար ցանկալի ազգային-պետական միավոր ձևավորելու համար նա կարիք ունի մոնոէթնիկ տարածքի և ժողովրդի այդ տարածքի հետ կապող մի պատմության: Հանուն այդ նպատակի նրանք ոչ թուրքալեզու շատ ազգային փոքրամասնությունների (քրդեր, թալիշներ, թաթեր, լեզգիներ, ուղիներ և այլ) պարտադրում են ուժացում³: Բայց քրիստոնեական հին մշակույթի կրող հայերը չէին ձուլվում ազերիներին, ուստի և Խորհրդային Ադրբեջանին բռնությամբ ներկցված հայկական տարածքներում կազմակերպեցին էթնիկ գոտիներ և բռնի տեղահանումներ: Մնում է միայն հորինել ազերիներին այդ տարածքների հետ կապող պատմություն: Եվ այդ գործում ազերի պատմաբանները չեն խորշում ոչ մի կեղծիքից, քանզի նրանց վերնախավը իրենց նավթային պետության կայացման և սեփական իշխանության ամրապնդման համար կոնֆլիկտածին կեղծ պատմության կարիք ունի: Նրանց արտաքին կոնֆլիկտ է պետք, որովհետև «սակավ են սոցիալական համակարգերի ոլորտում ընդհանրացնող և գործելու պարտավորեցնող միասնությունը ուժեղ ներքին մոտիվացմամբ այդքան

¹ «Այսպիսով, կոնֆլիկտը առկա է միայն, երբ հաղորդակցվում են սպասումներ, և հաղորդակցության չընդունումը հետ է հաղորդակցվում» (**Luhmann N.**, նշվ. աշխ., էջ 530):

² 1994 թ. սեպտեմբերի 20-ին Ադրբեջանի և միջազգային կոնսուրցիումի միջև ստորագրվել է այսպես կոչված «հարյուրամյակի» նավթային պայմանագիրը 7.5 միլիարդ ամերիկյան դոլար արժեքությամբ: Մասնակցում էին ադրբեջանական, հինգ ամերիկյան, բրիտանական, նորվեգական, սաուդյան արաբական, թուրքական և հետագայում մեկ ռուսական նավթային ընկերություն:

³ «Ինչքան երիտասարդ է նացիոնալիզմը, այնքան անհանդուրժողաբար է պահանջում իշխվող էթնիկ փոքրամասնություններից ասիմիլիացիա, ինքնաուրացում»,– գրում է Կոնրադը (մեջբերումն ըստ **Kreikemeyer A., Zagorskij A. V.**, *Rußlands Politik in bewaffneten Konflikten in der GUS: Zwischen Alleingang und kooperativem Engagement*, Baden-Baden, 1997, S. 78):

հեռու մղելու այլ հնարավորությունները»¹: Այդ պատճառով էլ ազերիների վերնախավը հայերի հետ զինված կոնֆլիկտի գործիքավորման միջոցով է փորձում իր ժողովրդի ուշադրությունը շեղել պետության լեգիտիմության հիմնահարցերից և ստեղծել իշխող կլանին հարմար ադրբեջանական ազգային ինքնություն: Ազգի համախմբվածությունը խթանելու և սեփական իշխանությունը ապահովելու համար նրան պարզապես պետք են արտաքին թշնամու կերպար, արտաքին հակամարտություն: Այդ պատճառով էլ ներկայումս ունենք «սառեցված» կոնֆլիկտ, որի դեպքում հարավկովկասյան երկու երկրների հասարակական կյանքը կարելի է ախտորոշել որպես «ո՛չ պատերազմի, ո՛չ խաղաղության հասարակություն»²:

Տեղային կոնֆլիկտների գլոբալացում. տեսական բացատրություն և առաջարկություններ

Թե ինչպես են դարաբաղյան կոնֆլիկտին նման տեղային հակամարտությունները գլոբալացվում, կարելի է բացատրել այսպես կոչված շեմային արժեքի մոդելի միջոցով: Բոլոր էթնիկ խմբերը, որոնք բնակվում են բազմազգ հասարակությունում և ճնշվում են իշխող էթնիկ խմբի կողմից, ունեն որոշակի ձգտում առ ինքնավարություն և անկախություն, որը իշխողների կողմից խիստ է պատժվում: Հետևաբար, ճնշված էթնիկ դերակատարները կարող են ընտրություն կատարել երկու գործողությունների միջև. կա՛մ նրանք հարմարվում են իրավիճակին, կա՛մ փորձում են փոխել պայմանները: Երկու դեպքում էլ պետք է հաշվի առնել յուրաքանչյուր այլընտրանքային ուղու համապատասխան օգուտներն ու վնասները: Բողոքի դեպքում օգուտը իշխանական հարաբերությունների հնարավոր փոփոխությունն է՝ սեփական ինքնավարության աստիճանի բարձրացում: Վնասները խիստ պատիժներն են, երբեմն որպես ծայրահեղ ձև՝ «էթնիկ զտումները»: Արդյո՞ք վնասների կամ օգուտների ազդեցությունը կգերակշռի գնահատման ժամանակ՝ կախված է այն հավանականություններից, որոնցով երկուսն էլ սուբյեկտիվորեն չափվում են: Եթե բողոքի միջոցով հարաբերությունների փոփոխման ակնկալվող հավանականությունը համարվում է բավականին մեծ, իսկ վնասների սուբյեկտիվ հավանականությունը գնահատվում է ցածր, էթնիկ դերակատարները կարող են ընդվզել և դիմակայել իշխող խմբին: Այդպես սկսվում է բաց կոնֆլիկտը: Բայց ոչ բոլոր դերակատարներն են միևնույն ժամանակ ընտրում «բողոք» այլընտրանքային գործողությունը, քանի որ

¹ Luhmann N., նշվ. աշխ., էջ 533:

² Տե՛ս **Mkrtichyan A.**, Human Rights as an “Attractor” of Europeanization Processes of Transcaucasian “Neither War nor Peace Societies”, p. 10-16 // A.Mihr/A.Mkrtichyan/C.Mahler/R.Toivanen (Ed.), Armenia: A Human Rights Perspective for Peace and Democracy, Universitätsverlag Potsdam, 2005:

նրանք ունեն այս հավանականության տարբեր սուբյեկտիվ ընկալումներ: Այս բացատրական մոդելը ենթադրում է, որ դերակատարները միայն այն դեպքում են դիմում գործողության, երբ այլոց որոշակի քանակ արդեն արել է դա: Դիտարկելի է, որ շատ դերակատարներ իրենց որոշումը պայմանավորում են այն հանգամանքով, թե մինչև այդ նման իրավիճակում սեփական ինքնավարության հիմնախնդիրները լուծող ինչքան այլ էթնիկ դերակատարներ են նախընտրել կոնֆլիկտը և այդ ճանապարհին կարողացել են հասնել որոշակի հաջողության:

ԽՍՀՄ-ում կոնֆլիկտների առաջին դրսևորումներից հետո սկզբից հաղթահարվել են ցածր շեմեր: Կոնֆլիկտները ուժեղացրել են միմյանց, և Խորհրդային Միությունում ծավալվել է կոնֆլիկտների շղթայական ռեակցիա: Աստիճանաբար ավելի ու ավելի բարձր շեմեր են հաղթահարվել: Այս կուտակային գործընթացը նույնպես նպաստեց Խորհրդային Միության փլուզմանը, որն անմիջական ազդեցություն ունեցավ համաշխարհային ամբողջ համակարգի վրա: Էթնիկ կոնֆլիկտները տարածվեցին նաև հետսոցիալիստական բազմազգ և ամբողջատիրական պետություններում, հատկապես Հարավսլավիայում: Խորհրդային նախկին հանրապետությունների օրինակով հարավսլավական հանրապետությունները նույնպես հռչակեցին անկախություն: Դրանով սկսվեց Բալկանյան պատերազմը: Այս դեպքում ևս տեղային կոնֆլիկտը գլոբալացվեց և ենթարկվեց համաշխարհային ուժերի ազդեցությանը:

Համաշխարհային հասարակության մեջ տեղի ունեցող ամեն ինչ նշանակություն ունի տեղային և գլոբալ դերակատարների համար, որոնք իրենց գործողություններում միշտ կողմնորոշվում են դեպի համաշխարհային հորիզոն: Այդ պատճառով ցանկացած տեղական անկայունություն կարող է գլոբալացվել: Այս պարագայում համաշխարհային հասարակությունը դառնում է *ռիսկի հասարակություն*, քանի որ պոտենցիալ անկայունությունը կարող է անընդհատ առաջացնել նոր ռիսկեր: Այս շրջանից դուրս գալու միակ ճանապարհը սեփական ինքնիշխան պետության ստեղծումն է որոշակի տարածքում, ինչը, սակայն, անմիջապես հանգեցնում է անջատողական կոնֆլիկտների: Հակամարտության և իշխանության վերաբաշխման համար, որոնք տեղի են ունենում որոշակի բաժանարար գծերի (էթնիկ, սոցիալական, կրոնական և այլն) երկայնքով, միշտ էլ կա շարժառիթ¹: Ուստի ներկայիս համաշխարհային հասարակությունում էթնիկ քաղաքական կոնֆլիկտները գրեթե անխուսափելի են: Միայն համաշխարհային հասարակության նոր, բոլորի կողմից ընդունելի մակրոկարգի ստեղծումը թույլ կտա խուսափել այդպիսի կոնֆլիկտներից: Ինչպես Կրայկեմեյերն է արձանագրել,

¹ Հմմտ. Esser H., 1996: Die Mobilisierung ethnischer Konflikte // Bade K. J. (Hg.), նշվ. աշխ., էջ 74:

Բուլղարիայից Ա. Չոպանյանին ուղղված 1923 թ. հունվարի 18 թվակիր նամակում Թեքեյանը գրում է. *«Լօզանը կ'երեւի թէ բոլորովին թաղեց մեր խնդիրը, եթէ նոյն իսկ պզտիկ ճեղք մը բաց թողուած է... պէտք չէ, որ ատով ինքզինքնիս խաբենք...»*¹: Թեքեյանը այնուհետև գրում է, որ պէտք է լրջորեն մտածել մեր անելիքների մասին, *«որ ամէն պարագայի մէջ չի կրնար մինչեւ հիմա մեր ըրածին նմանը ըլլալ»*, որը նշանակում էր ծավալել գործունեություն՝ բոլորովին նոր մոտեցումներով, և նոր վերաբերմունք դրսևորել թե՛ ազգային և թե՛ կուսակցական ասպարեզներում*։ Թեքեյանը 1923 թ. մարտին անցնում է Հունաստան (Աթենք, ապա՝ Գորֆու) հայ որբերի վիճակով զբաղվելու համար, համագործակցում որբանոցում որպէս ուսուցիչներ աշխատող Թեոդիկի, Չիֆթե-Սարաֆի, Արշ. Ալպոյաճյանի և այլոց հետ: Փարիզի ազգային պատվիրակության նորընտիր նախագահ Գաբրիել Նորատունկյանի հանձնարարությամբ մասնակցում է «Հայ որբերի պաշտպանության ընկերության» հիմնմանը, փորձում դպրոց բացել, մի քանի հայ որբերի ուղարկում է Եվրոպա՝ ուսանելու, նրա ջանքերով հայ ընտանիքները սկսում են

¹ Թեքեյան Վ., Նամականի, Լոս Անջելոս, 1983, էջ 220: (Այս գրքից հետագա հղումները այսուհետև կտրվեն շարադրանքում՝ նշելով միայն էջերը):

* Երկարատև բանակցություններից հետո՝ 1923 թ. հուլիսի 24-ին է ստորագրվել Լոզանի կոնֆերանսի դաշնագիրը, որը ի չիք դարձրեց Սևրի հայանպաստ որոշումները:

ապաստան տալ տասնյակ գաղթականների ու որբերի, ստեղծում է օգնության դրամագլուխ:

Թեքեյանը այստեղ վերջնականապես համոզվում է, որ ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական որբանպաստ կազմակերպությունները անում են ամեն ինչ հայ մանուկներին ձուլման ենթարկելու համար: Աթենքից Ա. Չոպանյանին հասցեագրված մի նամակում Թեքեյանը գրում է՝ «... *պիտի փճանան* (որբերը – Ա. Ա.) *ամերիկացուց ձեռքը*», հայտնում այն միտքը, որ եթե ազգը «...*այսօր իր որբերը իբրև հայ չհոգայ եւ չկրթէ, ազգը վաղը ինքը որբ պիտի մնայ...*» (էջ 224-225): Ամռանը (հուլիսին) Թեքեյանը մեկնում է Եգիպտոս, կուսակցական հարցերով այցելում Լիբանան, Սիրիա, ապա անցնում Ֆրանսիա (Մարսել, Փարիզ):

Փարիզում թեև Թեքեյանը շարունակում է ստեղծագործել ու զբաղվել կուսակցական-հասարակական գործերով և գաղթականների հարցերով, սակայն ամուրի ու միայնակ մարդու նրա ապրած 45 տարիները, սփյուռքահայ կյանքի օրավար ավելացող փլուզումները արդեն իրենց զգալ էին տալիս ու նրան մղում հուսահատության գիրկը, որի գեղարվեստական արտահայտություններից մեկը եղավ նրա «Մութ ժամեր» բանաստեղծությունների շարքը: Ինչպես ինքն է վկայում, ամեն բանից իր մեջ «*տխրութիւն միայն դիզւեր էր*»: 1923 թ. դեկտեմբերին Ջ. Սյուրմեյանին ուղղված նամակում նա գրում է. «... *գիտեմ թէ ինչ բան զիս կրնար փրկել եւ գիտեմ նաեւ, թէ այդ բանը պիտի չունենամ երբեք*» (էջ 252): Շարունակելով խոսել իր հոգեկան ծանր կացության մասին՝ նույն նամակում գրում է. «*Տարօրինակ բան. միտքս միշտ հստակ է ու առույգ՝ երբ սիրտս կը մոռնամ, բայց սիրտս հետզհետեւ աւելի քիչ կրնամ մոռնալ եւ ընկճումի ամբողջ օրեր ունիմ...*» (էջ 253):

Թեքեյան-Սյուրմեյան հոգևոր հարազատության դրսևորումներից մեկը դառնում է Թեքեյանի հովանավորությամբ, խմբագրությամբ ու առաջաբանով 1924 թ. Փարիզում լույս տեսած՝ Ջ. Սյուրմեյանի «Լոյս Ջուարթ» բանաստեղծությունների գրքույկը:

1924 թ. դեկտեմբերին Թեքեյանը նորից է մեկնում Եգիպտոս (Կահիրե), ծանոթ շրջանակներից հրավեր ստանում տեղափոխվել Հայաստան (նույնանաման հրավեր նա ստանալու էր նաև 30-ական թվականների կեսերին Ջապել Եսայանից), անգամ պատրաստվում է մեկնել, սակայն «Արեւի» խմբագրապետության հրավիրվելու և այլ պատճառներով հրաժարվում է այդ մտադրությունից:

Կահիրեում գործող Ազգային քաղաքական ժողովի ատենապետի պաշտոնում երկու տարի (1924-1926 թթ.) աշխատելուց հետո Թեքեյանը ութ տարվա ընդմիջումից հետո նորից է ստանձնում «Արեւի» խմբագրապետությունը, զբաղվում «Կարապետ Մելքոնյան» հիմնադրամի նվիրատվությունը Կ. Պոլսի պատրիարքարանից Հայ բարեգործական ընկերությանը փոխանցելու և նույն միությանը անցած գործատունը վաճառելու գործերով, զուգահեռ ստեղծագործում, «Հայաստանի կոչնակ» թերթի խմբագիր Հովհ. Ավագ-

յանին պատրաստակամություն հայտնում թերթին ուղարկել արձակ գրություններ, քրոնիկներ ու գրականությանը վերաբերող այլ նյութեր: Թեքեյանի համար կյանքի գերագույն առաջադրանք են դառնում սփյուռքահայ զանգվածների ազգային, հոգևոր ու գրական կյանքի կազմակերպումն ու առաջնորդումը:

1924 թ. աշնանը Թեքեյանը մեկնում է Ժնև, մասնակցում Հայասերների միջազգային լիգայի և Հայոց խորհրդակցական համաժողովի աշխատանքներին, ուր նաև քննարկվում են 50 հազար գաղթականների Հայաստան փոխադրելու, հայերի նկատմամբ աշխարհում նպաստավոր կարծիք ստեղծելու, հայոց դեմ վերջին տարիներին կատարված ողբերգական դեպքերը վեր հանելու և գաղթահայության ձուլման դեմն առնելու հարցերը: 1925 թ. Կ. Պոլսում 86 տարեկանում մահանում է Թեքեյանի մայրը՝ Եղիսաբեթը, որը նշանակում էր՝ տարագիր բանաստեղծը որքանում էր արդեն վերջնականապես (նրա ընտանիքի բոլոր անդամները՝ եղբայրները, քույրը, արդեն մահացել էին):

Թեքեյանն իր ամբողջ կյանքի ընթացքում երազել է ժամանակ ունենալ *«բանաստեղծություն, ուսումնասիրություն և վեպ գրելու»*, բայց, այդուհանդերձ, հնարավորություններ կյանքը միշտ չէ, որ տվեց: Ջ. Սյուրմեյանին գրած 1925 թ. սեպտեմբերյան նամակում նա գանգատվում է իր այդ ծանր կյանքից ու մանավանդ կատարած աշխատանքներից. *«... ապուշ կեսնք մը կապրիմ. աշխատությունը գոր կը կատարեմ՝ չեմ սիրեր... տարիները կանցնին... այլևս երկար ապագայ մը չունիմ դիմացս... հիմա է ճշդիւ, որ պիտի կրնայի բան մը տալ, թողուլ ինձմէ...»* (էջ 297-298): 1926 թ. Թեքեյանը *«խոշոր հատոր մը կազմելու չափ»* հավաքած նյութեր ուներ, որոնք, սակայն, ընթերցողին ներկայացնելու հնարավորություն չունեցավ: Ու չնայած իր այդ վիճակին՝ Թեքեյանը ուշադիր էր իր շրջապատի մարդկանց նկատմամբ, հոգատար մանավանդ գրչեղբայրների հարցերում: Մ. Կյուրճյանին գրած մի նամակ ցույց է տալիս, թե ինչ սրտի ցավով է նա տարել Եր. Օտյանի առողջության վատթարացումը, և թե ինչպես նա քանիցս այցելել է Կահիրեի իտալական հիվանդանոց, ուր պառկած էր մեծ երգիծաբանը, բժիշկներին հանդիմանել պակաս ուշադրության համար*: Այս ընթացքում Թեքեյանն իր աջակցությունն է նաև ցուցաբերում 1926 թ. Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժից տուժածներին:

Այս ամենով հանդերձ՝ Թեքեյանը ստեղծագործական առումով ևս աշխատում է իր ուժերի ամբողջ լարումով, որի մասին նա վկայում է 1927 թ. գրած իր նամակներից մեկում. *«... առտուրնէ մինչև իրիկուն գրիչը ձեռքս եւ քրտինքը կռնակս է»*: Անասելի հուսահատության և տնտեսական ծանր

* Եր. Օտյանը մահացել է 1926 թ. հոկտեմբերի 3-ին: Գրողի թելադրությամբ Թեքեյանն է գրառել նրա կտակը:

պայմաններում նա շարունակում է գրել ոչ միայն բանաստեղծություններ, այլև հոդվածներ, նամակներ, արձակ գործեր, զանազան գրություններ, քանի որ չգրել չէր կարող և դրանով դիմակայում էր իր տառապանքներին. *«Չարմանալի է միայն, որ բնութեամբ կամ սովորութեամբ, գրելու պահուս կը հակազդեն այդ զգացումներուն եւ լրջօրեն, հավատքով կը գրեն»* (էջ 303):

1927 թ. Թեքեյանը ստանում է բարերար Պողոս Գեորգյանի առաջարկը իր նոր գրքի տպագրությանը օգնելու վերաբերյալ: Բայց քանի որ, Թեքեյանի խոսքերով ասած, *«Եգիպտոսը տարօրինակ երկիր մըն է, մարդ ուզածը չէ, որ կ'ընէ՝ այլ միշտ չուզածը»*, ինչպես այս, այնպես էլ շատ այլ ծրագրեր չեն իրականանում: Իր ծանր կացության մասին Թեքեյանը շատ ավելի դառնացած է գրում Կ. Չարյանին ուղղված 1929 թ. հունվարի 9-ի թվակիր նամակում. *«Ի՞նչ գրեմ, ինչպե՞ս գրեմ «կյանուած եմ» այն հրեշն, որ հայ եւ եգիպտահայ journalisme-ն է: Ո՛չ ժամանակ, ո՛չ ախորժակ կը մնայ ուրիշ բան ընելու, ուրիշ բանի վրայ մտածելու անգամ: ...այնքան փճացած տրամադրութեամբ գրիչը ձեռք կ'առնեն կէսօրէ վերջերը եւ, ամէն մեղքիս վրայ, գոնէ հանգիստ եւ առանձին ալ չեմ մնար գրածս միջոցին: Աշխատանքս («Արեւ»-ում – Ա. Ա.) եւ կեանքս միասին ereintement (հատնում) է եւ ուրիշ ոչինչ: Միջավայր չկայ, մարդ չկայ, եւ ի փոխարէն փիս կոփի եւ ապուշ յոգնութիւն կայ միայն»* (էջ 544-545):

Եվ իրոք, դատարկվում ու դատարկվելու էր այդ միջավայր կոչվածը, որ սփյուռքն էր ու սփյուռքահային վիճակված կյանքի ընթացքը, և որը նրան անդուլ տանում էր *«Չորնալ ուրիշ տեղ...»*.

*Ահա մասեր մի առ մի
Անւերջօրեն կը բաժնւին, կը մէկնին...
Եւ ան տակաւ կը պակսի...:
(«Մփիւոք»)*

Թեքեյանի կյանքում ոչինչ չի փոխվում նաև հաջորդ տարի: Շրջապատի անտարբերությունը շարունակվում է նրա նկատմամբ, նրան դառնություններ պատճառում, հարձակումներ է գործում մանավանդ «Պայքար» թերթը: Գրողը մի կարճ ժամանակով այցելում է Փարիզ և վերադառնում: Մեկ տարի հետո նորից է մեկնում Փարիզ՝ հույս ունենալով ձերբագատվել լարված մթնոլորտից և շատ թե քիչ հարմար աշխատանք գտնել: Գրեթե դադարում է ստեղծագործելուց, ունենում է անկման օրեր, հիասթափությունը շարունակվում է: Վատանում է նաև առողջությունը: Ոչինչ չանելու ցանկությունը տիրապետող է դառնում: *«... Հիւանդութեանս ծանրութիւնը ասոկէ կը հասկնամ: ... ես ինքզինքէս զգուած եմ...»*,– գրել է նա 1930 թ. Ա. Տատրյանին ուղղված իր նամակում (էջ 315):

Անբաժան զրկանքները նրա մեջ ծնում են անսովոր զգացողություններ. *«... զգացութիւնը ունիմ ծովուն մէջտեղ ժայռի մը վրայ ելած նաւաբեկեալի*

մը, որ ծովը նետուելով խեղդուելու կամ իր ժայռին վրա սովամահ ըլլալու անխուսափելի հարկադրանքին կը խորհի...» (էջ 317):

Գրողի հուսահատական և անկումային տրամադրությունները լավ է բնորոշվում այս շրջանում Թեքեյանի գրած «սակալաթիվ բանաստեղծութիւններից» մեկի առիթով Ա. Տատրյանի՝ Թեքեյանի բանաստեղծության մեջ օգտագործված «փափուկ» բառի փոխարեն «ծիծղուն»-ը օգտագործելու առաջարկին Թեքեյանի տված պատասխանով: «Լաւ է,- գրել է Թեքեյանը,- բայց «ծիծղունը» իմ զգացումիս մէջ չէ» (էջ 320): Այս ընթացքում հանդիպումներ է ունենում Փարիզում գտնվող Ավ. Իսահակյանի հետ, անգամ հղանում են գրական ընկերություն հիմնել:

1930 թ. Թեքեյանի ապրած մի քանի երջանիկ օրերը կապված են մանավանդ Շ. Շահնուրի ընկերակցությամբ անցկացրած փարիզյան շրջանի հետ, որի մասին վերջինս իր 1931 թ. օգոստոսի 19-ի նամակում ևս վկայում է՝ «... անցեալ ամառուան պէս կրկին լաւ օրեր» անցկացնելու բաղձանք հայտնելով¹:

Ոչ մի կերպ չուծելով իր առջև ծագած խնդիրները՝ 1931 թ. հունվարին Թեքեյանն արդեն որերորդ անգամ ստիպված է լինում վերադառնալ Կահիրե և նորից ստանձնել «Արեւի» խմբագրապետությունը: Թերթը հրատարակվում է մեծ դժվարություններով՝ «... գրաշար, խմբագիր եւս կանոնաւորաբար չեն վճարուիր. ես՝ ամէնէն քիչ» (էջ 324):

Որպէս ՌԱԿ-ից ընտրված պատգամավոր օգոստոսին նորից Փարիզ է մեկնում և մասնակցում այդ կուսակցության 5-րդ համաժողովին: Այստեղ մնում է երեք տարի և որպէս կենվոր բնակվում նախկին պոլսեցի Նշան Զոհրապյանի բնակարանում:

Թեքեյանը այն խոր համոզումն ուներ, որ սփյուռքահայությանը հայ պահելու միակ միջոցը գրականությունն է: 1931 թ. հուլիսին Շ. Շահնուրին գրած նամակում նա նշում է. «Եկուր տես, որ մեր մեծերը հայ նպարավաճառութիւնը ազգապահպանման աւելի նպաստաւոր կը համարեն՝ քան հայ գրականութիւնը, որուն համար կը խորհին արդէն, թէ պէտքին չափ կայ...» (ընդգծումը մերն է – Ա. Ա.) (էջ 328): Փարիզյան գրական կյանքը նույնպիսի դժգոհանք է առաջացնում Թեքեյանի մեջ, ինչպէս կահիրյանը, որը նա բնորոշում է «ինքզինքէն վազ անցած պառաւ մը», անդարմանելիորեն «չոր ու փոս»: Նույնպիսի «չոր ու փոս» էր նաև Թեքեյանի թոքերում: Հազը սաստիկ էր դարձել ու ամենօրյա, վիրավոր աչքը նույնպէս մեծ անհանգստություններ էր պատճառում, այտուցված ձեռքերը գրելու դժվարություններ էին հարուցում: Թեքեյանին առաջարկվում է Հելիոպոլիսի (Եգիպտոս) Պերպերյան վարժարանի տեսուչի պաշտոնը, որը, սակայն, չի իրականացվում: 1932 թ. այն աստիճան է վատանում նրա աչքի վիճակը, որ ամռանը ստիպված է

¹ Տե՛ս Շահնուր Շ., Նամականի, հ. 3, Վոթերթաուն, 2006, էջ 102:

լինում պառկել հիվանդանոցում: Այս ընթացքում Թեքեյանի «մէկ քանի» բանաստեղծություններ հունարեն թարգմանությամբ լույս են տեսնում Գուլիս Ալեքիսի կազմած «Հայկական մուսա» գրքում:

1933 թ. գարնանը Փարիզում, նախորդ գրքից 14 տարի անց, տպագրվում է Թեքեյանի «Մեր» ժողովածուն: Գրքի առաջին գրախոսողներից մեկը Վահե Վահյանն էր¹: Թեև Թեքեյանը այն միտքն է հայտնել, որ գրախոսը «մինչև յատակը իջած չէ», այնուամենայնիվ գոհ է մնացել հոդվածից և նրա հեղինակին ուղղված նամակում գրել՝ «ո՛րչափ բան խտացուցեր, ըսեր եւ լա՛ւ ըսեր էք...» (էջ 357): Գրքի լույսընծայումը որոշ ոգևորություն է հաղորդում բանաստեղծին, մղում անգամ կատակելու. «միտքս դրած եմ մինչև ամառ անպատճառ հարստանալ»: Բայց Փարիզի միակ հայկական գրախանութը երկու շաբաթվա ընթացքում վաճառել էր գրքի... ընդամենը երկու օրինակ: Մինչդեռ հեղինակը այն տպագրել էր Բուզանդ Թոփայանի տպարանում՝ պարտք մնալով նրան: Ակնկալվելիք գումարը այդպես էլ չի հավաքվում, որով Թեքեյանը մտադիր էր անտիպ բանաստեղծությունների մեկհատորյակ և արձակ գործերի մեկ ժողովածու հրատարակել:

Հեղինակի՝ թվով այս չորրորդ գիրքը ընդգրկում էր կյանքի ու մահվան, հավիտենականի ու անցողիկի, ապրելու ու երազանքի, մարդկային ներաշխարհի ու զգայնությունների դժվարալույծ բազում ոլորտներ, միննույն ժամանակ արտահայտում հեղինակի այն տվայտանքներն ու ապրումները, որոնք նա ունեցել էր հատկապես վերջին մի քանի տարիներին: Անչափ տարողունակ էր գրքին տրված վերնագիրը՝ «Մեր»: Մեր առ մարդը, կյանքը, կինը ու մանավանդ՝ ազգը:

1933 թ. Նյու Յորքի Ս. Խաչ եկեղեցում նենգորեն սպանվում է Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանը: Թեքեյանը շատ ծանր է տանում այդ մահը, մանավանդ՝ ազգային պառակտման հողի վրա: Գրողը նորից է ներքաշվում (հատկապես Շ. Նարդունու կողմից) միջուսակցական պայքարների մեջ, գրում մի շարք սուր հոդվածներ ու խմբագրականներ:

1933 թ. հունիսին Փարիզում ստեղծվում է հոբեյանական հանձնաժողով՝ նշելու Թեքեյանի գրական գործունեության 40-ամյակը, ինչպես և մեծարելու «հանրային գործչին»: Տպագրվում է գրքույկ՝ «Յոբելեան Վահան Թեքեանի քառասնամեայ գրական գործունեութեան» վերնագրով: Թեքեյանը դժկամությամբ է ընդունում այդ նախաձեռնությունները: Պատճառը ոչ միայն այն իրողությունն էր, որ մի կողմից «վարձքը անյայտ, բեռը յայտնի ու ծանր» էր, մյուս կողմից էլ մտավախությունը, որ «ոմանք բանաստեղծը տօնելու արարքին մէջ» դնելու էին «հանրային գործիչը պարսաւելու դիտաւորութիւնը», այլև գրողի էության ծայրագույն անհավակնոտությունը, որի հետևանքով

¹ Տե՛ս «Միոն», Երուսաղեմ, 1933, սեպտեմբեր:

«իրեն տրուած պատիւէն ու փայփայանքէն» նա միշտ «նեղուել» է: 1934 թ. փետրվարի 10-ին Փարիզում, այնուամենայնիվ, հանդիսությունը տեղի է ունենում: Բանախոսությամբ հանդես են գալիս Ա. Չոպանյանը, Լ. Բաշայանը, Գ. Ֆեներճյանը, օրեր անց Թեքեյանին նվիրված միջոցառում է կայանում նաև Մարսելում: Հ. Օշականին ուղղված մի նամակում Թեքեյանն իր հոբելյանի առիթով գրում է, որ ինքն այլևս որևէ բանից հաճույք չի զգում, որի պատճառներից մեկն էլ «գրած լեզուիս շուտով կորսուելուն, պատմութեան անցնելուն համոզումը՝ որ մոխիրի համ կը դնէ ամենաքաղցր վայելքին մեջ անգամ» (էջ 373): Թեքեյանից անբաժան այդ զգացողությունն ըստ ամենայնի նրան 1942 թ. մղել է գրելու «Լեզուն որով գրեցի» սոնետը.

*Լեզուն որով գրեցի՝ երկրի երեսը քիչեր
Կը կարդային զայն արդէն ու պակսեցա՛ն անոնք ալ...*

Թեքեյանը իր շատ բանաստեղծություններ գրել է «ոտքի վրա» ճաշելու պէս: Գրելու համար չունենալով տարրական պայմաններ՝ ապրելու հոգսը նրան շատ հաճախ է այլ աշխատանքների տարել, որոնք ոչ միայն քայքայել են նրա առողջությունը, այլև խեղել հոգեկան աշխարհը, խոչընդոտել ստեղծագործական թռիչքները: Եվ պատահական չէ, որ տևական պայքարների, գրկանքների ու միայնության մեջ ապրող բանաստեղծը, խտացնելով իր ու իր նմանների այդ դառը վիճակը, «Տարակույս» բանաստեղծության մեջ գրել է.

*Դժոխք մեր կյանքը ըրինք՝ որ դուն դրախտ մը ըլլաս,
Ով Հայրենիք, անդունդին և երկնքին մեջ առկախ:*

Հոգնած ու հիասթափված լրագրության ապերախտ ասպարեզից՝ Թեքեյանը ստիպված էր մտնել մի ավելի հյուծիչ ոլորտ, որպիսին ուսուցչությունն էր: Որպես տեսուչ և լեզվի ու գրականության ուսուցիչ՝ 1934-1935 ուսումնական տարում Թեքեյանն աշխատում է Կիպրոսի (Նիկոզիա) Մելքոնյան վարժարանում: Ո՛չ հոգեկան և ո՛չ էլ մասնագիտական առումով այն գոհացում չի տալիս, մանավանդ որ նա իրեն համարում էր «պատահական դպրոցավար մը»: Թեքեյանը դժգոհ էր ուսման նկատմամբ աշակերտության ցուցաբերած անտարբերությունից, իր վիճակից, որ ստիպված էր «գրականութիւն սորվեցնել տոմարակալութիւն սորվեցնելու պէս», մանավանդ որ Թեքեյանի շնչուղիները ավելի ու ավելի էին տկարացել և անհնարին դարձրել ամեն օր մի քանի ժամ դասախոսելը: Ուշագրավ է, որ վարժարանի սաների անտարբերության պատճառներից մեկն էլ Թեքեյանը համարում է իրենից առաջ Հ. Օշականի դասատվությունը, ով հայ գրականության նկատմամբ ցուցաբերել էր քննադատական ծայրագույն դիրքորոշում ու հիասթափեցրել իր ունկնդիրներին:

1934 թ. դեկտեմբերին Թեքեյանը ծանր հիվանդանում է: Նա դադարեցնում է դասատվությունը: Տարին ամուլ է եղել նաև ստեղծագործական

առումով: Գրելու բոլոր մղումները մնում են որպես ցանկություն: Այդ օրերի մասին նա գրում է. «... *ակոսներս սեղմելով զբաղած եմ ընդդեմ տեղին, գործին եւ օղին...*»: Եվ սա այն տարիքում, երբ Թեքեյանի խոսքերով ասած՝ *«մարդ պետք է կամ էական բաներ ընէ միայն, կամ ոչինչ չընէ»*:

1935 թ. աշնանը Թեքեյանը Կիպրոսից մեկնում է և վերջնականապես հաստատվում Եգիպտոսում: Նորից է ստանձնում «Արեւի» խմբագրապետությունը, որը Շ. Շահնուրին գրած նամակում ձևակերպում է այսպես. *«Գահիրէ եւ, նորէն «Արեւ»-ին տակ, մէջը եւ վրան»* (էջ 394):

Ծրագրում է ամռանն այցելել Հայաստան, անգամ այն միտքն է հայտնում, որ կարող է *«դառնամ կամ չդառնամ»*: Թեքեյանի մեջ առաջացել էր մեծ մի վստահություն, որ Հայաստանը ոգևորելու, ուժ ու կորով է հաղորդելու, իր խոսքով ասած՝ *«լեցնելու»* է սփյուռքահայությանը, որի վերաբերյալ նա արդեն արտահայտվել էր 1925 թ. գրված «Հոն հեռուն, ահա» բանաստեղծության մեջ.

*Մենք քու գավակներդ,
Մրտով սիրակեզ
Ահա կուզանք քեզ...*

Այդ Հայաստանում կային մարդիկ (և նրանց թիվը գնալով մեծանում էր), որ սիրում ու գնահատում էին Թեքեյանին: Բնական է, որ Վահրամ Ալազանին գրած նամակում Թեքեյանը բաղձանք էր հայտնում՝ իր կյանքի վերջին տարիները ապրել *«Հայրենիքին մէջ, մեռնիլ ու թաղուիլ անոր հողին տակ»*, բայց և գիտակցում, որ այնտեղ հարկ էր ծառայել նաև իշխանություններին, մի բան, որը Թեքեյանը երբեք չէր համաձայնի, այն իշխանություններին, որոնք իրենց մամուլում նրան *«քուրժուա մտավորական»* էին համարում: Կապված շնչառության հետ՝ նորից է սրվում նրա առողջական վիճակը: 1935 թ. Հայաստան այցելած Անդրանիկ Անդրեասյանը Թեքեյանին ուղարկած իր նամակի մեջ դրել էր Հայաստանում հավաքած ծաղիկներ, որի վերաբերյալ հուսալիք Թեքեյանը գրում է. «... *դագաղիս վրայ դրուածի պէս կը տեսնեմ զանոնք»* (էջ 400):

1936 թ. Թեքեյանի մեջ կրկին ցանկություն է ծնվում *«երթալու Հայաստան, էթէ ներէն նիւթական, առողջական ու հոգեկան պայմանները»*: Թեքեյանը կուսակցական գործերով կարճ ժամանակով այցելում է Բեյրութ: Իր կուսակից ու մտերիմ Միհրան Տամատյանի հորդորով Բեյրութում հիմնում և խմբագրում է «Զարթօնք» թերթը՝ չունենալով ո՛չ սրբագրիչ, ո՛չ գրաշար, ո՛չ թարգմանիչ և ո՛չ որևէ այլ աշխատակից: Մեկ ամիս խմբագրելուց հետո առողջության վատթարացման պատճառով Թեքեյանը մեկնում է Կահիրե, նախաձեռնում Ալեքսանդրիայում լույս ընծայել «Նօր հանդէս» գրական ամսագիրը, սակայն արտոնություն չի ստանում: Նորից է «Արեւի» *«լուծը դնում իր վզին»*, որին ավելանում են *«կուսակցական փորձանքները»*՝ չստանալով հանդերձ իրեն հատկացված *«սովի թոշակը»*, բայց պարտավորություն ունե-

նալով աշխատել «*օրական 9-էն 12 ժամ*» (թերթի մյուս երկու աշխատակիցները Միք. Կյուրճյանն ու Մաննիկ Պերպերյանն էին):

Միք. Կյուրճյանին ուղղված 1937 թվակիր նամակներից մեկում Թեքեյանը վկայում է, որ հազը անդադար ցնցում է կուրծքը, և ինքը չունի անգամ հասարակ «*ջերմոց մը*», որ կարդալիս կամ գրելիս տաքանա: «Արեւի» համարներից մեկում տպագրում է «Խորհրդային Հայաստանի գրականության մեծ վիշտը» հոդվածը, որտեղ վրդովմունք է հայտնում Ե. Չարենցի, Ավ. Իսահակյանի, Ա. Բակունցի, Գ. Մահարու, Վ. Թոթովենցի, Ս. Արմենի և այլ գրողների նկատմամբ խորհրդային իշխանությունների կողմից հալածանքների ու արգելքների վերաբերյալ, ցավ հայտնում, որ երկրում վիճակն այնպիսին է, որ «... *կարելի չէ իշխանությանց սխալը իրենց երեսին տալ. պէտք է, աւաղ, միշտ ներում խնդրել եւ ոչ թէ արդարութիւն պահանջել*»¹:

Կարճ ընհատումից հետո՝ սկսած 1938 թ. հունիսից մինչև իր կյանքի վերջը, Թեքեյանը, տանելով հանդերձ գրկանքի բոլոր տանելի և անտանելի տեսակները (օրվա հացի խնդիր, խմբագրատան նկուղային հարկ, խառը ձեռագրերի ընթերցում և այլն), վարում է «Արեւի» խմբագրությունը՝ «*օրը օրին*» գրելով թերթի խմբագրականները, զուգահեռ խմբագրելով նաև «Արուեստ» թերթը: Ծրագրվող «պօտլեռեան» և այլ հեղինակներից կատարվող թարգմանությունների ժողովածուի լույսընծայումը չի հաջողվում: Բնական էր, որ վաթսունին հասած բանաստեղծը հարց պիտի տար ինքն իրեն՝ արժի՞ շարունակել ապրել.

Պիտի ապրի՞մ ես վաթսունէն աւելի.

Պէտք կա՞յ, պէտք կա՞յ ապրելու...

Երբ որ փափաքն հոգիին մէջ կը հատնի՝

Ինչո՞ւ երթալ դեռ հեռու...

(«Պիտի ապրի՞մ»)

1939 թ. սկսված եվրոպական պատերազմը և դրա հետևանքով գրաքննադատության խստացումը, դրսից եկող թղթակցությունների սակավությունը ավելի են բարդացնում «Արեւի» հրատարակումը, որի վերաբերյալ Թեքեյանը գրում է. «... *ամէն առտու պարապի մը առջեւ եմ՝ գոր պէտք է լեցնել*»՝ թերթին հայեցի դեմք, գրական երանգ հաղորդելու և հետաքրքիր դարձնելու համար:

Միք. Կյուրճյանին 1940 թ. ապրիլին գրած նամակում Թեքեյանը ցավով նշում է. «... *ուժս պակասած է, բայց խմբագրատուն կու գամ կոր՝ որովհետեւ պէտք է գալ եւ պէ՛տք է սատկիմ այս գէշ օդին, գէշ օգնականներուն եւ գէշ գործին մէջ...*» (էջ 446): Իսկ հաջորդ տարվա դեկտեմբերին գրած նամակում խոսելով իր «*գէշէն գէշ*» վիճակի մասին՝ վկայում է. «*Երեկ իրիկուն երբ*

¹ Տե՛ս «Արեւ», Գահիրե, 1937, մայիս 29, 31:

խմբագրատունեն ելայ՝ հինգ վայրկեան մայթին եզերքը, մութին մէջ կեցած մնացի՝ երթալիք տեղս չգիտնալով, որքա՛ն մութ էին մտածումներս» (էջ 452): Մտածումները, իհարկէ, շատ մութ էին, բայց «անժպիտ» Թեքեյանը շարունակում էր աշխատել ու ստեղծագործել և երբեմն անգամ դիմում երգիծանքի՝ իրեն ծանոթ կանանցից մեկին գրելով. «Հագս բնաւ աղէկ չէ... Կը վախնամ կոր, որ սիրտս կանգ պիտի առնէ... ոչ թէ մեկու մը, այլ ինքն իր վրայ...» (էջ 458): Իր այդ ծանր վիճակով հանդերձ՝ Թեքեյանը այս շրջանում ձեռնարկում է հիվանդանոցում գտնվող Շ. Շահնուրին օգնության հանգանակություն կազմակերպելը, ազգային ու կուսակցական ոլորտներում շարունակում ծավալել իր պայքարները: Նրա տրամադրությունը շատ թե քիչ բարձրացնող դրսևորումներից մեկը եղավ 1941 թ. «Արեւի» համարներում «Ամենօրեայ» վերնագրով պոնյակի բացումը, որը նա անվանեց իր «երկրորդ երիտասարդության պտուղները»: Բայց վիճակի էական փոփոխություն նրան չէր սպասվում: 1943 թ. գարնանը «Արեւ»-ի խմբագրատանը նա աղիների գալարում է ունենում, սրտի ցավեր, փոխադրվում է Կահիրեի ֆրանսիական հիվանդանոց, ուր մնում է մի քանի օր: Գրողը սկսում է հազվադեպ այցելել խմբագրատուն: Նա ավելի ապրում է «երեկի ներկայութեամբ ընդդէմ այսօրւան», և Ֆիմի անունով մի դեռատի նամակագրի գրում, թե ինքը շարունակում է «փոխն ի փոխտառապել» անցյալով, ներկայով ու ապագայով: Այս առումով Թեքեյանը երգիծական մի ուշագրավ նկատում ունի, որը պարզում է տխուր իրականության հանդեպ նրա մտածողության սթափատեսությունը: Թեքեյանը գրում է, որ Ալեքսանդրիայում գտնված ժամանակ Միք. Կյուրճյանի հետ... զգուշանում էին «անցեալին վրայ խոսելէ, ապագային վրայ չկրնալով խոսիլ եւ ներկային մէջ խոսելու արժանի բան չգտնելով...», – և ապա շարունակում: – Այն տպավորութիւնը ունիմ, թէ իմ վերջալոյսիս տարիները կ'ապրիմ՝ որոնց լոյսը եթէ պակասած՝ քաղցրութիւնը աւելացած է: Բայց ասիկա կը պարտիմ մեծ մասամբ տխրութեան, չըսելու համար տառապանքին՝ զոր երիտասարդի եւ չափահաս մարդու այ սիրտս ապրած եւ թարգմանած է չափուած տողերով...» (էջ 471): «Չափուած տողերով» թարգմանել տառապանքը...՝ որևէ պոեզիայի համար ավելի լավ դժվար թե ասվի:

Թեքեյանի ապրած օրերը գնալով իհարկէ ավելի ու ավելի ծանր էին դառնում, որին նպաստում էր նաև Կահիրեի դժվար տանելի տաք ու խոնավ եղանակը: Մեպտեմբերին կարճ ժամանակով լինում է Ալեքսանդրիայում, որի ծովափնյա օդը կազդուրիչ դեր է ունենում նրա առողջության վրա. «Չատ գէշ» չէր՝ «Չատ աղէկ չըլլալով հանդերձ»: Թեքեյանը մասնակցում է արտասահմանում ապաստանածների հայապահպանմանը սատար կանգնելու նպատակով ստեղծվող «Հայ ազգային հիմնադրամի» կազմակերպման աշխատանքներին: Գրողին առաջարկվում է ստանձնել Կահիրեի հայկական վարժարանների ուսումնական խորհրդի ղեկավարումը, սակայն նա չի համաձայնվում: «Արեւի» համարներում տպագրում է իր հուշերի շարքը,

ծրագրում դրանք լույս ընծայել առանձին գրքով: Այդուհանդերձ, Եգիպտոսի «հայկական կեանքին մթնոլորտը» «շնչելի» չի դարձնում նրա ապրած օրերը: Իրենց ազնիվ չեն պահում նաև Թեքեյանի որոշ բարեկամ-ընկերներ: Շուտով նա ընդհարվում է «Արեւի» տնօրենության ու կուսակցության որոշ ղեկավարների հետ և դադարում թերթին աշխատակցելուց: Նա հեռանում է նաև Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչությունից: Հրանտ Նաիրյանի նյութական աջակցությամբ 1943 թ. Գահիրեում լույս է տեսնում Թեքեյանի բանաստեղծությունների «Հայերգութիւն» ժողովածուն: Կյանքի հարուցած բազում դժվարությունների պատճառով Թեքեյանը տասը տարի գիրք լույս չէր ընծայել: Նրա այս հինգերորդ գիրքը միտում է մեր ժողովրդի անցած ճանապարհի հայելին դառնալ, նրա գոյակովի, հույսի ու հավատի, կորուստների և մանավանդ մարդկային ու ազգային մաքառումների արտացոլքը տալ՝ այդ նպատակը խտացնելով ժողովածուի առաջին «Վասն ձեր» բանաստեղծության հետևյալ տողերում.

*... Փառքն ու արհաւիրքը անցեալի,
Ներկայի շուարումը
Ու ապագայի տեսիլքը
Ժողուեցի մաս առ մաս
Վասն ձեր եւ բազմաց...:*

Ժողովածուի 132 բանաստեղծություններից 44-ը չէին ընդգրկվել նախորդ գրքերում, իսկ մի մասը լույս էր տեսել միայն մամուլում, կային և բոլորովին նոր գրված գործեր: Ժողովածուի առաջաբանում, որը վերնագրված է «Ազդ», Թեքեյանը իր գիրքը որակում է որպես «ազգային բնոյթ մը» ունեցող, նաև թարգմանը «... Հայ Ազգին կարճ ատենի մեջ ապրած հոգեկան աճումի եւ կորուստի, հրճուանքի եւ տառապանքի, յոյսի, անյուսույթեան եւ յետոյ դարձեալ յոյսի բոլորովին անօրինակ, իրեն միայն յատուկ կեանքը ու միանգամայն կ'արտահայտէ այդ կեանքին ներշնչած, հոս արուեստ դարձած ոգին»¹:

Երկրորդ համաշխարհային պատերազմի առիթով 1944 թ. հունիսի 7-ին Թեքեյանը Գահիրեի գեղարվեստասիրաց սրահում ընթերցում է քերթողական իր վերջին մրմունջներից մեկը՝ ֆրանսերեն գրված «Հայաստանը-Ռուսաստանին»^{*} բանաստեղծությունը՝ Հայաստանը դիտելով որպես ապագա բոլոր կարելիությունների միջոց ու հիմք: Նույն ամռանը այցելում է Պաղեստին: Երուսաղեմում, Հոպպեում և Հայֆայում կազմակերպվում են հանդիպումներ ու հավաքույթներ, որտեղ մեներգվել են «Պոլիս», «Կ'անձրեւէ տղա՛ս», «Քու յիշատակդ այս գիշեր» բանաստեղծությունները: Գրողը պար-

¹ Թեքեյան Վ., «Հայերգութիւն», Գահիրե, 1943, էջ 3:

^{*} Կա այս բանաստեղծության նաև արևմտահայերեն տարբերակը՝ «Հայաստան առ Ռուսիա», որը թարգմանել է ինքը՝ հեղինակը (տե՛ս «Արեւ», 12-ը հուլիսի, 1944):

գևատրվում է Հայ երիտասարդաց միության «Բարերար անդամ» շքանշանով, վայելում Հ. Օշականի, Շ. Պերպերյանի և իր մի խումբ համակիրների ընկերակցությունը, գոհ մնալով իր ապրած այդ օրերից՝ նորից վերադառնում է Կահիրե և շնչարգելությունից ու պնդերակությունից բուժվելու նպատակով մեկնում Ալեքսանդրիա, շուրջ մեկ տարվա ընդմիջումից հետո վերսկսում իր ծանր աշխատանքը «Արեւում»: Բայց Թեքեյանը այլևս նման չէր ոչ նախկին «*ղազէթճիին*» և ոչ էլ բանաստեղծական նախկին «*յորդումներ կ'զգար կուրծքին տակ*»: Բազում մտածումներ ու ասելիքներ մեկընդմիջտ պիտի «*թաղուած մնային*» նրա մեջ: Հոկտեմբերի վերջերին գրված մի նամակում նա արձանագրում է. «*Կար չկար ծեր (Թեքեյանը 66 տարեկան էր այդ ժամանակ – Ա. Ա.) մարդ մը կար, որուն քերթող կ'ըսէին եւ որ վերջ ի վերջո, եկած էր, սիրած էր գալ նոյն համոզումին՝ բայց ոչ առանց տխրութեան, ծեր մարդ մը, ծեր քերթող մարդ մը հետեւաբար, որ խոր ծերութեան հասնելէ քիչ առաջ, թերեւս այդ համոզումին շնորհիւ՝ որ իր քերթուածներուն մէջ թափած սերերէն ցոլքմը կը դարձնէր իրեն, զայն կը դնէր նախածքին, ձեւին ու ձայնին մէջ՝ որոնք իր խրտչոտ ու երկչոտ ըլլալովը, վերապահ ըլլալէ աւելի՝ գրեթէ կարծր ու չոր էին իր ամբողջ երիտասարդութեանն ու չափահասութեանն ալ աստենը*» (էջ 479) (ընդգծումը – Ա. Ա.):

Այսպես, տարիների հեռվից գրեթե սպառիչ բնութագրելով իրեն ու իր քերթողությունը, Թեքեյանը վերոհիշյալ տողերում նորից ու նորից է շեշտում այն անհուն տխրությունը, որ ուղեկցել էր իրեն ամբողջ կյանքի ընթացքում: Այդ տխրության պատճառները տարբեր էին, որոնցում հետին տեղ չէին գրավում Թեքեյանի շրջապատն ու մանավանդ նրան վիճակված միայնակ կյանքը. «*Դժուար է խնամող մը եւ տուն մը չունենալ մանավանդ: Առաջ այսպէս չէր բոլորովին. Ընտանիքի մը մէջ կ'այրէի (Թեքեյանը նկատի ունի ծանոթ ընտանիքում որոշ ժամանակ իր ապրելը – Ա. Ա.), մինչ հիմա սենեակի մը մէջ եմ միայն, երբ աւելի պէտք ունիմ հանգստի, հոգածութեան*» (էջ 484):

Ավելացնենք, որ նրա բնական «*սենեակները*» «*դամբանային*» եղան, իսկ կերած հացը՝ լեղի, որի պատճառով էլ նա իր արցունքների հետ իր այդ դատապարտվածությունն է, որ կուլ էր տալիս ու իրեն վիճակված կյանքի մնացած մասը ապրում «*կէս մը մանուկի եւ կէս մը ծերի վիճակով*»: Եվ գուցե հենց դրա համար էր նա իրեն հաճախ անվանում «*քարանձաւ*», «*աւերակ*», «*անապատ*», մի անապատ, որ գնալով «*աւելի չոր եւ ճնշիչ կըլլար*»:

Չնայած այս ամենին՝ Թեքեյանը երբեք չհեռացավ ազգային հոգու ու ցավերից, մնաց նվիրյալ ազգային խնդիրներին՝ միշտ հավատալով, որ պէտք է «*մէկդի նետել մտածումները եւ հաստատ կերպով... մղել ներկայ ամենօրեայ պատիկ պայքարները, որոնց յաղթական էլքով է՝ որ վաղը հնարաւոր պիտի ըլլայ... մեծ պայքարը...*» (էջ 482):

Այս ընթացքում Թեքեյանը «Արեւում» տպագրում է անստորագիր մի քանի սուր խմբագրականներ, որոնցից մեկն էլ «*Ի պատասխան հարեւաններ*

րու հանած անյարկի վիճակին»՝ նկատի ունենալով հակառակորդ կուսակցության օրգան «Յուսաբեր» թերթի որոշ հոդվածներ: Այստեղ է, որ չես կարող չհիշել Շ. Շահնուրի մի խոսքը. «Թշնամի եղբայրները ավելի թշնամի են, քան մյուսները»: Պայքարը ջլատիչ էր, և կարելի է ասել, որ բանաստեղծություններ գրելու ժամանակ գրեթե չէր մնում Թեքեյանի համար:

Միակ միախառնությունը դառնում է այն, որ նախորդ գրքի հովանավորի օգնությամբ լույս աշխարհի է գալիս հերթական ժողովածուն՝ «Տաղարանը», որին տրված նախնական վերնագրերը՝ («Հոգետուն», «Վերջին լույս», «Նոր սեր») արդեն ենթադրում էին, որ գրողը կատարում է մարդկային կյանքի ու սիրո տարաբնույթ եզրերի բացահայտումներ: Գիրքն իր ամբողջության մեջ, բացառությամբ գրողի առաջին՝ «Հոգեր» ժողովածուի, զիջում էր նախորդներին այն աստիճան, որ Հ. Օշականը այն համարեց Թեքեյանի «միակ մեղքը» սուրբ գրի դեմ: Եվ իրոք, մի շարք գործեր արհեստականության կնիքն ունեին, ներկայացվող ապրումներն ու հույզերը դրված էին կաղապարների մեջ, գեղարվեստական լուծումները աչքի չէին ընկնում թարմությամբ ու գրավչությամբ: Թեքեյանը թեև ստեղծում է ներքին տրամադրությամբ իրար հետ կապված մարդկային զգայնությունների որոշ ամբողջականություն, սակայն բանաստեղծությունների մի մասում պակաս են նրա պոեզիային այնքան բնորոշ խոսքի իմաստությունն ու բանաստեղծական խոհը, ասելիքի թանձրացումները, մտածման խորքայնությունը:

1945 թ. բանաստեղծական հունձք չբերեց Թեքեյանին և ոչ էլ առողջության կազդուրում: Տաք Եգիպտոսում, ուր, Հ. Օշականի խոսքերով ասած, «մարդուն միտքը կը լիկի», Թեքեյանը «կ'մրսեր»: Մրսում էր հոգով, մտքով, բայց մանավանդ շրջապատից բխող սառնությունից:

Շ. Շահնուրի բնութագրմամբ՝ «բարձր բարոյականի ջատագով», «միշտ վերապահ», «գերզգա» այդ մարդը ստիպված էր ամեն օր շփվել ազնվություն ու մտավորականի հոգի չունեցող «շուկայիկ մարդոց» հետ: Եվ այդ ազնվական մարդը, որ վեր էր նաև իր կուսակիցներից, նույնքան դժբախտ էր իր անձնական կյանքում, որքան որ միայնակ էր հասարակական շրջապատում:

Թեքեյանը 1945 թ. սկզբներին ունենում է թոքի արյունազեղություն, սկսում է դժվարությամբ քայլել, առավել ևս դժվարությամբ գրել, անգամ կարդալու տկարություն զգալ: Մարտին նա պառկում է Կահիրեի ֆրանսիական հիվանդանոցում: Ձեռքերի վերքերը և մանավանդ թոքերը ծայրագույն վատթար վիճակի էին հասել, հազը՝ այլևս անտանելի. «Մասնկ չարչարուելը՝ վ պիտի մեռնիմ. Մանկ շնորհքով հիւանդութիւն մը ըլլար, քեզ քանի մը օրեն առնող տանող... բայց ասիկա ... էօֆ...»¹:

Շուտով հիվանդի վիճակը այնքան է ծանրանում, որ բժիշկները

¹ Տե՛ս **Հակոբեան Ժ.**, Թեքեյան Վահան, Աստուածախոյզը, Գլենդել, 2009, էջ 216:

խորհուրդ են տալիս քիչ խոսել, իսկ ավելի ստույգ՝ պահանջում են *«բնաւ չխոսել»*: Թեքեյանը այլևս մահճակալին գամված մարդն էր, մենակ, քան երբևէ, և եթե չհաշվենք նրան *«ընկերակցող»* հիվանդությունները, կողքին չունէր ո՛չ հարազատներ, ո՛չ հոգատար ձեռքեր և ո՛չ էլ իր մտքին ու ձեռքերին այնքան տարիներ հավատարմորեն ծառայած գրիչը: Եղածը ընդամենը կարճ ժամանակով այցելած մի քանի համակիրներ էին: Բացակա էր նաև Տերը: Թեքեյանը այլևս մահվան անկողնում էր, ուր տեղափոխվել էր իր կյանքի ցավի անկողնուց, ու նրա ականջին չէր հասնելու սիրված երգի՝ Գ. Սրվանձոյանցի՝ Վարդանանց մահվանը վերաբերող գործը՝ *«իր գմայլելի բառերուն ու եղանակուն»*: Անօգնական մարդն էր նա՝ իր *«մի հատիկով»*, որը շուտով այլևս չէր բացվելու: Վերջիններից մեկը... *«Կմրսի՞ սիրտըդ, հայ քանաստեղծ...»*:

Մահվանից ընդամենը մեկ ամիս առաջ Թեքեյանը փայփայում էր այն միտքը, որ ամռանը Երուսաղեմ կայցելի: Չայցելեց: Ո՞ւր... ո՞ւր... եղեռնից մազապուրծ հայ քանաստեղծ:

Դեռևս 1914 թ. լույս տեսած իր «Հրաշալի Յարութիւն» ժողովածուում տպագրած «Երկու մահեր» քերթվածում Թեքեյանը տենչում էր իր մահվան երկու տեսակ՝ *«իրիկուն մը մարիլ»* գյուղական խրճիթի մեջ, ուր *«սէրը տիրէ»*, և կամ՝ *«Տարուիլ դաշտե ըր կողոյ, վրեժաբորբ, հըրաչուի»*: Բայց դժխեմ ճակատագիրը նրան թույլ չտվեց նման ելք ընտրել, թեև նրա ամբողջ կյանքը մարտադաշտից գրեթե չտարբերվեց:

1945 թ. ապրիլի 1-ին, որը Չատիկի տոն էր, փրկության, խաղաղության ու հույսերի տոն, այդ նույն հույսերով պարուրված, բայց և անհուսությամբ լեցուն հիվանդին քննելուց հետո բժիշկները եզրակացնում են, որ «Հույս չկա»: Արդեն երևում էին առաջին մահանշանները՝ դեմքի դեղնություն, անկանոն խոսք: Հիվանդը հաճախ էր խնդրում շուրթերը թրջել բամբակով ու ինքն իրեն հազիվ շշնջում՝ «սու՛... ու՛...», անգամ՝ բանավոր քանաստեղծություն անում. *«Հոգիս էր, հոգեակս կ'նուզես... Բայց հոգիս շուտ չեմ տար...»*: Շատ թե քիչ խնամք ապահովելու համար Թեքեյանի մտերիմ, բժիշկ Շահեն Սևեռնյանը ապրիլի 2-ին հիվանդին տեղափոխում է իր տուն, սակայն մեկ օր հետո Թեքեյանը խնդրում է իրեն տանել Հելիոպոլիսի իր բնակած սենյակը (շենքի առաջին հարկում բնակվում էր Միքայել Կյուրճյանը), ուր նրան պետք է խնամեր վարձված օտար (ավստրիացի) հիվանդապահուհին: Այդ կիսադատարկ ու անկահույք սենյակը քանաստեղծի թափառական կյանքի ո՞ր երրորդ կայանն էր, ոչ ոք չի կարող ասել, բայց եղավ վերջինը: Իր գրած քանաստեղծություններից մեկում («Գեղջկական») Թեքեյանը երագում էր *«...ի մահ ընթանալ քիչ առ քիչ»*, սակայն այն իրեն շատ երկար սպասել չտվեց: 1945 թ. ապրիլի 4-ի վաղ առավոտյան՝ լույսը դեռ չբացված (4³⁰-ին), իր բնակած փոքրիկ սենյակում, գրողի կողմից այնքան *«սպասված»*, բայց երբեք չսիրված մահը այցելեց նրան ու... մարեց լույսը, այն լույսը, որ նրա կյանքի ընթացքում միշտ էլ կիսալույս էր եղել և շատ հազվադեպ լուսավորել նրա

ճամփան: Մահվանից առաջ Թեքեյանը խնդրել էր «պարզ թաղում»։ «արարողություն չեմ ուզեր, ծաղիկ չեմ ուզեր: Օ՛... մանավանդ ճառ չեմ ուզեր»¹: Հաշվի չառնելով գրողի փափագը՝ նրա աճյունը հաջորդ օրը տարվեց Կահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Հուղարկավորողների մեջ սրտակից բարեկամները քիչ էին: Մեծ մասը նրանք էին, ովքեր անտարբեր ու անհոգ էին եղել Թեքեյանի նկատմամբ, երբ նա ողջ էր, անգամ կային մարդիկ, որոնց գրողը չէր հանդուրժել երբեք:

Թաղման արարողությունը եղավ զուսպ ու պարզ, տիրապետողը համատարած լռությունն էր: Թեքեյանի մարմինը ամփոփվում է Կահիրեի Մար Մինայի գերեզմանատանը՝ իր դժբախտ գրչեղբայրներ Արփ. Արփիարյանի և Եր. Օտյանի շիրիմների հարևանությամբ: Նոր կացարանը ոչնչով չէր տարբերվում նախորդներից. նույնքան մութ էր ու նույնքան միայնակ: Հետագայում Թեքեյանի աճյունը տեղափոխվեց Կահիրեի արվարձան Հելիոպոլիսի գերեզմանատուն՝ իր բարեկամ-գործընկեր Միհրան Տամատյանի շիրմի մոտ, ուր մինչև օրս էլ հանգչում են կողք կողքի՝ Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչության երբեմնի նախագահն ու այդ կուսակցության երբեմնի ատենապետը: Կահիրեն իր շոգ հողի գիրկն առավ հայերեն խոսող ու հայերեն գրող ևս մի տարագիր հոգի: Տունդարձի ճամփաներ բացվելո՞ւ էին:

Կյանքից հեռացավ հայ գրականության մեծերից մեկը՝ անճարակ ու լքված հայ գրողը: Նա, ով ապրեց ու իր գրչով արտահայտեց հայ մարդու պանծացումներն ու փլուզումները, ով մասնակիցն ու ստեղծողներից մեկը եղավ արևմտահայ ու սփյուռքահայ գրականությունների լավագույն արարումների, ով անմնացորդ նվիրվեց իր ժողովրդի ոսկի տեսիլներին և արձանագրեց նրա «պայծառացած» պայքարները.

*Պզտիկ գիւղէ՛ր, դուք մեծցաք,
Անհունօրէ՛ն մեծցաք դուք՝
Երբ բնակիչ չունեցաք...*

*Ու ձեր այն Լեռը մեծցաւ,
Լեռն անծանօթ մշուշոտ
Պայծառացաւ, հայացաւ ի...*

(«Սուէտիա»)

Թեքեյանը իր ամբողջ կյանքի ընթացքում տուն չունեցավ, ու ինքը եղավ իր տունը, ընտանիք չունեցավ, ու ինքը եղավ իր ընտանիքը, զավակ չունեցավ, ու ինքը եղավ իր զավակը՝ իր երեք գրքերում զետեղած «Զավակս» վեր-

¹ Նույն տեղում, էջ 225:

նագրած երեք* Բանաստեղծություններով և միշտ մնաց «ձեր տղա» այն մանուկը, որ, ինչպես գրել է 1927 թ. հունվարի 18-ի «Արև» թերթում տպագրած իր մորը վերաբերող հոդվածում, միանգամից «պատանի եղաւ», տարօրինակ հուզումներով պատանի, ով նույնքան անսովոր տղա պիտի լիներ, որքան որ վաղ ծերացած այր: Նա կորցրեց նաև իր ծննդավայրն ու հայրենիքը և հար մնաց մխիթարության ու սփոփման կարոտ մտավորական մարդը, սիրվելու կարոտ մարդը, որ երբեմն սիրեց, բայց ոչ մեկից չսիրվեց ու իր ստեղծագործություններով հենց այդ իր մեծ կորուստներն է, որ երգեց ու իր ամբողջ կյանքով փաստեց դեռևս 1925 թ. գրված մի սոնետի առաջին տողով՝ «Օնած օրէս մինչեւ այժմ՝ իմ Հայրենիքս ինձի հետ// Տարի ամէն տեղ...»:

Նրա կորցրած ու «կորսուող» հայրենիքը...

Իմ հայրենիքս, ա՛հ, ինչպէ՛ս դաւեց ինձի, խաբեց զիս...

Կը պահանջեմ մերթ իրմէ՛ հաշիւն անհուն իմ սիրոյս,

Իմ կորովիս վատնուած, իմ խորտակուա՛ծ երագիս,

Ու մերթ՝ ձեռքերս երեսըս գոցած կու լամ լացով մը անյոյս,

Պաղատելով որ ապրի՛, հոգ չէ թէ զիս մեռցուցան,

Եւ իր անոյշ մանուկնէ՛րը երջանիկ լոկ ըլլան...:

(«Մութ ժամեր»)

Թեքեյանն իր ուսերին կրեց նաև նահատակ հայ գրչակիցների կիսատ թողած գործի ծանրությունն ու իր ամբողջ կյանքով դարձավ սփյուռք դարձած անտունիների բոլոր ժամանակների հավերժական խորհրդանիշը:

Տախտակներու վրայ չոր, ձեղուններու տակ ցրտին

Չիմա սառող քովէ քով հայ որբերու ո՛րք ձեռքեր...

(«Որբերուն ձեռքերը»)

Նա՛ հոգին խռովյալ ու դեմքը միշտ տխուր մարդը՝ հայ գրականության հավերժական ներկա Վահան Թեքեյանը, ում կյանքն ու գործը, թերևս, կարելի է բնութագրել երկու բառով՝ պայքար և անկում: Ո՛չ կյանք, ո՛չ սեր, ո՛չ երջանկություն. այդ հենց նրա համար էր ասված: Այնուամենայնիվ Թեքեյանը երջանիկ եղավ, երջանիկ, որ բանաստեղծ էր, ավելի ճիշտ՝ Թեքեյանը բանաստեղծ էր և հենց դրա համար երջանիկ եղավ: Ե՛լք, ամեն գնով էլք. սա Թեքեյան մտածողի ու արվեստագետի ամենամեծ գերխնդիրը եղավ և դարձավ նրա կյանքի իմաստը, որ նպատակ ուներ օգնելու հայ մարդուն, որ նա միայնակ չմնա իր ցավերի հետ:

«Գիշերագնաց ճամբորդն էր ան, անստոյգ արահետին վրայ: Ոսկետառ անձնագիր մըն էր ան, թէ՛ւ պատառոտուն,– նրա մասին գրեց Շ. Շահնուրը և

* Ուշագրավ է, որ Փարիզից Ա. Տատրյանին ուղղված 1934 թ. մարտի 22 թվակիր նամակում Թեքեյանը խոսում է նաև չորրորդ «Զավակս» բանաստեղծության մասին:

ավելացրեց. – ...*Թեքեան քար դրած էր իր սիրտին վրայ եւ անով չափած՝ անյատակ ողբերգութիւնը Հայուն*¹: Եվ իրոք, Թեքեյանն իր մեջ կրեց իր ազգի ողջ տառապանքը և ինչ գրում էր իր մասին, նույնքան վերաբերում էր իր տառապակոծ ժողովրդին. «*Անդունդի մէջ ինկած ազգ, անդունդի մէջ հեղձամահ*»:

Ներդաշնակությունների բանաստեղծը, Կ. Չարյանի խոսքերով ասած՝ «*հայ գրականության ամենէն թանկարժէք դեմքերից մեկը*», Զ. Սյուրմեյանի բնութագրմամբ «*հայ բանաստեղծության իշխանը*», Ա. Չոպանյանի բառերով՝ «*խորախոհ բանաստեղծը*», իրենով մարմնավորեց արևմտահայ ու սփյուռքահայ մտավորականի ողբերգական ճակատագիրը և հենց այդ ճակատագրով հաստատեց հայ մարդու գոյատևելու վճռականությունը: Թեքեյանի ապրած կյանքը արժեքավոր է նաև նրանով, որ այն յուրատեսակ փաստագրումն է նրա ապրած ժամանակաշրջանի: Հասարակական, մշակութային, գրական ու մանավանդ ազգային կյանքը ամենաճշգրիտ կերպով են արտացոլվել նրա ճակատագրում, և դեռ ավելին՝ այդ գործընթացների մի ահագին մասի կազմակերպիչն ու նախաձեռնողը ինքը՝ Թեքեյանն է եղել:

Բանաստեղծ, արձակագիր (վեպ, պատմվածքներ, քրոնիկոններ, հուշեր), թատերագիր (նախատեսել էր անգամ չափածո թատերգություն գրել), երգի-ծագիր, խմբագիր, գրաքննադատ, հրապարակագիր, կուսակցական ու հասարակական գործիչ, ուսուցիչ, թարգմանիչ, նամակագիր (որոնց մեծ մասը ճանաչողական, պատմական ու գրական արժեք ունեն), երեսփոխան ու բարերար Վահան Թեքեյանը հասցրեց վեց գիրք տպագրել: Նրա մի քանի գործեր հրապարակվեցին հետմահու՝ «Կեսարիա» օրագրություն-ուղեգրությունը, «Երկու դրախտները», որը պարունակում է նրա հողվածների մի մասը, Կահիրեի «Թեքեան ֆոնտի յանձնախումբի» վեցհատորյակում (նախատեսված էր 15 հատոր) լույս տեսած որոշ գործեր, այդ թվում «Եթէ տերը կամենայ» վեպը, «Հովհար հոգույ» (արձակ և ոտանավոր երգիծանք) և այլն: Սակայն մինչ այսօր առանձին հրատարակման են սպասում մամուլի տարբեր օրգաններում ցրված գեղարվեստական և ոչ գեղարվեստական նրա գործերը, «Ձօն եւ լալօն» (բանաստեղծություններ), «Յիշատակներ», թարգմանություններից Ժյուլ Ռնարի «Տունի հացը» դրաման, մի շարք պատմվածքներ, «Մանկութեան պարտեզէն» բանաստեղծությունների շարքը, որը իր բանաստեղծություններից մեկում համարում է «*իմ վեպը*», «Թրքահայոց մականունները» ուսումնասիրությունը, «Արեւանկարներ» դիմապատկերները, եվրոպական պոեզիայից կատարած թարգմանությունների մի մասը, Ս. Պարթևյանի հետ թատերախաղի վերածած՝ Արփ. Արփիարյանի «Կարմիր ժամուցը» և այլն:

¹ **Շահնուբ Շ.**, Բաց տոմար, Փարիզ, 1971, էջ 52-53:

Թեքեյանը խմբագրել ու հրատարակել է նաև տասնյակ թերթեր՝ «Շիրակ», «Ազատ բեմ», «Հայրենիք», «Արևելք», «Արև», «Ժողովուրդի ձայնը» և այլն, թղթակցել և կամ աշխատակցել է «Արմենիային», «Ազատ խօսքին», «Լուսաբերին», «Հայկական սինեմային», «Անահիտին», «Ապագային», «Հաստատանին», «Մասիսին», «Ծաղիկին», «Մանգումեին», «Զարթոնքին», «Շանթին», «Ոստանին», «Վերջին լուրին», «Արևելեան մամուլին», «Դաշինքին», «Հայ գրականությունը», «Կոչնակին», «Պայքարին», «Ազգին», նաև զանազան տարեցույցների, որոնցում տպագրված նրա գրությունները ստորագրվել են ոչ միայն իր բուն անվամբ, այլև տարբեր ծածկանուններով՝ Բ. Կ. Մ., Սուրեն Տիրանեան, Վահան Տիրանեան, Վ. Տիրանեան, Վ. Տ., Ասուպ, Համշիրակ Բ., Սկայորդի, Իսկուհի, Հովեան, Խորեն, Տաթև, Հայր Վարդան, Խորեն Որոտում, Հովհաննես Կարապետ, Ասպատակ, Բիզմալիոն, Նշան Հարցական, Վեթօ Որոտում... , որոնք է՛լ ավելի են դժվարացնում տարբեր երկրներում, թերթերում ու հանդեսներում բազմացիր նրա ստեղծագործությունների հավաքումը, դրանով իսկ բարդացնում Թեքեյան գրողի, մարդու ու գործչի մասին սպառնիչ խոսք ասելը:

Բայց կա ու միշտ լինելու է ճանաչելի Թեքեյան գրողը, մարդն ու գործիչը, ում համար ամենադիպուկ բնութագիրը տվել է հենց ինքը՝ **«Մեկ հատիկս»**, որի բանաստեղծական բարձունքը ցավոք այլևս չհաղթահարվեց սփյուռքահայ և ոչ մի քերթողի կողմից:

Նկատի ունենալով իրեն վիճակված կյանքի ամբողջ ընթացքը՝ իր բանաստեղծություններից մեկում («Ապրի՛լ թե՛ ոչ, երազել») նա գրել է. *«Չառինք երազ մը կեանքէն, ու երազէն չառինք կեանք...»*:

Այդ անհաս երազի ու տենչված կյանքի խառնարանում էլ ապրեց ու արարեց մեծ բանաստեղծը՝ իր հեռու-մոտիկությունից դիմելով իր ժամանակակիցներին ու բոլոր նոր եկողներին. *«Այս պատմությունը, որ իմս է եւ որ քունդ է նույն ատեն»*:

Арцрун Авагян – Ваган Текеян: одинокий летописец (от Каира до Каира)

В 1922 г. Текеян уехал из Константинополя и был вынужден скитаться по десяткам стран мира (Греция, Франция, ближневосточные страны), однако основной период его жизни и деятельности пришелся на Каир. К прежним ранам и утратам добавились новые: народ оказался на краю пропасти, утрачивались национальные и культурные ценности. В 1933, 1943, 1944 гг. Текеян публикует новые сборники стихотворений, которые стали документальными хрониками прошлого и настоящего армян и которые обусловили высокий уровень поэзии диаспоры. В творческом и историческом плане период жизни Текеяна с 1922 по 1945 гг. характеризуется тем, что Текеян взвалил на свои плечи тяжесть труда, оставленного наполовину его собратьями по перу, ставшими мучениками. Текеян явился летописцем духа и судьбы бездомных диаспоры.

Artsrun Avagyan – *Vahan Tekeyan – the Lonely Annalist (from Cairo to Cairo)*

In 1922 Tekeyan left Constantinople and had to wander in dozens of countries around the world (Greece, France, Middle East countries ...) but Cairo remained the main scope of his life and activity until his death. Old wounds and losses were increased by the new ones, the nation was on the brink of extinction, assimilation had begun, and all the national and cultural values were lost. In 1933, 1943, 1944 Tekeyan published his new collections of poems, which became the documentary of the past and present of Armenian life and conditioned the high quality of the Diaspora poetry. From the creative and historical point of view, the period of Tekeyan's life from 1922 to 1945 was characterized by the fact that Tekeyan had to bear the burden of his martyred pen-friends' incomplete works and became the artistic annalist of the spirit and fate of the Diaspora Armenian homeless.

ՄԻՐՈ ՓԻԼԻՍՈՓԱՑԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՆԱՐ-ԴՈՍԻ «ՍՊԱՆՎԱԾ ԱՂԱՎՆԻՆ» ՎԻՊԱԿՈՒՄ

Բանալի բառեր – կին-տղամարդ փոխհարաբերություն, բարոյահոգեբանություն, ինքնագիտակցում, որբություն, սեռական հասունացում, փիլիսոփայություն, հոգեվերլուծություն, սիրո եռաբաղադրիչ տեսություն, տառապանքի և ցավի հիշողություն, տպավորապաշտություն

Նար-Դոսը (1867-1933), ծնված լինելով Թիֆլիսի Հավլաբար թաղմասի մի աղքատ ընտանիքում, բարձրագույն կրթություն չի ստացել: Սկզբում ծխական, հետո նիկոլաևյան երկդասյա, այնուհետև արհեստագործական դպրոցների թողած բացը ապագա գրողը լրացնում է ինքնակրթությամբ: Նա, ներշնչվելով բարդ ու ներհակ կյանքի զարգացումներից, ստեղծագործական յուրահատուկ ներքնատեսությամբ և մարդկային ճակատագրի նկատմամբ խոր կսկիծով համակված, հայտնվեց գրական ասպարեզում:

Նա չտրվեց հասարակական բուռն կյանքի հորձանուտին, փոխարենը խորությամբ ուսումնասիրեց իր ժամանակը, փորձություններ ճաշակած մարդու հոգեբանությունն ու միջավայրը: Նրա գրեթե բոլոր հերոսները ծուռուճուռ փողոցների անձուկում «նեղ օրերի» մեջ լավ օրեր երագող մարդիկ են: Որպես գրող՝ Նար-Դոսը դարձավ իր իսկ որդեգրած հետևյալ հավատամքի կրողը. «Բավական չէ, որ գրականությունը ցույց տա միայն այն, ինչ որ կա կյանքի մեջ. պետք է նա ցույց տա և ա՛յն, ինչ որ չկա և ինչ որ ցանկալի է, որ լինի»¹: Գրողը գիտեր, որ ծանր կյանքի ճանապարհ է ընտրում՝ ամբողջ կյանքում սրբագրիչի աշխատանքը զուգորդելով գրելու անհագ ցանկությանը: Նա, Գր. Ջոհրապի նման «անտարբեր» մնալով կյանքի «մեծ պատահարների» նկատմամբ, լուսավորը տեսնելու առաքելությամբ ավելի շատ գեղարվեստականացնում էր արտաքուստ աննշան, բայց հասարակական մեծ ողբերգություն բովանդակող, ինչպես նաև բարոյականություն, հոգեկերտվածք և վարքագիծ ձևավորող երևույթները: Ճիշտ է, նա սրտակից ընթերցող էր փնտրում, սակայն սփռվելով էր նաև Սենեկայի փիլիսոփայության հավերժական գաղափարով. «Բավարար են սակավ մարդիկ,

¹ Նար-Դոս, Երկերի ժողովածու հինգ հատորով, հ. 5, Երևան, 1971, էջ 352: Այս ժողովածուից (1968-1971) մեջբերումների հղումները այսուհետ կտրվեն շարադրանքում փակագծերի մեջ նշելով միայն հատորը և էջը:

մեն միակը, կամ էլ՝ ոչ ոք»¹:

Որքա՞ն մարդիկ են կյանքից հեռանում՝ կյանքին պարտական մնալով, և որքա՞ն քչերը, որոնց ինքը՝ կյանքն է մնում պարտք: Ահա այս վերջին տեսակին է պատկանում Նար-Դոսը: Նա, ի տարբերություն իր այլ ժամանակակցի՝ Ալ. Շիրվանզադեի, ներկայացնում է ոչ թե կյանքի բովում հայտնված մարդկանց ծովածավալ ճակատագրերը, այլ ցույց է տալիս ինչպես է կենսական միջավայրն անդրադարձվում մարդկային ներաշխարհում: Մարդկանց նյութապաշտության, ինչպես նաև անհավասար շահերի մշտատև ընթացքում Նար-Դոսի գրականությունը որոնելու ենք որպես ինքնամաքումի հայելի: Նրա երկերը հագեցած են մարդկային կյանքի շրջադարձերով, գաղափարագեղարվեստական և բարոյահոգեբանական հետաքրքիր հարցադրումներով, որոնք արդիական են նաև այսօր²:

Նար-Դոսի ստեղծագործական սկզբունքները հստակորեն արտահայտված են նրա հոդվածներում և նամակներում: Նրա որոշ արձակ երկեր, այդ թվում՝ «Սպանված աղավնին», հատկանշվում են գործողությունների սրընթացությամբ ու դրամատիզմով: Այդ պատճառով գրող-հոգեբանը Գրիգոր Չուբարի խորհրդով ընդամենը տասնվեց օրում իր հիշյալ երկը մի շարք փոփոխություններով վերածել է չորս գործողությամբ պիեսի. «Շատ շնորհակալ եմ Չուբարից, որ ուշադրությունս դարձրեց վիպակիս վրա և խորհուրդ տվեց պիեսի վերածելու այն» (հ. 5, էջ 403):

Սակայն, ցավոք, երբ արվեստասեր հասարակությունը Թիֆլիսի հայկական դրամատիկական թատրոնի դահլիճում ծափահարում էր Սառայի դերակատարին՝ ժամանակին մեծ ճանաչում վայելող Օլգա Մայսուրյանին³, Նար-Դոսն այդ օրը՝ իր համար «գարմանալի աջող և անսպասելի» այս պիեսի առաջին ներկայացմանը (1908 թ. հունվարի 7), գտնվում էր Նոր Նախիջևանում: «Եթե այս անտեր ճանապարհին այսքան թանկ չնստեր, ես անպատճառ կգայի պիեսիս ներկայացումը տեսնելու համար» (հ. 5, էջ 412),՝ ցավով գրում է նա:

Հայ գրականագիտությունը բազմիցս է անդրադարձել Նար-Դոսի «Սպանված աղավնին» վիպակին: Անժխտելի է այդ երկի գաղափարագեղարվեստական, ճանաչողական արժեհամակարգի, կառուցվածքային, պատումային, ժանրային յուրահատկությունների, ինչպես նաև կերպարների

¹ Մենեկա, Նամակներ Լուցիլիուսին բարոյական կյանքի մասին, թարգմ.՝ Ա. Տեր-Հովհաննիսյան, Երևան, 2011, էջ 29:

² Ներկա օրերում «Սպանված աղավնին» գրվում է ոչ միայն գրականագետների, այլև ֆիլմարտադրողների ուշադրությունը. 2009 թ. «Երևան» ստուդիան Էկրանավորեց այն, որը ջերմորեն ընդունվեց արվեստասեր հասարակության կողմից:

³ «Սպանված աղավնին» պիեսի առաջին բեմադրության արձագանքների և նրա գլխավոր դերակատարների վերաբերյալ տե՛ս «Մեր ձայնը», 1908, թիվ 15, հունվարի 13, էջ 3, թիվ 16, հունվարի 16, էջ 4, «Մշակ», 1908, թիվ 5, հունվարի 9, էջ 2, «Անկախ մամուլ», Թիֆլիս, 1908, թիվ 4, հունվարի 9, էջ 4:

հոգեբանության բացահայտման միջոցների ու եղանակների շուրջ ստեղծված գրականությունը: Այդուհանդերձ, որոշ իրողություններ մնում են չմեկնաբանված. սա պայմանավորված է նաև նրանով, որ յուրաքանչյուր սերունդ նորովի է մոտենում գեղագիտական և կենսական բազում խնդիրների:

Բնավ չստվերելով նարդոսագիտության ձեռքբերումները՝ սույն հոդվածում նպատակահարմար ենք գտնում վիպակում ծավալվող կին-տղամարդ փոխհարաբերությունը, կնոջ հոգեբանության մեջ տեղի ունեցող մի շարք փոփոխությունների դրդապատճառներն ուսումնասիրել փիլիսոփայության, հոգեվերլուծության և սիրո եռաբաղադրիչ տեսության ժամանակահատոր դիտանկյունից:

XIX-XX դարերի փիլիսոփայական մտքի նվաճումներն իրենց ուրույն ազդեցությունը թողեցին ինչպես սոցիալ-պատմական կյանքի, այնպես էլ մարդկային հոգեկերտվածքի, մտածելակերպի, բարոյականության և աշխարհընկալման սկզբունքների վրա: Գիտական, փիլիսոփայական ու գեղարվեստական ոլորտները էականորեն վերաիմաստավորվում են և բեկումնային փոփոխություններ ներմուծում իմացաբանական և մտային համակարգ: Այս բոլորին նպաստում են Ի. Կանտի և Ա. Շոպենհաուերի գաղափարները: Ազդեցությունների տիրույթից դուրս չէր նաև մշակութային կյանքը, տվյալ դեպքում՝ գրականությունը, որտեղ քննության առարկա է դառնում մարդը՝ որպես ենթագիտակցական շերտ: Գեղարվեստական երանգ են ստանում այնպիսի երևույթներ, որոնք մինչ այդ քննարկման առարկա չէին դարձել: Բարոյահոգեբանական բազմաթիվ իրողություններ իմաստավորվում են բնության կողմից ստեղծված անխառն ու անխաթար զգացողությունների տիրույթում: Հերոս-կերպարը վերածվում է մարդկերպարի, որը քննության է ենթարկվում տարաբնույթ կողմերից: Ժամանակների սրընթաց զարգացումների և ներքին ու արտաքին փոփոխությունների հիման վրա երբեմն ի հայտ են գալիս հակասական միտումներ, որոնք, այդուհանդերձ, ապահովում են վերընթացի ընդհանուր ներդաշնակություն: Այս առումով իրավացի է ակադեմիկոս Մ. Սարինյանը. «Փիլիսոփայական նորահայտ տեսությունների ներգործությամբ ուրույն տեղաշարժեր են կատարվում արվեստի և գրականության բնագավառում՝ փոխաձևելով ոչ միայն նրա մեթոդն ու մեթոդոլոգիան, այլև մարդու և հասարակության կապի, սոցիալական ու կենսաբանական մղումների պատճառականությունը»¹:

Հարափոփոխ ժամանակների ընթացքում բարոյահոգեբանական ընկալումներով և կենսական հարցադրումներով հատկանշվող «Սպանված աղավնին» վիպակը տեսանելի է փիլիսոփայական այս ընդհանուր համպատկերի տիրույթներում: Ակներն է, որ հեղինակի այս ստեղծագործության

¹ Սարինյան Մ., Փիլիսոփայական հոսքը Նար-Դոսի գեղարվեստում // «ՊԲՀ», 2008, թիվ 2, էջ 10:

գլխավոր հերոսներից մեկի՝ Ռուբեն Թուսյանի աշխարհընկալման սկզբունքները բխում են փիլիսոփայական որոշակի հավատամքից: Մա այն եզակի կերպարներից է, որի ստեղծմանը գրողը շատ քիչ է միջամտում: Կարելի է ասել, որ նրա կերպարի արդեն պատրաստի կադապարը և համապատասխան նկարագիրը վիպական զարգացումը նոր հուն են տեղափոխում: «Թուսյանը ցուցադրվում է խոսքի ու վարքի փոխապայմանավորող համահնչունությամբ»¹, – նկատում է գրականագետ Վ. Մաֆարյանը:

Արձակագրի դիտողունակ աչքից չի վրիպել այն, որ անցումային դարաշրջանի մարդը ձեռք է բերում բարոյական մեկ այլ նկարագիր, որը, ինչպես բոլոր ժամանակներում, ավելի շատ տեսանելի է կին-տղամարդ փոխհարաբերության, ինչպես նաև սիրո և հաճույքի ընկալումներում: Հեղինակը կերպարաստեղծման ընթացքում նրբորեն ընդգծում է Թուսյանի՝ արտաքին կադապարի տակ թաքնված անհատականության ինչպես բացասական, այնպես էլ դրական կողմերը. «Մի գիծ այդ բնավորության մեջ – թեև բացասական – կարծես թե գրավեց ինձ. ...նա **ցինիկ** պես անկեղծ էր, **լրբի** պես համարձակ և երեխայի պես անփույթ: ...Նա ընդունակ էր և՛ ամենամեծ ցածությունը գործել, և՛ ամենամեծ առաքինությունը, և երկու դեպքումն էլ առանց իր արածի գիտակցությունն ունենալու, ինչպես մի մարդ, որ գործում է լուրդակալի ազդեցության տակ» (հ. 2, էջ 186) (ընդգծումները մերն են – Տ. Մ.):

Կերպարի այսօրինակ բնութագրումը գրականագիտության մեջ շարունակաբար գնահատվել է որպես բացասական և անընդունելի երևույթ: Թուսյանը չունի բարձր զգացմունքներ և ամեն կերպ փորձում է արդարացնել իր տմարդի արարքներն ու դատողությունները: Նա, խոսելով մի հանգամանքի մասին, մտքում հաստատում է մեկ այլ իրողություն և դրանով իսկ օտարվում իրեն շրջապատող միջավայրից: Թերևս միայն ակադեմիկոս Ա. Տերտերյանն է նկատում Թուսյանի կամային ուժեղ բնավորությունը²:

Նարդոսագիտությունը, անշուշտ, չի սխալվել Թուսյանին բնորոշելու հարցում: Սակայն անուշադրության է մատնվել այն հակասական հարցը՝ ինչ *գրավչություն* կարող են առաջացնել «*ցինիկը*» և «*լիրբը*»: Նար-Դոսը պատահականորեն չի որակավորում իր հերոսին. նրա յուրաքանչյուր համեմատություն ունի որոշակի նպատակ: Հեղինակը գեղագետի առողջ բանականության շնորհիվ ստեղծած դիպուկ համեմատությունների միջոցով մի կողմից բացահայտում է Թուսյանի բնատուր ու անխառն հոգեկերտվածքը, իսկ մյուս կողմից՝ քննության ենթարկում բարոյականության և անբարոյականության սահմանների ճշգրտության հարցը:

Ինչպես արդեն նկատեցինք, Նար-Դոսը գեղագիտության հարցում հարազատության եզրեր ունի Գր. Զոհրապի հետ: Վերջինս իր նորավեպերում

¹ Մաֆարյան Վ., Գրողի և կերպարի անհատականությունը, Երևան, 2001, էջ 217:

² Տե՛ս Տերտերյան Ա., Երկեր, Երևան, 1980:

նույնպես փորձում է գտնել մարդուն, ճշմարիտը, կեղծիքը և դրանց հակադրել հասարակության մեջ գործող բարոյականության ընկալումը: Ըստ էության սա Ջոհրապի գեղագիտության ամենակարևոր առանձնահատկությունն է, որովհետև նրա համար ընդունելի բարոյականը, կարելի է ասել, շատ է տարբերվում հասարակության կողմից ընդունված և ընկալելի բարոյականությունից: Ջոհրապի՝ բարոյականության շուրջ համարձակ տեսակետները նրան թույլ էին տալիս հասարակ մարմնավաճառին առանց արդարացումների անվանակոչելու աստվածաշնչյան դարձի եկող կնոջ անունով («Մագդաղինե»): Ըստ նրա ընկալումների՝ այս նորավեպի համանուն հերոսուհու մեջ դեռ լիովին չէին կորել բարոյահոգեբանական բարձր որակները, որովհետև նա քահանայից ավելի խստապահանջ էր իր անձի նկատմամբ և «ուղղամտութիւն մը ունէր իր վաճառիկ սիրոյն մէջն ալ»¹, այսինքն՝ Մագդաղինեն գիտակցում էր իր անբարոյականությունը: Ինքնագիտակցման արժանիքն ըստ էության բարձրագույնս է գնահատվում Ջոհրապի կողմից: Մինչդեռ հասարակության համար ընդունելի է ոչ թե Մագդաղինեն, այլ Սուրբիկ Հանընը («Փոստա լ»):

Բարոյական որակների արժևորման հարցում Նար-Դոսը ևս առաջնային տեղ է հատկացնում ինքնագիտակցմանը, բնատուր հոգեկերտվածքի և անպաճույճ վարքագծի դրսևորման կերպերին: Ի տարբերություն շատերի, ովքեր իրենց հաճույքները քողարկում են հասարակության կողմից ընդունված բարոյականության տիրույթներում, Թուսյանն իր հակումներում դրսևորում է բացարձակ անկեղծություն և համարձակություն: Հավերժական ուսանողն անթաքույց վարքագծով, կյանքի հանդեպ անպատասխանատու վերաբերմունքով և հեղհեղուկ դատողություններով բացահայտում է իր ներաշխարհը: Նրա գերնպատակը կյանքից հաճույք ստանալն է: Հեղինակին չի հետաքրքրում, թե Թուսյանն ինչու և ինչպես է ձեռք բերել բարոյական այդօրինակ նկարագիր: Չնայած փիլիսոփայությունն առհասարակ մերժելի է Թուսյանի համար, այդուհանդերձ նա կյանքի ընկալման սահմաններում որդեգրել է իր բնավորությանն ու վարքագծին բնորոշ մի «փիլիսոփայություն», որը միտումնավոր վերագրվում է Էպիկուրին: «Քերականության միջից պետք է ջնջել ապառնի ժամանակը: Ապագա չկա, որովհետև անհայտ է, իսկ ինչ որ անհայտ է, այդ մասին մտածելն ու հոգալը բնականաբար, հիմարություն է: Վաղվան մասին մտածում են վախկոտները, այսինքն նրա՛նք, որոնք վստահություն չունեն իրենց ուժերի վրա: Մահվան գաղափարը խելացի մարդու համար մեծ խթան պետք է լինի ամեն բան անելու, այսինքն այն ամենը, ինչ որ կարող է հաճույք պատճառել: ...խլի՛ր կյանքից ա՛յն ամենը,

¹ **Ջոհրապ Գր.**, Երկերի ժողովածու չորս հատորով, հատոր Ա, Գեղարուեստական երկեր, նորավեպեր, դիմանկարներ, աշխատասիրութեամբ Ալ. Շարուրեանի, Երևան, 2001, էջ 81:

ինչ որ հաճույք կարող է պատճառել քեզ և ոչ մի բանի մասին մի մտածիր» (հ. 2, էջ 189-190), – եզրակացնում է երիտասարդը:

Ռուբեն Թուսյանը, բացասելով ապագան, ապրում է անհեռանկար կենսափիլիսոփայությամբ: Այս կերպարի գեղարվեստական յուրահատկությունը պայմանավորված է բարոյահոգեբանական այն հատկանիշներով, որոնք բխում են անհեռանկարայնությունից: Ըստ էության, կյանքի այսպիսի ընկալումը բխում է հեղոնիստական գաղափարախոսությունից, որը, քիչ աղերսներ ունենալով Էպիկուրյան փիլիսոփայության հետ, մարդու ապրելակերպը ձևավորում է հաճույքի և վայելքի տիրույթներում: Թուսյանը կարծես հեղոնիզմի ծրագրված մարմնացում լինի¹:

Հեղոնիզմի բարոյագիտական ըմբռնումներում հաճույքը մարդու գոյության իմաստն է: Մինչդեռ Էպիկուրի բարոյագիտությունը բոլորովին այլ բովանդակություն ունի. այն վերաբերում է ոչ թե մարմնական հաճույքներին և վայելքներին, այլ չափավորությանն ու սակավապետությանը: Հույն փիլիսոփան Մենեքեյին ուղղված բարոյագիտական իր նամակում գրում է, որ ապագան ամբողջությամբ և՛ մերն է, և՛ մերը չէ²:

Էպիկուրը, ավելի շատ մտածելով ակնկալվող հետևանքների դառնության մասին, կարևորում էր հաճույքի տևականությունը ոչ այնքան ներկայում, որքան ապագայում: «...Նույնիսկ հացը և ջուրը գերագույն հաճույք են պատճառում, եթե այն տրվում է նրան, ով սոված է... Ուստի երբ ասում ենք, որ հաճույքը վերջնական նպատակ է (այգում գտնվող Էպիկուրի դպրոցի մուտքին մակագրված էր՝ **«Անցո՛րդ, այստեղ դու քեզ լավ կզգաս, այստեղ հաճույքն է բարձրագույն բարիքը»** (ընդգծումը մերն է – *S. U.*), – գրում է Էպիկուրը, – մենք բոլորովին նկատի չունենք այլասերվածությունը կամ զգայական վայելքները, ինչպես մտածում են նրանք, ովքեր չգիտեն, չեն համաձայնում, սխալ են հասկանում մեր ուսմունքը. ո՛չ, մենք նկատի ունենք ազատությունը մարմնական տառապանքներից և հոգու մաքրագործումից»^{3**}:

Հատկանշական է, որ Նար-Դոսն առանց ընդգծված երանգների ակնարկում է նաև հայրերի և որդիների հակամարտության մասին: Բոլոր ժամանակներում այս երևույթը գրականության մեջ քննվել է տարաբևեռ կողմերից: Այս առումով Իվան Տուրգենևի «Հայրեր և որդիներ» վեպը, անկախ քաղաքական, հասարակական և սոցիալական իրավիճակներից, հարափոփոխ

¹ Տե՛ս **Թոփչյան Ստ.**, Կերպ և իսկություն, Երևան, 1987, էջ 225:

² Տե՛ս **Диоген Лаэртский**, О жизни, учениях и изречениях знаменитых философов, М., 1979, с. 434.

* ...будущее – не совсем наше и не совсем не наше...

³ Նույն տեղում, էջ 435:

** ...даже хлеб и вода доставляют величайшее из наслаждений, если дать их тому, кто голоден. Поэтому когда мы говорим, что наслаждение есть конечная цель, то мы разумеем отнюдь не наслаждения распутства или чувственности, как полагают те, кто не знают, не разделяют или плохо понимают наше учение, – нет, мы разумеем свободу от страданий тела и от смятений души.

սերունդների միջև տեղի ունեցող պայքարի և այդ պայքարում հոգեկերտվածքի պարտության կամ հաղթանակի հարցի գեղարվեստականացման լավագույն օրինակներից է: Նար-Դոսը բազմիցս նշել է, որ իր վրա «խոր և անջնջելի տպավորություն է գործել» ռուս գրականությունը: Վաշխատության հետ միշտ անհաշտ Թուսյանն ամենևին հիացած չէ իր վաշխառու հոր տեսակով: Վերջինիս ունեցվածքը երիտասարդի համար ընկալվում է որպես ցոփ ու շվայտ կյանքի, հաճույքների բավարարման և, իհարկե, ընկերների մոտ աղքատ հպարտի տպավորություն թողնելու պարզ միջոց. «...Աստված հեռու պահի ամեն մի որդու այդպիսի հայրերից: ...Ես միշտ փող ունեցել եմ և միշտ էլ չեմ ունեցել, որովհետև ունեցածս իսկույն ծախսել եմ կամ բաժանել կարիքավոր ընկերներիս» (հ. 2, էջ 196), – ասում է Թուսյանը:

Նար-Դոսը բնավ չի ժխտում մեղքի գոյության փաստը: Մեղքը միշտ կա, և մարդն իր վարքագծով չի կարող խուսափել մեղքից: Ըստ էության սա մարդու քրիստոնեական դաստիարակությունն է: Այն խորհուրդը, որ ոչ մի մեղավոր չի պատժվում այնպես, ինչպես փոխհատուցում է անմեղը, Նար-Դոսին հասկանալի է: Նա վիպակում ցույց է տալիս մեղավորության ու անմեղության, ինչպես նաև սիրո ևատելության սահմանները: Թուսյանն իր և Սառայի միջև կատարված սիրային արկածապատումը վերնագրում է «Սպանված աղավնին»: Անտառն իր բնական, անխաթար և առեղծվածային միջավայրով ուրույն ազդեցություն է թողնում մարդու գիտակցության և վարքագծի վրա՝ նրան մղելով բնագոյային և ոչ գիտակցական արարքների: Այս դեպքում, սակայն, հարց է ծագում. դա վայել է, թե՞ մեղք: Պարզ է, որ հասարակության առջև դա մեղք է, բայց մարդու հոգեբանությունն զգո՞ւմ է այդ մեղավորությունը, թե՞ ոչ: Եթե մարդը նույնիսկ չի էլ զգում այդ մեղավորությունը, ապա, միևնույն է, կյանքը դնելու է իր ուղղորդիչ նշանները:

Հաճելի ժամանցից հետո Թուսյանը, հավատարմության խոստումներ շռայլելով Սառային, մեկնում է Պետերբուրգ: Տարածաժամանակային հեռավորության և մեծ քաղաքի արագընթաց կյանքի բովում Թուսյանը մոռանում է երբեմնի տված խոստումները: Առաջին հրապուրանքը Սառային նետում է ճակատագրի քմահաճ ընթացքի մեջ, և կնոջ հուզաշխարհում սկսում է ձևավորվել վրեժխնդրության մոլեգին ցանկությունը: Որոշ ժամանակ անց թվում է՝ կյանքը դրել է իր ուղղորդիչ նշանները՝ երբեմնի սիրահարների ճակատագրերը բեկելով համապատասխան ուղղությամբ. Թուսյանը շարունակում է իր արկածախնդիր կյանքը, իսկ Սառան ամուսնանում է Գարեգին Միսակյանի հետ: Նրանց ընտանեկան արտաքուստ կատարելությունը նույնիսկ շարժում է հասարակության նախանձը: Եվ ահա փորձությունն իրեն երկար սպասեցնել չի տալիս. Սառան պատահաբար հանդիպում է Թուսյանին, ու նրա մեջ վերստին բորբոքվում է վրեժխնդրության անհագ ցանկությունը, որը հանգեցնելու էր ողբերգական ավարտի: Թուսյանը բարդ, հակասական, անմեկնաբանելի էություն ունի, որովհետև նրա մեջ ինքնաձանաչողությունը դեռ լիարժեք հաղթահարված չէր: Այս իմաստով իրավացի է

Ստ. Թոփչյանը, երբ գրում է, որ Նար-Դոսի կերպարները հեռու են միագիծ սահմանումներից և չեն կարող միանշանակ չար կամ բարի, վատ կամ լավ, տգեղ կամ գեղեցիկ լինել¹:

Հետաքրքիր զարգացումներ են նկատվում խորհրդանիշների գործածության ընթացքում: Դիպուկ և ստեղծիչ համեմատությունների, նկարագրությունների և ընդհանրությունների միջոցով հեղինակը մի կողմից ուղղակիորեն բացահայտում է մարդու, տվյալ դեպքում՝ Սառայի ներաշխարհը, իսկ մյուսից՝ ընթերցողին նախապատրաստում հաջորդ գործողությանը: Բեկումնային արկածախնդրությունից առաջ Սառան Ռուբենի սպանած աղավնու զուգահեռով ներքուստ կանխագուշակում է իր թե՛ բարոյահոգեբանական և թե՛ ֆիզիկական մահը. «Եվ այժմ եմ միայն կռահում, որ նա աղավնու և իր միջև, թերևս անգիտակցաբար, մի նմանություն էր տեսնում և լալիս էր ոչ թե այն անմեղ թռչունի սպանությունը, այլ իր կուսության «սպանությունը»» (հ. 2, էջ 206):

Սկզբում եղելության բովանդակությունն անմեկնաբանելի և անհասկանալի էին Թուսայանի տեսանկյունից: Այլ կերպ ասած՝ նա չէր գիտակցում իր մեղսագործությունը: Ըստ էության սա նրա կերպարի ամենաէական հատկանիշներից է: Հայտնվելով մեղքի և մեղսունակության բարոյական ընկալումների տիրույթում՝ նա սկսում է իրեն բնորոշ փիլիսոփայական դիտանկյունից արդարանալ. «...Ես բռնի կերպով չտիրացա նրան: Մեր հոգիները և մարմինները փոխադարձաբար ձգտում էին իրար, և այդ փոխադարձության հետևանքն ուրիշ բան չէր կարող լինել, քան այն, ինչ որ կատարվեց» (հ. 2, էջ 239):

Սակայն հատկանշական է, որ վիպական հյուսվածքի ընթացքում Թուսայանը մի կողմից ակամայից սկսում է գիտակցել իր կատարած մեղքը, և տեղի է ունենում խղճի խայթի արթնացում (հիշենք Սառայի մահվանից հետո Թուսայանի ինքնասպանության անհաջող փորձը և Մարգարյանի մոտ լուռ արտասվելու պատկերը), իսկ մյուս կողմից՝ գլուխ է բարձրացնում եսասիրությամբ բնորոշվող կամքը: Բարոյահոգեբանական այսպիսի պայքարում, սակայն, հաղթանակում է կամքը: Հեղհեղուկ փիլիսոփայությամբ ողողված կամային որակները, ընդգրկելով հոգեբանական ավելի լայն տիրույթներ, Թուսայանին զցում են անհեռանկար և հոռետեսական մտայնությունների դաշտ, և սկսվում է բարոյական անկումը: Կամքի գերիշխանության ներքո «մեղք», «մեղավորություն» և «խիղճ» հասկացությունները բովանդակազրկվում են. «...Աշխարհիս երեսին արդար ու մեղավոր չկա, չկա՝ քեզ ասում եմ, և մարդ ամեն բան, լավն էլ, վատն էլ անում է բնության թելադրանքով: ... Ես կենդանի մարդ եմ, սիրում եմ կյանքը և հանուն այդ սիրո պիտի շարունակեմ զոհել ամեն ինչ ու ամենքին...» (հ. 2, էջ 264-265):

¹ Տե՛ս Թոփչյան Ստ., նշվ. աշխ., էջ 235:

Ըստ Ա. Շոպենհաուերի՝ աշխարհը դիտարկելի է պատկերացման և կամքի տիրույթներում: Եթե պատկերացումների աշխարհը տարածության և ժամանակի մեջ ենթարկվում է պատճառականության, անհրաժեշտության և բավարար հիմունքի օրենքներին, ապա կամքը՝ որպես «ինքնին իրի» աշխարհ, դուրս է տարածաժամանակային տիրույթից և գտնվում է բացարձակ ազատության մեջ: Աշխարհի գոյությունը պայմանավորված է յուրաքանչյուր անհատի համար կարևոր նշանակություն ունեցող սեփական *էս*-ի առկայությամբ: Ասել է թե՛ աշխարհն ընկալելի է մարդու գոյությամբ և վերջինին՝ աշխարհի նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Կամքը կույր, ոչ բանական և չգիտակցվող ուժ է, որն անընդհատ ձգտում է կենսահաստատման: Այն ամբողջ գոյի սկիզբը և մետաֆիզիկական հիմնավորումն է: Եթե Իմանուել Կանտի, Յոհան Ֆիխտեի ուսմունքներում կամքը սերտորեն առնչվում է բանականության և ճանաչողության հետ, ապա շոպենհաուերյան կամքն անբանական, կույր սկիզբ է: Աշխարհը՝ որպես կամք, ենթադրում է անվերջ հոսք և ծնելիություն: Ճանաչող անհատի հայտնվելուց հետո աշխարհը դառնում է նաև պատկերացում: Շոպենհաուերը բոլոր պատկերացումները դաստիարակում է երկու խմբի՝ ինտուիտիվ-զգայական և վերացական-բանական, որոնք համապատասխանում են ինտուիտիվ և ռեֆլեկտիվ (բանական, ռացիոնալ) ճանաչողությանը: Թեև ճանաչողությունն առհասարակ ենթարկվում է կամքին, այնուհանդերձ, ըստ Շոպենհաուերի, առանձին մարդկանց մեջ այն կարող է «ազատվել ծառայողական այդ դերից» և վերածվել անշահախնդիր հայեցողության: Նա ճանաչողության ինտուիտիվ և ռեֆլեկտիվ ձևերը հակադրում է իրար՝ նախապատվությունը տալով առաջինին: Եթե բանական ճանաչողությունը, ենթարկվելով կամքին, ձգտում է բավարարել մարդու առօրյա հետաքրքրությունները, ապա ինտուիտիվը ազատ է ու անվրեպ: Ինտուիտիվ ճանաչողությունը գեղագիտական հայեցողություն է, որով օժտված են միայն հանճարները: Եթե սովորական մարդիկ պարզապես նայում են, ապա հանճարները՝ տեսնում: Թեև Շոպենհաուերը իռացիոնալիզմի դիրքերից քննադատում է բանական ճանաչողությունը, այնուհանդերձ չի մերժում դրա անհրաժեշտությունը և կարևորությունը մարդկանց տեսական և գործնական կյանքում¹:

Թուայանի կերպարին հակադրվում է կանացի արժանապատվության զգացումով և վրեժխնդրության կրքով հատկանշվող Սառայի կերպարը: Վիպակի սկզբում Գարեգինը խելակորույս սիրահարի նման Միքայել Մարգարյանին պատմում է իր և Սառայի նշանադրության մասին, որը տարօրինակ է ընկալվում գիտակից մարդու տեսանկյունից: Առաջին հայացքից թվում է՝ վիպակի այդ «շատախոս» հատվածը ոչնչով չի կարևորվում: Սա-

¹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Шопенгауэр А.**, Мир как воля и представление, пер. с нем. Ю. И. Айхенвальд, Минск, 2005:

կայն նրբանկատ հեղինակը ոչինչ աննպատակ չի ներկայացնում: Երկխոսության ընթացքում Գարեգինը հանկարծ արտաբերում է թվացյալ պարզ, սակայն ամբողջ վիպակի և կին-տղամարդ փոխհարաբերության մեջ շատ որոշիչ նախադասություն, որով ուրվագծվում է Սառայի անտարբեր ու սառը վերաբերմունքն ապագա ամուսնու նկատմամբ. «- *Ընդունեց* (նշանի մատանին – *Տ. Մ.*) *և դրեց սեղանի վրա*» (հ. 2, էջ 143):

Կերպարի այսօրինակ անտարբերությունը հետագայում վերածվում է անբարեհամբույր, կոպիտ ու անհավասարակշիռ վերաբերմունքի: Այս իրողությունը դիպաշարի զարգացման ընթացքում պատճառաբանվում է Սառայի և Թուայանի միջև ծնված սիրավեպի անսպասելի ավարտով, անտառի պատահարով, ինչպես նաև հղիությամբ և ծննդաբերությունից որոշ ժամանակ անց կատարած մանկասպանությամբ¹, որը դառնում է Սառայի բարոյական անկման նախասկիզբը: Նար-Դոսը լավ գիտեր թիֆլիսահայ կյանքն ու կենցաղը: Նա իր հերոսուհուն ներկայացնում է ամենատարբեր վիճակներում, որպեսզի կարողանա բացահայտել նրա հոգեբանությունը: Սառան անընդհատ ինքնաբացահայտվում է, որը նրա կերպարի ամենակարևոր արժանիքն է:

Առօրյա կյանքում չեն բարձրաձայնվում այնպիսի անասելի ու անքննելի թեմաներ, որոնք առնչվում են մարդու ծննդյան մութ առեղծվածին, որբությանը ու խորթությանը, մինչդեռ գրականության մեջ գոյաբանական հարաբերության միջոցով դյուրին ձևով խզվում է այդ լռությունը, այլ կերպ ասած՝ պատմվում և մեկնաբանվում է անպատմելին²: Հոգեբանական ուսումնասիրությունները փաստում են այն մասին, որ որբությունը լուրջ ազդեցություն է թողնում մարդու բարոյական նկարագրի ձևավորման և սիրո ընկալումների վրա: Ըստ էության սա պայմանավորված է նրանով, որ որբ մարդկանց սեռական հասունացումը հարմարվողական դաշտ ձեռք չի բերում

¹ Հատկանշական է, որ մանկասպանության համանման դրվագի ենք հանդիպում նաև Նար-Դոսի «Ադամամոթին» (1898) նորավեպում: Մեզ չհաջողվեց դրա գեղարվեստականացման դրդապատճառների վերաբերյալ որևէ փաստ գտնել՝ Նար-Դոսի՝ մեզ հայտնի արխիվներում կամ ներկայումս Երևանում բնակվող նրա թոռան՝ բարեհամբույր Միքայելի հետ մեր ունեցած զրույցներից, սակայն, այնուամենայնիվ, հակված ենք կարծելու՝ փոքր հասակում ապագա գրողի ներկայությամբ գուցե կատմել են որևէ նման դեպք, որը, անտարակույս, պահպանվելու էր տպավորվող երեխայի հիշողության ենթաշերտերում:

² Անպատմելի իրողությունների վերաբերյալ հատկանշական է Սիամանթոյի «Պարը» բանաստեղծության մեջ ձևակերպված «անպատմելի պատմություն» բառակապակցությունը: Ելնելով այն հանգամանքից, որ ստեղծագործող անհատը (բանաստեղծ կամ արձակագիր), ի տարբերություն սովորական մարդկանց, իրեն պատուհասած մարտահրավերներին պատասխանում է բառերով և բառակապակցություններով, ապա կարելի է ենթադրել, որ այս հակադրության միջոցով Սիամանթոն փորձել է շատ որոշակի տեղեկություն փոխանցել ժամանակակից և հետագա բոլոր սերունդներին այն մասին, որ այդ պատմությունը պատմելի է դառնում հեղինակի միջնորդությամբ, այն է՝ գրականությունը այս, ինչպես նաև Նար-Դոսի դեպքում դառնում է լռության խզում:

կենսաձևի բնական ազատության հետ: Մտանալով ազատություն՝ նրանք տրվում են ազատ կյանքի հաճույքներին, որոնք ուղիղ համեմատական են մարդու կամային հատկանիշներին:

Նմանատիպ զարգացում է տեղի ունենում նաև Սառայի հետ: Ջերմ, բարեհամբույր և հոգատար ընտանիքը, այդուհանդերձ, հարազատ միջավայր չէ Սառայի համար: Օտար միջավայրն ու բարքերն ավելի են աղավաղում դժբախտ աղջկա՝ առանց այն էլ ճակատագրի բերումով փոթորկված հոգեբանությունը: Սա է պատճառը, որ նա, լինելով անփորձ կին-տղամարդ հարաբերություններում, առանց մտածելու գայթակղվում է առաջին իսկ պատահած հրապուրանքով և տրվում կյանքի հաճույքին: Նար-Դոսը ստեղծագործական բնագոյով լավ է ըմբռնել, որ Սառայի՝ աշխարհի և մարդկանց նկատմամբ ունեցած վերաբերմունքը պայմանավորված է ընտանիքում խորթ ու օտարված լինելով: Սառան երկկողմանի ծնողագուրկ էր. Պետրոս Բաղիրյանն ու իր երկրորդ կինը՝ Սալոմեն, աղջկա հարազատ ծնողները չէին: Մինչև երկրորդ կնոջ հետ ամուսնանալը Բաղիրյանն «ամուսնացած է եղել մի այրի կնոջ հետ, որի ձեռքին եղել է Սառան մոտ տասը տարեկան հասակում: Հետո այդ կինը, այսինքն՝ Սառայի հարազատ մայրը, մեռել է...» (հ. 2, էջ 142-143):

Սիրո հավերժական թեման տարաբևեռ կողմերից դարեր շարունակ քննվել է ինչպես գրականության, այնպես էլ հոգեբանության և փիլիսոփայության տիրույթներում: XX դարի առաջավոր հոգեվերլուծաբանները և հոգեբանները (Զիգմունդ Ֆրոյդ, Կարլ Գուստավ Յունգ, Ռոբերտ Ստերնբերգ), հիմնվելով սիրո հակասական դրսևորումների վրա, ստեղծել են առողջ և բանական ապրելակերպի ամբողջական հայեցակարգ: Անդրադառնալով դարակազմիկ այդ հայեցակարգերին՝ փորձենք դրանք զուգահեռել նարդոսյան աշխարհնկալմանը և գտնել դրանց՝ առաջին հայացքից հակասական, բայց ներքուստ պատճառահետևանքային կապ ունեցող ընդհանուր եզրերը:

Ըստ Զիգմունդ Ֆրոյդի (1856-1939) հոգեվերլուծության՝ սիրո հիմքը անհատի նյարդային համակարգի գործունեությունն է, որն իր հերթին խարսխավում է «բավականության սկզբունքի» և «իրականության սկզբունքի» բախումների վրա: Այս գործընթացը մշտապես տեղի է ունենում ցանկացած անհատի հուզաշխարհում: Անհատը, խուսափելով իրականության պարտադրած բռնությունից, ընկնում է «ախտածին վիճակի» մեջ: Այս տեսանկյունից Սառայի՝ Թուսյանի հանդեպ տաժած սերը բխում է կանացի բնական զգացմունքից՝ սիրված լինելու անհրաժեշտությունից, որը, ինչպես արդեն նկատել ենք, տարաբախտ աղջիկը չի կարողանում գտնել «հայրական» օջախում: Սակայն այդ սերը հակասում է հասարակության կողմից ընդունված բարոյական չափանիշներին, որովհետև Սառան չամուսնացած աղջիկ է և, ըստ հանրության ավանդական մոտեցումների և արժեհամակարգի, իրավունք չունի ընտրողի աչքով նայել հակասեռին, բայց այդպես

նայում է անկախ իր կամքից: Այս երևույթը Ջ. Ֆրոյդի տեսության գուգահեռներում փաստում է այն մասին, որ իրականության հետ բախվելիս անհատը հայտնվում է հասարակության չափանիշներին հակասող հոգեվիճակում: Նա նկատում է, որ բոլոր երևույթները, դրանց թվում՝ նաև սերը, դիտարկելի են որպես առաջնային ցանկությունների ազդակներ¹:

Տեսակի մեջ նուրբ ու եզակի արձակագիրը սիրո հավերժական թեման դիտարկում է միանգամայն այլ տեսանկյունից: Նար-Դոսը զուտ բարոյական ըմբռնումների դիտանկյունից սիրային խիստ արտառոց երևույթների և հասարակության պարտադրած հարաբերությունների տիրույթներում քննության է ենթարկում կնոջ դիմակայող հոգեկերտվածքի ու անսովոր վարքագծի դրսևորման կերպերը: Այլ խոսքով՝ գրող-հոգեբանը կնոջ վարքը, սիրո ընկալումը, վերջինիս դրսևորումը, բարոյականությունը և արդեն խեղաթյուրված հոգեբանությունը քննում է մարդու հասարակական դիրքի, նրա ինքնության և հոգեկերտվածքի բախումների մակարդակներում: Հասարակությունն ընդունում է այն, ինչ որ դրված է իր ստեղծած չափանիշների շրջանակում: Սահմաններից փոքր-ինչ շեղումը հանգեցնում է հասարակության ոչնչացնող վերաբերմունքի: Նար-Դոսն իր գրողական ներքնատեսությամբ ֆրոյդյան հոգեվերլուծությունից տարիներ առաջ է գեղարվեստորեն նկատել սիրո այս ամբողջական հայեցակարգը²:

Եռաբաղադրիչ սիրո հետաքրքրաշարժ տեսություն է առաջարկում ամերիկացի հոգեբան Ռոբերտ Ստերնբերգը (1949): Ըստ վերջինիս հայեցակարգի՝ սերը գոյություն ունի *մտերմության, կրքի և պարտականության* փոխհարաբերության տիրույթներում: Կին-տղամարդ փոխհարաբերությունների ձևավորման, զարգացման և մշտատևության գրավականը վերոհիշյալ երեք տարրերի փոխկապակցվածությունն է: «Որևէ անհատի սիրո ուժգնությունը կախված է այս երեք բաղադրիչների բացարձակ հզորությունից, իսկ որևէ անհատի ստեղծած հարաբերությունների տեսակը՝ միմյանց հանդեպ դրսևորած զգացմունքի ուժգնությունից»³, – նկատում է նա:

Այս տեսանկյունից եթե Թուսյան-Սառա փոխհարաբերությունները հատկանշվում են անսահման կրքով և ձգողականությամբ, ապա նույնը չի կարելի ասել Սառա-Գարեգին ամուսնական գույզի վերաբերյալ. վերջին պարագայում առաջնային տեղում է պարտականությունը: Հետևաբար սխալված չենք լինի, եթե եզրակացնենք, որ նարդոսյան այս հերոսներից և ոչ մեկի սիրո ուժգնությունը թույլ չէր տա, որ նրանք լինեին երջանիկ,

¹ Տե՛ս **Փրեյդ Յ.**, Я и оно, Труды разных лет, кн.1, Тбилиси, 1991, с. 90-91.

² XX դարում Զիգմունդ Ֆրոյդն այն զարգացրել է գլխավորապես «Տոտեմ և տաբու» (1913), «Հաճույքի սկզբունքից անդին» (1920), «Զանգվածների հոգեբանությունը և մարդկային Ես-ի վերլուծությունը» (1921), «Ես և Այն» (1923), «Կլինիկական դեպքեր» (1924) և «Մի պատրանքի ապագան» (1927) աշխատություններում:

³ **Sternberg R.**, A Triangular Theory of Love // H. T. Reis/C. E. Rusbult eds., Close Relationships (2004) p. 258.

որովհետև սիրո հիմնաբաղադրիչներից միայն մեկը կամ մյուսն էր դրսևորվում յուրքանչյուրի կողմից:

Թուայանի հեռանալը մեծ ցավ է պատճառում Սառային, և վերջինս համակվում է վրեժխնդրության անհագ կրքով: Առհասարակ ցավն ու տառապանքն ունեն հիշողության խորհուրդ. այդ երկուսի ճանաչմամբ է գիտակցվում մարդու կենսունակությունը: Շատ դեպքերում այդ նույն տանջանքը, դառնալով աշխարհը տեսնելու և ընկալելու կարևոր դիտակետ, կերտում է մարդուն և նրա ներաշխարհը: Ադամորդին իր գոյաբանության ընթացքում սնվում է ընդվզումով, որի հիմնական աղբյուրը եղել և մնում է տառապանքի և ցավի հիշողությունը¹:

«Ոչ օրիորդական արտաքինով» Սառան իր անկանոն վարքագիծն ու կուպիտ բնավորությունը փորձում է արդարացնել չարիքի նկատմամբ հասարակության անտարբեր վերաբերմունքով: Նրա՝ վիրավորված ու անարգված ինքնասիրությունից ծնված այս բողոքը բխում է ոչ թե գիտակցված կամքից, այլ վերջինիս անկումից. «Տարօրինակ՝ ասում եք, ինձ չեք հասկանում ասում եք: Իսկ երբ ամոթի կարմիրն երեսիս, վիրավորանքի թույնը կրծքիս, տանջանքի կսկիծը հոգուս մեջ, բարոյապես լքված ու սմբած՝ կծկվեի, լռեի և տերևի պես դողայի ամեն մի կասկածոտ հայացքի առջև,– այն ժամանակ այս տարօրինակ չէր թվա ձեզ, այն ժամանակ կհասկանայիք ինձ, այն ժամանակ այս շատ բնական կլինեի ձեզ համար, այնպես չէ՞, քանի որ այդպես եք սովոր, քանի որ այդպես են անում սովորաբար ինձ պես անպատվածները, ինձ պես խաբվածները, ինձ պես լքվածները: Բայց քանի որ ես ուրիշ հազարների պես չեմ կծկվել, չեմ լռել, ամեն բան ինքս եմ հրապարակ հանել, փոխանակ ծածկելու, քանի որ համարձակ, անվախ ինքս եմ դուրս եկել ցույց տալու աշխարհին անպատվությունս, կսկիծս, տանջանքներս և վրեժ եմ պահանջում բողոքող հոգուս ամբողջ թափով,– այս բոլորը շատ տարօրինակ է թվում ձեզ, և դուք չեք հասկանում ինձ, որովհետև, իսկապես, որ, այս տարօրինակ է ձեր հասկացողությամբ, որովհետև այսպես չեն անում սովորաբար, որովհետև այսպես **չպետք է** անեն, այնպես չէ՞, որովհետև դա **ամոթ** է, սովորական մորալից դուրս մի բան է, այնպես չէ՞, պարոն: ... Օ՛, այս ի՞նչ անիրավ աշխարհ է, ի՞նչ անիրավ... Այս ի՞նչ անտարբերություն և անարդարություն է, որ տեսնում եմ շուրջս... Ո՞ր մեղքիս համար է, որ գցել են ինձ այսպես մենակ, անօգնական...» (հ. 2, էջ 231-233):

Չնայած Սառան ամուսնացել էր Գարեգին Միսակյանի հետ, բայց, միևնույնն է, չէր կարողանում սիրել «տարօրինակ ուղեղի տեր երիտասարդին»:

¹ Այս առումով պատահական չէ մեր եղեռնագարկ գրողներից մեկի՝ Միամանթոյի՝ ազգային տառապանքի վերաբերյալ կատարած ձևակերպումը.

«Եթե կուզես Տառապանքը, դարերուն համար, քանդակե, Բայց մի՛ մոռնար, Անոր աչվրներն ու բերանը ու հոգին տարփորեն, Ընդվզումի ստինքներուն կարկառելու...» («Հույսին ճամփան»)

Այս իրողությունը վիպակի ընթացքում պատճառաբանվում է ժառանգական տվյալներով. Գարեգինի մայրը, որն իր ամուսնուց փոքր էր քսան տարով, «խելագարվեց և մեռավ հեգեկան հիվանդների ապաստարանում» (հ. 2, էջ 147): Գարեգին Սիսակյանի կերպարը վիպակում դարձել է միջոց մյուս հատկապես Թուսյանի կերպարը բնութագրելու համար: Գենետիկորեն ներքին բարեկրթություն ունեցող Գարեգինը «առասպելական թույլ կամքի և հեզահամբույր բնավորության» պատճառով շարունակ տառապում է իր խղճի և խեղճության միջակայքում: «Մեծ երեխային» բնորոշ իր խառնվածքով և բնավորությամբ նա դուրս է հայտնվել կյանքի արագընթաց պայքարների հավիտենական բովից և, ի դեմս Սառայի, կարծես թե գտել է իր երջանկությունը: Սակայն տղամարդու այս տեսակն անընդունելի է տառապանքի բովով անցած և հանելուկային ներաշխարհ ունեցող Սառայի համար: Կինը հակառակ սեռի մեջ առաջին հերթին փնտրում է նրա սեռային դիմագիծն ամբողջացնող գծերը, իսկ Գարեգինը բնավ այդպիսին չէ. ունի բանաստեղծական նուրբ հոգի. «...Գարեգինն իր բոլոր պատվական առաքինություններով հանդերձ գուրկ էր կնոջ մեջ այդպիսի անվերապահ սեր հարուցանող բացասական առաքինությունից - արուի ամեն ինչ ընկճող, ամեն ինչ հպատակեցնող միահեծան կամքից - մի բան, որ բոլոր դրական բարեմասնություններից ավելի սիրում է կինը տղամարդու մեջ» (հ. 2, էջ 179-180):

Գարեգինն ըստ էության տպավորապաշտ է, իսկ այդպիսի մարդիկ գրեթե չունեն վերլուծելու և մեկնաբանելու կարողություն: Նրանք ոչ թե չեն ուզում, սա այլ հարց է, այլ ուղղակի չեն նկատում իրենց բնավորության և վարքագծի ստվերոտ դրսևորումների այլաբևեռ կողմերը, որոնք միանգամայն այլ ուղղությամբ և բովանդակությամբ կգարգացնեին իրենց կյանքը: «...Բավական է այսպիսի թույլ բնավորություններին փոքր-ինչ ցնցես ընդամենը և երջանկաբեր վիճակից, նրանք անմիջապես կորցնում են իրենց գլուխը, դառնում երեխայորեն ահաբեկված ու անկարող»¹, - իրավացիորեն նկատում է Վ. Սաֆարյանը:

Ակնհայտ է, որ Գարեգինը մեծ ոգևորվածությամբ է ընթերցել անգլիական սենտիմենտալիզմի խոշորագույն ներկայացուցիչ Լորենս Ստեռնի գործերը և հատկապես նրա ինքնակենսագրությունը, ուստի Սառայի նկատմամբ իր սերն ընկալում և մեկնաբանում է հենց այդ գրողի տեսանկյունից: Լ. Ստեռնը իր բազմաբովանդակ աշխատություններում հավանականության ու անհավանականության տեսությունների ծաղրերգական գուգակշիռների միջոցով անհեթեթության է հանգեցրել մարդկային կյանքի և բանականության այն հավակնությունը, որը ձևավորվել և կարգավորվել էր լուսավորական իմացաբանությամբ²:

¹ Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 214:

² См. и История всемирной литературы, т. 5, М., 1988, с. 70-71.

«Սպանված աղավին» վիպակում Նար-Դոսը բաց տեքստով ակնարկում է ոչ միայն այն գրականությունը, որը, ի դեմս Սառայի և Գարեգինի, կարդում էին ժամանակակիցները, այլև իր հերոսների բարոյահոգեբանական և աշխարհայացքային բազմաթիվ դրսևորումները բխեցնում է դարակազմիկ գրականության և փիլիսոփայության նվաճումներից: Եթե Գարեգինը տարված է տպավորապաշտ գրականությամբ, ապա Սառան ընթերցում է Ժյուլ Միմոնի «Բանվոր կինը Եվրոպայում» գիրքը: Դարի բեկումնային զարգացումները բոլորովին այլ որակներով և արժեքներով են իմաստավորվում արվեստի ու մշակույթի բնագավառում: Ինչպես «Աննա Սարոյան» նամակագրական վիպակում, այնպես էլ այստեղ հատկանշական են *միջտեքստային* հատվածները: Թեև ինտերտեքստը (միջտեքստայնություն) համեմատաբար երիտասարդ եզրույթ է, այնուամենայնիվ երևույթն ունի հին պատմություն¹: Այսպիսի հատվածների կիրառություններն իրենց ազդեցությունները թողնում են ստեղծագործության ինչպես գաղափարազեղարվեստական, այնպես էլ կերպարների հոգեկերտվածքային դրսևորումների կերպերի և վարքագծի առանձնահատկությունների վրա:

Նար-Դոսը դիմում է գրականության մեջ լայն տարածում ստացած մեթոդին. «Սպանված աղավին» վիպակում իրեն՝ ի դեմս Միքայել Մարգարյանի, ներկայացնում է որպես դեպքերի ականատես: Այս առումով ևս հարազատության եզրեր են նկատվում Նար-Դոսի և Գր. Զոհրապի միջև: Այս երկու հեղինակները շատ հաճախ գրում էին հոգեբանորեն անհամոզիչ և անհավանական դրսևորումների մասին: Այս դեպքում բնական է, որ նրանք, իրենց անձը պահելով ստեղծագործության տիրություն, ավելի հավաստի էին դարձնում արծարծվող իրողությունը: Ճիշտ է, Նար-Դոսը շատ լավ գիտի, թե ինչպես է ավարտվելու արտառոց պատմությունը, սակայն նա պահպանում է ստեղծագործական անկողմնակալությունը և ամեն ինչ թողնում գործողությունների բնականոն ընթացքին. «... Այն, ինչ որ պատահեց, մինչև օրս էլ մղձավանջային մի ծանր երազ է թվում ինձ:

Սակայն առաջ չվազեմ և դեպքերը պատմեմ իրենց հաջորդականությամբ» (հ. 2, էջ 181):

Մ. Մարգարյանը, տրվելով գործողությունների զարգացման հորձանուտին, իր կարծիքն է հայտնում կատարվող իրադարձությունների վերաբերյալ: Ներաշխարհային ապրումների դրսևորումների միջոցով (օրինակ՝ Սառայի վրիպած կրակոցից առաջացած զգացումների պատկերը) նա ոչ թե ինքնաբացահայտվում է որպես կերպար, այլ իբրև կյանքի հայելի անդրա-

¹ «Ինտերտեքստ» (միջտեքստայնություն) եզրույթն առաջին անգամ գործածել է ֆրանսիացի փիլիսոփա, հետկառուցվածքաբանության տեսաբան Յուլյա Կրիստևան 1967 թ., սակայն երևույթի գեղարվեստականցման արմատները հասնում են մինչև անտիկ շրջանի գրականություն: Այս մասին մանրամասն տե՛ս **Քալանթարյան Շ.**, Միջտեքստայնություն, Գրականության տեսության արդի խնդիրներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2016, էջ 136-153:

դարձնում է մարդու աշխարհընկալման հոռի և արտասովոր կողմերը: Նա, Թուսյանի, Գարեգինի և Սառայի համար սրտակից բարեկամ լինելուց գատ, նաև անաչառ դատավոր է: Իրողություն, որը լավագույնս համապատասխանում է Նար-Դոսի գաղափարագեղարվեստական և բարոյափիլիսոփայական դիրքորոշումներին: Այս իմաստով համոզիչ է Ստ. Թոփչյանի տեսակետն այն մասին, որ գրողը վիպակում ներկայանում է թե՛ որպես «օբյեկտիվ-հավասարակշիռ» դիտող ու մեկնաբանող հեղինակ և թե՛ անձնական ապրումներ ունեցող կերպար¹:

Կերպարներից յուրաքանչյուրի ներաշխարհում և ըմբռնումներում յուրովի է արտացոլվում աղմկահարույց իրողությունը: Ըստ էության բոլորի տեսակետները, առանձին վերցրած, ունեն իրենց պատճառահետևանքային կապը և ինչ-որ տեղ նաև համոզիչ են: Երկխոսությունների միջոցով գրողն իր վիպակում կատարում է իրար ժխտող հարաբերությունների քննություն: Տվյալ պարագայում վիպակի երկարաշունչ երկխոսությունները դրակա՛նորեն են ազդել ստեղծագործության կառուցվածքի վրա, որովհետև դրանց միջոցով են բացահայտվում հերոսների դատողությունները, բարոյահոգեբանությունը, ներաշխարհային ապրումները և կենսաձևը: Այս միջոցով Նար-Դոսը ոչ միայն ամրապնդում է իր գեղագիտական լուծումները, այլև ընթերցողներին հնարավորություն է ընձեռում վերանայել իրենց՝ կյանքի, սիրո և բարոյականության մասին դատողությունները:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ Նար-Դոսը, վերլուծելով կյանքի հակասական կողմերը, մարդկային հոգեկերտվածքն ու վարքագիծը, նկատում է, որ ժամանակակից մարդը ձեռք է բերել բարոյական մեկ այլ նկարագիր, որն ավելի պարզորոշ երևում է կին-տղամարդ փոխհարաբերության դրսևորման կերպերում: Սիրո հավերժական թեման այս արձակագրի գրչի տակ արտացոլվում է մարդու ինքնության և հասարակության պարտադրած հարաբերությունների բախումների մակարդակներով: Այս տիրույթում խիստ արտառոց վարքագիծ է նկատվում ոչ միայն Սառայի, այլև Թուսյանի և Գարեգինի կողմից: Նրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած բացառիկ անհատ է: Սակայն սխալված չենք լինի, եթե ասենք, որ սիրո հարցում Սառան և Թուսյանը ունեն ընդհանրություններ, այլ խոսքով՝ նրանք միմյանց նկատմամբ ունեցած կրքով հակադրամիասնության տիրույթում են, մինչդեռ Գարեգինը այս երկուսի հակապատկերն է, այսինքն՝ երիտասարդը կանգնած է ոչ թե կրքի և ձգողականության, այլ պարտքի և պարտականության դաշտում: Նար-Դոսը գեղարվեստական դիտողականությամբ նկատել էր հոգեբանական այս երևույթը նախքան հոգեբանության դարակազմիկ նվաճումները:

¹ Տե՛ս Թոփչյան Ստ., նշվ. աշխ., էջ 232:

Татевик Мерджанян – *Философские и психологические проявления любви в повести Нар-Доса «Убитый голубь»*

Целью настоящей статьи является исследование и оценка повести Нар-Доса «Убитый голубь» с новой эстетической точки зрения. Взаимоотношения мужчины и женщины, множество побудительных мотивов изменений, происходящих в психологии женщины, исследуются с точки зрения философской, психологической и трехкомпонентной теории любви. В результате исследования мы приходим к выводу о том, что прозаик провел психологический анализ противоречивой жизни, душевного склада и поведения человека. Нар-Дос отмечает, что в разные времена люди приобретают новый нравственный облик, в особенности проявляющийся в способах выражения взаимоотношений мужчины и женщины. Вечную тему любви прозаик изображает на уровне конфликта человеческой сущности с продиктованными обществом формами отношений.

Tatevik Merjanyan – *Philosophical and Psychological Expressions of Love in Nar-Dos's Novelette "The Killed Dove"*

The purpose of the present publication is to observe and evaluate Nar-Dos's novelette "The Killed Dove" in a new indispensable and aesthetic perception. The relationship between a man and a woman, as well as, motivations that cause some changes in the psychology of women, were studied from the point of view of modern perception of philosophy, psychoanalysis and the triangular theory of love. The study concluded that the writer analyzed the contradiction of life, human nature and behavior from a psychological point of view. Nar-Dos understood that at different times a person gets a different moral image, especially in the sphere of relations between a man and a woman. The novelist reflected the eternal theme of love at the level of conflict between a person's personality and the relations imposed by society.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ
ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ ՁԱՏԱԳՈՎ

Բանալի բառեր – Հովհաննես Թումանյան, Տիցիան Տաբիձե, Գրիգոր Ռոբաքիձե, Լոռի, Թիֆլիս, Հայաստան, Վրաստան, հայ մեծ բանաստեղծ, վրաց ժողովուրդ, բարեկամության ուսուցիչ, ազգամիջյան բախումներ, վրացական մամուլ

Ազգերի եղբայրացման ոսկե օղակն էր Հովհաննեսը կովկասյան ժողովուրդների միջև, և որպես այդպիսին անմահ պիտի մնա նրա հոյակապ պատկերը...

Ավ. Բսահակյան

Հովհաննես Թումանյանը (1869-1923) ճիշտ ժամանակին ընկալեց ու գնահատեց եղբայրությունը խորհրդանշող այն գեղեցիկ լեզունդի իմաստն ու խորհուրդը, ըստ որի՝ պատմությունը Հայոսին և Քարթլոսին խոստովանել է, որ վաղ անցյալում նրանք մի ընդհանուր նախահայր են ունեցել: Նա նաև վկայեց, որ ժողովուրդների հիշողությունը, պատմական վկայությունների ու իրադարձությունների հիշողությունից բացի, նաև սրտի և արյան հիշողություն է, որն անցնում է դարից դար, հազարամյակից հազարամյակ:

Հայ մեծ բանաստեղծը հայ և վրաց ժողովուրդներին պատգամել է ամեն ինչին նայել բարեկամական սիրո բարձունքից. սեր, որ վեհացնում է, սեր, որ արարում է, սեր, որ միաբանում է և ջերմացնում: Նա միշտ հետևում էր Վրաստանում տեղի ունեցող պատմական, գրական-մշակութային անցուդարձերին և նշանակալից իրադարձությունները հայ և վրաց մտավորականների հետ հաճախ նույնիսկ սեփական տանն էր նշում կամ այդ առիթով հավաքույթներ էր անցկացնում և բարեկամությունն ամրապնդելու նորանոր գաղափարներ առաջադրում:

Թումանյանը Վրաստանի և վրաց ժողովրդի նկատմամբ միշտ առանձնահատուկ համակրանք էր տածում. «Ինչքան ինձ համար թանկ են Վրաստանն ու վրացական սքանչելի հոգին, նույնքան էլ թանկ են և այն մարդիկ, որոնք հանդիսանում են կրողներն ու մեկնաբանները այդ հոգու»: Նա ընդգծում էր հայ և վրաց ժողովուրդների պատմական ճակատագրի ընդհանրությունը, նրանց բարեկամությունը. «Միտք կապն է ապահովել մեր ժողովուրդների պատմական կյանքի հաջողությունները»¹: Այս միտքը մեր

¹ **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 10, Երևան, 1999, էջ 700:

մեծանուն բանաստեղծներից մեկն արտահայտել է նաև բանաստեղծությամբ.

*Եղբայրներ են ծնված օրից
Աշխարհում հայն ու վրացին,
Եվ դառնություն չի խառնվել
Երբեք նրանց աղուհացին¹:*

Թումանյանը վաղ պատանեկությունից ապրել ու ստեղծագործել է Վրաստանի մայրաքաղաքում: Երիտասարդական տարիներից նա չթուլացող հետաքրքրություն է ցուցաբերել այդ երկրի նկատմամբ, հանգամանորեն ուսումնասիրել նրա կեցությունն ու կացությունը, շփվել «արի, բարի» ընկերների հետ, նրանց հետ կապվել ջերմ զգացումներով և ամեն առիթ օգտագործել վրաց ժողովրդի մասին իր հսկայական գիտելիքները հանրայնացնելու համար: «Ն. Բարաթաշվիլու դամբանի վերա», «Վրաստանի ոգին», «Վրաստանի համար» «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» և այլ ստեղծագործություններում ժողովրդասեր գրողը անկեղծորեն, սրտառուչ հայտնում է բարիդրացիության, բարեկամության ու եղբայրության իր վեհ գաղափարները:

*Ելնե՛ նք՝ տեսով ու ճանանչով,
Ընկեր, ախպեր, մեր ու քուր՝
Մեր քյամանչով, ուրախ կանչով
Գընանք դեպ կյանքն ընդհանուր²:*

Ի դեպ, այս կոչը ոչ թե 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջման արձագանքն էր, այլ պայմանավորված էր Հայաստանի առաջին Հանրապետության հաղթանակով:

«Հովհաննեսը խորապես զգում է Վրաստանը: Վրաստանի ծնունդ վրացու հազվադեպ եմ հանդիպել, որ նրա չափ ճանաչեր ու ընկալեր Վրաստանի եությունը»³, – գրել է նրա կրտսեր ժամանակակից և թերևս վրացի ամենամտերիմ բարեկամներից մեկը՝ ականավոր գրող, դրամատուրգ, բանաստեղծ, գրականագետ, արվեստաբան, փիլիսոփա Գրիգոր Ռոբաքիձեն (1880-1962): Եթե նրա անունը 1910-1920-ական թվականներին թնդում էր համայն Վրաստանում, ապա 1930 թ. հետո՝ ընդհուպ խորհրդային կարգերի փլուզումը, նա ոչ միայն արգելված էր իբրև սոցիալիստական հայրենիքի «դավաճան», այլև նրա անունը տալն անգամ վտանգավոր էր:

¹ Մահյան Հ., Վրաց ժողովրդին // «Գրական թերթ», 27 փետրվարի 1987:

² Թումանյան Հովհ., նշվ. աշխ., հ. 1, Երևան, 1988, էջ 305:

³ Րոժձեյովսկի Գ., օջանցե Նատելո // «Րեժիզոն», 8 մարտի 1923.

Ռոբաքիձեի հուշերը, որ լույս են տեսել համավրացական նոր գրականության օրգան «Ռուբիկոնի»¹ շաբաթաթերթի 1923 թ. ապրիլի 8-ի համարում՝ «Հովհաննես Լուսեղեն» վերնագրով, սկսվում են հետևյալ տողերով. «Բանաստեղծի մահը քանաստեղծի համար իր մահն է, առավել ևս Հովհաննես Թումանյանի մահը: Շատ մեծ է մեր վիշտը, որովհետև Հովհաննեսը Մարդ էր: Հովհաննեսը Բանաստեղծ էր: Հովհաննեսը Բարեկամ էր: Եվ ամեն ինչում կատարելապես լուսեղեն... Հոգին՝ ամենատես, բարի, Բարձրյալի պես միշտ խանդավառ: Միրտը՝ պարզ, բաց, կրակված, մանկական, անպական»²: Հիրավի, այսպես խոսուն է հայ մեծ քանաստեղծին վրաց մեծ քանաստեղծի տված գնահատականը:

Թումանյանն իր կրտսեր բարեկամին նվիրել է մի քառյակ՝ ի դեմս «սգավոր եղբոր», որը պետք է գրված լինի ազգամիջյան ընդհարումների օրերին: «Սգավոր եղբայրը» այցի է գնում իր «վշտահար եղբորը», ով համակված է նույն հոգսով և նույն ցավով.

*Բնջ դալուկ ես քու երկրի պես ու սրգավոր դու էսօր,
Բայց ողջ ու վեհ քան երբևէ, թովիչ ու խոր դու էսօր.
Եղբորդ մոտ եկած վրշտոտ՝ տանջում ես նոր դու էսօր,
Տանջանք անվերջ իմ սրբոտի մեջ ու սեր հրգոր, դու էսօր»³:*

Եղբայրները սգավոր ու վշտահար էին, որովհետև 1918 թ. վերջերին աղետաբեր ամպեր էին կուտակվել Հայաստանի և Վրաստանի երկնակամարում: Թումանյանը պարզապես համօրյա մարտնչում էր դրանք ցրելու և երկու երկրների միջև խաղաղությունը վերահաստատելու համար: Այդ բախտորոշ պահին նրան է դիմում քանաստեղծ Տիցիան Տաբիձեն (1895-1937), որը նույնպես մտերմական ջերմագին կապեր ուներ նրա հետ և լիովին համոզված էր, որ ճակատագրական պահին «մեկ ուրիշի ձայնը չի հնչի և չի լինի այնպես ճշմարիտ ու հասկանալի, ինչպես լուսավորյալ քանաստեղծինն ու հայրենասերինը», և նկատի ունենալով նրա վիթխարի հեղինակությունը Անդրկովկասի ժողովուրդների մեջ առհասարակ՝ բաց նամակ է հղում՝ հաղորդակից դարձնելով իր մտորումներին ու անհանգստությանը⁴:

Սպասելով երկու կառավարությունների միջև հաշտության բանակցությունների ավարտին՝ 1918 թ. դեկտեմբերի վերջերին հայ քանաստեղծը «եղբայրական գրույց է սկսում իր ազնիվ բարեկամի հետ»՝ պատասխանելով ընդարձակ մի նամակով, որտեղ վերլուծում է հայ-վրացական պատերազմը,

¹ «Ռուբիկոնի» թերթի գգալի մասը նվիրված է հայ մեծ քանաստեղծի հիշատակին՝ գծանկար, հուշագրություններ, երկու քանաստեղծություն, մահախոսական, ցավակցական հեռագրեր ընտանիքին և հայ ժողովրդին:

² **Րոծալոյց ճ.**, Օջանց Նաթելո // «Րոծոյցոն», 8 ձրոլո1923.

³ **Թումանյան Հովհ.**, նշվ. աշխ., հ. 2, Երևան, 1990, էջ 86:

⁴ Տե՛ս **Նաթոյց ճ.**, Լոյ Ֆրոլո Օջանց տղմանոն // «Նաթարոյցոլո», 1919, N 1:

դատապարտում ուժի կիրառումը հարևան ժողովուրդների միջև¹:

Նույն խնդրին լուծում գտնելու համար այդ օրերին վրացի մտավորականների հետ, որոնց թվում էր նաև Տաբիձեն, իր բնակարանում հանդիպման ժամանակ Թումանյանն ասում է. «Վերջապես, մենք՝ քանաստեղծներս, ավելի իրավունք ունենք մեր հաշտության ձայնը բարձրացնելու, երբ ժողովրդի արյունն է հոսում, քան իշխանությունները, որովհետև մենք ենք ժողովրդի կոչված ներկայացուցիչները, մե՛նք ենք, որ վշտանում ենք նրա տառապանքով և խնդում նրա ուրախությամբ»²:

1919 թ. փետրվարի 20-ին Տաբիձեն «Մաքարթվելո» թերթում շնորհավորում է Թումանյանի ծննդյան 50-ամյակը՝ այդ հոբելյանը համարելով «Կովկասի գրականության տոն և ժողովուրդների համերաշխության գաղափարների լավագույն ամրակայում», որի համար մարտի 10-ին նույն թերթի խմբագրությանը Թումանյանը շնորհակալություն է հայտնում. «Մրտագին շնորհակալ եմ «Մաքարթվելո»-ի շնորհավորանքների և բարեմաղթությունների համար, որ արել է իմ թանկագին ընկեր և բարեկամ Տիցիան Տաբիձեի միջոցով»³:

Թումանյանի մահվան առիթով գրած իր հուշերում Տաբիձեն դարձյալ անդրադառնում է իրենց ծանոթության, մտերմության հանգամանքներին, վրաց մտավորականության վրա Թումանյանի ունեցած ազդեցությանը և Անդրկովկասի ժողովուրդների հարաբերությունները խորացնելու ու նոր բովանդակություն հաղորդելու նրա գործուն ջանքերին: Նա հուշերի էջը փակում է հետևյալ պատկերավոր բնութագրումով. «Ես չեմ կարող պատկերացնել Հովհաննեսի կյանքի վերջին օրերը, բայց համոզված եմ, որ նա՝ բարձրահասակ, ճերմակահեղ և լուսեղեն դեմքով այդ մարդը, ով իր ամբողջ կյանքն անցկացրեց սիրո քարոզով, վերջին պահին էլ, վստահ եմ, իբրև աստվածային պատգամախոս, կյանքն ավարտել է հավերժ հավատարմության մասին խոսքերով, ինչպես Հովհաննես առաքյալը, որին վերջին անգամ աշակերտները դուրս բերեցին ժողովրդի առաջ, և նա, արցունքն աչքերին, ասաց. «Միրեցէ ք զմիմեանս»⁴: Ահա այսպես պատկերավոր ու գեղեցիկ է ներկայացնում Թումանյան մարդու և քանաստեղծի մեծությունը մեծ հոգու տեր վրացի բարեկամը:

Տաբիձեն վրաց գրողների պատվիրակության կազմում 1929 թ. հունիսին ժամանել է Հայաստան, շրջագայել, գրել քանաստեղծությունների շարք, որոնցից մեկը՝ «Իրականացավ երազանքը պոետների» խորագրով՝ նվիրված է Հովհ. Թումանյանին: Հեղինակը նշում է խորհրդային տարիներին հայոց աշխարհում կատարված առաջընթացի մասին և պարտավորվում գրչակից

¹ Տե՛ս **Թումանյան Հովհ.**, նշվ. աշխ., հ. 7, Երևան, 1995, էջ 374:

² Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 628:

³ **Թումանյան Հովհ.**, նշվ. աշխ., հ. 10, Երևան, 1999, էջ 307:

⁴ «Րաբոժոճնո», 8 մարտի 1923.

ընկերների հետ շարունակել բարեկամության, համերաշխության ու եղբայրական հարաբերությունների այն ավանդույթները, որ մեծ հաջողությամբ զարգացնում էր ինքը՝ Թումանյանը:

*Եղբայրներիս հետ եկել եմ ես էլ
Այս եղբայրությանն ասելու նոր խոսք,
Այն երգը, որ դու էիր սկսել,
Կշարունակենք այսօր ահա մենք¹:*

Հովհ. Թումանյանի մասին վրացի բարեկամներից իմաստալից և շատ կողմերով ուսանելի խոսք առաջինը հրապարակել է գրող, հրապարակախոս Սամսոն Փիրցխալավան (1872-1952): Անվանի գործիչը «գեղեցիկն ըմբռնող և գեղեցիկն արարող հզոր արվեստագետի»՝ Թումանյանի երկերում տեսնում է Հայաստանը, նրա պատմական դառն ճակատագիրը, ժամանակի ողբերգությունը, բնությունը, և հույսը լուսավոր ապագայի նկատմամբ:՝ Նա իր ընթերցողին հավաստիացնում է, որ Հովհ. Թումանյանը «մեր ժամանակի խոշորագույն բանաստեղծներից է, հայ ժողովրդի երդվյալ հավատարմատարը, նրա հոգևոր հարստության, նվիրական զգացումների ու իդեերի լավագույն արտահայտողը»: Ահա ինչու նա արժանացել է համաժողովրդական սիրո, իսկ «այդպես ամեն մի ժողովուրդ սիրում է իր ազգային կերպարը, իր անհատականությունը, իր ազնվությունը»:

Ս. Փիրցխալավան ավստոսանք է հայտնում, որ նման վառ անհատականության ստեղծագործությունները վրացի բանաստեղծներն ու գրականագետները թարգմանությունների կամ գոնե հողվածների միջոցով հանրության սեփականությունը չեն դարձրել, մինչդեռ վստահեցնում է, որ դրանով զգալիորեն կհարստացվեր վրաց գրականության գանձարանը և մեծ ծառայություն կմատուցվեր ազգային գրականության հարստացմանն ու վերածննդին:

Հակիրճ բնութագրումից հետո նա անցում է կատարում Թումանյանի՝ իբրև մարդու ազնվագույն նկարագրին, իբրև քաղաքացու նրա այն վիթխարի ջանքերին, որ նա գործադրել է հանուն հայ և վրաց ժողովուրդների վտանգված բարեկամությունը կարգավորելու գործին, և նշում է, որ նպատակին հասնելու համար նա արիաբար մարտնչում է գրչով ու գործով, հաճախ վտանգում կյանքը, որովհետև «հայ ժողովրդի վեհանձնագույն զավակը և վրաց ժողովրդի ամենասիրելի բարեկամը», առավել քան որևէ մեկը, քաջ գիտակցում է երկու ժողովուրդների համերաշխության ու ի վերուստ նրանց տրված պատմական առաքելության գինը: «Երբ սրվել են մեր և հայերի հարաբերությունները,– շարունակում է հեղինակը,– երբ մատնացույց են արել վրացատյաց հայերին (մի թե քիչ են հայատյաց վրացիները) և ասել, թե

¹ Գառնիկ Գ., Երկեր, Երևան, 1934, թ. 9-10.

միայն զենքը վերջ կդնի տարածայնություններին, իմ աչքի առջև հառնում է Հովհաննես Թումանյանի կերպարը, և ես կասեմ՝ ինչ էլ լինի, ինչ էլ պատահի, այդուհանդերձ, հնարավոր է մեր հաշտությունը»¹:

Վրաց մտավորականը ինքը ևս ջատագովում էր հայ և վրաց ժողովուրդների մերձեցման, կապերի վերականգնման ու խորացման գաղափարը՝ դա համարելով երկու երկրների քաղաքական ու մշակութային վերածննդի կարևորագույն գործոն: Այդ քայլերի անհապաղ իրականացումը նա անհրաժեշտ, պարզապես երանելի էր համարում, որովհետև Հայաստանն ու Վրաստանն ապրում էին անկախ կյանքով, մինչդեռ շրջապատված էին բազմաթիվ թշնամիներով, որոնք, բացահայտ կամ քողարկված, որոգայթներ էին հյուսում, գործադրում ամեն ջանք՝ զրկելու համար այդ երկրներին ձեռք բերված ազատությունից: Ահա թե ինչու, ամփոփում է մտահոգ գործիչը, «այսպիսի ժամանակ մեկմեկու ձեռք մեկնելը հույժ կարևոր է»:

Ի դեպ, այս կարգի հրապարակումը քաղաքացիական արիություն էր, եթե հաշվի առնենք այն կացությունը, որ երկու երկրների հարաբերություններում ստեղծվել էր 1918 թ. դեկտեմբերին, իսկ եղբայրասպան պատերազմի ավարտից հետո նոր-նոր հաշտության բանակցություններ էին ընթանում:

Հոդվածի տպագրությունից անցել է մեկ դար, բայց այն ուսանելի է հենց այժմ, քանզի ունի խորապես արդիական հնչեղություն: Վերջին տարիներին առանձին թերուսներ ցանկանում են սասանել բարեկամության դարավոր հիմքերը, օտարել բարեկամ ժողովուրդներին, բարեկամ երկրներին, բարեկամ մշակույթները և նույնիսկ բարեկամ մարդկանց: Մինչդեռ գրիչ վերցնող յուրաքանչյուր ոք երկու երկրների հարաբերությունների, նրանց արժեքների մասին նյութեր տպագրելիս, լինեն դրանք պատմական, գրական-մշակութային, տնտեսական, հոգևոր թե նյութական, պետք է դասեր քաղի համերաշխությունն ու բարեկամությունն այդքան կարևորած մեր մեծերից և չմոռանա նրանց պատգամները:

Չնայած լարված մթնոլորտին, այդուհանդերձ, ժամանակակիցների վկայությամբ Թիֆլիսում ամենուր՝ դրսում թե միջոցառումների ժամանակ, Թումանյանին ընդունում էին սիրով, պատկառանքով և ակնածանքով: Վկայենք մեկական օրինակ հայկական և վրացական մամուլից: «Հատկապես հիշում եմ, – գրում է Տ. Տաբիձեն, – Հովհաննես Թումանյանի հոբելյանական հանդեսը «Տարտո» թատրոնի դահլիճում: Հանդիսասրահը լեփ-լեցուն էր: Խոսք ասաց Պաոլո Իաշվիլին... Նրա խոսքից հետո դահլիճը երկար ժամանակ դորդում էր ծափողջուններից»²:

Արտակարգ ջերմ էր 1919 թ. մարտի 24-ի Ի. Գրիշաշվիլիի (1889-1965) կազմակերպած երեկոն, որտեղ բանախոսը «ողջույնի խոսք է հղում

¹ Գորցեալազա Ն., օջանյես տումանյանի // «Տախալո Տաքի», Թբիլիսի, 1919, N 467.

² Գաժոճյե Գ., օջանյես տումանյանի // «Րոբուզոն», 8 ապրիլ 1923.

Թումանյանին, որից հետո հասարակությունը հոտնկայս, որոտընդոստ ու երկարատև ծափերով է դիմավորում օթյակում երևացած Հովհաննես Թումանյանին»¹:

1919 թ. փետրվարի 15-ին Թիֆլիսում նշվում է վրաց ականավոր գրող, արձակագիր Դավիթ Կղիաշվիլի (1862-1931) գրական գործունեության 30-ամյակը: Թումանյանը հայ գրողների ընկերության և իր անունից ողջույնի խոսք է հղում հոբելյարին՝ նրան համարելով իր պսակավոր եղբայրը և այն ընտրյալներից մեկը, որը նույնիսկ մայրենի լեզվի ու գրականության հալածանքի օրերին բարձր է պահել վրաց ժողովրդի հոգևոր կարողության դրոշը: «Էսօր՝ Ձեր գրական գործունեության երեսնամյակի հոբելյանին, ես որպես Հայ գրողների ընկերության նախագահ՝ թե՛ ընկերության կողմից և թե՛ իմ կողմից ցնձագին ողջունում եմ և լիասիրտ մաղթում եմ, որ ավելի երկար ու ավելի բարձր թնդացնեք վրաց ազնիվ ցեղի սրտի խոսքը»²:

Բանաստեղծի հետմահու կյանքում հետաքրքրությունը նրա նկատմամբ ավելի է մեծանում, և Թումանյան գրողի ձայնը առավել լայն տարածում է գտնում վրացական իրականության մեջ: Դա տեղի է ունենում Թումանյանի ևս մեկ չափազանց լուսավոր բարեկամի՝ Բանաստեղծ Իոսեփ Գրիշաշվիլի կախարդանքով: Թումանյանական երկերը նա թարգմանում է Բանաստեղծի մահից մեկ տարի չանցած ժամանակում և լույս ընծայում ընդարձակ առաջաբանով³, որով անձիր ու անհուն, զարմանահրաշ ու խորախորհուրդ մի նոր աշխարհ է բացում վրաց գրասերի առջև: Այդ թարգմանությունները գնահատվում են բնագրին համարժեք: «Բանաստեղծ Իոսեփ Գրիշաշվիլին Հովհաննես Թումանյանի հարագատ կրկնակն է,– գրում է բժիշկ, գրող, գրականագետ, հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ Իվանե Գոմարթեին: – Նրա թարգմանությունը թարգմանություն չէ. նույն բնագիրն է: Երբ դուք կարդում եք Գրիշաշվիլի թարգմանությունը, ձեր առջև Հովհաննես Թումանյան վրացերեն երգիչն է, և համոզվում եք, որ այստեղ ոչ մի թարգմանություն էլ չկա, ինքը՝ Հովհաննես Թումանյանն է գրում վրացերեն»⁴:

Նույն առիթով Բանաստեղծ Ռևազ Մարգիանին (1916-1984) գրում է, որ ունեն սքանչելի թարգմանությունների հատորյակը, որի շնորհիվ վրաց ժողովուրդը սիրեց Հովհաննես Թումանյանին, որ շատերն են գրել և

¹ «Աշխատավոր», 26 մարտի 1919:

² Թումանյան Հովհ., նշվ. աշխ., հ. 10, Երևան, 1999, էջ 345:

³ Թումանյանի Թ., Ռեզուլտի նախընթաց. տարգմ. և ֆունկցիոնալ օ. Գրիշաշվիլի, Թբիլիսի, 1924, 135 թ.

⁴ Գոմարթեի Թ., Օրհանես Թումանյան // «Պատեր և ցեղեր», 1924, N 17, թ. 2-4.

ապագայում կրկին կգրեն, որովհետև, ըստ հայ և վրացի լավագույն մասնագետների այդ թարգմանությունները համարվում են նվաճում¹:

Թումանյանի երկերի վրացերեն թարգմանությունը սեղանի գիրք է դառնում: Բանաստեղծությունների, պատմվածքների, հեքիաթների ու քառյակների մի շարք գոհարներ այդ թարգմանության շնորհիվ ներառվում են վրաց դպրոցական և բուհական դասագրքերում:

Խոստուն փաստ է, որ, նշված անձանցից բացի, բանաստեղծին նվիրված ծանրակշիռ խոսք են ասել շուրջ հարյուր հեղինակավոր գործիչներ, իսկ ներբողագիրների թիվը հասնում է երկու տասնյակի: Նրանց գրվածքներում Թումանյանը հառնում է իբրև երևելի գրող, լուսեղեն հանճար, համակովկասյան փարոս, ճակատագրի ընտրյալ, հաշտության մարգարե, բարեկամության ռահվիրա, միշտ բարեհոգի, կենսախինդ, ներշնչող, համակրելի, լույս ճառագող ժպիտով:

Վերոգրյալին հավելենք բնորոշ ևս մեկ-երկու օրինակ: Հայտնի հասարակական գործիչ Իոսեփ Իմեդաշվիլին նրան բնութագրել է իբրև «արևի առաջին ճառագայթ, վաղորդյան թարմաշունչ սյուք, վաղ գարնանն արթնացած ձնծաղիկ, մանուշակի ժպիտ» և եզրափակել. «Ահա թե ով է ինձ համար Հովհաննես Թումանյանը»²: Դասական գրող Վասիլի Բարնովը (1856-1934)՝ «Իսանիի արշալույսը» վեպի հեղինակը, նրա մասին գրել է. «Թումանյանը միշտ հավատարիմ է իր դավանած սկզբունքներին ու գաղափարներին, և բացարձակապես հակասություն չկա նրա տեսական դրույթների ու գեղարվեստական երկերի միջև: Ավելին՝ սիրո, գեղեցիկի, բարու և ճշմարիտի արարումով ու քարոզով, խավարի դեմ լույսն առատ դարձնելու պայքարով Թումանյանը՝ քերթողների մեջ ամենակատարյալը, կապող օղակ է ժողովուրդների միջև»³:

Պատերազմի ու հաշտության հարցը, որ այնքան կարևորում էր Թումանյանը, միշտ գտնվել է նրա ուշադրության կենտրոնում: Այս ասպարեզում ծավալվող բանավեճերի հիմնական ծանրությունը վերցնելով իր վրա՝ նա ձգտում էր անարձագանք չթողնել վիճարկող կողմերին թշնամացնելու նպատակով բանավոր ու գրավոր բանասարկությունները, հասարակական երևույթների չարամիտ մեկնաբանությունները, կրքեր բորբոքող զանազան խնդիրների արծարծումը, ազգային մեծերի հասցեին արված հերյուրանք-գրպարտանքները և այլն:

1900-1910-ական թվականները փոթորկուն, խառը և բարդ ժամանակներ էին Անդրկովկասում՝ լի քաղաքական ողբերգություններով, ծավալվում էին

¹ **Մարցոսի Ռ.**, Կեմի Նալբանսիսի մեծագույն թարգմանիչ // «ლიტერატურული საქართველო», 19 სექტემბერი 1969.

² **Իմեդաշվիլի Ի.**, Վարդի թերթերից (տեսածը, զգացածը, խորհածը) // Ուղեցույց աստղը, Երևան, 1999, էջ 103:

³ **Նալբանսի Յ.**, տեղեկություններ, Թ. 10, Թբիლის, 1964, թ. 420.

հակաազգային քարոզներ, հրահրվում էին ազգամիջյան ընդհարումներ, սկիզբ էր առել պատերազմական իրավիճակ, խեղվել էր մարդկային հոգեբանությունը:

Դրկից երկրների շրջանում դա ավելի ակնառու դարձավ Վրաստանի անկախության հռչակումից մի քանի օր անց՝ 1918 թ. հունիսի սկզբից, երբ ակնհայտ դարձան մենշևիկյան կառավարության ղեկավարների նվաճողական նկրտումները: Նրանք նպատակադրվում են նոր տարածքներ յուրացնել, որոնց թվում նախատեսված էին գլխավորապես Լոռին և Բորչալուն: Սահմանային վեճերը խորանում են, հանգեցնում ռազմական ուժերի բախման, սկսվում են հայ բնակչության հալածանքները՝ կողոպուտ, առևանգում, կալանքներ, բնակիչների արտաքսում և այլ վայրագություններ:

Թումանյանի հոգսերը բազմապատկվում են: Նա ելքը տեսնում էր նախ՝ հայ և ռուս, ապա՝ հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը ամրապնդելու մեջ, համոզված, որ «մոտիկ հարևանը լավ է, քան հեռու բարեկամը»: Նա իր ամբողջ էությանմբ նվիրվում է սովյալ նպատակի իրականացմանը: Նրա կենսագրությանը շատ թե քիչ ծանոթ ընթերցողին հայտնի են գերմարդկային այն ճիգերը, որոնք նա գործադրել է հայ և հարևան ժողովուրդների գիտակցության մեջ այդ մտքերը խորացնելու և ամրապնդելու համար: Նա, ի դեպ, Հայաստանի և Վրաստանի ղեկավարներին հորդորում էր առաջնորդվել ժողովուրդների մեջ սեր ու բարեկամություն հաստատելու գաղափարով, որովհետև «մեզնից ամեն մեկս պիտի սիրենք մեր հարևանի ազատությունը ու աշխատենք նրա համար, պարզ գիտակցելով էն հավիտենական ճշմարտությունը, որ մեկի երջանկությունը պայմանավորվում է մյուսի երջանկությունով»¹:

Երբ պաշտոնյաների հետ բանակցություններում ջանքերը ցանկալի արդյունք չեն տալիս, մեծ մտածողը փոքր-ինչ փոխում է պետությունների ղեկավարների մասին արտահայտությունների տոնը. «Սրանց իշխողի, տիրողի հաստատուն դիրք է հարկավոր, էդ դիրքի համար փառք ու հաղթանակ է հարկավոր, փառք ու հաղթանակի համար կոտորած ու պատերազմ է հարկավոր, իսկ կոտորածի ու պատերազմի համար հարկավոր է ոչ թե ազատ խղճմտանքով, ինքնուրույն մտածող ու առողջ դատող մարդ ու ժողովուրդ, այլ միապաղաղ մի զանգված՝ անկամք և հնազանդ ու հլու ամեն հրամանի, նույնիսկ կոտորածի»²:

Հաշտեցման խնդրում վրացիներից Թումանյանին աջակցում էին առաջադեմ մի քանի մտավորականներ: Տ. Տաբիձեն, զգալով, որ «մեկ ուրիշի ձայնը չի հնչի և չի լինի այնպես ճշմարիտ ու հասկանալի, ինչպես լուսավորյալ բանաստեղծինն ու հայրենասերինը», և նկատի ունենալով Թումանյանի

¹ Թումանյան Հովհ., նշվ. աշխ., հ. 7, Երևան, 1995, էջ 374:

² Նույն տեղում, էջ 372:

բացարձակ հեղինակությունը Անդրկովկասում, նրան բաց նամակ է հղում՝ հաղորդակից դարձնելով իր մտորումներին և անհանգստությանը¹:

Վկայենք նաև Ս. Փիրցխալավային, որը «գեղեցիկն ըմբռնող և գեղեցիկն արարող հայ մեծատաղանդ բանաստեղծի» մասին գրում է. «Հայտնի է բոլորիս, թե խաղաղությունը վերականգնելու համար Թումանյանը որքան մեծ ջանքեր է թափում, ինչպես է արիաբար մարտնչում գրչով ու գործով, հաճախ ամեն պահ վտանգում կյանքը, որովհետև «հայ ժողովրդի վեհանձնագույն զավակը և վրաց ժողովրդի ամենասիրելի բարեկամը», առավել, քան որևէ մեկը, քաջ գիտակցում է երկու ժողովուրդների համերաշխության և ի վերուստ նրանց տրված պատմական առաքելության գինը»: Ըստ նրա՝ «այս պահին մեկմեկու ձեռք մեկնելը հույժ կարևոր է»²:

Այդուհանդերձ, Թումանյանը այդ ճակատում գրեթե մենակ էր: Ահա ինչ է գրում նրա մեկ այլ ժամանակակիցը՝ նշանավոր դրամատուրգ Շավա Դադիանին (1874-1959). «Երբ Վրաստանում և Հայաստանում իրար դեմ թշնամական ժանիքներ էին սրում, մտավորականության շրջանում Թումանյանի նման քչերը կային: Մենակ էր Հովհաննեսը. որք էր մնացել այս անվեհեր մարդն այն տխուր ու մռայլ օրերին՝ ժողովուրդների եղբայրության քարոզով... Սրտանց ցանկանում էիր, որ շատերն այդ որբի նման լինեին, նրա կողքին, բազմանային թե՛ մեզանում, թե՛ մեր յուրայինների մեջ, բայց այդ տխուր օրերին դա միայն երազել կարելի էր»³: Մեծ արվեստագետը գրել է նաև նրա կազմակերպչական ջանքերի, ծանրագույն իրադրություններից փրկության ելքեր գտնելու մասին:

Մենք համառոտակի անդրադարձանք վրացի գրողներից ու գործիչներից նրանց, ովքեր հանդիպել, մտերմացել, հաճախակի հավաքվել են բանաստեղծի հյուրընկալ հարկի տակ, խորհրդածել գրականության, արվեստի, Կովկասի ժողովուրդների անցյալի, ներկայի ու ապագայի մասին: Նրանք անջնջելի տպավորություններ են ստացել Թումանյանից և նրան գնահատել իբրև ժողովրդական հոգու վսեմ թարգմանի, մարդկային լավագույն հատկանիշներով օժտված հայրենասեր քաղաքացու՝ անմնացորդ նվիրված իր երկրին ու ժողովրդին:

Грачик Байрамян – Ованес Туманян – трибун армяно-грузинской дружбы

Среди великих представителей мировой литературы редко встречаются писатели уровня Туманяна, которые беззаветно посвятили свою жизнь благому делу установления гармонии, мира, любви и дружбы. Гений нашего народа, с ранней юности проживая в столице Грузии, проявлял неослабевающий интерес к этой стране, тщательно изучал быт

¹ Թաժօժք Ե. Ըօա Ֆերօլօ Օջանես ռումանիանս // «Տաթարտեցլօ», 1919, N 1.

² Գօրցնալազ Տ., Օջանես ռումանիանի // «Տաճալոճօ Տաթմե», 1919, N 467.

³ Ուղեցույց աստղը, էջ 93-94:

грузинского народа, питал к грузинам теплые чувства. Грузинские писатели и литературные деятели выражали свои искренние и добрые чувства в статьях, стихотворениях, эссе, письмах, воспоминаниях. Они писали о человеческом обаянии великого поэта, его нравственных тревогах, организаторских способностях, умении находить выход из сложнейших ситуаций, поэтому нам представляется значимым факт представления оценки армянской общественности грузинскими авторами.

Hrachik Bayramyan – *Hovhannes Tumanyan – an Advocate of Armenian-Georgian Friendship*

The great Armenian poet Hovhannes Tumanyan was always in close contact with Georgia. In his articles, the poet emphasized the great similarity of historical destinies of the Armenian and Georgian peoples and the unity of their national and public interests. He claimed that the representatives of the Georgian people always supported Armenia, and Armenians had been supporting Georgia for centuries. Concerning the clashes between the two neighbors, the great poet believed that the blame laid on the ruling circles whose interests often contradicted the interests of their own people and which played on the feelings of the crowd. Tumanyan collected various documentary materials related to the history of the Georgian people, translated them, conducted philological research, organized literary evenings, took part in all the events of the Georgian cultural life.

**ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՄԿՁԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. «ՇԵՇՏ» ԵՐԳԻԾԱԹԵՐԹԸ**

Բանալի բաներ – Խորհրդային Հայաստան, Վահան Թոթովենց, ՀՅԴ, «Շեշտ», երգիծանք, պարբերական մամուլ, գրականություն, արվեստ, գովազդ

Բոլոր ժամանակներում իշխանությունները, մանավանդ ամբողջատիրական, բռնապետական վարչակարգերը, գրեթե միշտ «առանձնահատուկ» վերաբերմունք են դրսևորել երգիծական մամուլի հանդեպ՝ կոշտ գրաքննության, պատիժների ու խոչընդոտների միջոցով: Նման դրսևորումների ենք հանդիպում նաև խորհրդային իրականությունն ուսումնասիրելիս, ուր մամուլը ենթակա էր քաղաքական խիստ վերահսկողության ու գրաքննության, որպեսզի չշեղվեր նյութի ընտրության՝ պետության սահմանած շրջանակներից: Ի սկզբանե խորհրդային իշխանությունների կողմից մամուլի քաղաքական հսկողությունն առավել կոշտ դրսևորում էր ձեռք բերում մանավանդ երգիծաթերթերի պարագայում:

Երգիծական մամուլի համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծվեցին, երբ խորհրդային հանրապետությունները ռազմական կոմունիզմից անցում կատարեցին նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ), որի ընձեռած հարաբերական ազատության պայմաններում ԽՍՀՄ-ում մեկը մյուսի հետևից սկսեցին հրատարակվել մասնավոր երգիծական պարբերականներ¹:

Խորհրդային երգիծական մասնավոր մամուլը ստեղծման պահից գտնվում էր ոչ միայն իշխանությունների քաղաքական ու գաղափարական հսկողության ներքո, այլև հաճախ հանդիպում էր անհաղթահարելի ֆինանսական դժվարությունների: Երգիծաթերթերի հրատարակիչները գերմարդկային ջանքեր են գործադրել դրանք հիմնելու և կայացնելու՝ խոչընդոտներով լի ճանապարհին:

Վրաստանի խորհրդայնացմանը հաջորդած՝ 1921 թ. ապրիլ-հունիս ամիսներին Թիֆլիսում Մաթևոս Դարբինյանի խմբագրությամբ լույս տեսավ խորհրդային առաջին հայալեզու երգիծական թերթը՝ «Կարմիր աքլոր»-ը: Ընդամենը ութ համար հրատարակվելուց հետո ՌԿ(Բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոն 1921 թ. հունիսի 16-ին որոշեց այն փակել, իսկ խմբագրին կալանավորել և դատական պատասխանատվության ենթարկել²: Երգիծաթերթն

¹ Տե՛ս Стыкалин С., Кременская И., Советская сатирическая печать 1917-1963, М., 1963, с. 16-17:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1187, թ. 8: Շարաթաթերթի մատենագիտական ցանկը տե՛ս

ու նրա խմբագիրն ակնհայտորեն «գերազանցել էին» կոմկուսի «շնորհած» ազատության չափը:

Խորհրդային Հայաստանում հրատարակվող պարբերականները տպագրում էին երգիծական բովանդակությամբ հոդվածներ, պատմություններ, ֆելիետոններ ու ծաղրանկարներ: Այդուհանդերձ, մինչև 1923 թ. հանրապետությունում երգիծական պարբերական չի հրատարակվել: Այստեղ երգիծական թերթ հրատարակելու առաջնության պատիվը պատկանում է հայ անվանի գրող և հրապարակախոս Վահան Թոթովենցին (1893-1938): Ինչպես նա 1936 թ. գրած ինքնակենսագրականում է ընդգծում, 1922 թ. սեպտեմբերին Նյու Յորքից վերադարձել է Երևան՝ «ոգևորված ու հավատով լի լավ օրերի նկատմամբ»¹: Սկզբում Թոթովենցը, որը խմբագրական աշխատանքի փորձառություն էր ձեռք բերել 1917-1918 թթ. Թիֆլիսում հրատարակվող «Հայաստան» թերթը խմբագրելիս, աշխատակցում էր «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթին:

Երգիծական պարբերականների հրատարակության հարցում պետության խրախուսանքին չարժանանալու մասին վկայություն կա նաև Վ. Թոթովենցի ինքնակենսագրականում: Խորհրդային ժամանակների իրողությունների համատեքստում, օրինաչափորեն, նա խուսափել է հիշատակել իր հրատարակած «Շեշտ» երգիծական պարբերականի մասին²: Խորհրդային գործիչների շրջանում տարածված երևույթ էր «խորհրդային քաղաքացու» ինքնակենսագրություններ գրելը, որոնցում իրենց կենսագրության՝ իշխող գաղափարախոսության տեսանկյունից ոչ նպաստավոր էջերը շրջանցվում էին կամ կեղծվում, իսկ կուսակցական-հեղափոխական գործունեությունը՝ շեշտադրվում և այլն:

Նախապատրաստական աշխատանքից հետո 1923 թ. հունիսի 3-ին Վ. Թոթովենցի խմբագրությամբ Երևանում լույս տեսավ Խորհրդային Հայաստանի անդրանիկ երգիծաթերթը, որի ամբողջական անվանումն էր՝ «Շեշտ. ժուրնալ ծաղր ու ծանակի մարդկանց յեվ ժամանակի»: Այն նախապես գրաքննության էր ենթարկվել և, ըստ գոյություն ունեցող կարգի, տպագրության թույլատվություն ստացել Լուսավորության ժողկոմատի քաղաքական լուսավորության գլխավոր վարչության կողմից, որին մինչև Հայաստանի «Գլավլիտի» կազմակերպումը վերապահված էր գրաքննական գործառույթը: Թերթը փոքրածավալ էր, ընդամենը՝ 4 էջ, առանց ծաղրանկարների ու գեղարվեստական ճոխ ձևավորման: Այն հրատարակվում էր գրական հայե-

«Կարմիր աքլոր» շաբաթաթերթի մատենագիտությունը, կազմ. և առաջաբանը՝ Բ. Գ. Մելյանի, խմբագիր՝ Ա. Ա. Խառատյան, Երևան, 1982, 32 էջ:

¹ Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան, Վահան Թոթովենցի ֆոնդ, գ. 370, թ. 5:

² Տե՛ս նույն տեղում:

րենով, սակայն համարներից մեկում տեղ է գտել «Նամակ Թիֆլիսից» խորագրով «Ջանն րեդակտոր» հոդվածը՝ Թիֆլիսի հյութալի բարբառով¹:

«Շեշտ»-ն իր աշխատակիցներին ըստ երևույթին հոնորար չի վճարել, թեև այդպիսի մտադրություն ունեցել է: Նրա վերջին համարում կարդում ենք. ««Մուրճ»-ի և «Շեշտ»-ի խմբագրությունները շուտով իրենց աշխատակիցներին հոնորար պիտի տան: Աչքները լույս աշխատակիցների»²:

Երգիծաթերթում հիմնականում տպագրվել են Վահան Թոթովենցը (նաև՝ «Արիս Տոֆան» ծածկանունով), Լեո Կամսարը, Գուրգեն Մահարին («Գուրիս» ծածկանունով), Էդուարդ Խոճիկը, «Այոզան-Ֆանը», «Վահրամ Անողոքը»: «Շեշտ»-ն իր արժեքը լավ գիտեր: Բաժանորդներին ուղղված գովազդում նշվում էր, որ այն «ձրի չի կարդացվում», և թերթի կոչումն է վերականգնել ընթերցողների ծիծաղի ախորժակը: Իսկ այնտեղ կարող էր տպագրվել յուրաքանչյուր ոք, ով «կարող է գրել յեթե լավ տեսնում ե»³:

Հայաստանի ազգային արխիվում ու Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում մեզ չի հաջողվել պարբերականի գրաքննության վերաբերյալ փաստաթղթեր գտնել: Չի հաջողվել պարզել նաև ընդամենը երեք համար լույսընծայումից (վերջինը տպագրվել է հուլիսի 23-ին) հետո «Շեշտ»-ի հրատարակությունն ընդհատելու իրական պատճառը, չնայած կարելի է ենթադրություններ անել՝ սկսած ֆինանսական խնդիրներից մինչև իշխանությունների բացասական դիրքորոշումը: Վերջին տարբերակն առավել հավանական է, քանի որ հոդվածագիրներին հոնորար վճարելուն առնչվող տպագրված տեղեկությունը վկայում է թերթի ֆինանսական համեմատաբար բարվոք դրության մասին: Այս հանգամանքը հավաստում է նաև այն, որ թերթի խմբագրակազմի համար անսպասելի է եղել պարբերականի հրատարակության դադարեցումը:

Ի տարբերություն «Շեշտ»-ի՝ նրան հաջորդող «Զուռնա»-ն կանխազգում էր իրեն սպառնացող փակվելու վտանգը՝ «ողորմած հոգի» «Շեշտ»-ի մասին գրելով. «Հորաքրոջս տղան, պատվական «Շեշտ»-ին ալ լույս տվիք, ու՞ր է անոր հետքը, խանութպանները անով սուճուխ փաթաթեցին յեվ ծախեցին, յեւ չեմ ուզեր, չեմ սիրե սուճուխ»⁴:

«Շեշտ»-ը առավելապես ընտրել էր անձերի և նրանց գործունեության միջոցով ժամանակը բացահայտելու մեթոդը: Այն իսկույն ևեթ շահեց ընթերցողի համակրանքը, առաջին համարի առաջնորդողում հայտարարեց, որ իր տարածած ծիծաղի հնչյունների ու երգիծանքի տողերի տակ պետք է տեսնել առօրյա կյանքի միանգամայն լուրջ մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծմանը հետամուտ էր: Այն հավակնում էր կյանքի բացասական

¹ Տե՛ս «Շեշտ», 8 հուլիսի 1923, թիվ 3, էջ 4:

² Տե՛ս նույն տեղում, էջ 3:

³ «Շեշտ», 3 հունիսի 1923, թիվ 1, էջ 4:

⁴ «Զուռնա», 1924, թիվ 1, էջ 3:

կողմերը ծաղրի ենթարկող «լուրջ թերթի» պատվին, որի կարիքը, ըստ պարբերականի, վաղուց զգացվում էր, և որը կկարողանար վիրահատության ենթարկել հասարակության մարմնի փտած մասերը: Թերթն իրեն համեմատում էր այն վիրաբույժի հետ, որի վիրահատական գործիքը ծիծաղն էր, իսկ վիրահատության ենթակաները՝ սրբերը, բարոյախոսները, անքննելիները, կեղծ հանճարները և այլն: Բժշկի բուժման միջոցներից մյուսն ապտակելն էր. նրա մի հարվածով կարող էր բուժվել ցանկացած հիվանդություն, ավելին՝ անմահություն շնորհել հիվանդին, սակայն «Ավետիս Ահարոնյանը պիտի պաղատեր մեկի տեղ՝ 100 ապտակ»¹:

Փաստորեն, առաջին իսկ նյութերով «Շեշտ»-ը հստակ ուրվագծել է իր ծաղրի ուղղությունները: Ինչպես սպասելի էր, նրա քաղաքական երգիծանքի հիմնական թիրախներից էին ՀՅԴ-ն ու դաշնակցական գործիչները, ինչպես դա պետք է լիներ նաև նրան հաջորդող «Ձուռնա» (1924) և «Կարմիր մոծակ» (1926-1927) երգիծաթերթերի պարագայում: Իշխանությունից հեռացած ՀՅԴ-ն դեռևս որոշակի հեղինակություն ուներ Խորհրդային Հայաստանի հասարակության տարբեր շերտերում, ինչը չէր կարող չանհանգստացնել իշխանություններին: ՌԿ(բ)Կ-ն և նրա բաղկացուցիչ մասը կազմող ՀԿ(բ)Կ-ն խնդիր էին դրել գաղափարապես ջախջախել և վերջնականապես կազմալուծել ՀՅԴ-ն²: Ահա թե ինչու Հայաստանի խորհրդային իշխանությունների իրականացրած առաջին ձեռնարկումների թվում կարևոր տեղ էր հատկացվում «հակախորհրդային տարրերի» և հատկապես ՀՅԴ-ի դեմ գաղափարաքարոզչական պայքարին, որը դրսևորվում էր ինչպես զանգվածային ամենատարբեր միջոցառումներով, այնպես էլ մամուլի և հրատարակվող «գաղափարական» գրականության միջոցով իրականացվող քարոզչությամբ: Առավել կամ պակաս չափով այդ խնդիրն իրենց առջև դրել են ՄՍԽՀ-ում հրատարակվող, կարելի է ասել, բոլոր պարբերականները: Այս ամենն առավել բնորոշ էր 1920-ականների առաջին կեսին, երբ հանրապետությունում դեռևս իրենցից որոշակի ուժ էին ներկայացնում դաշնակցական ընդհատակյա կոմիտեները:

1920-ականներին Խորհրդային Հայաստանում գիտական և գեղարվեստական ստեղծագործություններում վերագնահատումների, սուր քննադատության էին ենթարկվում, երբեմն նաև ծաղրի արժանանում XIX դարավերջի և XX դարասկզբի հայ ազգային-ազատագրական շարժումն ու նրա գործիչները: Դրա դրսևորումներից է Վ. Թոթովենցի հայտնի «Ոչ աստ-

¹ «Շեշտ», 3 հունիսի 1923, թիվ 1, էջ 1:

² Տե՛ս «Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)», պատասխանատու խմբագիր և կազմող՝ Վ. Ն. Ղազախեցյան, Երևան, 1999, «ՀՀ Դաշնակցությունը ԽՍՀՄ արտակարգ հանձնաժողովի և պետական քաղաքական վարչության գաղտնիթերթումներում (1920-ական թվականներ), փաստաթղթերի ժողովածու», կազմող և խմբագիր՝ Վ. Ն. Ղազախեցյան, Երևան, 2016:

վածային կոմեդիա. Օգսեն Սլկունի» երգիծական պատմվածքը, որը շարունակաբար տպագրվել է «Շեշտ»-ի երեք համարներում¹: Այստեղ մոայլ ու հոռետեսական գույներով է ներկայացված հայ ազգային կուսակցությունների՝ արևմտահայության ազատագրությանն ուղղված գործունեությունը: Ի դեպ, Վ. Թոթովենցը մինչ այդ նույնաբնույթ բովանդակությամբ՝ դաշնակցականներին ծաղրող, նրանց գործած ու չգործած բազում մեղքեր վերագրող ֆելիետոններ («Ֆաշիզմ-մաուզերիզմ», «Կավը չի փոխվում») էր հրատարակել «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթում²: Օգսեն Սլկունու կերպարը, փաստորեն, «Դոկտոր Բուրբոնյան» և «Կավը չի փոխվում» ստեղծագործությունների կերպարների երկվորյակն է³:

Վ. Թոթովենցի շնչով է տոգորված «Շեշտ»-ի գրեթե յուրաքանչյուր շեշտադրում: Ընդհանրապես նրա գրական ստեղծագործության չափազանց կարևոր մասը երգիծական ժառանգությունն է: Թոթովենցի կարծիքով՝ կոմիզմը յուրաքանչյուր գեղարվեստական գործի արևային երանգ է տալիս⁴: Նա գրել է երգիծական վեպեր, պատմվածքներ, ֆելիետոններ: Երգիծանքն առկա է նրա գրեթե բոլոր ստեղծագործություններում՝ դրսևորվելով կա՛մ իբրև նուրբ նկատողություն անող խայթոց, կա՛մ իբրև կոշտ սաստիքա: Թոթովենցը, փաստորեն, այն սակավաթիվ անհատներից է, որն ունակ էր և խիզախեց խորհրդային երկրում երգիծական պարբերական հիմնել:

«Շեշտ»-ի էջերից մեր առջև հառնում են գրականության, արվեստի ներկայացուցիչների կերպարները, նրանց գործունեությունն ու ստեղծագործությունները: Առավելապես երգիծանքի առարկա են լուսավորությունը, կրթությունն ու արվեստը: Թերթում ծաղրի են ենթարկվում Տիգրան Հախումյանը, Եղիշե Չարենցը, Ազատ Վշտունին, անգամ՝ լուսժողկոմ Ասքանազ Մռավյանը:

Ուշադրության արժանի է թերթի «Դեմքեր ու դեպքեր» հոդվածաշարը, որոնցից յուրաքանչյուրը մի հետաքրքիր անդրադարձ է հայտնի գրական-մշակութային գործիչների մասին: Հեղինակը կրկին Վահան Թոթովենցն է՝ տվյալ դեպքում «Արիս Տոֆան» կեղծանվամբ:

Առաջին համարի թիրախը երգահան Ռոմանոս Մելիքյանն է: Հեղինակի ուշադրությունը գրավել է այն փաստը, որ «Ռոմանոս» և «Ռոմանով» անվանումների միջև սոսկ մեկ տառի տարբերություն կա, իսկ առաջինի՝ երաժիշտ և երկրորդի՝ ցար լինելու միջև՝ ընդամենը «մի փոքրիկ թյուրիմացություն»: Նա Ռոմանոսին հակադրում է Մելիքյանին, որոնք ունեն աջակիցների մեծ, «հսկայական բանակներ, որոնք իրար նկատմամբ լցված են անավոր թշնամությամբ»: Ավելին, նրանց համեմատում է Առաջին աշխարհամարտում

¹ Տե՛ս «Շեշտ», 3 հունիսի 1923, թիվ 1, էջ 3, 16 հունիսի, թիվ 2, էջ 3, 8 հուլիսի, թիվ 3, էջ 3:

² Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 28 հունվարի, 29 ապրիլի 1923, թիվ 19, 89:

³ Տե՛ս **Արզումանյան Ս. Հ.**, Վահան Թոթովենց, Երևան, 1961, էջ 147:

⁴ Տե՛ս **Մանուկյան Մ.**, Վ. Թոթովենցի երգիծական երկերը // «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԿ, հասարակական գիտություններ, 1958, թիվ 7, էջ 17:

տարբեր ճամբարներում գտնված Ֆրանսիայի նախագահ Ռայմոն Պուանկարեի և Գերմանիայի ռազմական ուժերի ղեկավար Պաուլ ֆոն Հինդենբուրգի հետ՝ շեշտելով, որ բանակներից մեկը ի դեմս Ռոմանոս Մելիքյանի հրեշտակ է տեսնում, իսկ մյուսը՝ գազան: Այս երկու բանակներն էլ թյուրիմացության մեջ են. մեկը միայն Մելիքյանին է տեսնում, մյուսը՝ Ռոմանոսին: Ժողովուրդը, ըստ հեղինակի, ծափահարում է միայն Մելիքյանի երգերի կատարումները լսելիս, այնինչ Ռոմանոսը բեմից դուրս է մնում¹:

Հետաքրքրական է, որ հաջորդ համարում տպագրվել է իր մասին հրապարակված նյութի վերաբերյալ իբրև թե Ռոմանոս Մելիքյանի սրամիտ արձագանգը: «Հայկազյան բառարանի համար նոր մթերք» խորագրի տակ նա հարցրել է «մեկ ուրիշ գոհի»՝ «յես շեշտվեցի, իսկ դո՛ւ»: Զոհը գլուխը կախ, կարծես «Շեշտ»-ի սուրն իր վզին, պատասխանել էր՝ «դեռ ոչ»²:

«Դեմքեր և դեպքեր»-ի երկրորդ հերոսը ժամանակի հայտնի մարքսիստ գրականագետ Յուլակ Խանգադյանն է, ինչպես հեղինակն է նշում՝ «Հայ Բելինսկին» (Խանգադյանն այդ ժամանակ Երևանի համալսարանի հասարակագիտության ֆակուլտետի ղեկանն էր, այնուհետև՝ ռուս գրականության ամբիոնի վարիչը): Վ. Թոթովենցը նրա հանդեպ իր «չհարզանքն» է հայտնել՝ համեմատելով նրան ապտակի արժանի այն դեսպանների հետ, որոնց հետ խոսելիս հարկ է նկատի ունենալ այն բարեկամ պետությունը, որի անունից նրանք հանդես են գալիս:

Հիմնվելով եզրույթական հավատալիքների վրա, թե հոգին մահից հետո տեղափոխվում է մեկ այլ մարմին՝ հեղինակը նշում է. «Ինչու չհավատալ, վոր Բելինսկուն էլ քշել են դեպի աշխարհ՝ Յուլակ Խանգադյանի կերպարանքով»: Քիչ ուշ, սակայն, ափսոսում է, որ բնության անփոփոխ օրենքով ամեն ինչ մաշվում է, և ոչ մի առարկա ճիշտ նույնը չէ, ինչ որ էր մի վայրկյան առաջ: Այդ կերպ «Բելինսկին՝ Յուլակ Խանգադյաննալով մաշվել է, այնքան է մաշվել, որ դառել է մի պիծակ»³:

Այսպիսի համեմատությունը հայկական մամուլի համար նորություն չէր: Դեռևս 1921 թ. մարտին Երևանի «Ազատ Հայաստան» թերթում հրատարակած «Կրոնների պատմություն» ֆելիետոնում տաղանդավոր երգիծաբան Լեո Կամսարը դիպուկ ծաղրի է ենթարկում Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո հանրապետության ներքաղաքական իրավիճակը: Սոցիալ-դեմոկրատների, սոցիալիստ-հեղափոխականների, ՀՅԴ կուսակցությունում քաղաքական խմորումները (Հայ ժողովրդական կուսակցությունն ու հայ ռամկավարներն ընդհանրապես լռել էին), ճամբարափոխության դրվագները նա իր սուր գրչով համեմատում է վերամարմնավորման (ռեինկարնացիա) երևույթի հետ, որը տարածված էր հինարևելյան բազմա-

¹ Տե՛ս «Շեշտ», 3 հունիսի 1923, թիվ 1, էջ 1-2:

² «Շեշտ», 16 հունիսի 1923, թիվ 2, էջ 4:

³ Նույն տեղում, էջ 1:

թիվ կրոնական ուսմունքների մեջ («Աջ դաշնակցական մը կոմունիստ դառնալու համար նախ պիտի ձախ ըլլայ, յետոյ դառնայ ետև՝ Աջ դաշնակցութեանը, այսինքն՝ իր նախկին կերպարանքը հայիոյէ, ապա քայլերն ուղղէ դեպի կոմունիզմը»)¹: Այստեղ հեղինակին հաջողվել է յուրօրինակ ստեղծագործական հնարքի միջոցով վեր հանել ոչ միայն հասարակության քաղաքական համակարգում, այլև մարդկային հոգում տեղ գտած արատները:

«Դեմքերից» վերջինը ճանաչված գրող, դերասան ու հրատարակիչ, «Երևանի հայտարարություններ» թերթի (1883-1885) հիմնադիր-խմբագիր Էմին Տեր-Գրիգորյանն (1855-1939)² է, որի նկատմամբ վերաբերմունքն արդեն երևում էր Յ. Խանգաղյանին նվիրված հոդվածից, երբ Վ. Թոթովենցը «ինչուների» ցանկալի պատասխանները գտնելու անհնարինությունը ցույց տալու համար նշել է. «Յեթե ամեն մի «ինչու» կարելի լիներ բացատրել, մենք ավելի շուտ կբացատրեինք Էմին Տեր-Գրիգորյանի գոյության հանդեպ դրված հսկա հարցականը»³: Հեղինակը գրում է, թե Է. Տեր-Գրիգորյանի հետ կապված է մի հանելուկ. «Էմին Տեր-Գրիգորյանը յերբևիցե երիտասարդ յեղէլ է»: Այնուհետև պատասխանում է, թե, ի տարբերություն սովորական մարդկանց, որոնք ծերանալիս իրենց հոգում պահում են երիտասարդության նշույլներ, իսկ «մեկը, վոր յերիտասարդություն չի ունեցել յեվ միշտ ծեր է, նա երբեք էլ չի մեռնում»: Դրանով է բացատրում նրա՝ «ազգային հին կատակերգուի» ժամանակից դուրս ապրելը, իսկ նրա ստեղծած գրական ստեղծագործությունները բնորոշում է իբրև «վենետիկյան բանասերների նյութ», այն է՝ հնացած, ժամկետանց գրականություն: Է. Տեր-Գրիգորյանն իր հայտնի մտրուքով դիտարկվում է հնի, հին կարգերի խորհրդանիշ, և հեղինակը կարծում է, որ որևէ կերպ հնարավոր չէ նրան ժամանակակից համարել, որի հաստատումն են գրվածքի վերջին տողերը. «Արդյոք Էմին Տեր-Գրիգորյանը են գլխից իր հասցեն չի կորցրել և սխալմամբ մեր մոլորակի վրա ցատկել, յեթե վոչ ի՞նչ գործ ունի Էմին Տեր-Գրիգորյանը մեր երիտասարդ մոլորակում»⁴:

Խորհրդային Հայաստանում իրականացվող հակակրոնական, հակաեկեղեցական պայքարն արտացոլվել է նաև «Շեշտ»-ի էջերում: Թերթում տպագրված է Էդուարդ Խոճիկի «Մխիթարողը» չափածո առակը⁵, որը բացի այն, որ հոգևորականության արատները, վատ սովորությունները ծաղրելու հաջողված ստեղծագործություն է, վկայում է նաև Թոթովենցի և Խոճիկի գաղափարակից բարեկամներ լինելու մասին:

Երգիծաթերթում անդրադարձներ կան նաև հասարակությանը հուզող սո-

¹ «Ազատ Հայաստան», 10 մարտի 1921, թիվ 17:

² Տե՛ս **Նազարյան Ս. Ս.**, Երևանի պարբերական մամուլը (1880-1917 թթ.), Երևան, 1986, էջ 73-100:

³ «Շեշտ», 16 հունիսի 1923, թիվ 2, էջ 1:

⁴ «Շեշտ», 8 հուլիսի 1923, թիվ 3, էջ 1:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 2:

ցիալական, կենցաղային խնդիրներին: Դրանք հիանալի նյութ են Խոհրդային Հայաստանի առօրեականության պատմությունն ուսումնասիրելու տեսանկյունից: «Մարգար աղա» խորագրի տակ տեղադրված են մի քանի ուշագրավ գավեշտալի սրամտություններ, որոնց հերոսը՝ «աղա» հորջորջված Մարգարը, իրականում պարզ շառլատան էր: Նա տարբեր զանցանքների, խորամանկությունների միջոցով, զարտուղի ճանապարհներով փորձում էր շրջանցել խորհրդային իշխանության սահմանած ֆինանսական թակարդները¹:

Ամփոփելով նշենք, որ խորհրդային երկրում երգիծաթերթ հրատարակելը հանդգնություն էր: Երգիծաթերթերի տարածմանը համընթաց՝ ավելանում էին գրաքննական մարմինների ճնշումները, սահմանափակումներն ու արգելքները: Իրենց հերթին իշխանությունների պարտադրած թեմատիկ սահմանափակումներն ուղիղ համեմատական էին բնակչության շրջանում թերթի վաստակած հեղինակությանը: Կարճատև գոյությամբ պայմանավորված՝ «Շեշտ»-ը չհասցրեց լիովին կայանալ, այն է՝ առավել հազեցած բովանդակություն և արտաքին ձևավորման լրացուցիչ՝ երգիծանկարների բաղկացուցիչն ապահովել: Պարբերականի այդ «բացերը» հետագայում լրացրին Խորհրդային Հայաստանում հրատարակված հաջորդ՝ «Զուռնա» և «Կարմիր մոծակ» երգիծաթերթերը:

Нарине Ераносян, Амо Сукиасян – *Формирование сатирической прессы в Советской Армении: сатирическая газета «Шешт»*

Издание в советской стране сатирической газеты было дерзостью, поскольку газеты подвергались запретам и ограничениям со стороны цензуры. Тем не менее, 3 июня 1923 г. под редакцией Вагана Тотовенца в Ереване издается первая сатирическая газета Советской Армении – «Шешт». Объектом ее сатиры стало просвещение, искусство, духовность, некоторые социальные проблемы и политические темы. Было издано всего три номера газеты. В связи с недолгим существованием газета «Шешт» не успела полностью состояться и обеспечить компоненты сатиры – более насыщенное содержание и внешнее оформление. Однако газета сделала самое главное: стала точкой отсчета, от которой уже отталкивались последующие советские сатирические газеты Армении.

Narine Yeranosyan, Hamo Sukiasyan – *Formation of the Satirical Press in Soviet Armenia: the Satirical Newspaper “Shesht”*

Publishing a satirical newspaper in the Soviet Union was a courageous act because the press was under the restrictions and prohibitions imposed by the censorship bodies. Nevertheless, on June 3, 1923 the first Armenian satirical newspaper “Shesht” (“Accent”) was published by Vahan Totovents in Yerevan. The objects of his satire were enlightenment, education, art, the clergy, some social issues and political themes. Only three issues of the periodical were published. Due to a short existence, “Shesht” wasn’t fully established to provide a more saturated content and a design with caricatures. However, it became the starting point, at which further soviet Armenian satirical newspapers were established as a continuation.

¹ «Շեշտ», 16 հունիսի 1923, թիվ 2, էջ 4:

**THE IDENTITY AND THE PRESS OF DIASPORA
(EXAMPLE OF THE ARMENIAN PRESS OF LEBANON IN 1960S)**

Key Words – Soviet Armenia, Lebanon, press, identity, Diaspora, Diaspora identify, “Azdak” “Zartonk”, “Ararat”, party periodicals, Armenian community of Lebanon, homeland

Identity of the Diaspora

People begin to talk about national identity, or the issue of identity is raised when there is a risk of losing the identity but it has not been lost yet¹. The maintenance of the national identity is an everyday issue in the Armenian Diaspora. On one side, it is necessary to maintain the Armenian kind, but the morals and manners in an alien environment are different, which, if rejected may lead to social isolation. On the other hand you may put aside the nationality, the roots, live in accordance with the morals and manners of the country, adopt the new culture and integrate into the society. The third option may be the one described by P. L. Zekiyan: to play by the rules but without adopting them or not losing the unique image, or by changing some of the rules². Ultimately, the contacts with other ethnic communities are the source of the national mentality, through which the cultural traditions, customs and ideas are reevaluated³.

Let's agree that the Armenians having appeared in a foreign land cannot refrain from contacts, which gradually turn from a passive relationship into active ones and into the “exchange” of values. And the new generation grows carrying inside the both system of values, and depending upon the personality, family and environment one of them may have stronger impact and be passed over to the next generation with greater or lesser share.

When explaining the identity fluctuations of a person having appeared in a foreign land, G. Pltyan notes that “changing” the native implies the appearance of something different in the identity. According to G. Pltyan, the issue of the Diaspora identity cannot be addressed by a simple contraposition between native and alien. What was native becomes alien to become native again afterwards⁴.

¹ See **Պըլտեան Գ.**, Ինքնութեան փորձառութիւն Սփիւռքի մէջ // «Ինքնութեան հարցեր» տարեգիրք, Երևան, 2002, էջ 90:

² See **Զեքիեան Պ. Լ.**, Հայ ինքնութիւն // Նույն տեղում, էջ 42:

³ The relation between nations are also addressed by M. Margaryan: "The system of national values attains new content and meaning after communication with the universal human values and is expressed within the existence of personalities of various levels. As a result, it becomes a substratum that feeds the process of modernization of the personal and social identity". See **Մարգարյան Մ.**, Ազգային մտահայեցողություն և ինքնակառավարում // «Ինքնութեան հարցեր» տարեգիրք, 2002, էջ 58:

⁴ See **Պըլտեան Գ.**, նշվ. աշխ., էջ 104:

A question arises: whether it is necessary to differentiate the Diaspora identity of the Diaspora instead of the generalized national identity? It is a kind of hybrid which definitely includes several identities like the identity of ethnic origin and of the national environment, where the individual lives. Identity is not frozen, instead it is expanding, incorporating new values, which however are in harmony with the identity and complement it. According to S. Holly's definition, our identity is determined not only by the past, but also by the future, hence it is "a matter of "becoming" as well as of "being"¹.

According to observation of V. Sahakyan, the identity is a situational-dependent matter: in each environment the identity is expressed in unique form². For example, in any event organized by the Lebanese Government for its citizens, will it be an election or a meeting, the Armenian participates as a Lebanese as the adopted decisions will impact her/his civil activities. Meantime she/he attends the events organized for commemorating the victims of the Great Genocide as an Armenian. The splitting of the image of a person living in Diaspora is inevitable.

When speaking about the "Diaspora" phenomenon, the Armenian theoretician Kh. Tololyan identifies the idea of "multilocality" – the idea of living in or being associated with many places, when the Diaspora representative realizes that there is another place that is important, with which she/he is not physically but mentally associated³.

Giving priority to the formation of the first Diaspora generations which have "experienced" the disaster,⁴ it would be preferable to discuss the identity issues of Armenian Diaspora established in Lebanon after the Great Genocide and its reflection in the party press in 1960s.

The Issue of Identity Fragmentation on the Example of Lebanese Armenian Community

Like other countries, the Armenians were present in Lebanon before the Genocide. However, the great inflow has started after the disaster of the beginning of 20th century. Unlike other countries, the leadership of Lebanon provided free social, religion, cultural and educational life to Armenians. As a result, the organized formation of community social structures has started. It is not a matter of coincidence that the Lebanon, where the Diaspora had clear self-organized structures starting from schools to party clubs and where future clergymen, teachers, physicians and party activists for other Armenian colonies were prepared was considered as the Diaspora centre, or an attempt was made to make it such. However, even in Lebanon it is

¹ See **Hall S.**, Cultural Identity and Diaspora, Identity: Community, Culture and Difference. Jonathan Rutherford ed. London, 1990, p. 225.

² **Սահակյան Վ.**, «Փոփոխվող սփյուռքները. հայեցակարգեր և մոտեցումներ» ամսառային ծրագիր, Հայկական բարձրագույն կրթության նախաձեռնություն, ՀԱՀ, Երևան, հուլիսի 10-21, 2017:

³ **Թուրյան Խ.**, մաս 1 <https://www.youtube.com/watch?v=xvZ74kGxA5w> (audio material)

⁴ Considering the factor of Armenian Genocide of 1915-22, R. Cohen defines the type of Armenian Diaspora as a "victim diaspora". See **Cohen R.**, Global Diasporas: An introduction, Second edition, Taylor & Francis, 2008, p. 39.

difficult to speak about a common Diaspora identity or Lebanese Armenian identity. The separation based on party belonging, followers of Christianity branches, separation into the dwelling districts of Dashnak party [*Armenian Revolutionary Federation Party*], Ramgavar party [*Armenian Democratic Liberal Party*] or Hunchakyan party [*Armenian Social Democratic Party*], the differentiation by political orientation compel us to assume that in case of Lebanese Armenian Identity we again face the same fragmentation problem. Add to this the daily routine life in the Arab world, it would turn out that the Arab and Armenian identities in the Lebanese Armenians are indivisible.

Let us discuss the next chain link. The national identify for a person who appeared in the Lebanon is different from that of the person appeared in the US because of the alien who exists in her/him and the type of interrelations the between national and the alien. In addition, there was another more global segregation of identity – a “barrier” segregation. A Soviet identity was build up in the USSR and a Diaspora identity – in the Diaspora, for which the language, the culture and the Armenian Cause – “Haydat” were important. It looked like those identities counter balance each other in 1960s. Starting from 1960s the USSR has been building up the idea of “the Soviet Armenia is the motherland of each Armenian”¹.

The Press as an Expression of Multi-layer Identities

The disarrays in the Soviet Armenia, Diaspora and particularly in the life of Lebanese Armenians inevitably should have been reflected in the Armenian press of Lebanon in 1960s. The multi-layer identity of a Diaspora Armenian, in this specific case of a Lebanese Armenian, may also be seen in newspapers, and vice versa, it may be seen how the direct or indirect efforts of the press are trying to impact the formation of multi-layer identities or to attribute complexion to the identity conception.

One of the differentiations is made based on the party belonging or ideological orientation, which consequently implies differentiation during the attendance of educational, cultural, religion, youth and even sport events organized by a specific party. Naturally, “Azdak” of ARF, “Zartonk” of the ADLP and “Ararat” of the ASDP each presents the life of the Lebanese Armenian community mainly through the initiatives of their party schools, sport clubs and similar structures. It appears that the followers of each party ideology are independent bearers of identity developed on the basis of various values. It looks like the party newspapers dictate corresponding living style and disseminate it among readers through publications. By reflecting the real life of the bearers of “party identity”, the newspaper creates a standard sample making it an example for other bearers.

Another differentiation originates from the discrepancy in the perception of Soviet Armenia. Hunchaks and Ramgavars consider the Soviet Armenia in their press as the

¹ **Փանոսեան Ռ.**, «Ինքնությունների ձևավորումը հայրենիքներում և դրանցից դուրս» թեմայով դասախոսություն, «Փոփոխվող սփյուռքները. հայեցակարգեր և մոտեցումներ» ամառային ծրագիր, Հայկական բարձրագույն կրթության նախաձեռնություն, ՀԱՀ, Երևան, հուլիսի 10-21, 2017:

homeland and the center of Armenian people, meantime the Lebanese Armenians consider themselves as the direct observers of events occurring Soviet Armenia. Although not rejecting the existence of a homeland, “Azdak” of ARF sets a boundary between the Diaspora life and the socialist life of Soviet Armenia taking the status of mainly an outside observer-criticizers focusing on the idea of free, independent and unified Armenian nation, Armenian Diaspora and on the co-patriots not entrained by socialists ideology.

“Ararat” and “Zartonk” sometimes have addressed the routine and ceremonial activities of administrative structures of the SA (Soviet Armenia) trying to put the reader’s identity on the same plane with the identity of a person living in Armenia and even with the identity of a bearer of Soviet ideology or with the identity of the citizens of Soviet republics, abolishing the territorial barrier¹. However, the identification was made only among the “patriots of Armenia” of the Diaspora – those who accepted the Soviet system established in Armenia. The other side, which was identified with Dashnaks and was found as though being in conspiracy relations with imperialist countries against the Soviet Union² were left beyond the perimeter³. The Soviet Armenia was presented as an embodiment of the peace and hopes of oppressed people⁴, which again is the product of Bolshevik ideology. To some extent this may be seen as an outline of a pan-soviet citizenship, which is strongly criticized by the Dashnak newspaper stating that the Diaspora Armenians, who are the followers of Soviet ideology have also rejected the homeland, land, nation, history, and for them it makes no difference whether Karabakh is an Armenian or a Soviet land as it belongs to “the family of Soviet homelands”⁵.

Unlike “Zartonk” and “Ararat”, “Azdak” did not link the present and future of Armenian people with the Soviet Union and strongly condemned those who persuaded the Armenians of Armenia and Diaspora to admit the loss of independence and accept the idea of becoming a part of one empire⁶.

The fragmented identity of Diaspora Armenian comes from the different attitude and perception of the past and history, which stipulate the development of the identity and the issue of reflecting the nuances of identities in periodicals. Because of different

¹ For example: The best sons of Diaspora together with the progressive forces of foreign countries shoulder-to-shoulder were struggling heroically for the victory of ideology of Great October Revolution (Վանիկ, Հոկտեմբերեան Յեղափոխութեան Յիսնամեակին՝ Անտոն Քոչինեանի ճառին առթիւ // «Արարատ», 1967, թիվ 8, 24-ը նոյեմբերի):

² Անդրեասեան Ա., Հայկական դատին նոր հանգրուանը // «Արարատ», 1967, թիվ 273, 23-ը օգոստոսի):

³ “Azdak” uses the word “*hayastanaser* – the patriot of Armenia” - artificially imported from a foreign culture to specify 2 groups of people: one group, inspired by homeland nostalgia, ingenuously identifies the Armenia with current authorities. The other exploits the name of Armenia for the sake of powers, confess the Soviet as a goal subordinating to it the homeland and seeing the Armenia exclusively as a Soviet entity (Հայրենասերն ու «Հայաստանասեր»ը // «Ազդակ», 1963, թիվ 121, 26-ը հուլիսի):

⁴ Վանիկ, Հին ժողովուրդի նոր վերելքը // «Արարատ», 1967, թիվ 201, 8-ը հուլիսի):

⁵ Արմեն Ազատ, Հայաստանի եւ սփիւռքի հայութեան փոխ-յարաբերութեան մասին // «Ազդակ», 1963, թիվ 117, 22-ը հուլիսի):

⁶ Ընկ. Բ. Փափագեանի խօսքը Հ.Յ.Դ.ի 75ամեակին առիթով // «Ազդակ», 1965, թիվ 244, 18-ը դեկտեմբերի):

attitude of parties to the relations between ARF and Young Turks, to the issues of the creation of the first Armenian Republic, Sardarabat heroic battle, self-defence struggle, the Armenian Cause, “Zartonk” and “Ararat”, “Azdak” were speaking from their own positions compelling the readers to perceive their identity through party stereotypes. For example, Hunchak press completely neglects the role and the importance of the first Republic: “October gave us the statehood”¹, “In 1918-1920 Armenia had boundless tragic misery, epidemics, hunger, anarchy and terrorist despoty, but lacked simple “freedom”” ...². In concert with pro-Russian position, the Sardarabat and other historic events and the glory of victory was attributed to the Bolshevik army. Meantime the glory of self-protection struggle was attributed to Dashnaks, veiling the feebleness of some of its activists³.

However, when speaking about culture, Armenian national education and child education, the press did not manifest separatism. On one side, the newspapers presented the national values and great Armenian peoples, on the other side they promote the development of a consciousness of being the bearer of that heritage and of a national proudness.

In general all the three newspapers circulate the idea of a common nation, homeland and Armenian identity. Merely two of the newspapers see the life of that common homeland with the soviet administration, while the other struggles against it. As a result, the splitting of political orientations and of value perceptions among Diaspora Armenians cause the divergence of Soviet Armenia – homeland as well.

**Գայանե Ավագյան – Միյուոքյան ինքնությունը և մամուլը (1960-ական թթ.
լիբանանահայ պարբերականների օրինակով)**

Ազգային ինքնության պահպանումն ամենօրյա խնդիր է հայկական Միյուոքում: Միջավայրի ներգործությունը, այլ մշակույթի հետ շփումը անխուսափելի կնիք են թողնում անհատի ինքնության վրա: Ծագում է Միյուոքում ապրողի ինքնության տարանջատման անհրաժեշտություն: Միյուոքյան ինքնությունը ճկուն է, իրավիճակային, կարող է յուրաքանչյուր պահ դրսևորվել տարբեր կողմերով: Նույնիսկ Լիբանանում, որը 1960-ականներին Միյուոքի կենտրոն էր համարվում, դժվար է խոսել միասնական սփյուռքյան ինքնության մասին: Ազգային կուսակցությունների (ՀՅԴ, ՌԱԿ, Հնչակյան կուսակցություն) և համապատասխան կրթամշակութային կառույցների կազմակերպված գործունեությունը 1960-ականներին մի կողմից՝ նպաստում էր հայեցի դաստիարակմանը, ազգային արմատների պահպանմանը,

¹ Վանիկ, Հոկտեմբերեան Յեղափոխութեան Յիսնամեակին՝ Անտոն Քոչինեանի ճառին առթիւ:

² Անդրեասեան Ա., Հայկական դատին նոր հանգրուանը // «Զարթոնք», 1967, թիվ 275, 25-ը օգոստոսի:

³ See Ջադեթեան Գր., Դաշնակցական շէֆերի Հայաստանէն փախցուցած գումարները եւ հաշուետուութիւնը // «Զարթոնք», 1968, թիվ 122, 20-ը փետրվարի, Ադան Տարօնեցի, «Պատասխանատուները Տարօնի եղեռնին» // «Զարթոնք», 1968, թիվ 151, 26-ը մարտի, Վեզիրեան Թ., Մի քանի փաստեր խմբապետ Սեպուհի ազգադաւ գործունեութիւնից // «Զարթոնք», 1968, թիվ 78, 27-ը դեկտեմբերի:

մյուս կողմից՝ ընդգծված տարաձայնությունների և հակամարտության պատճառով հանգեցնում համայնքի ներսում խմբավորումների ձևավորմանը: Գաղափարական այս տարասեռումները կուսակցությունների պաշտոնաթերթերում («Ազդակ», «Զարթոնք», «Արարատ») 1960-ականներին վերածվում էին բանավեճերի, որոնցում ակամայից ներգրավվում էին ընթերցողները: Յուրաքանչյուրի լսարանի համար ընդունելի էր դառնում տվյալ թերթի դիրքորոշումը, ինչը, ի վերջո, ինքնության բազմաշերտ դրսևորումների առիթ էր դառնում:

Գայանե Աვაգյան – *Идентичность диаспоры и пресса (на примере армянских газет в Ливане 1960-х годов)*

Сохранение национальной идентичности является ежедневной проблемой армянской Диаспоры. Влияние среды, непосредственный контакт с иными культурами оставляет свой неизбежный след на идентичности человека. Поэтому возникает необходимость определить идентичность Диаспоры. Она гибкая, ситуативная, и может в любой момент проявиться тем или иным образом. Даже в Ливане, который в 1960-х годах считался центром армянской Диаспоры, сложно говорить о единой идентичности армян Диаспоры. Деятельность национальных партий (Армянская Революционная Федерация «Дашнакцутюн», Либерально-демократическая партия «Рамкавар Азатакан», Социал-демократическая партия «Դնչակ») и соответствующих учебных и культурных учреждений, с одной стороны, способствовала воспитанию в национальном духе, сохранению национальных корней, а с другой стороны – из-за явных разногласий приводила к формированию группировок внутри общины. Эти идейные различия переходили в дебаты на страницах официальных газет политических партий («Ազդակ», «Զարթոնք», «Արարատ»), в которые невольно вовлекались читатели. Позиция каждой газеты становилась приемлемой для ее аудитории, что в конечном итоге способствовало многоуровневому проявлению идентичности.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Բանայի բառեր – կանոնարկում, տրոհում, կետադրության օրինաչափություններ, շարահյուսական, հնչերանգային և տրամաբանական-իմաստային հիմունքներ, բանավոր խոսք, լեզվական փաստեր, ավանդույթ, զարգացում

Կետադրության ուսումնասիրությունը և կանոնարկումը հազիվ թե կարելի է բանասիրական գիտությունների առաջնային խնդիրներից մեկը համարել, սակայն անկասկած է, որ հարցի քննությունը գործնական կարևոր նշանակություն ունի գրական լեզվի մշակման ու կանոնարկման տեսանկյունից:

Գրավոր խոսքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ակնհայտորեն խզում է առաջացել սահմանված կետադրական կանոնների (կետադրության տեսության) և դրանց գործնական կիրառության միջև: Եվ հարցի քննարկումը արդիական է դառնում այնքանով, որքանով ընդհանուր մոտեցումներ սահմանելու դեպքում հնարավորություն կստեղծվի նախ՝ հրաժարվելու մի շարք անհարկի զուգաձևություններից, և հետո՝ հստակեցնելու որոշ կանոններ՝ լեզվակիրառողի համար ավելի դյուրին դարձնելով դրանց յուրացումը և գործածությունը:

Կետադրության հարցերը քննարկությունների առարկա են դարձել՝ վաղ միջնադարից սկսած: Փորձեր են արվել ճշգրտելու մասնավորապես տրոհության նշանների գործածության սկզբունքները: Գրական հայերենի նորմավորման շրջանում մասամբ կարգավորվեցին նաև կետադրության կանոնները: Արևելահայերենում դա կատարվեց ավելի կայուն սկզբունքների հիման վրա: Արևմտահայերենը որդեգրեց կետադրական նշանների գործածության ավելի ազատ մոտեցումներ, որոնք հիմնականում պահպանվեցին նաև արևմտահայերենի հետագա զարգացման ընթացքում: Արևելահայերենի նորմավորման ու մշակման հետագա ընթացքում կետադրության հարցերը մշտապես եղել են քննարկումների առարկա: Կանոնական քերականության գրքերում, դպրոցական և բուհական դասագրքերում ու ձեռնարկներում որոշակի հարցեր, կետադրական նշանների գործածության ինչ-ինչ յուրահատկություններ առիթ են տվել տարակարծությունների: Մի շարք դեպքերում էլ քննարկումների արդյունքում թե լռելյայն ընդունվել են զուգահեռ տարբերակներ:

Նոր ժամանակներում կետադրությանը նվիրված առաջին քիչ թե շատ ամբողջական ուսումնասիրությունն-ուղեցույցը **Ա. Ղարիբյանի** և **Գ. Պարիսի** հեղինակած աշխատանքն էր¹, որը փորձում էր որոշակի հանձնարարականներով և առաջարկներով կանոնավորել հայերենի կետադրությունը: Սակայն այդ փորձը ըստ էության չճատայեց իր նպատակին, նախ՝ որովհետև չհանրայնացվեց, չդարձավ մեծ լսարանին մատչելի, երկրորդ՝ զգալի էր ռուսերենի ազդեցությունը, և երրորդ՝ ուղեցույցը մասամբ է միայն անդրադառնում վիճելի գործածություններին և զուգաձևություններին:

Երկրորդ աշխատանքը, որը դպրոցական դասագրքերի սահմաններից դուրս քննության առարկա է դարձրել ժամանակակից հայերենի կետադրության հարցերը, **Գ. Գարեգինյանի** բուհական դասագիրքն է²: Սակայն և՛ շարահյուսական առանձին կառույցների առիթով, և՛ ընդհանրացված վերնագրի տակ ներկայացված կանոնները, նախ՝ միշտ չէ, որ հետևողականորեն են մատուցվում (դա երևում է նաև հեղինակային շարադրանքում տեղ գտած անհարկի տրոհումներից. ստորակետով առանձնացված են, օրինակ, պատճառի պարագան, որոշիչ-որոշյալ կապակցությունը և այլն), և երկրորդ՝ կետադրության նշանների գործածության շատ ու շատ մասնավոր դեպքեր առհասարակ չեն քննարկվում. սահմանված կանոններն առավելապես ընդհանուր-նկարագրական բնույթի են³:

Նույն հեղինակի ծավալուն հոդվածը նվիրված է կետադրության վիճելի դեպքերից միայն մեկին՝ այն շարահյուսական կառույցների կետադրությանը, որոնց բաղադրիչները կապվում են մենադիր **և, ու, կամ** շաղկապ-

¹ Տե՛ս **Ղարիբյան Ա., Պարիս Գ.**, Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց, Երևան, 1957:

² Տե՛ս **Գարեգինյան Գ.**, Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն, Երևան, 1984:

³ Նույնը կարելի է ասել հայերենի բուհական մյուս դասագրքերի մասին՝ **Իշխանյան Ռ.**, Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Երևան, 1986: **Գյուլբուդաղյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1984: **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու. պարզ նախադասություն, Երևան, 1987 և այլն: Նորմատիվ քերականության առանձին ձեռնարկներում նույնիսկ կետադրություն պահանջող կառույցների և իրողությունների քննարկումներում գրեթե անդրադարձ չի կատարվում կետադրական նշաններին: Օրինակ՝ իր բուհական ձեռնարկում **Մ. Ասատրյանը**, անդրադառնալով երկրորդական անդամների (հատկացուցիչ, բացահայտիչ, որոշիչ, հիմունքի, նպատակի պարագաներ և այլն) շարահյուսական նկարագրությանը, չի քննարկում դրանց կետադրության հարցը: Բերված օրինակներից ենթադրվում է, որ հեղինակը լռելյայն ընդունում է բնագրերում արտահայտված կետադրական զուգաձևությունները, ինչպես՝ «Հայրս գնաց բակատեղ կոչված հանդը՝ **տախտակ քաշելու**»/«Արահետից դուրս եկան, մտան թփուտները **մի քիչ հանգստանալու**», «Ըստ մեր **նախնական պայմանի** ձկների փորը տվեցի Բողարին»/«Ըստ **թուրքական սովորության**՝ երևելիները ծալապատիկ նստեցին գորգերով պատած հատակի վրա» (**Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1987, էջ 264-267):

ներով¹: Ըստ որում, հոդվածում տրվում են հանձնարարականներ, որոնց վերաբերյալ մասնագետների կարծիքը միանշանակ չէ:

Գ. Ջահուկյանի հոդվածներից մեկը նվիրված է հայերենի կետադրության պատմական հիմունքների քննությանը²: Այստեղ գուզահեռ քննարկվում են նաև կետադրության տեսական սկզբունքները՝ տրամաբանական-ինաստային, շարահյուսական և հնչերանգային: Կետադրական նշանների գործածության կոնկրետ դեպքերի և դրանց մասին եղած տարակարծությունների վերաբերյալ հոդվածում անդրադարձներ գրեթե չկան:

Առաջին համեմատաբար ամփոփ ուսումնասիրությունը **Ս. Աբրահամյանի** ուսումնական ձեռնարկն է՝ **Հ. Բարսեղյանի** խմբագրությամբ³: Այստեղ ներկայացվում են արդի հայերենի կետադրության ընդհանուր օրինաչափությունները, որոնց մի զգալի մասը զետեղված է եղել հեղինակի դպրոցական դասագրքում և տարիների «փորձառություն» անցել, իսկ մյուս մասը սահմանված է գրավոր խոսքում արտացոլված հիմնական օրինաչափությունների հիման վրա⁴: Ձեռնարկում, այնուամենայնիվ, չեն ներկայացվում առանձին օրինաչափություններ և կետադրության նշանների վերաբերյալ, այսպես կոչված, գործնական մանրամասնություններ, ինչպես, օրինակ՝ չակերտների գործածության խնդիրը մեջբերվող ուղղակի խոսքի դեպքում, երբ վերջինս միայնակ խոսք է և չի ենթադրում երկխոսություն: Կամ՝ խիստ համառոտ են ներկայացված հարցական նշանի գործածության կանոնները: Կան նաև կետադրության ձեռնարկներում և դասագրքերում զետեղված ընդհանուր նորմերից փոքր-ինչ տարբեր կանոններ ու մոտեցումներ, ինչպես, օրինակ, մեկնաբանությունները հրամայական բայաձևի և կրկնադիր համադասական շաղկապների պարտադիր շեշտադրության պահանջի վերաբերյալ: Սա ձեռնարկ է, որը տարիներ շարունակ հաջողությամբ ծառայել է լեզվակիրառողին՝ ուսուցիչներ, ուսանողներ, հրատարակչությունների աշխատողներ, բոլոր նրանց, ովքեր ցանկացել են տիրապետել հայերենի կետադրության ընդհանուր օրինաչափություններին:

Հայերենի կետադրությանը նվիրված ամբողջական և ամփոփ աշխատանքներ են **Ա. Սարգսյանի** կետադրական ուղեցույցը և **Հ. Ջաքարյանի** կետադրական բառարանը⁵, որոնք ունեցել են մեկից ավելի հրատարակու-

¹ Տե՛ս **Գարեգինյան Գ.**, Հայերենի կետադրության մի քանի վիճելի դեպքերի մասին // «ՊԲՀ», 1990, թիվ 2, էջ 159-173:

² Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայերենի կետադրության պատմական և տեսական հիմունքները // «Լրաբեր», 1990, թիվ 7:

³ Տե՛ս **Աբրահամյան Ս.**, Հայերենի կետադրություն, Երևան, 2002:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 2:

⁵ Տե՛ս **Սարգսյան Ա.**, Ժամանակակից հայերենի կետադրությունը (երկրորդ՝ վերամշակված հրատարակություն), Երևան, 2012, **Ջաքարյան Հ.**, Կետադրական բառարան (երկրորդ՝ լրամշակված հրատարակություն), Երևան, 2013:

թյուններ՝ յուրաքանչյուր անգամ մշակվելով ու համալրվելով նոր մեկնաբանություններով:

Ա. Սարգսյանը հակված է առավել կարծր սկզբունքների և այդ ոլորտի առավել խիստ նորմերի սահմանման: Այդ իսկ պատճառով առանձին իրողությունների վերաբերյալ նրա ուղեցույցում սահմանվում են խիստ պայմանադրական կանոններ, որոնք երբեմն անհատական մոտեցման արգասիք են:

Հ. Ջաքարյանը կողմ չէ այդ նույն սկզբունքների կարծրացման և փորձ է արել ստեղծելու հայերենի կետադրության նկարագրության ու կանոնների այնպիսի մի տեղեկատու, որը հնարավորություն է տալիս ծանոթանալու նաև գործող զուգաձևություններին և տարբերություններին՝ դուռ բացելով նաև լեզվակիրառողի նախընտրությունների առաջ:

Արևելահայերենի կետադրությանը նվիրված համակողմանի աշխատանք է նաև **Սահակյանների** հրատարակած «Ժամանակակից հայոց լեզվի կետադրություն» ուսումնասօժանդակ ձեռնարկը (Երևան, 2010), որը կառուցվածքային, մասամբ նաև կանոնները սահմանելու և մոտեցումները ձևակերպելու առումով վերարտադրում է Ա. Սարգսյանի աշխատասիրության դրույթները. սկզբնապես կանոնները բացատրվում և սահմանվում են նախադասության կառուցվածքային տիպերի տեսանկյունից (պարզ և բարդ նախադասությունների կետադրությունը), ապա դրանք ներկայացվում են ըստ կետադրական նշանների տեսակների (տրոհության, առգանության և բացահայտության նշաններ): Հեղինակները, իրենց վկայությամբ, փորձել են հանգամանորեն ներկայացնել արևելահայերենում գործող կետադրության հիմնական կանոնները. ի մի են բերվել, համադրվել և զուգադրվել մասնագիտական գրականության մեջ, այդ թվում նաև դասագրքերում ու ձեռնարկներում արտահայտված կարծիքներն ու դիտարկումները: Աշխատանքում ներկայացված են նաև գործնական վարժություններ և համր բնագրեր: Կետադրության կանոնների սահմանման և ուսուցման առումով առաջնային է համարվել «շարահյուսության դերը», և իհարկե չեն անտեսվել իմաստային և հնչերանգային գործոնները¹: Ամփոփ շարադրանք լինելով հանդերձ՝ ձեռնարկը հասկանալի պատճառներով հանգամանորեն չի անդրադարձել կետադրական նշանների առանձին գործածությունների վերաբերյալ տարակարծություններին, իսկ որոշ դեպքերում էլ ներկայացվել են ընդունված տեսակետներից շեղվող և կամ, մեր տպավորությամբ, խստորոշ կանոններ:

Կետադրության հարցերը քննարկման առարկա են դարձել նաև այլ աշխատանքներում²: Դրանք, սակայն, կա՛մ նվիրված են մասնավոր խնդիրների

¹ Տե՛ս **Սահակյան Վ. Ա., Սահակյան Վ. Վ.**, Ժամանակակից հայոց լեզվի կետադրություն, Երևան, 2010:

² Տե՛ս **Մխիթարյան Հ.**, Հայերենի կետադրության համառոտ պատմություն, Երևան, 1972: **Թոխմախյան Ռ.**, Ժամանակակից հայերենի շեշտաբանությունը, Երևան, 1983, **Դարբինյան Մ.**,

քննությանը, կա՛մ առավելաբար կրկնում են ներկայացված մասնագիտական գրականության մեջ քննարկված նյութը: Միօրինակ չէ վերաբերմունքը առանձին զուգաձևությունների և կետադրական մի շարք իրողությունների վերաբերմամբ:

Նախորդ դարի 90-ականներին Գ. Գարեգինյանը, քննարկելով հարցը, խիստ կարևոր ու հրատապ խնդիր էր համարում միասնական ու կայուն կետադրական համակարգ ունենալը, և դրա չգոյության հիմնական պատճառ էր նկատում տեսական և գործնական քննարկումների պակասը: «Այս վիճակը հիմնականում արդյունք է այն բանի, – գրում է նա, – որ հայ քերականագիտության մեջ դեռևս բացակայում է որևէ քիչ թե շատ լուրջ ուսումնասիրություն՝ նվիրված ժամանակակից հայերենի կետադրության տեսական և գործնական խնդիրների քննարկմանն ու մշակմանը: Փաստորեն կետադրության, հաճախ խիստ բարդ ու խրթին, հարցերը այսօր ըստ էության կանոնավորվում են սոսկ դպրոցական շարահյուսության դասագրքերում ցրված կանոններով ու բացատրություններով, որոնք, հասկանալի պատճառներով, արտացոլում են սոսկ կետադրական նշանների հիմնական կիրառությունները, այն էլ ամենահիմնական գծերով միայն: Մինչդեռ բավական մեծ թիվ են կազմում այն շարահյուսական կառույցները, որոնց բաղադրիչների կետադրությունը կարգավորելու համար բացակայում են համապատասխան կանոններ ու հանձնարարականներ, առանց որոնց անհնարին է ժամանակակից հայերենի կետադրության կուռ ու միասնական համակարգ ստեղծել»¹:

1990-ականներին հաջորդած տասնամյակներին, ինչպես տեսանք, հարցի վերաբերյալ ստեղծվել է հարուստ գրականություն, հայերենի կետադրության շատ սկզբունքներ մշակվել ու կանոնարկվել են: Սակայն շատ խնդիրներ էլ տակավին մնում են չլուծված: Առանձին կանոնների վերաբերյալ կան էական տարակարծություններ և չհամընկնող հանձնարարականներ: Դրանց առկայությունը մասամբ արդյունք է անհատական մոտեցման և մեկնաբանությունների, մասամբ էլ որոշ կանոնների ոչ բավարար մշակվածության, ինչպես նաև գրական գրավոր լեզվում գործող օրինաչափությունների անտեսման, որը իր հերթին խզում է առաջ բերում կետադրության տեսության և գործնական կիրառության միջև:

Քննարկումները չեն դադարում: Քանի որ նշված խզումը շարունակվում է:

Կետադրության օրինաչափությունները սահմանելու համար ընդունված է առանձնացնել երեք հիմնական գործոն կամ հիմունք՝ ա) **տրամաբանա-**

Ժամանակակից հայոց լեզու. կետադրություն, Երևան, 1990, **Կատվայան Վ.**, Ուղղագրական և կետադրական ուղեցույց, Երևան, 1992, **Դավթյան Յու.**, Հայերենի կետադրության ինքնուսույց, Երևան, 1995, **Թորոսյան Ա.**, Հայերենի կետադրությունը (ուսումնասօժանդակ ձեռնարկ), Երևան, 2004 և այլն:

¹ **Գարեգինյան Գ.**, նշվ. աշխ., էջ 159:

կան-իմաստային. կետադրությունը թելադրվում է շարադրանքի բովանդակությանը՝ մտքերը ճշգրիտ արտահայտելու հանգամանքով, բ) **շարահյուսական.** կետադրությունը թելադրվում է շարահյուսական հարաբերություններով, նախադասության կառուցվածքով, գ) **հնչերանգային.** կետադրությունը թելադրվում է բանավոր խոսքի հնչերանգային առանձնահատկություններով, ծառայում է բանավոր խոսքի հնչերանգային յուրահատկությունների դրսևորմանը գրավոր խոսքում¹:

Գ. Ջահուկյանը որոշ վերապահությամբ է անդրադառնում այս կարծիքին՝ նկատելով, որ ներկայացվող երեք հայեցակետերը ավելի ճիշտ կլինի դնել ոչ թե կողք կողքի, այլ դիտարկել ստորադասական հարաբերության մեջ. «...Նախադասության հնչերանգային կառուցվածքը,– գրում է նա,– կապված է նրա շարահյուսական կառուցվածքի և վերջին հաշվով արտահայտվող բովանդակության (մտքերի, կամքի, զգացմունքի) բնույթի հետ»²: Այլ կերպ ասած՝ Ջահուկյանի տեսակետով՝ տեքստի բովանդակային բաղադրիչները՝ միտքը, կամքը, զգացմունքն են ի վերջո որոշում կետադրական այս կամ այն նշանի (չ)գործածությունը, և մյուս հիմունքները ըստ էության ստորադասվում են այս հիմնական սկզբունքին:

Այս փոխապայմանավորվածությունը համոզիչ է, սակայն բոլոր պարագաներում չէ, որ դա հստակ գործում է, իսկ առանձին դեպքերում պարզապես դժվար է բովանդակային սկզբունքի կամ պատճառաբանվածության անպայման արձանագրումը: Օրինակ՝ «Սարերից իջնող ջրերը վարարում են կեսգիշերին աղմկում խոր ձորերում» նախադասությունը կարող է կետադրվել երկու տարբերակով. երկու դեպքում էլ կետադրությունը հաստատապես պատճառաբանվում է երեք հիմունքներով՝ 1. «Սարերից իջնող ջրերը վարարում են կեսգիշերին, աղմկում խոր ձորերում», և 2. «Սարերից իջնող ջրերը վարարում են, կեսգիշերին աղմկում խոր ձորերում». տրամաբանական-իմաստային հիմունքի առկայությունն ակնհայտ է (մի դեպքում՝ ջրերը վարարում են կեսգիշերին, մյուս դեպքում՝ կեսգիշերին աղմկում են), և դա պայմանավորում է նաև շարահյուսական որոշակի կառուցվածք, որն էլ իր հերթին ենթադրում է հնչերանգով որոշակիորեն տարբերակվող երկու կառուցվածքներ՝ դադար, որը գրավոր խոսքում արտահայտված է ստորակետի այս կամ այն դիրքով:

Կամ՝ խոսքում շարահյուսական տրոհված կառույցները անպայման պահանջում են հնչերանգային համապատասխան «վերաբերմունք» և ըստ այդմ՝ նաև համապատասխան կետադրություն. ինչպես՝ «Գիտեմ, վերադառնալու է» և «Գիտեմ՝ վերադառնալու է»: «Մի՛ գնա, ձա՛յն տուր, թող գա» և «Մի՛ գնա ձա՛յն տուր, թող գա»: Բայց հակառակը չենք կարող պնդել. հնչերանգա-

¹ Տե՛ս Բозента́ль Д., Теленкова М., Справочник лингвистических терминов, М., 1972:

² Տե՛ս Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 76:

յին դադարը կամ ելնէջումը միշտ չէ, որ կարող է ունենալ կետադրական «արտահայտություն», օրինակ՝ «Գործարքը չկայացավ (դադար) կողմերի անհամաձայնության պատճառով», «Հեռավոր իններորդ դարում (դադար) Բագրատունյաց շքեղակառույց Անի մայրաքաղաքում (դադար) մի ճարտարապետ էր ապրում»: Համակատար դերբայով ձևավորված դերբայական դարձվածը արտասանվում է զգալի դադարով, սակայն չի տրոհվում. «Իր կյանքի անհաջողությունների մասին ամենուր և ամեն տեղ պատմելիս (դադար) նա սովորաբար մոռանում էր հիշատակել իր մեղքի բաժինը»¹:

Կամ՝ կետադրության այս կամ այն նշանի գործածությունը կամ առկայությունը կարող է պայմանավորված չլինել շարահյուսական կառույցի յուրահատկություններով: Օրինակ՝ վերաբերականների տրոհության դեպքում կետադրություն դնել կամ չդնելը. «Մենք իհարկե մեկնելու ենք»/«Մենք, իհարկե, մեկնելու ենք», կամ՝ կոչականի վրա ըստ հնչերանգի շեշտի կամ բացականչական նշանի գործածությունը. «Վահա՛ն, ես սպասում եմ քեզ»/ «Վահա՛ն, ես սպասում եմ քեզ»: Թեև այս երկու դեպքում ակնհայտ է տրամաբանական-իմաստային և հնչերանգային հիմունքների ազդեցությունը:

Եվ վերջապես, առանձին դեպքերում կարծես թե չեզոքանում է նաև տրամաբանական-իմաստային հիմունքի դերը: Այսպես՝ վերջադաս կարճ ուրիշի ուղղակի խոսքը կետադրվում է երկու տարբերակով՝ առանց չափերտների կամ միջակետով և նոր տողից գծիկով, ինչպես՝ *Պատասխանեց կգամ:*

Պատասխանեց.

– *Կգամ:*

Հազիվ թե կարելի է պնդել, որ կետադրական այս զուգաձևությունը հենվում է տրամաբանական-իմաստային հիմունքի վրա:

Վերն ասվածը, կարծում ենք, հիմք է տալիս եզրակացնելու, որ կետադրությունը պայմանավորող նշված երեք հիմունքների կամ հայեցակետերի կողք կողքի գոյությունը ունի իրավունք և պատճառաբանված է այնքանով, որքանով կան կետադրական նշանների գործածության որոշակի նորմեր, որոնք, այնուամենայնիվ, պայմանավորված են սահմանված հիմունքներից մեկով կամ մյուսով, իսկ թե որքանով են հիմունքները ստորադասվում միմյանց, դա քննարկման առարկա պիտի դառնա քերականական այն կա-

¹ Նույն կառույցում էթե համակատարը փոխում ենք անորոշ դերբայի գործիական հոլովով, որը հանդես է գալիս շարահյուսական նույն գործառնություն (ժամանակի պարագա), ապա տրոհվում է. «Չայներ լսելիս լարեց լսողությունը» / «Չայներ լսելով՝ լարեց լսողությունը»: Երկու դեպքում էլ առկա է արտասանական զգալի դադար: Ըստ որում, այս հանգամանքը հաշվի առնելով՝ որոշ լեզվաբաններ առաջարկում են տրոհել նաև համակատարով կառույցները: Մեր կարծիքով՝ դա կարող է կետադրական նշաններով անհարկի ծանրաբեռնել խոսքը:

ռույցների պարագայում, որոնցում դա հստակ դրսևորումներ ունի և պայմանավորում է կետադրությունը:

Մասնագիտական գրականության մեջ մեզանում հակում կա կետադրության կանոնները սահմանելիս առաջնորդվել առավելապես շարահյուսական հիմունքով և կանոնները ձևակերպել՝ հենվելով շարահյուսական օրենքների ու օրինաչափությունների վրա: Եվ հետևաբար, ինչպես իրավացիորեն նկատվել է, հայերենի կետադրությանը լավ տիրապետելու համար լեզվակիրառողից պահանջվում է այդ օրենքների ու օրինաչափությունների անսխալ իմացություն: Ավելին, կետադրության առանձին հանձնարարականներում ավելի ու ավելի են մասնավորեցնում այդ օրենքները կամ դրանցից ածանցվող բացառությունները այն աստիճան, որ երբեմն նույնիսկ մասնագիտական կրթություն ունեցողների համար լուրջ դժվարություններ են ծագում անսխալ կետադրությամբ խոսք շարադրելիս: Իսկ սովորական՝ շարքային լեզվակիրառողի համար հայերենի կետադրությանը բավարար չափով տիրապետելը դառնում է դժվարին գործ: Եվ ուստի բնականոն հարց է ծագում. հարկ կա՞ արդյոք այդպես և այդչափով ուռճացնելու հայերենի կետադրական կանոնների զամբյուղը, եթե գործադրվող կետադրությունը չի խաթարում խոսքի բովանդակային կառույցը և հայերենի շարահյուսական նորմերը: Արևմտահայերենը ունի կետադրական նշանների գործածության անհամեմատ ազատ համակարգ, բայց դրանով հանդերձ՝ մեր լեզվի այդ տարբերակով գրավոր հաղորդակցումը փոխադարձ ըմբռնման դույզն դժվարություն չի ունենում: «Կետադրական կանոնների մշակման ժամանակ, – գրում է Գ. Զահուկյանը, – անհրաժեշտ չափով հաշվի չեն առնվում, ժամանակակից որոշ լեզվաբանների տերմինաբանությամբ ասած, «խոսողի քերականության» և «լսողի քերականության» տարբերությունները: Եվ իրոք, ո՞ւմ շահերից է ելնում հայերենի կետադրության արդի համակարգը՝ գրողի՞, թե՞ ընթերցողի, ուզում է հեշտացնել գրողի՞, թե՞ ընթերցողի գործը: Մեր կետադրության կանոնները մշակողները կարծեք թե այս հարցի մասին ընդհանրապես չեն էլ մտածում: Եթե նկատի ունենանք, որ մի կողմից՝ խիստ կանոնարկված և մանրամասնված կետադրությունը դժվարացնում է գրողի գործը և որոշ չափով կաշկանդում ընթերցողին, գեղարվեստական երկի գրման, ընկալման և վերարտադրության ժամանակ թուլացնում երևակայության և ստեղծագործության դերը, մյուս կողմից՝ պակասավոր կետադրությունը դժվարացնում է ընթերցողի կողմից տեքստի ճիշտ ընկալումը, ապա կհանգենք այն պարզ եզրակացությանը, որ պետք է ընտրել ոսկե միջինը, թույլ տալ կետադրության որոշ ազատություն, միջոցների ընտրության հնարավորություն»¹: Կետադրության կանոններից օգտվողներին հաճախ չեն հետաքրքրում կետադրական կանոնների տեսական հիմնավորումներն ու

¹ Զահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 77:

մանրամասնությունները: Դրանք կիրառողի համար պետք է լինեն հնարավորին չափով մատչելի¹:

Վերջապես, հայերենի կետադրության կանոնները մշակելիս հաճախ օրենսդիրները փորձում են ելակետ ունենալ գեղարվեստական գրականության լեզուն, երբեմն նույնիսկ իբրև վկայություն են բերվում միայն հայ դասական գեղարվեստական գրականության կետադրական փաստերը, կամ համոզականության հիմնական գրավական է համարվում հղումը գեղարվեստական գրականության փաստերին: Կետադրությանը նվիրված ձեռնարկներից մեկի ծանուցման մեջ կարդում ենք. «Յուրաքանչյուր կանոն փաստարկված է հայ դասական ու ժամանակակից գրականությունից և դասագրքերից բերված օրինակներով»²:

Հայերենի կետադրության առանձին օրենսդիրներ չեն կարողացել հաղթահարել դասական գեղարվեստական գրականության կետադրական փաստերի ուժեղ ազդեցությունները և անհրաժեշտ հիմնավորումներ չգտնելով՝ պարզապես մեջբերումներ են կատարում գեղարվեստական գրականությունից՝ կետադրական նորմերից կատարված շեղումները իբրև նորմեր ներկայացնելու համար: Հայտնի է, սակայն, որ գեղարվեստական լեզուն խստորեն նորմավորված լեզու չէ և չի էլ կարող այդպիսին լինել. կետադրությունը գրողի համար նախ և առաջ բովանդակային-արտահայտչական միջոց է գեղարվեստական կատարելության հասնելու ճանապարհին: Իհարկե, գրական լեզվի կետադրության «օրենսդիրները» չեն կարող շրջանցել տվյալ ժամանակաշրջանի գեղարվեստական լեզվի փաստերը, բայց միևնույն ժամանակ դրանք չեն կարող «արժանահավատ» և միակ աղբյուր դառնալ կետադրության նորմերը սահմանելիս: Հակառակ դեպքում խզումը կանոնական կետադրությունից և բանավոր կենդանի լեզվի արտասանական նորմերից անխուսափելի է:

Այսպես, օրինակ: Կետադրական ուղեցույցներում կամ ձեռնարկներում հաճախ այս կամ այն առիթով գեղարվեստական գրականությունից բերվում են տրոհվող կառույցների օրինակներ, որոնք, որպես կանոն, ընդունված կետադրական նորմերով չեն բացատրվում: Օրինակ՝ ասվում է, որ «տրոհվող ձևի պարագան երբեմն կարող է արտահայտվել **միմիայն դերբայով**՝ անորոշ դերբայի գործիական հոլովով»: Եվ բերվում է համապատասխան օրինակը՝ *Տերևները դողդողում էին, դեղնում ու իրանց-իրանց թափվում և թափվելով՝ տխուր շրշում* (ՀԹ): Կամ՝ տրոհվող ձևի պարագան արտահայտվում է «...բազմակի ածականներով ու անվանական կապակցություններով»։ *Կանգնեց դրան շեմին՝ տխուր ու մոլոր* (ԱԲ): *Դրսում բառաչեց մի կով՝ թավ ու երկար* (ԱԲ): *....Տրորվում են ու թառամում՝ Սրտները սև ու տխուր*» (ՀԹ)³ և

¹ Աբրահամյան Ս., նշվ. աշխ., էջ 7:

² Դարբինյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. կետադրություն, Երևան, 1990, էջ 2:

³ Տե՛ս Սահակյան Վ. Ա., Սահակյան Վ. Վ., նշվ. աշխ., էջ 40-42:

այլն: Բերված օրինակները, ինչպես տեսնում եք, գեղարվեստական գրականությունից են:

Մեկ այլ օրինակ: Արդի գրական արևելահայերենում կարծես հիմնովին նորմավորված է առաջադաս, միջադաս և վերջադաս դիրքերում տրոհվող դերբայական դարձվածի կետադրությունը. առաջադասի և վերջադասի դեպքում այդ տրոհումը իրականացվում է բույծով («Վերցնելով իրերը՝ նա հեռացավ» / «Նա հեռացավ՝ վերցնելով իրերը»), իսկ միջադասի դեպքում (երբ դերբայական դարձվածը ենթակայի և ստորոգյալի միջև է)՝ երկու կողմից ստորակետով («Նա, **վերցնելով իրերը**, հեռացավ»): Բուհական դասագրքերից մեկում, սակայն, որպես ապացույց և վկայություն ունենալով հայ դասական գրականության լեզվական նյութը, առաջարկվում է առաջնորդվել այլ մոտեցմամբ, որը կարելի է ձևակերպել հետևյալ կետերով.

ա) Անորոշի գործիական հոլովաձևով կազմված **առաջադաս դերբայական դարձվածը ձևի պարագայի** շարահյուսական պաշտոնում, եթե անմիջաբար նախորդում կամ հաջորդում է ստորոգյալին, սովորաբար չի տրոհվում, այսպես՝ «Բարձր-բարձր խոսելով և ծիծաղելով եկան գյուղացիք» (ՀԹ), «Էմման արագ վազելով հեռացավ» (ՆԶ), «Շնեքը իրար հետ խաղալով վերադարձան» (ԱԲ), «Երիտասարդը վագոնի հետ օրորվելով նիրհում էր» (ՆԴ) և այլն:

բ) **Միջադաս դարձվածների** համար սովորական և ընդունված է համարվում առանց դադարի (առանց տրոհման) արտասանությունը և ըստ այդմ կետադրելը, ինչպես՝ «Վասակը դեմքը կնճռոտելով հագավ մուշտակը», «Ծիծեռնակը սուր ծղրտալով ընկավ կատվի հետևից» և այլն:

գ) Անորոշի գործիական հոլովաձևով կազմված **հետադաս ձևի պարագա** դերբայական դարձվածը, ըստ լեզվաբանի, որպես կանոն, տրոհվում է, ինչպես՝ «Բա մեռած հո չենք, ապրում ենք է՛լի, Ամեն մեռնողի երանի տալով» (ՀԹ), «Նրանք պատրաստ են իր դեմ գործել՝ միջոցների մեջ խտրություն չդնելով» (ՆԶ), «Ասաց վանականը՝ խելացի հայացքն ուղղելով վանահոր հայացքին» (ԴԴ): Փաստորեն ոչ միայն պարտադիր չի համարվում վերջադաս դերբայական դարձվածի տրոհումը, այլև հնարավոր է նկատվում նաև ստորակետով տրոհումը, ինչպես բերված առաջին օրինակում:

դ) Անորոշի գործիականով կազմված **ժամանակի պարագա** դարձվածի դեպքում տրոհումը համարվում է պարտադրական օրինաչափություն, ինչպես՝ «Գիքորին նկատելով՝ նա իսկույն կանգ առավ» (ՀԹ), «Հազիվ թեյը վերջացնելով՝ Աշխենը քաշվեց իր սենյակը» (ՆԴ):

Փաստարկումները համոզիչ չեն և սկզբունքորեն հակասում են արդի արևելահայերենում ընդունված կետադրական նորմերին, որոնք վերաբերում են տրոհվող դերբայական դարձվածին:

Տրոհվող դերբայական դարձվածի կետադրությունը, ինչպես վերը նշվեց, արդի արևելահայերենում հստակորեն կանոնարկված է և հիմնավորվում է գուտ լեզվական ու արտալեզվական մի շարք գործոններով:

Նախ՝ դա հիմնավորվում է կետադրության բոլոր երեք հիմունքներով՝ շարահյուսական, տրամաբանական-իմաստային և հնչերանգային: Անորոշ դերբայի գործիական հոլովաձևով դերբայական դարձվածը շարահյուսորեն առանձնացող կառույց է, որը նախադասության, այսպես կոչված, հիմնական մասից «տրոհվում է» նաև արտասանական զգալի դադարով: Մ. Ասատրյանը բանավոր խոսքի համար բնական չի համարում **ենթակա-միջադաս դերբայական դարձված-ստորոգյալ** կառույցում արտասանական դադարը և տրոհումը, թեև նրա իսկ վկայությամբ՝ անորոշի գործիականով դարձվածը հաճախ գրավոր խոսքում նախադաս ենթակայից անջատվում է ստորակետով. տրոհվում է որպես միջադաս դերբայական դարձված: Մեր տպավորությամբ և ընդունված կարծիքով՝ այդպիսի դադար կենդանի բանավոր խոսքում կա, որը ենթադրում է նաև համապատասխան կետադրական արտահայտություն: Իսկ երրորդ՝ տրամաբանական-իմաստային հայեցակետից դերբայական դարձվածը մի տեսակ լրացնող, հավելող բովանդակային բաղադրիչ է:

Ապա՝ Մ. Ասատրյանը այս եզրակացության է հանգում բացառապես գեղարվեստական գրականությունից քաղված նյութի հիման վրա: Ընդ որում, ինչպես արդեն ասվեց, իբրև աղբյուր է ընտրված միմիայն դասական գրականությունը (հեղ.՝ Բաֆֆի, Հ. Թումանյան, Ա. Շիրվանզադե, Նար-Ղոս, Ա. Բակունց, Դ. Դեմիրճյան և Ն. Չարյան)¹: Մինչդեռ արդի գեղարվեստական գրականության և, այսպես կոչված, նորմատիվ մատենագրության (դասագրքեր, նորմատիվ քերականության ձեռնարկներ, գիտական աշխատություններ, թելադրության ձեռնարկներ և այլն) փաստերը այլ բան են վկայում: Այսպես՝ «Երբ գրուցակիցը տվյալ իրավիճակում տարածքը խախտում է՝ ավելի հեռանալով խոսակցից, ապա նշանակում է, որ»², «Ամփոփելով նշենք, որ Լեմկինը, վերլուծելով մարդասիրական միջամտությունների տարբեր օրինակներ, ի ցույց է դնում, որ Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ հալածանքները...»³, «Եվ որովհետև Կարսը երեք կողմից շրջապատված էր բլուրներով ու ձորերով, ուստի թագավորը, այդ ամենի վրա հարմար դիրքեր ընտրելով, կանգնեցրեց բազմաթիվ մարտկոցներ ու բերդեր»⁴, «Հավերժի ճամփորդն եմ ես, որը, դարերի խորքից եկած, դեպի դարերն է գնում, և որի երթը վերջ ու վախճան չունի...»⁵, «Խոսելով անելիքների

¹ Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 307-309:

² «Վեմ», 2016, թիվ 2, էջ 13:

³ «Հայագիտության հարցեր» (այսուհետև՝ «ՀՀ»), 2017, թիվ 1, էջ 85:

⁴ Չարյան Հ., Մխիթարյան Ա., Թելադրության նյութերի ժողովածու, Երևան, 2017, էջ 73:

⁵ Նույն տեղում, էջ 18:

մասին՝ նա քայլում էր ծառուղով», «Նա, խոսելով անելիքների մասին, քայլում էր ծառուղով»¹:

Հետո՝ կարծում ենք՝ այդ չափով մանրամասնված կետադրություն և բացատրություններ հրամցելը պարզապես խճողում է դերբայական դարձվածի կետադրությունը: Նկատի ունենք ոչ միայն դարձվածի դիրքային տարբերակների կողմնորոշիչ համարելը կամ դերբայի և ստորոգյալի՝ նախադասության այլ անդամներով ընդմիջված լինելը, այլև հատկապես այն, որ Մ. Ասատրյանը առաջարկում է իրարից զանազանել ժամանակի և ձևի պարագա դերբայական դարձվածները, որոնցից միայն վերջինը, ըստ լեզվաբանի, ունի պարտադիր կետադրություն: Հայտնի է, սակայն, որ ժամանակի և ձևի պարագա դերբայական դարձվածները հաճախ հատակորեն տարբերակված չեն: Այդպիսի մի դիտարկում անում է նաև ինքը՝ Ասատրյանը: «Պետք է նկատի ունենալ, գրում է նա,՝ որ անորոշի գործիականի մեջ ձևի նշանակությունը ժամանակային նշանակությունից շատ ու շատ ուժեղ է, որի պատճառով էլ, ինչպես օրինակների մի մասն է ցույց տալիս, ժամանակային նշանակության հետ միաժամանակ դրսևորվում է նաև ձևի իմաստ»²: Հարց է առաջանում. ի՞նչ իմաստ ունի նման տարբերակվածության հիմքով կետադրություն սահմանելը, երբ մանավանդ օրինակների մի մասում գործ ունենք երկու իմաստները համատեղող կառույցների հետ, որոնց տարբերակումը վեճեր կարող է հարուցել նույնիսկ մասնագիտական գրականության մեջ: Ավելին, սովորական լեզվակիրառողի համար այդ տարբերակվածությունը ունի խիստ անկարևոր նշանակություն:

Եվ վերջապես՝ անորոշ դերբայի գործիական հոլովաձևով դերբայական դարձվածի համար ավանդաբար գործածվել է և այժմ էլ ընդունված է գործածել շատ որոշակի կետադրություն՝ շարահյուսական, հնչերանգային և տրամաբանական-իմաստային հիմնավորումներով: Դասական գեղարվեստական գրականության լեզվական փաստերը չեն կարող հիմք հանդիսանալ այս կառույցների վերաբերյալ նոր կետադրություն սահմանելուն:

Ճշգրտենք մեր մտտեցումները: Կետադրությունը պայմանավորող սկզբունքները երեքն են՝ տրամաբանական-իմաստային, շարահյուսական, հնչերանգային: Այդ պայմանավորվածությունը իրացվում է հետևյալ տարբերակներով՝ ա) ստորադասական հարաբերությամբ, որտեղ սովորաբար գերիշխող է դառնում տրամաբանական-իմաստային հիմունքը, բ) հավասարազոր իրավունքներով, որտեղ ակտիվանում է շարահյուսական հիմունքի դերը, և գ) առանձնաբար, որը գործնականում սահմանափակ դրսևորումներ ունի:

Կետադրությունը միօրինակացնելու կամ դրանք խստորեն կանոնարկելու անպայման պահանջը գործնականում չունի արդարացում: Ընդհակա-

¹ Եզեկյան Լ., Մարգարյան Ա., Սաքապետոյան Ռ., Հայոց լեզու, 12-րդ դասարանի համար, Երևան, 2011, էջ 153:

² Նույն տեղում, էջ 307-309:

ռակը, կետադրական նշանները, լինելով բանավոր խոսքի բազմազանության ու հարստության, այսպես կոչված, գրավոր արտահայտություններ, պետք է ունենան գործածության ավելի ազատ սկզբունքներ, քան, օրինակ, ուղղագրությունը: Վերը նշված բոլոր երեք տարբերակներում էլ նախընտրելի չեն խստորոշ կանոնների սահմանումը և կարծր պայմանադրականությունը: Թույլատրելի պետք է համարել որոշ ազատություններ, մասնավորապես տարբերակների ընտրության հնարավորություն, եթե դա իհարկե չի խաթարում շարադրանքի բովանդակությունը և կամ չի խախտում շարահյուսական կանոնավոր կառույցը:

Լինելով բանավոր խոսքի գրավոր պատկերը՝ գրավոր խոսքը առավելագույն չափով պետք է դրսևորի բանավորի իմաստային և ոճական-արտահայտչական նրբերանգներն ու յուրահատկությունները:

Կետադրության նորմերը սահմանելիս պետք է, իհարկե, նաև աղբյուր ունենալ ժամանակի գրավոր խոսքը, այդ թվում նաև գեղարվեստական լեզվի կետադրական փաստերը, սակայն ընդհանուր նորմերը պիտի սահմանել՝ զանց առնելով այս կամ այն գրողի կետադրական նախասիրությունները, և ելակետ ունենալ վերը նշված հիմունքներն ու հիմնավորումները:

Юрий Аветисян – Основы пунктуации современного армянского языка

Существует три принципа, обуславливающих пунктуацию: логически-смысловой, синтаксический, интонационный. Эта обусловленность может быть реализована в следующих вариантах: а) в виде подчинительных отношений, где обычно доминирует логически-смысловой принцип, б) в виде синтаксического равноправия, когда активизируется роль синтаксического принципа, в) в виде отдельных компонентов, что на практике имеет ограниченные проявления. Обязательное требование унификации пунктуации или ее корректировки не имеет практического оправдания. Наоборот, в случае со знаками препинания, которые являются письменным выражением разнообразной и богатой устной речи, должны быть более свободные принципы употребления, чем, например, в случае с орфографией. Во всех вышеуказанных трех случаях определение строгих правил и жесткая обусловленность не являются предпочтительными. Следует считать допустимой некоторую свободу, в частности, возможность выбора варианта, если, конечно, это не искажает содержание изложения и/или не нарушает синтаксическую конструкцию.

Yuri Avetisyan – The Basics of Modern Armenian Punctuation

There are three guiding principles in punctuation: logical-semantic, syntactic, intonational. This arrangement is implemented in the following ways: (a) in a subordinate relationship, where the logical-semantic basis usually prevails; (b) in a coordinate relationship, where the role of the syntactic basis is activated; and (c) separately, which has practically limited manifestations. The requirement for unifying or strictly fixing punctuation is not practically justified. On the contrary, punctuation marks, being the so-called written expressions of diversity and richness of spoken words, should have freer usage principles than spelling. In all three of the above-mentioned ways, it is inappropriate to define strict rules and strict convention. It is permissible to consider certain freedoms, in particular the possibility of choosing options, unless this contravenes the content of the statement or violates the syntax of the regular structure.

«ԼԵԶՈՒ-ԽՈՍՔ-ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ» ԵՌԱՆԿՅՈՒՆԻՆ

ԸՍՏ Գ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ

Բանայի բառեր – «լեզու-խոսք-մտածողություն» եռանկյունի, սոցիոլոգիական ուղղություն, «նոր ուսմունք լեզվի մասին», մատերիալիստական լեզվաբանություն, լեզվի դասակարգային բնույթ

Գ. Ղափանցյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները ամփոփվել են նրա «Ընդհանուր լեզվաբանություն» գրքում¹: Անվանի լեզվաբանն իր հայեցակետը բնորոշում է իբրև «մատերիալիստական», որը խորհրդային մտայնության արտահայտություն էր², իսկ իրականում նշված աշխատության մեջ նրա կողմից քննության նյութ դարձած տեսական հարցադրումները և մասնավորապես *լեզվի, խոսքի* և *մտածողության* փոխհարաբերության հիմնահարցը երկու միանգամայն տարբեր լեզվաբանական հայեցակարգերի ինքնատիպ համադրության արդյունք են: *Լեզու, խոսք, մտածողություն* հասկացությունների ըմբռնման և դրանց փոխհարաբերության բացահայտման առումով Գ. Ղափանցյանի տեսակետներում նկատելի են լեզվաբանական երկու հայեցակարգերի արտացոլումները, որոնցից մեկի հեղինակը Ն. Մառն է («նոր ուսմունք լեզվի մասին»), որը եղել է Գ. Ղափանցյանի ուսուցիչը Սանկտ-Պետերբուրգի համալսարանում: Մյուսի հեղինակ պայմանականորեն կարելի է համարել շվեյցարացի նշանավոր լեզվաբան Ֆերդինանդ դը Մոսյուրին՝ այն վերապահումով, որ իրականում նրա աշխատություններում այս կամ այն կերպ արտացոլվել են նաև իր ժամանակի մի շարք այլ լեզվաբանների (Բոդուեն դը Կուրտենե, Ա. Տոմսոն, Ա. Մեյե, Ծ. Վանդրիես և այլք) տեսակետները: Հետևաբար, լեզվի տեսության հարցերի, մասնավորա-

¹ Տե՛ս **Ղափանցյան Գ.**, Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Երևան, 1939 (այսուհետև այս գրքից հղումները կտրվեն շարադրանքում փակագծերում նշելով միայն էջերը):

² 1930-1950-ական թթ. ԽՍՀՄ-ում տիրապետող էր Ն. Մառի՝ «լեզվի մասին նոր ուսմունքը», որը, ըստ հեղինակի, մարքսիստական (=մատերիալիստական) էր, իրականում, սակայն, գաղափարախոսական որևէ առնչություն չունեի մարքսիզմի հետ: Այն դեռևս 1910-ական թթ. Մառի առաջարկած, այսպես կոչված, «հարեթական տեսության» նոր վերանայված արտահայտությունն էր: Մակայն Մառին հաջողվել էր խորհրդային պաշտոնական շրջանակների համար այն ընդունելի դարձնել իբրև «մարքսիստական», թերևս այն պատճառով, որ հակադրվում էր ԽՍՀՄ-ում «բուրժուական» որակված պատմահամեմատական լեզվաբանությանը (տե՛ս **Զահուկյան Գ. Բ.**, Լեզվաբանության պատմություն, Երևան, հ. II, երկրորդ հրատ., 2015, էջ 428-436):

պես՝ «լեզու-խոսք-մտածողություն» եռանկյունու վերաբերյալ Գ. Ղափանցյանի տեսակետները գնահատելու առումով կարևոր է նրա հայացքների համադրական քննությունը այդ երկու հայեցակարգի հետ:

Լեզվի և խոսքի հարաբերակցության խնդիրը, որպես գիտական հարցադրում առաջին անգամ որոշակի ձևակերպում ստանալով Ֆ. դը Մոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության դասընթաց» գրքում¹², շուրջ հարյուր տարի եղել և մնում է տեսական լեզվաբանության առանցքային խնդիրներից մեկը: «Լեզու-խոսք» հարաբերակցության արծարծման տեսանկյունից նրա հայեցակարգը առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում, որովհետև, բացառությամբ Ն. Մառի և նրա հետևորդների, մյուս բոլոր հեղինակների անդրադարձներն այս կամ այն չափով մնում են հենց «Դասընթացում» տեղ գտած բնորոշումների շրջանակներում: Ֆ. դը Մոսյուրը տարբերակել է երեք հասկացություն՝ *լեզու* (langue), *խոսք* (parole), *լեզվախոսություն* (langage)³, որոնցից առաջինին նա վերագրել է հասարակական բնույթ (հմմտ. «Լեզուն ամբողջական չէ ոչ մեկի մեջ, այն ամբողջությամբ գոյություն ունի միայն հանրության շրջանակներում»), երկրորդին՝ անհատական (հմմտ. «Խոսքը, ընդհակառակը, կամքի և բանականության անհատական ակտ է»), իսկ երրորդը, ըստ նրա, այդ երկուսի միասնությունն է (հմմտ. «Կապված լինելով մարդկային էության մի շարք ֆիզիկական, ֆիզիոլոգիական և հոգեկան դրսևորումների հետ, պատկանելով ինչպես անհատական, այնպես էլ սոցիալական ոլորտներին, լեզվախոսությունը, սակայն, սրանցից ոչ մեկի մեջ չի կարող դասվել»): Լեզվախոսության երկու կողմերից Մոսյուրն ընդգծում է լեզվի դերը՝ որպես՝ 1) լեզվախոսության մյուս բոլոր դրսևորումների չափանիշի, 2) լեզվախոսության ունակության արդյունքի և 3) լեզվախոսության միասնությունը ապահովող գործոնի⁴:

Ըստ Ֆ. դը Մոսյուրի՝ լեզուն և խոսքը համասեռ երևույթներ են, իսկ լեզվախոսությունը տարասեռ է, որքանով որ այն հասարակականի՝ լեզվի և անհատականի խոսքի միասնություն է: Լեզուի և խոսքի սահմանազատումը Ֆ. դը Մոսյուրի հայեցակարգում պայմանական է: Ասվածի վկայությունն է հետևյալ միտքը. «Լեզուն խոսքի գործիքն է և, միաժամանակ, արդյունքը»⁵:

¹ Saussure F. de, Cours de linguistique générale, Lausanne-Paris, 1916.

² Այսուհետև՝ «Դասընթաց»:

³ Մոսյուրյան langage-ը հայ լեզվաբանության մեջ գործածվել է «խոսողական գործունեություն» տերմինային արտահայտությամբ, որը ռուսերենի речевая деятельность-ի համարժեքն է, սակայն մենք նախընտրում ենք «Դասընթացի» հայերեն թարգմանության մեջ առաջարկված *լեզվախոսություն* տարբերակը (տե՛ս **Մուրադյան Ա.**, Ֆերդինանդ դը Մոսյուրը և նրա ընդհանուր լեզվաբանության դասընթացը // **Մոսյուր Ֆ. դը**, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Երևան, 2008, էջ XIX-XX: Տե՛ս նաև՝ **Պետրոսյան Վ. Զ.**, Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Երևան, 2015, էջ 333-334):

⁴ **Մոսյուր Ֆ. դը**, նշվ. աշխ., էջ 22-28:

⁵ Նույն տեղում, էջ 37:

Որքան էլ որ լեզվախոսության մեջ կարևորվում է խոսքը, այնուամենայնիվ, «Դասընթացի» հեղինակի կարծիքով, առաջնային է լեզուն, որովհետև այն է լեզվաբանության ուսումնասիրության առարկան, և այլ գիտություններից լեզվաբանությունն առանձնանում է առաջին հերթին դրանով:

Լեզվի և խոսքի ըմբռնման, մտածողության հետ դրանց փոխհարաբերությունների խնդիրներին անդրադարձել է նաև Ն. Մառը: Մի գիտնական, որի լեզվաբանական հայացքները էապես տարբերվում են իր ժամանակի գիտության մեջ ընդհանուր ճանաչում ստացած պատկերացումներից: Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից Ն. Մառի ընդհանուր լեզվաբանական տեսակետները, մասնավորապես՝ *լեզու-խոսք-մտածողություն* անհշուշտությունների վերաբերյալ նրա պատկերացումները հատուկ կարևորություն ունեն այն առումով, որ դրանք որոշակիորեն արտացոլվել են Գ. Ղափանցյանի ընդհանուր լեզվաբանական հայացքներում, այդ թվում՝ «լեզու-խոսք-մտածողություն» եռանկյունու դափանցյանական ընկալումներում:

Ն. Մառի հայացքներում լեզվի մատերիալիստական ըմբռնումը այն է, որ նա լեզուն համարում է հասարակական երևույթ, որը ստեղծվել է մարդու կողմից՝ որպես նրա հասարակական աշխատանքի արդյունք և զարգանում է աստիճանաբար՝ դրանով էլ կապվելով հասարակության պատմությանը: Լեզուն նույն կերպ է բնորոշում նաև Գ. Ղափանցյանը. «Լեզուն սկսած մարդու ամենապրիմիտիվ արտադրական կոլլեկտիվի կյանքից մինչև այժմյան հասարակական-տնտեսական բարդ ձևավորումները, բեկտել է և արտացոլել յուր մեջ այդ բարդ պատմական կոմպլեքսը» (էջ 24): Ն. Մառի բնորոշմամբ, լեզուն և մտածողությունը, լինելով անբաժանելիորեն կապված երևույթներ, նույնպես անցնում են զարգացման փուլեր: Ըստ Ն. Մառի՝ լեզուն և մտածողությունը այնքան սերտ միասնություն են կազմում, որ կարծես նույնացվում են (հմմտ. «մտածողությունը, առանց որի մենք լեզու չենք էլ ընդունում»)¹: Լեզվի և մտածողության՝ որպես երկու անբաժանելի երևույթների մասին Ն. Մառի տեսակետը լրացուցիչ հիմնավորում է ստանում գծային-կիներտիկ լեզվի՝ իբրև մարդկության հնագույն լեզվաորակի մասին դրույթով: Հնչյունային լեզվի համեմատությամբ կիներտիկ, այն է՝ ձեռք-լեզվին (քանի որ ձեռքն է «կիներտիկ լեզվի արտադրության հիմնական գործիքը») վերագրելով ավելի մեծ բնականություն և անմիջական կապ տեսնելով նրա և մտածողության միջև՝ Ն. Մառը այդ լեզուն համարում է «մարմնի ֆիզիկական գործունեության մի ակտ», որը կարող է իրականություն դառնալ նույնիսկ «առանց մտածելու կարիքի»²: Ելնելով լեզվի և մտածողության նույնականացման դրույթից՝ Ն. Մառը հանգում է ծայրահեղ եզրակացության՝ բոլոր լեզուները համարելով արհեստական, որովհետև դրանք ստեղծ-

¹ Մառ Ն. Յա., Ընտիր երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1949, էջ 204: Հմմտ. նաև՝ Աղայան Է. Բ., Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Երևան, 1962, էջ 95:

² Մառ Ն. Յա., նշվ. աշխ., էջ 117:

վել են մարդու կողմից (հմմտ. «Հնչալեզուն մարդկության ստեղծվածքն է: ... Դուրս է գալիս, որ աշխարհում բնական լեզուներ գոյություն չունեն, լեզուները բոլորն էլ արհեստական են, բոլորն էլ ստեղծված են մարդկության կողմից»)¹:

Լեզվի մասին Գ. Ղափանցյանի դատողություններում հնչունական լեզվի համեմատությամբ ձեռք-լեզվի նախնականության, առհասարակ՝ ձեռք-լեզվի և հնչունական լեզվի հարաբերակցության հարցերն այնպիսի կարևորություն չունեն, ինչպիսին որ դրանց տվել է Ն. Մառը, բայց նաև շրջանցված չեն: Լեզուն համարելով «պատմական կատեգորիա», որը ծնունդ է առնում մարդու դեռևս կիսավայրենի վիճակում և կազմավորվում է «հասարակական աշխատանքի պրոցեսում» (էջ 19), Գ. Ղափանցյանը, ըստ էության, ընդունում է լեզվի գոյության որակական երկու, այն է՝ *կինետիկ լեզվի* և *հրնչունային լեզվի* փուլերի տարբերակման, ինչպես նաև առաջինի ավելի հին լինելու դրույթը: Այդ դրույթի ընդունումը, սակայն, դեռևս հիմք չէ, որ նա հնչունային լեզվի համեմատությամբ ձեռք-լեզվին վերագրի ավելի մեծ բնականություն, ավելին՝ հնչունական լեզուները համարի ոչ բնական, ինչպես դա անում էր Ն. Մառը: Ըստ Գ. Ղափանցյանի՝ մտածողության անբաժանելի մասն են կազմում «բառերի հնչական պատկերացումները», որոնց միջոցով լեզուն արտացոլվում է մարդու գիտակցության մեջ, և կապ է ստեղծվում մտածողության և արտաքին աշխարհի առարկաների ու երևույթների միջև, սակայն լեզվի հիմնական գործառույթը «բարձր խոսելն է, այսինքն՝ մեր մտքերը լսելի հնչուններով ուրիշին հաղորդելը», որն էլ տեղի է ունենում արտասանական ապարատի միջոցով (էջ 31): Բնական է, որ հնչունական լեզվի այսպիսի ըմբռնումը չի կարող ենթադրել նրան կինետիկ լեզվի համեմատությամբ արհեստական բնույթ վերագրելու մտայնություն: Գ. Ղափանցյանն անմիջական կապ է տեսնում մի կողմից՝ «հնչական բառապատկերացումների միջոցով» մարդու հոգեկան աշխարհում ձևավորվող «իմացական պրոցեսների», մյուս կողմից՝ արտաքին ֆիզիկական աշխարհի երևույթների միջև, որոնք իրենց բառային ձևակերպումն են ստանում հնչական լեզվում: Հետևաբար, Գ. Ղափանցյանի կարծիքով, «ներքին լեզվի» (որ նույնն է թե մտածողության) և «արտաբերական լեզվի» (ըստ էության խոսքի)՝ որպես «հասարակական լեզվի կազմակերպիչի» միջև գործում է երկկողմանի փոխանցումային կապ (էջ 19): Խոսելու ընթացքը (խոսքային գործունեությունը) «ներքին հոգեկան իմացական պրոցեսի» և արտաքին՝ «ֆիզիկական աշխարհի միջնորդավորման» յուրօրինակ համադրություն է, սակայն «մտքի յուրացման տեսանկյունից» սեփական խոսքը լսելու ընթացքը խոսողի համար նշանակություն չունի. այն կարևոր է միայն լսողի համար: Դրանով հանդերձ՝ Գ. Ղափանցյանը չի ժխտում «խոսողի արտաբեր-

¹ Նույն տեղում, էջ 32:

ման (արտիկուլացիոն) պրոցեսի կարևորությունը «ներքին լեզուն» կազմակերպելու» գործում, քանի որ հասարակական լեզվի նախաձեռնողը («կազմակերպիչը») արտաբերական լեզուն է՝ որպես հասարակական աշխատանքի արդյունք: Ներլեզվական համակարգը, այն է՝ խոսքի հոգեկան կողմի կրողը բնորոշելով իբրև «լեզվի իմացում»՝ անվանի լեզվաբանն այն համարում է մի ներակա վիճակ, որը ցանկացած պահի կարող է իր դրսևորումը ստանալ հնչյուններով (էջ 32-33):

Ֆ. դը Սոսյուրի «Դասընթացի» հրատարակությունից հետո ընդհանուր լեզվաբանության առանցքային հարցադրումներից մեկը առնվազն լեզվական նշանի գաղափարն էր: Թեպետև Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանության» մեջ այդ հիմնահարցն ուղղակի դրսևորում չունի, բայց այն անուղղակիորեն արծարծվել է առարկայի և նրա հնչապատկերի (ըստ Գ. Ղափանցյանի՝ «հնչակոմպլեքսի») միջև կապի հարցադրումով: Ֆ. դը Սոսյուրի տերմինաբանությամբ՝ նշանային հայեցակերպում առարկան *նշանակվողն* է, իսկ հնչապատկերը՝ *նշանակողը*, իսկ այդ երկուսի միասնությունը՝ *լեզվական նշանը*: Ինչպես որ Սոսյուրը պատճառաբանված կապ չի տեսնում նշանի երկու կողմերի միջև, այնպես էլ, Գ. Ղափանցյանի կարծիքով, որևէ առարկայի պատկերացման, իմաստի կամ հասկացության և նրա «հնչակոմպլեքսի մտապատկերի» հարաբերությունը «պատմական անհրաժեշտության» թելադրանք չէ (էջ 35):

Գ. Ղափանցյանը Ն. Մառի «նոր ուսմունքից» է փոխառել նաև՝ 1) լեզվի դասակարգային լինելու և 2) վերնաշենքային բնույթ ունենալու դրույթները: «Լեզվի մասին նոր ուսմունքում» այդ երկու դրույթներն ունեն անկյունաքարային նշանակություն: Ըստ Ն. Մառի՝ «չկա լեզու, որը դասակարգային չլինի և հետևաբար, չկա մտածողություն, որը դասակարգային չլինի»¹: Լեզվի և մտածողության՝ որպես դասակարգային երևույթների մտական պատկերացման մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ նույնիսկ հնչյունական տեղաշարժերը, ավելի ստույգ՝ իր առաջարկած երևակայական չորս տարրերը (Sal, Ber, Yon, Ros) այս կամ այն հնչյունի են վերածվում գաղափարախոսության ազդեցությամբ, որը այլ բան չի նշանակում, քան մտածողության դասակարգայնություն (հմմտ. «Գաղափարախոսական տեղաշարժներով են պայմանավորվում հնչյունական այն փոփոխությունները, որի համաձայն էլ լեզվական առաջնային էլեմենտները, թվով չորս, ենթարկվում են բազմաթիվ փոփոխությունների միշտ հակադրությունների միևնույն օրենքի ուղիներով՝ իրենց զարգացման մեջ հասնելով մեկ հնչյունի վիճակին՝ ձայնավոր կամ բաղաձայն»²): Իսկ լեզվի և մտածողության՝ որպես վերնաշենքային իրողությունների ըմբռնման առումով կարևոր է հատկապես երկու հանգամանք.

¹ Նույն տեղում, էջ 204:

² Նույն տեղում, էջ 221:

1) նյութական բազայի և վերնաշենքի միջև կապը խարսխված է հավաքական պատկերացման վրա, 2) նյութական բազայից անցումը «վերնաշենքային աշխարհին» տեղի է ունենում թռիչքաձև (հմմտ. «Պատկերացումների կոլեկտիվ[ական]ությունը իր հերթին ելման կետ է հանդիսանում նյութական բազայից վերնաշենքային աշխարհը կատարվող թռիչքի համար»):

Լեզուն համարելով հասարակական երևույթ՝ Գ. Ղափանցյանը նրա ծագումն ու ձևավորումը բացատրել է որպես հասարակական աշխատանքի կազմակերպմանը գուգրնթաց իրողություն: Լեզվի՝ որպես հասարակական երևույթի ըմբռնումն ընկած է սոցիոլոգիական ուղղության ներկայացուցիչների (Ֆ. դը Սոսյուր, Շ. Բալի, Ա. Մեշե, Ա. Մեյե, Ժ. Վանդրիես) լեզվաբանական պատկերացումների հիմքում, սակայն Գ. Ղափանցյանի պատկերացումները այդ առումով ևս իրենց վրա կրում են ավելի շատ Ն. Մառի տեսակետների դրոշմը: Մասնավորապես, սոցիոլոգիական ուղղության երկու՝ Ժնևի և Փարիզի դպրոցներից և ոչ մեկի ներկայացուցիչները լեզվին չեն վերագրել ո՛չ դասակարգային և ո՛չ էլ վերնաշենքային բնույթ²: Հասարակության կազմավորումը, ըստ Գ. Ղափանցյանի, պատմական իրողություն է և տեղի է ունենում վերընթաց կերպով: Լեզուն արտացոլում է մարդու՝ իբրև ստեղծագործ էակի նվաճումները, հետևաբար այն «պատմա-կուլտուրական մի բարդ արվեստ» է, «վերնաշենքային մի բարձր կուլտուրա» (էջ 19) (ընդգծումը մերն է – Է. Ա.): Լեզվի՝ որպես սոցիալական (= հասարակական) երևույթի ըմբռնումով է պայմանավորված նաև նրան դասակարգային բնույթ վերագրելը: Ընդ որում, Գ. Ղափանցյանի դատողություններում ևս վերջին հանգամանքը ունի ոչ պակաս ընդգծված արտահայտություն, որքան Ն. Մառի մոտ (հմմտ. «լեզվի մեջ պիտի տեսնենք ցեղի, դասակարգի resp. դասի, ինչպես և ազգության սոցիալ-կուլտուրական և քաղաքական անցյալը, այն է՝ նախնական արտադրության պրիմիտիվ վիճակը յուր աշխարհայացքով, հետագա աշխատանքի բաժանման պրոցեսը յուր այլևայլ ստադիաններով, դասակարգերի հանդես գալը և դրանց աշխարհայացքը, պայքարը և այլն» (էջ 25):

Այսպիսով, *լեզվի, խոսքի և մտածողության* ըմբռնման, դրանց փոխհարաբերության վերաբերյալ Գ. Ղափանցյանի պատկերացումներում այս կամ այն կերպ արտացոլվել են ինչպես սոցիոլոգիական ուղղության, նախախորհրդային Ռուսաստանի առանձին նշանավոր լեզվաբանների (Ա. Տոմսոն, Վ. Բոգորոդիցկի), այնպես էլ «լեզվի մասին նոր ուսմունքի» (իմա՝ «հաբեթական տեսության») հիմնարար դրույթները, սակայն ճիշտ չի լինի նրան համարել դրանցից որևէ մեկի ուղղակի հետևորդը: Գ. Ղափանցյանը փորձել է նշված հիմնահարցերի շուրջ գոյություն ունեցող տեսակետներից վերցնել

¹ Նույն տեղում, էջ 225:

² Տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, նշվ. աշխ., էջ 75-125:

իր կարծիքով ընդունելին: Բայց նաև ակնհայտ է, որ այդ «ընդունելի» մեջ զգալի է հատկապես «նոր ուսմունքի» չափաբաժինը, որն էլ իր ժամանակի իշխող մտայնության անխուսափելի արտահայտությունն էր:

Асатрян Эдита – Треугольник Г. Капанцяна «язык-речь-мышление»

Во взглядах Г. Капанцяна о взаимосвязи между языком, речью и мышлением, а также о восприятии этих понятий заметно проявляются основные положения как социолингвистического направления, так и, в особенности, «Нового учения о языке» Н. Марра. Однако это не означает, что знаменитый армянский лингвист просто повторял их. Выбирая из двух разных концепций «рациональное» зерно, он попытался посредством их сопоставления разработать новый подход, в котором, однако, не совсем преуспел. В представлениях Г. Капанцяна особенно существенным является наличие постулатов «нового учения».

**Edita Asatryan – *The Triangle “Language - Speech - Thought”*
According to G. Ghapantsyan**

The sociological linguistic direction, as well as in the main provisions of N. Marr’s “New Linguistic Doctrine” are reflected in G. Ghapantsyan’s views regarding language, speech and thought interrelation, as well as their perception. This does not mean, however, that the renowned Armenian linguist was merely repeating these ideas. He tried to work out a new approach by combining the “rational” seed of the two different concepts, but he did not fully succeed; in G. Ghapantsyan’s ideas the reflection of the “new doctrine” is particularly noticeable.

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ
ԳՈՎԱԳՂԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Բանալի բառեր – գովազդային խոսույթ, նորակազմություն, խոսուն անուն, դիպվածային բառ, հոգեբանական գործոն, լեզվական կանոն, բարեհնչություն, կարգախոս

Ըստ լեզվաբանական բառարանների՝ գովազդը խոսքային գործունեության տեսակ է, նպատակ ունի կարգավորելու այս կամ այն ծառայության, ապրանքատեսակի պահանջարկն ու առաջարկը, խթանելու առևտուրը, կողմնորոշելու գնորդին, առավելագույնս ներագրելու նրա տրամադրվածության վրա¹: Այս գործառնություններով են պայմանավորված գովազդի տեքստի լեզվական առանձնահատկությունները: Գովազդային խոսույթի կառուցվածքային, հնչյունական, գրության, օտար բառերի գործածության և բառընտրության խնդիրներին անդրադարձել ենք առանձին հոդվածներով²: Այս աշխատանքը փորձ է լրացնելու արդի հայերենի գովազդային խոսույթի բառապաշարային յուրահատկությունների քննությունը: Մասնավորապես անդրադարձել ենք գովազդային տեքստերում նորակազմությունների (այդ թվում՝ խոսուն անունների) գործառնական հնարավորություններին: Հիմնականում քննության նյութ ենք ընտրել վերջին երկու տասնամյակում ՀՀ-ում պատրաստվող առևտրային (նաև բրենդի) և կորպորատիվ գովազդների տեքստերը:

Այսպես: Գովազդային տեքստի պատրաստման կարևոր պայմաններից մեկը խոսքի **սեղմությունն է**: Սեղմ խոսք ստանալու միջոցները տարբեր են՝ ճիշտ բառընտրություն, փոխանվանական կիրառություններ, համառոտագրությունների, հապավումների, դարձվածքների, թևավոր խոսքերի գործա-

¹ Տե՛ս **Матвеева Т.**, Учебный словарь: русский язык, культура речи, стилистика, риторика, М., 2003:

² Տե՛ս **Սարգսյան Լ.**, Գովազդային խոսույթի հնչյունական և գրության յուրահատկությունները արդի հայերենում, «ԲԵՀ. Բանասիրություն», 2015, թիվ 2, էջ 44-57, *նույնի՝* Արդի հայերենի գովազդային խոսույթը և օտար բառերի գործածության խնդիրը, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի: Բանասիրություն», 2016, թիվ 1, էջ 402-413, *նույնի՝* Արդի հայերենի գովազդային խոսույթը. բառընտրություն և բառագործածություն // «ՀՀ», 2018, թիվ 1, էջ 166-176:

ծություններ և այլն¹: Մրանց հավելենք նաև նորակազմությունները, այդ թվում՝ դիպլոմատիկ բառերը: Տեղին է այն դիտարկումը, որ գովազդի փորձառու կազմակերպիչները, հաճախ հրաժարվելով համագործածական բառերից ու կառույցներից, նոր առարկայի (ոչ միայն) գովազդի համար նախընտրում են կերտել նորակազմություններ, դիպլոմատիկ բառեր, որոնք ստեղծվում են «դիպլոմատի մեջ» և «դիպլոմատի համար»²: Դրանք օգնում են սեղմ կառույցներ ձևավորելուն, ակտիվացնում են խոսքը, թարմություն են հաղորդում խոսքաշարին ընդհանրապես: Այդ բառերի՝ առաջին անգամի համար անսովոր հնչումը կամ գրությունը, միախառնվելով գովազդի կառուցման արտալեզվական միջոցներին, հոգեբանական ուժեղ և ներգործող ազդակ են դառնում մարդկանց ուշադրությունը գրավելու: Իհարկե, այս դեպքում ևս ցանկալի է, որ չանտեսվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ ձևային-արտասանական հատկանիշները, համապատասխանությունը լեզվի կառուցվածքին, հասկացության բովանդակությունը հստակորեն արտահայտելը³ և այլն: Մակայն գովազդային ոլորտում նախ և առաջ արժևորվում է նորաստեղծ բառի **հնչյունական ձևավորումը**: Հատկապես կարևոր է, որ բառը լինի բարեհունչ, արագ տպավորվելու համար ունենա, այսպես ասած, հիշվող հնչյունական կազմ: Այս հատկանիշը առաջնային է ապրանքատեսակի **անվան** ընտրության հարցում, քանի որ բնավ պարտադիր չէ, օրինակ, որ նոր ապրանքանիշի անունը (ինչպես ցանկացած անուն) ճշգրիտ արտացոլի ապրանքի բովանդակությունը:

Այսպես: Ցանկացած նոր առարկայի գովազդի ճիշտ կազմակերպման և հաջողության գրավականը նախ և առաջ **ճիշտ ընտրված անունն** է: Ըստ հետազոտողների՝ կատարյալ անունը պետք է լինի կարճ, բացառիկ, տարբերվի մյուս անուններից, հիշվի, հաճելի լինի աչքի, հոգու համար և այլն⁴: Այս առումով առավել հարմար են նորակազմ բառերը, որոնք դեռևս «կենսագրություն» չունեն, երբեմն դրանց իմաստները հանրորեն չեն ճանաչվում, չեն գիտակցվում տարբեր պատճառներով: Համենայն դեպս, ասվածը փաստում են համաշխարհային շուկայում հայտնի դարձած բազում ապրանքանիշերի անվանումները: Դրանք մի դեպքում՝ հապավումներ են (օր.՝ **LEGO** (Լեգո. դանիերեն **leg** - խաղա՝ և **godt** - լավ բառերից)), մեկ այլ դեպքում՝ հայտնի անունների փոխված տարբերակներ (օր.՝ **Canon** (Քենոն) անվանումը ստեղծվել է բուդդիստական մեծահոգության **Kwanon** (Քուանոն)

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Ավետիսյան Յու., Սարգսյան Ա., Թեյլան Լ.** և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան, 2016, էջ 198-205:

² Տե՛ս **Курганова Е.**, Игровой аспект в современном рекламном тексте, Воронеж, 2004, с. 73 (էլ. տարբերակ՝ տե՛ս www.eartist.narod.ru/text19/136.htm):

